46. Տրված բանաստեղծական հատվածում ընդգծված բառերից քանի՞սն են գործածված փոխաբերական իմաստով:

*Գետ էր, գետափ էր, անտառ էր, հով էր,  
Սունկի բուրնունքից կեչին զհնով էր,  
Կեչին չոքել էր արահետին  
Եվ կարծես մի քիչ գույնը գցել էր...  
Անձրևն իր խոսքը ասել-պրծել էր,  
Չայնը տվել էր պղտոր գետին:*

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) բոլորը

47. Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:

- 1) *բախտավոր աստղի տակ ծնվել* - մեծ հաջողություն ունենալ
- 2) *գրքի մի երեսը կարդալ* - կյանքից դասեր չքաղել
- 3) *ձայն բարբառո հանապատի* - պատասխան չստացած խոսք
- 4) *ձեռքը քարի տակ* - հնարավորությունից զուրկ

48. Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:

- 1) *կանաչ-կարմիրը կապել* - զարդարել
- 2) *վերջին մոհիկան* - վերջին ներկայացուցիչ
- 3) *խունկ ծխել* - ոչ տեղին մեծարել
- 4) *ձեռքը փակ* - ժլատ

49. Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:

- 1) *մի սանրի կտավ* - միևնույն գործին նվիրված
- 2) *հոգու աչքեր* - ներգզացողություն
- 3) *ձեռքը բռնել* - արգելել
- 4) *ջուրը գցել* - անօգուտ վատնել

50. Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:

- 1) *գլխին ջուր մաղվել* - զվարճանալ
- 2) *քրտինքը հողին խառնել* - հողի վրա տքնաջան աշխատել
- 3) *փորում սիրտ չմնալ* - սաստիկ վախենալ
- 4) *անձյուն ձմեռ* - խեղճ, անճարակ մարդ

51. Ո՞ր տարբերակում դարձվածքի սխալ բացատրություն կա:

- 1) *օձիքը բաց չթողնել* - մեկից համառորեն պահանջել մի բան անել, *օր չանցած*- առանց ժամանակ կորցնելու
- 2) *հին դարմանը քամուն տալ*- անցած անախորժ դեպքերը հիշեցնել, *հետին միտք*- գաղտնի դիտավորություն
- 3) *սրտից արյուն կաթել* - չափազանց դաժան լինել, *արդար յուղի տեղ ընդունել*- առանց կասկածելու հավատալ
- 4) *արև ծագել*- բախտավոր վիճակ ստեղծվել, *ճանապարհին մնալ*- գործը անավարտ թողնել

52. Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *ձեռքերը շփել* - հաջողությունից ուրախանալ, *փակուղի մտնել* - անելանելի դրության մեջ ընկնել
- 2) *հաշվի նստել* - հաշվարկները ստուգել, *լուսնից ընկած* - գործից անտեղյակ
- 3) *հոգին հանել* - չարչարել, *ճակատ առ ճակատ* - բացահայտ
- 4) *հացի մեջ աղ չլինել* - երախտիքը չգնահատել, *բերանը փակ* - գաղտնապահ

53. Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *նոտքի հանել* - դրդել ըմբոստանալու, *սյռը քաշել* - մի բանից հրաժարվել
- 2) *տակն ու վրա անել* - ասվածը սխալ հասկանալ, *նորիշի երզը երզել* - սեփական կարծիք չունենալ
- 3) *երես դարձնել* - անուշադրության մատնել, *փակ աչքերով* - առանց կշռադատելու
- 4) *քամու բերած* - հեշտությամբ ձեռք բերված, *հեռու գնալ* - մեծ հաջողությունների հասնել

54. Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *լեզուն կարծ* - հնազանդ, *իրեն հավաքել* - զգաստանալ, *դարձի գալ* - ճիշտ ուղու վրա կանգնել
- 2) *մարմին առնել* - իրականանալ, *կուրծք ծեծել* - հավատացնել, *նոտքի տակ ընկնել* - խանգարել
- 3) *կողի ընկնել* - համատել, *հաց կտրել* - ապրուստից զրկել, *ճանապարհ սովորեցնել* - խորհուրդ տալ
- 4) *թիկունք թիկունքի տալ* - իրար օգնել, *նոտքերն ընկնել* - աղաչել, *ձեռք չտալ* - հարմար չլինել

55. Ո՞ր շարքի բոլոր բառակապակցություններն ունեն դարձվածային իմաստ:

- 1) ձեռքն ընկնել, սիրտն առնել, բռան մեջ հավաքել
- 2) ջրի երես դուրս գալ, բերանը փակել, սայլ նստել
- 3) գլխին կոտրել, գիրք գրել, հին երզը երզել
- 4) ձեռքը վնասել, կապը կտրել, սանձը քաշել

56. Ո՞ր շարքի բոլոր բառակապակցություններն ունեն դարձվածային իմաստ:

- 1) աչքերը փակ, կարապի երգ, արջի ծառայություն
- 2) աշխարհից կուշտ, յոթերորդ երկնքում լինել, հորդ անձրև
- 3) ծեր աղվես, բախտ վիճակվել, կանխիկ վճարել
- 4) սիրտը առնել, աչքաթող անել, գիրք թերթել

57. Ո՞ր շարքի բոլոր դարձվածքները կարող են հանդես գալ նաև որպես սովորական բառակապակցություններ (ոչ դարձվածային իմաստով):

- 1) սուրը պատյանը դնել, սառը պատերազմ, մութ անտառ
- 2) ականջի հետևը գցել, ձեռնոց նետել, կրակի հետ խաղալ
- 3) հին երզը երզել, ժամավաճառ լինել, կլոր սեղան
- 4) քարը քարին դնել, աչքը ջուր կտրել, դուռը ցույց տալ

58. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում տրված դարձվածքներն ու դրանց բառիմաստները:

- |                      |              |
|----------------------|--------------|
| ա. լեզուն կապ ընկնել | 1. մխիթարել  |
| բ. սիրտ տալ          | 2. ծնվել     |
| գ. աշխարհ գալ        | 3. կործանել  |
| դ. երեսով տալ        | 4. հիշեցնել  |
|                      | 5. պապանձվել |

- 1) ա - 5, բ - 1, գ - 2, դ - 4
- 2) ա - 4, բ - 1, գ - 3, դ - 5
- 3) ա - 5, բ - 1, գ - 4, դ - 3
- 4) ա - 3, բ - 2, գ - 5, դ - 1

**59. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված արտահայտությունը գործածված *nz* դարձվածային իմաստով:**

- 1) Ազատագրական պայքարում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է, որ բոլոր ազգային կուսակցությունները **մի դրոշի տակ հավաքվեն**:
- 2) Մեր **դռները բաց են** բոլոր նրանց առաջ, ովքեր ցանկություն ունեն մեզ հետ համագործակցելու:
- 3) Այդ երգչուհին մեզ արդեն ձանձրացրել է բոլոր համերգներին **նույն երգը երգելով**:
- 4) Նա իր առաջին իսկ ստեղծագործությամբ **նոր էջ բացեց** մեր արձակուրդ:

**60. Բառակապակցություններից քանի՞սն են գործածվում միայն դարձվածային իմաստով.**

*ճակատին ասել, ձեռնոց նետել, կրակ կտրել, թակարդն ընկնել, ջուրը գցել, օր ու արև չտալ, աչքը վախեցնել, գլուխ խոնարհել, կրակի հետ խաղալ, ձեռք մեկնել, ականջը ոլորել, սառույցը շարժվել:*

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) երեքը

**61. Բառակապակցություններից քանի՞սն են դարձվածք.**

*ձեռքը բռնել, խելքի բերել, մարդ դարձնել, ձեռքը պինդ, տեղը դնել, սիրտը կախ, միտը պահել, ոտքերն ընկնել, գլուխը տանել:*

- 1) բոլորը
- 2) հինգը
- 3) ութը
- 4) յոթը

**62. Բառակապակցություններից քանի՞սը դարձվածային իմաստ *չունեն*.**

*բերանը բաց, սիրտը կախ, աչքը սարերին, քթի տակ, ոտքի վրա, մազը ոլորած, աչքը հանել, աչքովն ընկնել, երեսին ասել:*

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**63. Ո՞ր շարքի դարձվածքներն են իրար հոմանիշ:**

- 1) թակարդն ընկնել-գենքերը վայր դնել
- 2) գլուխ բերել-գլուխը բերել
- 3) աշխարհի գալ-աշխարհով մեկ լինել
- 4) երկու ոտքը մի մաշիկ դնել-սատանայի ձին նստել

**64. Ո՞ր նախադասության մեջ դարձվածք *չկա*:**

- 1) Երբ իրեն մի փոքր հավաքեց, լեզուն բացվեց, ու վերջապես իմացանք՝ ինչ էր պատահել:
- 2) Ոտք չդնես էլ տունս, մրոտեցիր անունս:
- 3) Նա զգուշորեն ոտքը դրեց առաջին աստիճանին ու սարսափած կանգ առավ:
- 4) Մարդու լեզուն չի պտտվում, որ ասի ճշմարտությունը:



**65. Ո՞ր նախադասության մեջ դարձվածք չկա:**

- 1) Երազեցի շարունակ  
Իմ կյանքի մեջ ես մանկուց  
Ու մնացի միշտ մենակ  
Պատրանքի մեջ ես մանկուց:
- 2) Խորքերում գանձ ունեն քարափները,  
Թիկունքներին ունեն անտառ ու հերկ...  
Միայն մի բան չունեն քարափները,  
Քարափները չունեն կարապի երգ:
- 3) Վերքիս ցավից լաց եմ լինում,  
Դու ինձանից նեղանում ես,  
Նեղանալը՝ քարը գլխին,  
Սկսում ես նեղացնել:
- 4) Եվ արժե՞ր արդյոք, որ աշխարհ գայիր  
Մի տուն, մի գլուխ պահելու համար:

**66. Ո՞ր նախադասության մեջ դարձվածք չկա:**

- 1) Ճիշտ են ասում՝ քո տարիքի մարդիկ արդեն  
Ձեռ են քաշել պարապ-սարապ թափառելուց...
- 2) Ո՛չ կնոջդ դառը խոսքին,  
Ո՛չ լացին ես գլուխ դնում,  
Ո՛չ էլ նրա թախանձանքին:
- 3) Ո՞ր գնացին, ինչպե՞ս անցան  
Քար քրքրող, երկինք խմող  
Տարիներ՝ րս, տարիներ՝ րս...
- 4) Ամեն, ամեն ինչ առան քո ձեռքից,  
Օրդ սև արին, սև արին տարիդ,  
Բայց քո տան հիմքի քարին տարեկից  
Տարիքդ խլել չկարողացան:

**67. Ընդգծվածներից քանի՞սն են դարձվածք:**

- Ուր էլ **ոտք եմ դրել**,  
Ուր էլ թափառել եմ,  
Ձեր հոգսերը, մարդիկ,  
Ես ինձ հետ տարել եմ:
- Հարցների հողից, ջրից, աստղերից,  
Գտնեի կաճանն ու **դառնայի տուն**:
- Սարը սարից ամպ է խլում,  
**Ձուր է խմում** ձորը ձորից:
- Միայն մի բան չունեն քարափները,  
Քարափները չունեն **կարապի երգ**:

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) մեկը
- 4) ոչ մեկը

**68. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Տատիցս մենք միշտ առնում էինք մաքուր սպիտակեղենի զգլխիչ հոտը:
- 2) Հնագետները պեղելով կավից գատում են օրական մի ուլունք, ջնարակած մի կտոր ափսե, երբեմն մի կոպիտ արծաթադրամ:
- 3) Թռչունների երամակը դանդաղ ընթացքով չվում էր հարավ:
- 4) Եղավ կաճառներում, ուր գիտունները մարդկային անգոր մտքով ճշմարտության վճիտ ջրերն էին պղտորում միայն:

**69. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Մարգպետունին զգում էր վերահասու վտանգը, սակայն չէր կարողանում իշխաններին միավորել:
- 2) Վաղորդյան աղջամուղջին անտառը լցվեց քնքուշ գեփյուռի շնկշնկոցով:
- 3) Մենք սրբորեն պիտի պահպանենք մեր նախնիներից ժառանգած մշակութային արժեքները:
- 4) Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պաշտոնական հանդիպումները արդյունավետ եղան:

**70. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Այգեբացից առաջ գյուղացիները կարգի են բերում իրենց գործիքները:
- 2) Հայերեն լեզվի իմացությունը պարտադիր է պետական կառավարման մարմիններում:
- 3) Մայրը վերջապես տեղի տվեց որդու թախանձագին խնդրանքին:
- 4) Հուշ-երեկոյին ներկա էին գոհված ազատամարտիկների ծնողները, ընկերները, մի շարք օտարերկրացի հյուրեր և այլք:

**71. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Համաձայն ավանդույթի՝ նրա նախնիները ծագել են վիշապներից:
- 2) Անձրևից հետո անցորդները գայթում էին և դժվարությամբ էին առաջ շարժվում:
- 3) Ծերունու հետնորդները սրբությամբ պահպանում էին նրա թողած մասունքները:
- 4) Հովարով գլխարկն անգամ երեխային արևից չէր պաշտպանում:

**72. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Վրաստանի խնայբանկը հայտարարեց, որ ազատ փոխարկելի արժույթով գործողություններ է սկսում:
- 2) Հանրահավաքի ընթացքում վերջին իրադարձությունները լուսաբանող փաստեր հրապարակվեցին:
- 3) Նա հարազատ հոր նման սատարում է իր հայրենակցին, պարբերաբար այցելում, քաջալերում:
- 4) Նարեկացու, նրա մաքրակենցաղ վարքի մասին ժողովուրդն ավանդություններ է հյուսել:

**73. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Փոխանակ տքնաջան աշխատելու և պարապելու՝ ողջ օրը անգործ թափառում է:
- 2) Հեռվից լսվում էր փոթորկված ծովի ալիքների հզոր շառաչյուն:
- 3) Ես քեզ մոտ եմ եկել այն հույսով, որ ինձ նեցուկ կլինես այս դժվար պահին:
- 4) Անցյալ անգամ ես իմ գոհունակությունը ասացի այս նախագծի մասին և այսօր էլ կրկնում եմ:

**74. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ չկա:**

- 1) Գիտնականների՝ տիեզերքի ուսումնասիրությանն ուղղված ջանքերը գերծ են շահադիտական ամեն տեսակի նպատակներից:
- 2) Ժողովուրդը փառաբանում էր ռազմական օդաչուի անօրինական սխրանքը:
- 3) Մեծ իմաստասերը գրեց, թե տկարամիտ են այն գլուխները, որոնց թույր կարծիքով Երկիրը լեռներից է շինված. լեռներից միայն Հայքն է շինված:
- 4) Թեև մրցակիցը ուժեղ էր, բայց իր համառության պատճառով մարզիկը կարողացավ հաղթել նրան:

**75. Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն նախադասությունների համարները, որոնցում բառագործածության սխալ կա:**

- ա. Այդ օրերին նա օգտագործում էր մեծ թվով ալկոհոլ:
- բ. Դեռ քսան անգամ կկուն նրան ավետելու էր առվակների վարարումը:
- գ. Մեխը փայտի մեջ չէր խրվում, և նա կրկին անգամ մուրճով հարվածեց:
- դ. Ես չեմ սիրում վատաբանել մարդկանց, բայց նրա նենգ արարքը ուղղակի անգնահատելի է:
- ե. Հրամանատարի խոսքերից գոտեպնդված՝ նա ոտքի կանգնեց:

- 1) ա, ե
- 2) բ, գ, ե
- 3) ա, գ, դ
- 4) բ, դ

**76. Ո՞ր շարքում կազմությանը պարզ բառ կա:**

- 1) կորուստ, հոնեղ, կծու, ձևույթ
- 2) արժանի, ախորժակ, երասան, ոտնակ
- 3) ձեռք, ուժգին, բանուկ, կաթնուկ
- 4) կտրուկ, մածուկ, օրբան, հիսուն

**77. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը պարզ:**

- 1) շաքար, նշխար, կթան, ամբարտակ
- 2) գողոն, գուշակ, եղունգ, նաժիշտ
- 3) կաղամբ, ընկույզ, բագում, սնոտի
- 4) բոժոժ, հելլեն, հրաման, երաշտ

**78. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը պարզ:**

- 1) թախիծ, վերարկու, արմատ, թիրախ
- 2) պնակ, կախարդ, խնդիր, տրտում
- 3) դատարկ, փոթորիկ, կարոտ, շքեղ
- 4) ժառանգ, ճանապարհ, փառք, վայրագ

**79. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն ընդհանուր արմատ:**

- 1) պատուհան, միջնապատ, պատշար, անպատեհ
- 2) դարակես, դարավանդ, նախնադար, ոսկեդար
- 3) թելադրել, բաղադրություն, բարձրադիր, կարգադրիչ
- 4) գետափնյա, գետնամած, գետաբերան, լեզվագետ

**80. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն ընդհանուր արմատ:**

- 1) սիրասուն, սննդակարգ, անասնապահ
- 2) պարընկեր, անպարագիծ, գուգապար
- 3) ենթակա, կայարան, հրակայուն
- 4) բեռնատար, լիաբուն, ուղտաբեռ

**81. Ո՞ր նախադասության ընդգծված բառի արմատն է մյուսներից տարբեր:**

- 1) ...Կամ ինչպես քաջքերն *այրերի* մթնից,  
Երբ նայում է մարդ քարափի գլխից,  
Կամ թե ուշացած անցնում է ձորով,  
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով...
- 2) Այդպես էլ ծնվեց մեկը նրանցից,  
Ծնվեց նա՝ *Այր* մի՛ Մաշտոց անունով:
- 3) Ես գրում եմ բրուտների *այրի* մասին, որի կիսամթում բրուտը ոտքով պտտեցնում է փայտե չարխի կլոր տախտակը:
- 4) Եվ մութ *այրերից* մամռոտ ժայռերի,  
Թավուտ ծմակի լռին խորքերից,  
Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի  
Արձագանքն ահա լսում եմ նորից:

**82. Տրված բառերից քանի՞սն ունեն ընդհանուր արմատ.**

*արգելք, անարգանք, արգանակ, հարգել, մեծարգո:*

- 1) հինգը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**83. Տրված բառերից քանի՞սն ունեն ընդհանուր արմատ.**

*կտրել, հուսակտուր, աղեկտուր, կտրուկ, կտրատել:*

- 1) երեքը
- 2) չորսը
- 3) երկուսը
- 4) բոլորը

**84. Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի արմատ կա:**

- 1) հուշարար, վրեժխնդիր, որմնասյուն, գերակշիռ
- 2) նյութապաշտ, հագարաբույր, ներաշխարհ, շրջակա
- 3) հողմահալած, տարալեզու, տիկին, ջերմաչափ
- 4) հարկատու, մարդախույս, դավանափոխ, եռաժանի

**85. Ո՞ր շարքի բոլոր բառերում անկախ գործածություն *չունեցող* արմատներ կան:**

- 1) հեռաստան, թաքուստ, խոսուն
- 2) տարրալուծել, խառնվածք, մեղմասահ
- 3) միածին, հենարան, ուղեբեռ
- 4) ոսկեբեր, բարեհույս, գրանշան

**86. Ո՞ր շարքի բոլոր բառերում կա հոյր արմատը:**

- 1) հրանոթ, հրամանատար, հրեղեն
- 2) քամահրել, հուրի-փերի, հրետանավոր
- 3) հրոտ, հրակայուն, հրածին
- 4) հրաժարվել, հուրհեր, հրացան

**87. Ո՞ր շարքի բոլոր բառերում կա պատում արմատը:**

- 1) պատմություն, հրաշապատում, պատմունք
- 2) արծաթապատում, պատմահայր, հնգապատում
- 3) իրապատում, պատմավեպ, դյուցազնապատում
- 4) պատմագիր, անպատում, կառուցապատում

**88. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը բարդ:**

- 1) ծովափ, սրտակեր, վերադարձ, վազանց
- 2) սակագին, գրքասեր, ծածկագիր, խելամիտ
- 3) թոքախտ, ասպազեն, որևէ, ջրաչափ
- 4) սնանկ, բաժնետոմս, բքախեղդ, հացառատ

**89. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը բարդ:**

- 1) բնանկար, մարդախույս, ուխտատեղ, ակնահաճո
- 2) ուղղաթիռ, վիրակապ, ավարառու, էջանիշ
- 3) անասուն, սնափառ, պարսկահայ, մեկնարկ
- 4) անվանացանկ, գորահավաք, հովասուն, քննախույզ

**90. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը բարդ:**

- 1) երկաթուղի, միջնապատ, գրոսայգի, խորագնին
- 2) խմբագրատուն, մեծ-մեծ, մրցադաշտ, անցուդարձ
- 3) ձիարշավ, հանքափոր, հոգեբույժ, սրտաբաց
- 4) մեղմանուշ, երգչախումբ, շուրջպար, ընչագուրկ

**91. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը բարդ:**

- 1) նույնպես, գաղթօջախ, սնափառ, գերկարճ
- 2) վրեժխնդիր, մեղմահունչ, առմիշտ, ոտնաչափ
- 3) մայրամուտ, լիառատ, հականիշ, հուշարձան
- 4) գրագետ, լեռնագնաց, տեղատարափ, ընձառյուծ

**92. Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

- 1) այգեպատ, սևաչյա, լուսահորդ, կորամեջք
- 2) այգեգործ, բարեգութ, ալեծուփ, հմայագեղ
- 3) ցորնամորթ, հնադար, շողակն, հոգեորդի
- 4) հոգատար, հարաճուն, գարեջուր, անբարետես

**93. Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

- 1) հոգեորդի, ոսկեվառ, դրամաշնորհ, կարեվեր
- 2) նկարագարդ, գեղաշուք, լեռնաշխարհ, չարախոս
- 3) հակամետ, լուսամփոփ, դիմանկար, ձյունագես
- 4) նույնակարծիք, մագանոթ, ծաղկաշղթա, անդրադարձ

**94. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անհոդակապ:**

- 1) լողավազան, հոգեհանգիստ, փաստարկել, վիպասան
- 2) ընդամենը, հերարձակ, կնատյաց, որդեգիր
- 3) բազմադետ, հնձատեղ, ոսկրախտ, շաքարավազ
- 4) շանթարգել, նախածանց, ճոճաթոռ, բնավեր

**95. Տրված բառերից քանիստ՞ւմ հոդակապ կա.**

*քարածուխ, տարեդարձ, լուսաստղ, թանապուր, շաքարավազ, փութեռանդ, գրոսայգի, կարմրախտ, զուգերգ, հուզառատ:*

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) ոչ մեկում

**96. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավումներ:**

- 1) բուժկենտրոն, զինգրքույկ, միջբուհական, երկկողմ
- 2) կրթօջախ, խնայողքամարկդ, մարգպետ, շինադր
- 3) քաղբաժին, երթուղի, դասղեկ, ծնողկոմիտե
- 4) ՄԱԿ, պետհամարանիշ, քաղմաս, ֆիզֆակ

**97. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են հապավումներ:**

- 1) ժողդատարան, պետբյուջե, ԱՄՆ, զինղեկ
- 2) աշխգրքույկ, Եվրասիա, բուժկենտրոն, ՈՒԳԸ
- 3) գիտխորհուրդ, ավտոտեսուչ, տեխզնում, կուսակից
- 4) ՋԼՄ, փոխօգնություն, պետնախարար, պետկրկես

**98. Ո՞ր շարքում հապավում չկա:**

- 1) զինավարժանք, դատապաշտպան, սանհանգույց, ջրբաժան
- 2) բուժաթուրմ, բուժքույր, մոլեռանդ, քննադատ
- 3) աշխատաշուկա, զինկոմ, փորձագետ, դասախոս
- 4) հացթուխ, բեռնախցիկ, ճամփեզր, քարտաշ

**99. Ո՞ր շարքի բոլոր բառերն են խառը հապավումներ:**

- 1) Հրագրանիէկ, զինվարչություն, էլցանց, ուսխորհուրդ
- 2) բուժկետ, ԱԺ, քաղձառայող, աշխղեկ
- 3) պետհամարանիշ, շինհրապարակ, ԲՈՀ, ֆիզլուծույթ
- 4) խնայողքամարկդ, բուհ, զինդատախազ, կազմկոմիտե

**100. Ո՞ր նախադասության մեջ հապավում կա:**

- 1) Գյուղապետարանի առաջիկա ծրագրերից մեկն էլ հիմնական ջրատարի նորոգումն է:
- 2) Քրեական գործը կարճվեց դատաբժշկի եզրակացության հիման վրա, և դատաքննությունը ընթացավ ճիշտ հունով:
- 3) Ջորամասի նորակառույց զինապահեստը անհրաժեշտ զինապաշար է կուտակել:
- 4) Պետական վարկերով գյուղգործիքներ գնած գյուղացիները սկսեցին գարնանացանի աշխատանքները:

**101. Ո՞ր նախադասության մեջ հասպտում կա:**

- 1) Ժողգործիքների համույթը ամեն տարի մեկնում է արտասահմանյան հայաշատ քաղաքներ՝ հյուրախաղերի:
- 2) Ուսումնական հաստատությունը առանձին ցուցասրահներ է տրամադրել գիտահանրամատչելի ու գիտամշակութային գրականության համար:
- 3) Հիմնարկի ղեկավարությունը պակաս աշխատատեղեր ունենալու պատճառով սահմանել է խիստ պատասխանատու աշխատակարգ:
- 4) Երկու տարվա՝ զինավարժանքներով լի ծառայությունը շատ արագ հասավ իր վերջնագծին ու ամփոփվեց մի դարչնագույն զինվորական գրքույկում:

**102. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը ածանցավոր:**

- 1) ոգևորություն, կանխիկ, բանբեր, արդյունք
- 2) հակադիր, պարագլուխ, տանջանք, լծկան
- 3) ծորակ, գահավեժ, օժիտ, ծխնելույզ
- 4) խորշակ, հրաժեշտ, աղցան, ընձեռել

**103. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը ածանցավոր:**

- 1) առաջ, ոչինչ, կայք, չվերթ
- 2) առողջ, դիրք, էտոց, պահակ
- 3) տարակույս, դյուրին, կաղին, պահոց
- 4) շարան, վայրի, տուրք, պարտեզ

**104. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը ածանցավոր:**

- 1) տարկետում, արժանի, կարծիք, փառատենչ
- 2) տեսուչ, անկյալ, երջանիկ, հայտնապես
- 3) առտնին, դպրոց, ուժանակ, հարակից
- 4) զգայուն, հպանցիկ, վերադարձ, բանական

**105. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը ածանցավոր:**

- 1) տրամադրություն, փոխնախարար, դրկից, գերակա
- 2) մակերես, դերբայ, դժխեմ, արտասանություն
- 3) տարաշխարհիկ, ներդիր, բաղադրիչ, անդրադարձ
- 4) վերաբերություն, անդամավճար, հակադիր, բացականչել

**106. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը ածանցավոր:**

- 1) հեռաստան, խորաքնին, տենչանք, ընտրովի
- 2) ալիք, տառացի, հուզմունք, գործիչ
- 3) հնչյուն, լուսեղ, քսու, երկրապահ
- 4) միտք, դասալիք, հավաքածու, օրհնյալ

**107. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմված մեկ արմատից և երկու ածանցից:**

- 1) համապարփակ, անընթեռնելի, մակերեսային, չխոսկան
- 2) բուրաստան, վարկավորում, վերաքննիչ, սոցիալություն
- 3) բեմադրիչ, անարժեք, տարատեսակ, համալսարան
- 4) տմարդի, ապավինում, փոխօգնություն, բաղդատական

**108. Ո՞ր շարքի բոլոր բառերում կա միևնույն ածանցը:**

- 1) անբաղդատելի, բաղակցել, տարաբաղադրիչ, բաղեղապատ
- 2) թերարժեք, թերացում, անթերի, թերակշիռ
- 3) առօրյա, առինքնել, առճակատում, առևտրական
- 4) պարագիծ, պարականոն, անպարփակ, բազմապարունակ

**109. Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի ածանց կա:**

- 1) անարժան, տարանցիկ, հակամեխիչ, հնչյունական
- 2) անտրամադիր, գերմարդկային, հարսնացու, անտունի
- 3) արտահագուստ, հակաօդային, գերեվարել, առաջին
- 4) ենթատեսակ, անվանական, վերստուգիչ, երկրորդական

**110. Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի ածանց կա:**

- 1) ընդհատակյա, խոտհարք, առհավատչյա, ընդհանուր
- 2) առժամանակ, համատեղում, անկայուն, խորհրդածություն
- 3) անհաղթելի, առհասարակ, սեթևեթանք, ոսկերչական
- 4) ամենատեղական, աղտոտություն, հետմիջօրե, դյուրընթեռնելի

**111. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերում *-ան* վերջածանց կա:**

- 1) կչկչան, փական, ծորան, շարան
- 2) ոլորան, կայան, գերան, հնձան
- 3) գրնգան, փաթաթան, ճչան, խցան
- 4) իշխան, ձգան, կծան, խթան

**112. Ո՞ր շարքի բոլոր բառերում *-ակ* վերջածանց կա:**

- 1) վարդակ, գիտակ, վտակ, պտուտակ
- 2) կղզյակ, արգելակ, տարբերակ, միակ
- 3) մոլորակ, խաժակ, ալյակ, խոյակ
- 4) ունակ, կողակ, հարսնյակ, ազդակ

**113. Ո՞ր շարքի բոլոր բառերում *ապ-* նախածանց կա:**

- 1) ապշահար, ապերախտ, ապիկար, ապակատար
- 2) ապաքինվել, ապացույց, ապերասան, ապառաժ
- 3) ապաբախտ, ապառիկ, ապստամբ, ապերջանիկ
- 4) ապարոշ, ապարանջան, ապակառուցում, ապաթարց

**114. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերում *-անոց* վերջածանց կա:**

- 1) կուսանոց, վարսավիրանոց, արգելանոց
- 2) տասանոց, կանանոց, թևնոց
- 3) հովանոց, մրջնանոց, հավանոց
- 4) խորդանոց, խոտանոց, փայտանոց



**115. Տրված բառերից քանիստ՞ում *-ազին* վերջածանց կա.**

*ցնծագին, սրտագին, գլխագին, ցավագին, փրկագին, կարոտագին, հիվանդագին, սակագին, ջերմագին, սպրանքագին:*

- 1) բոլորում
- 2) վեցում
- 3) հինգում
- 4) յոթում

**116. Տրված բառերից քանիստ՞ում *-ու* վերջածանց կա.**

*սարսափագրու, կծու, հարսնացու, հատու, հասու, աչառու, ձեռնտու, ծովակատու, սերմացու, վրիժառու:*

- 1) յոթում
- 2) վեցում
- 3) բոլորում
- 4) հինգում

**117. Տրված բառերից քանիստ՞ում կա *-կան* վերջածանցը.**

*ընտանեկան, վարձկան, հարսանեկան, տարեկան, գուժկան, որսկան, օրական, ամսական, հոգեկան, լացկան:*

- 1) վեցում
- 2) չորսում
- 3) ութում
- 4) բոլորում

**118. Տրված բառերից քանիստ՞ում *չկա -անի* վերջածանցը.**

*ավագանի, պատանի, ընտրանի, լեզվանի, նագանի, նամականի, գեղանի, ընտանի, պիտանի, եռաժանի:*

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**119. Տրված բառերից քանիսի՞ն արմատին կարող է միանալ *-ք* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

*օղահեն, խնամատար, պարտատեր, օրասպահիկ, հավանություն, սպուշություն, անհետացում, ազատամտություն, թուլականություն, կամարակապ:*

- 1) չորսի
- 2) հինգի
- 3) վեցի
- 4) յոթի

120. Տրված բառերից քանիսի՞ օ՞ արմատին կարող է միանալ **-եղ** վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.

*բարձրագույն, ահարկու, երկարաշունչ, գորագունդ, երվինագույն, քաղցրահնչյուն, մրահոն, համերգ, հոնորար:*

- 1) չորսի
- 2) վեցի
- 3) յոթի
- 4) իննի

121. Տրված բառերից քանիսի՞ օ՞ արմատին կարող է միանալ **-իք** վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.

*ալեքսիություն, ավետաբեր, կեղծարար, հոգեգալուստ, ազգասիրաբար, թաղապետարան, անհիշաչար, տարակարծություն, թրատել, հավաստագիր:*

- 1) հինգի
- 2) վեցի
- 3) յոթի
- 4) ութի

122. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) թռչնաբուծարան, արձակագիր, մանկաբարձուհի, սերտաճում
- 2) պատմավեպ, հայրենանվեր, մատնահետք, գործուղում
- 3) տնտեսվարություն, ազատամարտիկ, ատենադպիր, չվացուցակ
- 4) վերնախավ, դպրոցահասակ, պատվարժան, բարեկեցիկ

123. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) կայարանապետ, ստորադասական, միջնակարգ, դպրոցամերձ
- 2) պարբերաբար, վարկառու, ժողովրդավար, ակնահաճո
- 3) ելևէջում, բազմաբնույթ, հարկադրանք, տարակարծիք
- 4) սառցապատ, թռչնավանդակ, հիշարժան, տաղերգու

124. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ **չկա**:

- 1) առաջնային - **առաջ**՝ արմատ, **ին** և **ային**՝ ածանցներ
- 2) միջնապատ - **միջին** և **պատ**՝ արմատներ, **ա**՝ հոդակապ
- 3) խորհրդատու - **խորհ** և **տու**՝ արմատներ, **ա**՝ հոդակապ, **որդ**՝ ածանց
- 4) վերանորոգում - **վեր** և **նորոգ**՝ արմատներ, **ա**՝ հոդակապ, **ում**՝ ածանց

**ԲԱԺԻՆ 3**

**ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**1. Ո՞ր շարքի բոլոր բառերն են գոյականներ:**

- 1) համհարզ, կնգուղ, օթևան, վարսեղ
- 2) խոչակ, պարույկ, թուխպ, ճամփորդ
- 3) խոհուն, ուսմունք, բազկերակ, կեռման
- 4) մթնշաղ, ընչացք, թմբիր, շինծու

**2. Ո՞ր շարքի բոլոր բառերն են գոյականներ:**

- 1) խնդրագիրք, վեհապանձ, սովորույթ, բարություն
- 2) շոյանք, մոմլաթ, հարված, կանթեղ
- 3) ուղղաձիգ, երեկո, խաղաթուղթ, անդաստան
- 4) լեռնանցք, ժամացույց, ոմանք, տարի

**3. Տրված բառերից քանի՞սն են գոյական.**

*անբեկանելի, ունելի, կիսադեմ, տխրադեմ, արդուզարդ, նկարազարդ, շարական, ընտանեկան, խորագին, գլխագին:*

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) ութը

**4. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրանիշ գոյականներ:**

- 1) տոհմաձառ, հենասյուն, պատվիրակ, պտուտակ
- 2) հակինթ, դիտորդ, կողմնակից, բաժակ
- 3) գորաերթ, սպա, անապատական, տառելի
- 4) հավատարմագիր, ծաղկատոն, կիզակետ, բաժնետոմս

**5. Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են դրված եզակի թվով:**

- 1) տանուտեր, պատկեր, հավաք, միտք
- 2) աղանդեր, գեղձեր, կաթնասեր, տերտեր
- 3) թթվասեր, գիրք, ջղեր, դիրք
- 4) պատվեր, համայնք, բուշաններ, փառք

**6. Ո՞ր շարքում են միայն անհոգնական գոյականներ:**

- 1) Ֆիլիպիններ, մաթեմատիկա, քննություն, կաթ
- 2) գաղտնիք, գինի, աշակերտություն, մարմար
- 3) բարկօղի, հանրահաշիվ, բեռ, հոգևորականություն
- 4) քիմիա, մթություն, դարվինիզմ, բնապաշտություն

**7. Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են դրված հոգնակի թվով:**

- 1) ըուպեներ, սուսեր, նոթեր, կրոններ
- 2) օրեր, անցք, բանալիներ, սրտեր
- 3) նվերներ, հողեր, հրավերք, ազգեր
- 4) գիշերներ, պատճեններ, բեռներ, վաչկատուններ

**8. Տրված գոյականներից քանի՞սն են դրված եզակի թվով.**

*պարոնայք, գորք, Վարդանանք, տնօրհներք, Արամենք, խոհեր, կարծիք, տարիք, պասպեր, միտք:*

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

**9. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

- 1) տեսաշար, ծաղկանախշ, շարասյուն, ձկնկուլ
- 2) օրինագիծ, ժանր, թագակիր, խաչքար
- 3) վագր, համերգաշար, թռչնաբույն, մեծատուն
- 4) մեծատառ, անասնակեր, լրագիր, որսաշուն

**10. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

- 1) հավատարմագիր, մարգատոն, ուղեցույց, հիվանդայց
- 2) մենապար, մեկնակետ, գիսաստղ, ճամփեզր
- 3) հաղորդալար, գորացույց, նավթամուղ, ծխակարգ
- 4) հետոնախորշ, կամարասյուն, մաքսամենզ, ջրէջք

**11. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

- 1) հայագետ, գործագուրկ, մարդասեր, ծաղկաթերթ
- 2) սերմնացան, գորամաս, անասնապահ, նետաձիգ
- 3) չափահաս, վառելիք, ծխամորճ, ձրիակեր
- 4) երկնաքեր, սևամորթ, նետաձիգ, քարտաշ

**12. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

- 1) տեսակետ, օրացույց, շարասյուն, ռուս
- 2) խաչակիր, վաչկատուն, վագր, վիպագիր
- 3) շիկամուկ, այգեգործ, կաթնասուն, հերթապահ
- 4) օրինագիծ, ժանր, նախագահ, անտառահատ

**13. Տրված բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ.**

*մեծատուն, լրագիր, նախամարդ, կրունկ, նստացույց, գրավատուն, սպա, գրոշ, հացատուն, պատճեն:*

- 1) չորսի
- 2) հինգի
- 3) վեցի
- 4) յոթի

**14. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

- 1) գործատերեր, նշագեղձեր, կողմնացույցներ, լեզվաբաններ
- 2) աստղագետներ, ոտնաձայններ, որմնասյուններ, արծվաբներ
- 3) նյութամուկներ, մարզադաշտեր, սպունգներ, լուսամուտներ
- 4) կոնյակագործներ, գազամուղներ, դաշույններ, խտանյութեր

**15. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

- 1) հավատարմագրեր, ծաղկատոներ, կիզակետեր, գետեզրեր
- 2) տոհմածառեր, հենասայուներ, թռռնատերեր, քղանցքներ
- 3) հակինթաշարեր, լսպտերավառեր, կողմնացույցներ, նավթամուղներ
- 4) գորաերթեր, շտաբներ, բելառուսներ, ցուցամուղներ

**16. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ չկա:**

- 1) բամբիռներ, վերնագրեր, հողաթմբեր, ծոռեր
- 2) նռներ, հորաքույրեր, փոստարկղեր, գառներ
- 3) սրճեփեր, կայսրեր, սանրեր, սողուններ
- 4) մատենագիրներ, աստղեր, ասուլիսեր, քանթարներ

**17. Բառերից քանիստ՞ւմ հոգնակի թվի կազմության սխալ կա.**

*ճամփեզրեր, մեծատներ, անցագրեր, քարայծներ, սպունգներ, մանկագիրներ, սպիեր, վաչկատներ, դաշնագրեր, ֆիդայիներ:*

- 1) չորսում
- 2) հինգում
- 3) վեցում
- 4) յոթում

**18. Ո՞ր շարքում ուղղական հոլովով դրված բառ չկա:**

- 1) թղթի, քրոջ, այծենի, նախահոր
- 2) ընկերոջ, ամսվա, բակի, թիֆլիսեցի
- 3) տիրոջ, ծխնի, մորեղբոր, ամառվա
- 4) իրար, օրվա, տիկնոջ, թառմայի

**19. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բացառական հոլովով:**

- 1) մերոնց, Դ-վինից, Ավանից, Վանից
- 2) վաղուց, անկողնուց, ծերունուց, լուցկուց
- 3) օդուց, պատանուց, ոսկուց, նեղուց
- 4) մարդուց, գինուց, ամուսնուց, այգուց

**20. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դրված բացառական հոլովով:**

- 1) ձիուց, պատարագից, գոտուց, մարդուց
- 2) եղևնուց, բարդուց, ոգնուց, կտուց
- 3) Գ-ուզարքից, Արփաչայից, Ակնաղբյուրից, զինակից
- 4) անունից, օրվանից, սմբակից, կուսակից

**21. Ո՞ր շարքի բոլոր բառերի գործիական հոլովը կարող է կազմվել *Դ*-ով:**

- 1) արյուն, կատաղություն, մաս, երդում
- 2) անկյուն, համադրում, սյուն, գորություն
- 3) անուն, պատմություն, մեջբերում, կատարում
- 4) այրել, խափանում, խիզախություն, իրավունք

**22. Գոյականներից քանի՞սը ներգոյական հոլովածն չունեն.**

*դուստր, ժամանակ, դասագիրք, շուն, մանուկ, հորեղբայր, տանտեր, համալսարան, խմբագրություն, աղջիկ:*

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) ինը

**23. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում միայն /ի հոլովման:**

- 1) լույս, կաղնի, մանուկ, տարի
- 2) գալուստ, մրրիկ, եզ, քաղաք
- 3) գնչու, ավերում, շաբաթ, ծագում
- 4) փոթորիկ, առու, վայրկյան, սարդ

**24. Ո՞ր շարքում /ի հոլովման ենթարկվող բառ չկա:**

- 1) հայելի, ուռենի, արփի, ընկուզենի
- 2) դիմում, հանդիպում, կառուցում, ձուլում
- 3) ժամանել, երկրպագել, ուտել, շանթարգել
- 4) գետածի, տիկին, քաղաքադուռ, ամառ

**25. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում /ու հոլովման:**

- 1) այգի, արարել, որդի, կաղին
- 2) ոզնի, պատանի, հոգեորդի, ամուսին
- 3) անկողին, ձի, կիրակի, մարդ
- 4) օղի, բանալի, Աստված, տատ

**26. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են ենթարկվում /ու հոլովման:**

- 1) գինի, գարի, հայելի, սպասել
- 2) մորթի, բարդի, ոզնի, պապ
- 3) կաղնի, ամուսին, ընկուզենի, անկողին
- 4) որդի, ձի, ծերունի, քաղաքացի

**27. Ո՞ր նախադասության մեջ /ու հոլովման ենթարկվող գոյական չկա:**

- 1) Ամուսինն անցյալ տարի էր մեռել՝ ոչ մի ժառանգություն չթողնելով:
- 2) Չին ճանաչում էր այդ հովտի բոլոր բույրերն ու հոտերը:
- 3) Չորակներում հիմա էլ կա Մանասի տնկած այգին՝ սպիտակ ու կարմիր վարդերի թփերով:
- 4) Անին չէր մոռացել ո՛չ նրա սև վերարկուն, ո՛չ գունատ դեմքը:

**28. Բառերից քանի՞սն են ենթարկվում /ու հոլովման.**

*տատ, գրել, ոչ ոք, այրի, գինի, որդի, վարդենի, կաղին, սոճի, նավաստի:*

- 1) վեցը
- 2) յոթը
- 3) չորսը
- 4) հինգը

**29. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:**

- 1) ձմեռ, ձգտում, որմնասյուն, սղոցածուկ
- 2) բեռ, թոռ, հանգիստ, նուռ
- 3) ծունկ, ամառ, մանուկ, շարժում
- 4) լեռ, անկյուն, գարուն, փրկություն

**30. Ո՞ր շարքի *աչ* բոլոր բառերն են ենթարկվում *աջ* հոլովման:**

- 1) հարսնաքույր, տեր, սկեսրայր, կին
- 2) հողատեր, սկեսուր, իրիցկին, գործատեր
- 3) տիկին, ընկեր, բուժքույր, քեռակին
- 4) աներ, հանքատեր, տալ, հորաքույր

**31. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:**

- 1) գիշեր, ամիս, շաբաթ, ժամ
- 2) լուսե, տարի, առավոտ, վաղը
- 3) օր, մահ, երեկ, կեսգիշեր
- 4) ժամանակ, ցերեկ, դար, երբ

**32. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:**

- 1) ամիս, վայրկյան, վաղուց, կեսգիշեր
- 2) շաբաթ, կեսօր, միջնադար, առաջ
- 3) հունիս, տարի, առավոտ, ճաշ
- 4) երբ, ամառ, այսօր, ժամանակ

**33. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

- 1) դրություն, անկյուն, անձնանուն, ընկերություն
- 2) գարուն, տուն, բազմանկյուն, ջրշուն
- 3) գրություն, ձյուն, ավյուն, մականուն
- 4) շարասյուն, գալուստ, դուռ, Հարություն

**34. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

- 1) սյուն, շարժում, տուն, ուրախություն
- 2) գարուն, խաբեություն, հայրանուն, շարասյուն
- 3) արյուն, անկյուն, անուն, քավություն
- 4) եռանկյուն, կորյուն, հեռագրատուն, շուն

**35. Ո՞ր շարքի *աչ* բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

- 1) հենասյուն, խաղատուն, եռանկյուն, մտերմություն
- 2) շուն, դերանուն, անկյուն, ձյուն
- 3) թողություն, սրություն, հիմնասյուն, կարկաչյուն
- 4) մականուն, կեցություն, թոնրատուն, արյուն

**36. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

- 1) եղբայր, գարուն, դեղատուն, բազմանկյուն
- 2) ցասում, հուշասյուն, ծանրություն, մականուն
- 3) վանահայր, մայր, սուրանկյուն, ազգանուն
- 4) նախահայր, ուրախություն, հավասարում, գայլաշուն

**37. Տրված բառերից քանի՞սն են ենթարկվում *ա* ներքին հոլովման.**

*անուն, գարուն, դոփյուն, հեռագրասյուն, գումարում, դեղատուն, քաջություն, անկյուն, գինետուն, աշուն:*

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) բոլորը

**38. Ո՞ր նախադասության մեջ որոշիչ հոդի սխալ գործածություն կա:**

- 1) Անտոնն աղվեսին ուսը գցեց, ես մոշահավերը վերցրի, և մենք վերադարձանք:
- 2) Հանկարծ քույրն երևաց, ինձ տեսավ և կարծեց, թե հանդիմանելու եմ ուշացման համար:
- 3) Այդ օրն այնքան ուրախ էի, որ Օհան ապերն էլ նկատեց իմ ուրախությունը:
- 4) Գարունը այգիներից բերում էր ծառերի բույրը, մեզ պարուրում անասելի ջերմությամբ:

**39. Ո՞ր տարբերակում ստացական հոդի գործածություն չկա:**

- 1) Եվ ո՞ւմ համար, էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի Միրոսս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով:
- 2) Հոն կա մոխի՜ր... հիշատակ... Այլակքդ հուզի՜ն թող, Լըճակ:
- 3) Խորշ մը կար, որ զիս չըծաղրեր, Այն լուռ փոսն էր գերեզմանիս...
- 4) Մի՛ գլորիր ինձ, երբ ընկած եմ ես, Եվ մի՛ կործանիր անօգ գայթաճիս:

**40. Ո՞ր նախադասության մեջ ստացական հոդի գործածություն կա:**

- 1) Ժամանակը լավագույն ուսուցիչ է:
- 2) Աշխարհիս աղմուկը իրերի հավիտենական ծփանքն է:
- 3) Մահկանացուս սովոր է իրեն արդարացնել իր սեփական դատավորի, այսինքն՝ իր խղճի առաջ:
- 4) Ամենքս ազնվությունն ու երախտագետ բարեկամությունը մարդկային հոգու բնածին հատկություններն ենք համարում:

**41. Ո՞ր տարբերակում դիմորոշ հոդի գործածություն կա:**

- 1) Վերջերս նրան քիչ էի հանդիպում. խուսափում էր ինձնից:
- 2) -Զնքուշ լուսնի շուշան-փոշին Մաղեց հեզ գետի վրա, Մեղմիկ խշշաց ցորեն, ցողուն, -Միրոսս անդորր կծփա:
- 3) Բայց ո՞ւր էր մայրս դալուկ, Ա՛խ, նա էլ էր որբացել, Արցունք դարձել ու մանուկ Աչքիս մեջ էր մնացել:
- 4) Նվաստս դարձա մատնության գործիք, Եվ ներում չունեմ էլ ես հավիտյան:

**42. Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդի գործածություն կա:**

- 1) Միամիտդ դարձար բանասարկուների ձեռքին խաղալիք:
- 2) Աշխարհս մե փանջարա է,- թաղերումեն բեզարիլ իմ....
- 3) Միրում եմ աչքերիդ տխրությունը խորին....
- 4) Այցս ապարդյուն էր. այդպես էլ չհաշտվեցիմք:



**43. Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդի գործածություն կա:**

- 1) Օրս այդպես էլ անհիմաստ անցավ:
- 2) Անցավ կյանքս մի գիշերվա երազի պես:
- 3) Օրերս Երևան է ժամանելու նշանավոր երաժիշտը:
- 4) Ինքս էլ չիմացա՝ ինչպես հայտնվեցի մի մութ այրում:

**44. Ո՞ր նախադասության մեջ ցուցական հոդի գործածություն կա:**

- 1) Բախտս չի բերում. միշտ հանդիպում եմ նյութապաշտ գործընկերների:
- 2) Կյանքն անցողիկ է, աշխարհս՝ ունայն:
- 3) Մանկությունս նման էր ավիս մեջ պահած ոսկեթև թիթեռի, որը չքացավ ակնթարթի պես:
- 4) Շողորորթս եմ մեղավոր այս պատժի համար. պետք չէր խոնարհվել պաշտոնի համար:

**45. Տրված նախադասություններում հոդի ո՞ր տեսակը գործածված չէ:**

*- Երգերդ աղբյուր են զուլալ՝  
Մեր երկրի արևից բխած:  
- Ա՛խ, մենք բոլորս ենք սիրել հեքիաթներն այդ լույս,  
Պատմություններն այդ՝ զրված մարդկանց մասին մեծ...  
- Չե՞ս զարմանում, Տե՛ր իմ, որ ես դիմում եմ քեզ,  
Ես՝ բանաստեղծս անահ և մարտնչողս արի...  
- Եվ զուցե միայն սենյակում մի խուլ,  
Գլուխը թեքած պատկերիս վրա՝  
Կնայի մի կին աչքերիս տխուր,  
Եվ կարցունքոտվեն աչքերը նրա:*

- 1) ստացական
- 2) դիմորոշ
- 3) որոշիչ
- 4) ցուցական

**46. Ո՞ր նախադասության մեջ հոդի գործածության սխալ չկա:**

- 1) Կանչենք այն մարդկանց, որոնք սպասում են իրենց մրցանակներին, պարգևներին կամ որևէ այլ նվերին:
- 2) Այդպիսի խորհրդանիշներ օգտագործում է ամեն երկիրը:
- 3) Դիշտ է, մենք նրանց չենք տեսնում, բայց դրա փոխարենը նրանք մեզ միշտ պահում են իրենց տեսադաշտում:
- 4) Երբ շնչելը անակնկալ դժվարացավ, Ալխոն հասկացավ, որ զառիվերն սկսվել է:

**47. Ո՞ր նախադասության մեջ հոդի գործածության սխալ կա:**

- 1) Ամռան երկար օրերին էլ արևն հագիվ մի քանի ժամ է լույս տալիս Մթնածորի անտառներին:
- 2) Նալբանդյանի կերպարը հայ գրականության մեջ պատկերել են Եղիշե Չարենցը, Բաֆֆին, Պետրոս Դուրյանը. վերջինիս պիեսում Նալբանդյանը գործող անձանցից մեկն է:
- 3) Արքայադուստրն զգում էր այդ երկնային բուրմունքը, արբեցած էր նրանով:
- 4) Աստղերը արշալույսին չքացան, սուզվեցին անհունի մեջ:

**48. Ո՞ր շարքում ածական չկա:**

- 1) խոխոջյուն, սրճագույն, թանկարժեք, ոստրե
- 2) անշուշտ, հիմնովին, խաչքար, զորակոչիկ
- 3) բրոնզաձույլ, առաջին, մշտապես, խորտիկ
- 4) դժգոհ, ներքուստ, հավերժ, առանձնապես

**49. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են ածականներ:**

- 1) արևելյան, թունավոր, մարդկային, քնքուշ
- 2) կողմնորոշիչ, բանախոս, պերճաշուք, մեղմ
- 3) ուշիմ, գծավոր, պատեհապաշտ, դաժան
- 4) գիտական, ապաշնորհ, առատաձեռն, բարի

**50. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:**

- 1) բաղձալի, ամենևին, վայելուչ, մկանուտ
- 2) առաջնային, աշալիսի, բարձրորակ, մշտապես
- 3) ավելորդ, վճռորոշ, խավարամած, հմայիչ
- 4) մարդախույս, զարմացած, միակ, պարզունակ

**51. Ո՞ր նախադասության մեջ ածական չկա:**

- 1) Սպանությունը կատարվել էր գյուղից հեռու, և այդ նույն օրից էլ Սիմոնը հանդիպած յուրաքանչյուր մարդու պատմում էր իր գլխով անցածը բոլոր մանրամասնություններով:
- 2) Նա նստել էր անկյունում ու մտածում էր իր կրտսեր եղբոր մասին, որ երկու տարի առաջ վերադարձել էր զինվորական ծառայությունից:
- 3) Թեև Անտոնը գրագրին պատվիրեց, որ ոչ ոքի չհայտնի գրության մասին մինչև իր վերադարձը, սակայն լուրը տարածվեց կայծակնային արագությամբ:
- 4) Առաջինը գյուղ մտնողները սկսեցին բաց անել տների փակ դռները, և կես ժամ չանցած՝ սկսվեց թալանը:

**52. Ո՞ր նախադասության մեջ ածական կա:**

- 1) Ես բնավ ցանկություն չունեմ միևնույն գրվածքը կարդալու:
- 2) Իշխանի փառքն ու հարստությունը չափվում են հասարակությանը տված օգուտով:
- 3) Ծնողները պարտավոր են իրենց զավակներին որակյալ կրթությամբ զինել:
- 4) Փառասիրության բաղձանքը մարդուն հաճախ չափից ավելի է խոսել տալիս իր արած գործերի մասին:

**53. Ո՞ր նախադասության մեջ բաղդատական աստիճանով դրված ածական կա:**

- 1) Կորուստն այնքան մեծ էր, որ նրանց համար խելացի ու գործնական էին բոլոր խորհուրդները:
- 2) Երևան են ժամանել յոթանասուն խոշորագույն աստղաֆիզիկոսներ:
- 3) Իմացած եղիր, որ ամենահզորը քո աստվածությունն է:
- 4) Իրենք թեկուզ մի թեթև բարկացան, բայց դա լավ էր եղել ավելի, քան բոլոր խնամախոսներով ու նշանդրեքներով ամուսնությունները:

**54. Ո՞ր նախադասության մեջ գերադրական աստիճանով դրված ածական կա:**

- 1) Երբեմն մի ահագին բազմություն լիքը զամբյուղներով ուխտ էր գնում Սուրբ Մարիամ եկեղեցի:
- 2) Կյորեսը մեռնում էր, և ամենից ավելի նրան մաշում էր Գորիսը՝ մեծամեծերի այդ քաղաքը:
- 3) Խուլ գյուղեր կային անտառների խորքում, բարձր-բարձր լեռների լանջերին և չափազանց խոր ձորերում:
- 4) Շուկայում նա գերադասում էր մրգավաճառների խանութները, որոնք գրավում էին հրապարակի մեծագույն մասը:

**55. Ո՞ր տարրերակում գերադրական աստիճանով դրված ածական կա:**

- 1) Բյուրավոր բանակներ ելան՝ վիթխարի, համարձակ, անահ:
- 2) Կարծես մանկական կապույտ երագում  
Ամեն ինչ այնպես ժպտում էր աննենգ:
- 3) Ամեն տեսակ երգ երգեցի. ամենից լավ տաղն է էլի,  
Սայաթ-Նովի անմահական, դրախտային խաղն է էլի...
- 4) Եկար հուշիկ, անչար ավաղներով,  
Օրորներով ամենօրոր...

**56. Տրվածներից քանի՞սն են արտահայտում ածականի գերադրական աստիճանի իմաստ.**

*ամենակույ, ամենագորեղ, ամենահաղթ, ամենագութ, ամենաբարի, ամենագնաց, ամենադավ,  
ամենագետ, ամենակեր, ամենատես:*

- 1) երեքը
- 2) երկուսը
- 3) չորսը
- 4) բոլորը

**57. Տրված ածականներից քանի՞սը համեմատության աստիճան չունեն.**

*անտանեի, թանկ, ճաղատ, առատածեռն, սովորական, մետաքսե, հղի, նրբագաց, համր,  
բոկոտն:*

- 1) երեքը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) վեցը

**58. Ո՞ր շարքում թվական չկա:**

- 1) հնգապատիկ, քսաներորդ, կես, միակ
- 2) բյուր, միլիոն, բագում, ոչ մի
- 3) հնգյակ, եռակի, առաջնային, միավոր
- 4) բազմիցս, քառակուսի, որերորդ, տասական

**59. Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

- 1) Նրան պատասխանեց կոշնակի ձայնը, որ քանի՜ անգամ լսելի եղավ եկեղեցու բարձրությունից ու հիշեցրեց ճաշի ժամը:
- 2) Տասնյակ ձիավորներից առանձնացավ դրոշակակիրը, որը հանեց գոտուց քարշ ընկած շեփորը և հնչեցրեց:
- 3) Զսանամյա արքայազնը նստեց բազմոցին, և կրկին ջերմ արտասուքը սկսեց հեղեղի նման թափվել նրա աչքերից:
- 4) Ոչ հեռավոր անցյալում՝ քառորդ դար առաջ, այստեղ հարթ ու հողածածկ տանիք չունեի միայն հինավուրց գմբեթարդ եկեղեցին:

**60. Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

- 1) Մեզ համարներ տվեցին ու խմբերի բաժանեցին. գույգ թվակիրները մի քանի քայլ առաջ եկան:
- 2) Ինձ խմբի ավագ նշանակեցին, ու ես տեսա, որ թեկուզ փոքրիկ, թեկուզ յոթնոգանոց խմբի գլուխ կանգնելն ինձ դուր է գալիս:
- 3) Դ-ասարանների միջև անցկացվող մրցությունն ավարտվեց, և նրանք՝ և՛ պարտված ութերորդիները, և՛ հաղթած յոթերորդիները, բարձր աղաղակեցին:
- 4) Ուսուցչուհին հրահանգեց, որ առաջին շարքը պիտի վազի մինչև աղբյուր, մյուսը՝ սղոցարաններ:

**61. Ո՞ր նախադասության մեջ քանակական թվական կա:**

- 1) Այդ ժողովից մի քանի օր հետո Նիկողոս աղան զարհուրելի ծաղրուծանակի ենթարկվեց:
- 2) Ով տանը ժամացույց ուներ, անմիջապես նայում էր և սլաքներն ուղղում յոթից քառորդ անց:
- 3) Երեկոյան, երբ մենք բաց էինք թողնում մեր թուղիկները, թվում էր, թե քաղաքի վրա լողում են տասնյակ լուսիններ:
- 4) Անձրևի տասներորդ օրը գետի ջուրն այնքան առատ էր, որ կարող էր սայլերը քշելով տանել:

**62. Ո՞ր նախադասության մեջ է թվականը փոխանվանաբար կիրառվել:**

- 1) Ծակատագրի բերումով երկու մեծ բանաստեղծների ծանոթությունը տեղի է ունեցել բավական ուշ:
- 2) Թերևս Չարենցի առաջին շրջանի ստեղծագործություններում հնարավոր լինի ցույց տալ Իսահակյանին հիշեցնող տողեր:
- 3) Երկուսի համար էլ Տերյանը կատարելատիպ էր, բանաստեղծական արվեստի չափանիշ:
- 4) Երբ Ավետիքը դառնում է յոթ-ութ տարեկան, ծնողները նրան տալիս են սովորելու գյուղի ուսումնարանում:

**63. Ո՞ր նախադասության մեջ թվականի կազմության սխալ ձև չկա:**

- 1) Նոր բնակարան վարձելու առաջի օրն ինձ անսովոր էի զգում, հետո վարժվեցի:
- 2) Եվ Նոյը սպասեց դարձյալ յոթը օր, և խոր գիշերվա մեջ երկիրը հանդարտ ներքաշում էր ջուրը:
- 3) Բոք շունը գելխեղդ էր, բրդոտ գամփռ, ես՝ կարմիր թշերով, ոտից գլուխ տասչորս տարեկան:
- 4) Երևաց երկրորդ շունը, երրորդը, շների հետևից էլ՝ Պանինը:

**64. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:**

- 1) որևէ, այսքան, միմյանց, յուրաքանչյուր
- 2) նրանք, որտեղ, մամօրիմակ, բոլոր
- 3) ինչու, որպեսզի, ամեն մի, ընդհանրապես
- 4) ինչպես, ամենևին, միևնույն, իրար

**65. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:**

- 1) այսինչ, այստեղ, այսպես, այսօրիմակ
- 2) նույնպիսի, նույնչափ, նույնքան, միևնույն
- 3) ոչ ոք, ոչ մի, ոչինչ, ոչ միայն
- 4) քանի, քանիսը, քանիերորդ, քան

**66. Ո՞ր շարքում դերանուն չկա:**

- 1) որովհետև, որտեղ, որպեսզի, ոչ
- 2) այսուհետև, այսպես, այսօր, այսինքն
- 3) ինքնուրույն, ինքնին, ինքնըստինքյան, ինքնիրեն
- 4) քանակ, քան, քանի, քանորդ

**67. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված բառը դերանուն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Դու ոչ թե սիրում **այլ** լոկ տանջում ես քո կասկածներով:
- 2) **Այլ** է կարոտը հիմա հրավառ ու բորբ:
- 3) Ընկերությունը բաժակաճառով չէ **այլ** գործով:
- 4) Վաղուց ոչնչից չեմ դժգոհում **այլ** համակերպվում եմ:

**68. Ո՞ր նախադասության մեջ դերանուն չկա:**

- 1) Տեսնելով ախոռապետի լկտիությունը՝ Վասակը՝ իբրև արժանապատիվ հայորդի, ապշում է և մտածում, որ հայերը երբեք նման բան չէին անի:
- 2) Փայտահատը հետ քաշվեց ու սոսկումով նայում էր, թե ինչպես են վերքից ընկնում մերթ կարմիր արյան նման, մերթ վճիտ արցունքի պես կաթիլները:
- 3) Օրերից մի օր Արշակը սպարապետի հետ գնում է՝ շրջելու Շապուհի ախոռներում, որտեղ պահվում էին ցեղական հազվագյուտ նժույգներ:
- 4) Թագավորը տազնապած ու հուզախոռով հայտնում է բոլորին, որ խուճապի մեջ չընկնեն և սպասեն նոր լուրերի:

**69. Ո՞ր նախադասության մեջ դերանուն չկա:**

- 1) Ակսել Բակունցն առասպելի հերոսի պես ընդամենը մի քանի տարում սովորական գյուղթղթակցից դարձավ մեծ գրող:
- 2) Գավառական փոքրիկ քաղաքում ավտոմեքենա տարին մեկ է երևում, իսկ փողոցներում էլ մարդ չկա:
- 3) Մայրը, վերջալույսի արևի շողերից աչքերը ձեռքով ծածկելով, նայում էր կածանի կեռումեռ պտույտին և սպասում, թե երբ են երևալու հարսն ու աղջիկը:
- 4) Առաջին երկու շաբաթը շատ արագ անցավ, նորեկները սովորեցին գյուղին, և ամեն ինչ մտավ հունի մեջ:

**70. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են առարկայի հատկանիշ ցույց տալիս:**

- 1) ամեն մի, այսչափ, որքա՞ն, ինչպիսի՞
- 2) ուրիշ, այդպես, ինչ-որ, այսպիսի
- 3) ո՞րերորդ, ոչ ոք, իրար, յուրաքանչյուր
- 4) ինչո՞ւ, այնքան, որոշ, այլ

**71. Ո՞ր տարբերակում է ընդգծված դերանունը առարկայի հատկանիշ ցույց տալիս:**

- 1) **Ուր** էլ լինեն, չեն մոռանա, ես ողբաձայն երգերը մեր:
- 2) **Ինչքա՞ն** ցավ են տեսել ես, Նենգ ու դավ են տեսել ես:
- 3) Ախր ես **ինչպե՞ս** վեր կենամ գնամ, Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
- 4) **Ի՞նչ** են տարել նրանք կյանքից, թե ի՞նչ տանես դու քեզ հետ...

**72. Ո՞ր տարբերակում ընդգծված դերանունը գործողության հատկանիշ կամ հանգամանք չի մատնանշում:**

- 1) **Ո՞ւր** են վազում ծեր ու ջահել, Մարդկանց այս ի՞նչ է պատահել...
- 2) **Ո՞նց** է ժպտում իմ հոգին Չարին, բարուն՝ ամենքին...
- 3) Ի՞նչ է ասում **այդ** գիրքը և ի՞նչ է բարբառում:
- 4) Լսո՞ւմ ես՝ **այդտեղ** իմ սիրտն է թաղած...

**73. Ո՞ր շարքում են միայն առարկայի հատկանիշ ցույց տվող դերանունները:**

- 1) բոլոր, ոչինչ, այլևայլ, այսինչ
- 2) այսչափ, այսպես, այդքան, միևնույն
- 3) ոչ մի, ուրիշ, քանի՞, ինչ-որ
- 4) միմյանց, այսքան, որոշ, ոմն

**74. Ո՞ր նախադասության մեջ է դերանունը առարկայի հատկանիշ ցույց տալիս:**

- 1) Թռչուններն էլ էին զուգվել, և այնպե՛ս փայլում էին սարյակների սև փետուրները:
- 2) Ինչպիսի՛ միամիտ պարզությամբ նրանք ինձ բարի ճանապարհ ասացին:
- 3) Մյուսների պես նա մոտեցավ ինձ ձեռք տալու, տրեխի ծայրերն իրար դիպան, քիչ մնաց՝ ընկներ:
- 4) Պասպս այնքան էր պատմել իր գլխով անցածը մեզ և հյուրերին, որ հենց խոսքի կծիկը հետ տար թե չէ, մենք պիտի իմանայինք, թե ինչ է պատմելու:

**75. Ընդգծված դերանուններից քանի՞սն են ցույց տալիս առարկայի հատկանիշ:**

*Ծովն էլ օրորեց նրա մանկությունը, **ողջ** կյանքը՝ օժտելով բանաստեղծական երևակայությամբ: Նարեկացուն «ասպտամբ հանճար» կոչեցին ֆրանսիացիները և **նրան** կանգնեցրին Դոստոևսկու կողքին. «Մատյանի» մեջ պեղեցին **այն** դարաշրջանի մտահոգությունները:*

*Նա նման է հորիզոնի. որքան հեռանում ես **նրանից**, նույնքան մոտենում է ինքը, և որքան մոտենում ես նրան, **այնքան** հեռանում է ինքը:*

*Աղոթատեղիի առաջ բացվում է ծովը իր **ամբողջ** գեղեցկությամբ, քիչ հեռու երևում են Աղթամար և Առտեր կղզիները, իսկ **մյուս** կողմերում բարձրանում են Մոկաց և Ռշտունյաց բարձրագագաթ լեռնաշարքերը:*

- 1) երեքը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) վեցը

**76. Տրված հատվածում ընդգծվածներից քանի՞սն են դերանուն:**

*Հայրը **իբրև** մռայլ **մի** ամպ,  
Աղջիկն անուշ **մի** լուսին,  
Ամպ ու լուսին **իրար** փարված՝  
Դուրս են գալիս **միասին**:  
Հառաչում է **ողջ** աշխարհքը.  
Կտրիճները քարացած  
Երազների մեջ են ընկնում  
**Էս** աշխարհքից վերացած:*

- 1) բոլորը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**77. Քանի՞ տեսակ դերանուն կա տրված հատվածում:**

*Ո՛վ իմանա՛ որ ընկանք,  
Քանի օրվա հյուր ընկանք,  
Սերն ու սիրտն էլ երբ չկա,  
Կրա՛կ ընկանք, զո՛ւր ընկանք:*

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

**78. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերանուններ:**

- 1) որևէ, ինչ-որ, մի քանի, երբևիցե
- 2) այսինչ, ուր, որոշ, որևիցե
- 3) ոմն, երբևէ, ոչ մեկը, ողջ
- 4) բոլորը, այլ, ուրիշ, ամեն մի

**79. Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերանուն կա:**

- 1) Հայրս ուզում էր հիշեցնել, որ իրենք նույն բարբառով են խոսում:
- 2) Ապոլոնը, որ բանաստեղծությունն է ներկայացնում և արևն է միաժամանակ, երբեք մութն ու մռայլը չի տեսել:
- 3) Արմանը դույլը դրեց եղեգնյա ծորակի տակ և որոշ ժամանակ անց ստուգեց, որ լցվելուց հետո դույլը շուտ չգա:
- 4) Եվրոպացի կանայք ու տղամարդիկ հավատացին, որ այդ արվեստը շատ հին է:

**80. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են ցուցական:**

- 1) այս, դա, այսպես, բոլոր
- 2) մյուս, սույն, նույնքան, միևնույն
- 3) ոմն, այսպիսի, նույնպես, այնտեղ
- 4) այդպես, այդչափ, մի, նույն

**81. Ո՞ր նախադասության մեջ հարաբերական դերանուն կա:**

- 1) Բյուրավոր ծաղիկների բույրը տարածվել էր անդնդախոր կիրճերում, ուր բարձրաբերձ լեռնաշղթաներից թավալվող գահավիժում էին ականակիտ աղբյուրները:
- 2) Տղան ամենքից գաղտնի գնում էր մարդկանց քար սրտերը և ամեն անգամ համոզվում, որ դրանք անկարելից են ու բիրտ:
- 3) Նստելով թավշյա բարձիկներով թախտին՝ մի քիչ շունչ առավ և սկսեց սպասել, թե երբ կկանչի թագավորը:
- 4) Ահա և գարունը. ո՞ւմ սիրտը չի թրթռում գարնան առաջին ծաղիկների բացվելուն պես:

**82. Ո՞ր տարբերակում հարաբերական դերանուն չկա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ես գիտեմ մի թովիչ առասպել  
Ուր ողջ կյանքը հրաշք է դառնում:
- 2) Ես չգիտեմ ուր են տանում հեռավոր  
Ուղիների ժապավեններն անհամար...
- 3) Ինձ թաղեք երբ կարմիր վերջալույսն է մարում...
- 4) Ուր էլ լինեմ չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր:

**83. Ո՞ր շարքում տրված տեսակին չպատկանող դերանուն կա:**

- 1) այսքան, այսպես, միևնույն, մյուս - *ցուցական*
- 2) ուրիշ, այլ, որոշ, երբևէ - *անորոշ*
- 3) ողջը, այնինչ, բոլորը, ամեն ոք - *որոշյալ*
- 4) ինչքան, որտեղ, որ, ինչպես - *հարաբերական*

**84. Տրված դերանուններից քանի՞սը հոգնակի թիվ ունեն.**

*ինքը, ամեն ինչ, ոմն, յուրաքանչյուր ոք, ոչ մեկը, ով, ուր, ոչինչ, որտեղ, ամեն ոք:*

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

**85. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են հոլովվում:**

- 1) ով, իրար, մենք, այսպես
- 2) ինչ, ուր, միմյանց, սա
- 3) դու, ոմանք, բոլոր, ինչու
- 4) նա, քանի՞սը, ոչինչ, ինքը

**86. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են հոլովվում:**

- 1) նա, ես, ոչ ոք, ոմն
- 2) նրանք, իրենք, սրանք, այս
- 3) ինքը, մենք, դուք, ովքեր
- 4) մեկմեկու, միմյանց, ով, ոմանք

**87. Ո՞ր շարքի բոլոր դերանունները չեն հոլովվում:**

- 1) ովքեր, ինչ-որ, ոչինչ, որտեղ
- 2) ուր, ինչու, ոչ մի, այս
- 3) երբ, որոշ, ամեն մի, սա
- 4) ինքը, որևէ, այսպես, մեկմեկու

**88. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են գոյականից տարբեր կերպ հոլովվում:**

- 1) նա, ոչ ոք, երբ, իրենք
- 2) նրանք, բոլորը, դու, ոչինչ
- 3) ինքը, դուք, ով, ես
- 4) ամենքը, սա, ի՞նչ, ոմանք

**89. Տրված դերանուններից քանի՞սը չեն հոլովվում.**

*սրանք, ով, ի՞նչ, միմյանց, ամեն ինչ, ամենայն, ամենքը, իրար, ոչ մեկը, ինքը:*

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**90. Ո՞ր տարբերակում դերանվան սխալ հոլովաձևի գործածություն չկա:**

- 1) Ես քո վրա հույս չեմ դնում:
- 2) Մեր մտտից մինչև ձեզ մոտ ոտքի ճանապարհ է:
- 3) Նա դեռ իրեն օրում վիշտ ու տառապանք չէր տեսել:
- 4) Քննությունից հետո իմ մոտ ոչ մի գիրք չի մնացել:



**91. Ո՞ր տարբերակում է ընդգծվածը ցուցական դերանուն:**

- 1) Եվ ի՞նչ խաղաղ է նայում Ձեր հոգին Ձեր աչքերից այդ՝ մաքուր ու անմեղ:
- 2) Արդյոք **ո՞ր** ես, իմ անո՛ւշ երագ:
- 3) **Այնպես** բարակ են Ձեր մատները, Տիկի՛ն...
- 4) Հանկարծ բաժանվում ու մոտ է գալիս **մի** կապուտաչյա գանգրահեր տղա:

**92. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերանուններ:**

- 1) ինչ-որ, որոշ, յուրաքանչյուր, ինչ-ինչ
- 2) ոմն, մի, ուրիշ, այլ
- 3) այսքան, բոլոր, ոչինչ, այսինչ
- 4) ոմանք, համայն, բոլորը, ամենքը

**93. Ո՞ր դերանունը առանց որոշիչ հոդի չի գործածվում:**

- 1) ամբողջը
- 2) ոչ մեկը
- 3) մյուսը
- 4) յուրաքանչյուրը

**94. Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.**

*ամենքը, ամբողջ, ուրիշ, սույն, ոմն, ոչինչ, ինքս, միմյանց, մյուս, ոչ մի:*

- 1) չորս
- 2) հինգ
- 3) վեց
- 4) յոթ

**95. Տրված նախադասություններում քանի՞ կապակցություն կա, որոնցում դերանունը կարելի է հոդով փոխարինել:**

*- Իմ երջանկության չափն անչափելի  
Տխուր աչքերիդ ուրախությունն է....  
- Վա՛խ, մեր կյանքը սևով անցավ,  
Աշխարհից բան չիմացանք:  
- Ինչ ունեցել է ժողովուրդը քո  
Հնում, անցյալում - լուսավոր ու վեհ,  
Ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ  
Ողջը հավաքել և քե՛զ է տվել:  
- Արև ունես քո աչքերում,  
Քո այդ փամփիլիկ թաթիկներում:*

- 1) հինգ
- 2) վեց
- 3) յոթ
- 4) ութ

**96. Տրված նախադասություններում քանի՞ կապակցություն կա, որոնցում դերանունը կարելի է հոդով փոխարինել:**

- Մի դատարկված ամպի նման  
Եկել էմ ես,  
Որ ջուր տանենք քո ձորերից...
- Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,  
Օր ու արև չտեսանք...
- Դու թեթև դարձրիր իմ կյանքի բեռը,  
Բայց ինքդ երբեք թեթև չդարձար:
- Խոր են քո հուր աչքերը,  
Հուրդ իմ հուրն է այրում...

- 1) չորս
- 2) վեց
- 3) յոթ
- 4) հինգ

**97. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ա խոնարհման:**

- 1) չեն անշարժացել, շատացող, բարձրացա, վարձած
- 2) եկած, չեմ մոռանա, արածում է, պիտի գնալիք
- 3) տված, հասա, կկայունանա, խաղացած
- 4) դարձող, լեռնանում են, ժպտում են, դիմացել է

**98. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ա խոնարհման:**

- 1) դարձե՛ք, ելա, կջանամ, մի՛ տուր
- 2) մոռացել են, պիտի կարդալիք, ցնծաց, կտոկան
- 3) կերանք, հոգացող, բարձրացավ, տալիս է
- 4) պիտի խաղա, ցնցեց, ջանում է, ցուցլաց

**99. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ա խոնարհման:**

- 1) մի՛ եկ, հասկացել են, գայրացել է, տվեց
- 2) ասաց, տո՛ւր, դարձի՛ր, դողաց
- 3) պիտի հուսանք, թողել են, գալիս է, վշշում է
- 4) եղա, հավատալ, խոսող, գղջում է

**100. Բայերից քանի՞սն են ա խոնարհման.**

*բվացել, ասաց, մոտեցել, եկել, բարձրացել, հասան, հեռանում, մտան, իմացել, եղավ:*

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

**101. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ե խոնարհման:**

- 1) չեն շարժվում, շատանում է, հիշեցի, պարում է
- 2) հեռացել են, շտապեցի, գովերգեցին, պիտի խոսեիք
- 3) փակցրած, եղավ, կերանք, վառված
- 4) վազեց, պատկերելու էր, գոհացի՛ր, կդիմադրի

**102. Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

- 1) կտրտել, գաղթել, զգալ, խաղալ
- 2) տեսնել, դողանջել, գրուցել, թույլատրել
- 3) ծաղկել, ներբողել, մարտնչել, ժանգոտել
- 4) գրոտել, կարդալ, մեղանչել, տնկել

**103. Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

- 1) կառչել, ասել, թռչել, զբոսնել
- 2) կանչել, ննջել, հոտոտել, արտագրել
- 3) կոտրատել, տանել, վերափոխել, տալ
- 4) ուտել, հագնել, սովորել, խմել

**104. Ո՞ր նախադասության բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

- 1) Ես կրունկներով խփեցի ձիու կողերին, մի անգամ էլ նա կանգնեց հետին ոտքերի վրա, զիլ խրխնջաց և առաջ նետվեց:
- 2) Ձին թռավ որբատունների և փոքր ծառերի վրայով և ինձ գետին զցելով՝ վազեց հեռու:
- 3) Ըները գայլի վիզը ծակծկեցին, թաքը բռնել էին. գայլը ուզում էր հետ ցատկել, բայց թաքն ազատելու ուժ չկար:
- 4) Բողարը ջահել շուն էր. գայլից դեռ մի քիչ վախենում էր, այդ պատճառով էլ հաչում էր դեռ հեռվից:

**105. Ո՞ր շարքում ստկածանցավոր բայ չկա:**

- 1) կառչել, սպանել, ոռչել, սպառնալ
- 2) հագնել, երկնչել, հարցնել, խլանալ
- 3) մատնել, հնչել, զինել, խթանել
- 4) ընկնել, շնչել, կոչել, հոգնել

**106. Ո՞ր շարքում ստկածանցավոր բայ չկա:**

- 1) մռնչալ, մեկնում, փախել, մնացել
- 2) կմեռնի, կանգնելու, երկմտել, զարմանա
- 3) վերծանել, պիտի հնչի, խառնած, բռնել
- 4) առնող, ունկնդրում, ծառանալ, կանչեմ

**107. Ո՞ր նախադասության մեջ ստկածանցավոր բայ չկա:**

- 1) Պղտորը հեղեղի բերանն ընկած տաշեղի պես Լառ-Մարգարը շատ ափերի էր զարկվել, վերջը ալիքը Լառ-Մարգարին իր թռռան հետ զցել էր այդ գյուղը:
- 2) Երբ առաջին անգամ առվով ջուր էր կապել, ոտքերը մինչև ծնկները վեր քշտած, բահն ուսին՝ անցել առվով, գյուղում նրան արագիլի էին նմանեցրել:
- 3) Լուսաբացին արտատերը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա և կռանա, մատներով տրորի թաց հողը:
- 4) Կտավատը ժպտում էր կապույտ ծաղիկներով, ծիրանն արդեն դեղնել էր, մասրենու մոտ պառավը կանգնել իրեն էր սպասում:

**108. Ո՞ր նախադասության մեջ սուկաձանցավոր բայ չկա:**

- 1) Կարծելով, որ վերջացավ խոսակցությունը պրոֆեսորի հետ՝ ուսանողները վեր կացան հրաժեշտ տալու:
- 2) Նա անցավ նոր ավարտված մի շենքի առջևից, հետաքրքրությամբ դիտեց շենքը և տեսավ, որ պատերը ներկված են զանազան գույներով:
- 3) Գյուղացիներից մեկը շինարարության համար քար հանելու ժամանակ գետնի տակից գտնում է զանազան ամանների կտորներ ու այլ իրեր:
- 4) Կոհակները օրորում էին նավը, կուտակվում իրար վրա, բախվում իրար, հեռու քշվում՝ կործանվելով սհարկու գոռոցով:

**109. Հատվածներից քանիստ՞ւմ սուկաձանցավոր բայ կա:**

- Էլ սիրոս ինչպե՞ս բախտավոր մնար,  
Թե ինքը իրեն բացել չիմանար...
- Կացինս թողած կաղնու փշակում,  
Պարանս ժայռի փեշերին թողած...
- Եվ ձորերում դառն ու անհուն  
Կորցնեի տոհմ ու անուն  
Ու կորչեի ես...
- Քառասուն տարի բռնած ճանապարհ՝  
Շիտակ, անվեհեր  
Գնում եմ ես վեր:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**110. Տրված նախադասություններում քանի՞ սուկաձանցավոր բայ կա:**

- Եվ ներկարար աշնան հետքով  
Ինքը ձմեռն է մոտենում:
- Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք:
- Մոռացել էր արքան, վերացել էր կարծես,  
Էլ բանտ ու վիշտ նրան չէին մտահոգում:
- Որսի էին ելել նրանք միասին,  
Մի քարայծ էր դյութել նրանց երկուսին,  
Բայց փախել էր, փնտրում էին, ու չկար:

- 1) վեց
- 2) չորս
- 3) հինգ
- 4) ութ

**111. Ո՞ր շարքի բոլոր բայերն են բազմապատկական:**

- 1) խազմզել, պատռտել, վազվզել, քաշքշել
- 2) ժանգոտել, կծոտել, կտրտել, փորփրել
- 3) ծակծկել, գծմծել, թեփոտվել, ցատկոտել
- 4) խշխշալ, թշշալ, կտորատել, ոստոստել

**112. Ո՞ր շարքի բոլոր բայերն են բազմապատկական:**

- 1) ծալծլել, հռհռալ, կափկափել, կապկպել
- 2) քաշքշել, փշրտել, խազնզել, ցատկոտել
- 3) կոխկռտել, կարկառել, ծամծմել, ջարդոտել
- 4) թրթռալ, հեղեղել, պատռտել, կտրատել

**113. Ո՞ր նախադասության մեջ բազմապատկական բայ կա:**

- 1) Կովերը ջրի գնալիս շլանում էին արևի լույսից, մնչում էին արջառները, հոտոտում, դեսուդեն ցատկում և ոտքերով փորում թաց գետինը:
- 2) Աղջիկների խմբի մեջ նորից տեսա Խոնարհին և շտապ տուն մտա, որովհետև մյուս աղջիկները սկսեցին քչիչալ, իսկ փոքրահասակներից մի քանիսը գոզնոցով իրենց դեմքը ծածկեցին:
- 3) Այն ժամանակ, երբ շեն էր Մանասի խրճիթը, Օրանջիալի ձորակում մասրենիներ չկային, տան պատերի վրայով խլեզները չէին վազվզում, վայրի վարդերի տեղ բոստանում վարունգն էր ծաղկում:
- 4) Երբ կինը մոտեցավ եռոտանուն, հանեց ծխից մրոտած թեյամանը, նկարիչը հիշեց, որ ծովափի կինն էլ ուներ խշխշան շորեր:

**114. Ո՞ր նախադասության մեջ պատճառական բայ չկա:**

- 1) Այդ երգի տխուր մեղեդիները ինձ հիշեցրին իմ տխուր անցյալը:
- 2) Գեներալ է. իրեն չի զբաղեցնելու այդպիսի մանր գործերով:
- 3) Տանը ձուկը զցեցի լոգարանի մեջ, և նա իսկույն վերակենդանացավ:
- 4) Նրա ներկայությունն արդեն ինձ չէր անհանգստացնում ու չէր լարում:

**115. Տրվածներից քանի՞սն են պարզ բայեր (առանց բայական ածանցի).**

*թռել են, գտա, բռնել, դիպել էր, մտա, տեսավ, կերանք, հասած, թո՛ղ, համաճայնել:*

- 1) չորսը
- 2) երեքը
- 3) ութը
- 4) վեցը

**116. Ո՞ր շարքում դերբայական ձևի սխալ կազմություն կա:**

- 1) թռչելիս, կարոտած, դիպչող, մոտեցած
- 2) նստեցնել, սառչած, ուրախացող, խմեցնել
- 3) փախչելիս, սառչող, կպած, աշխատեցնել
- 4) փրկված, շփոթեցնել, կառչող, խոսող

**117. Ընդգծված դերբայական ձևերից ո՞րի կազմությունն է սխալ:**

- 1) Անճրևի **կաթած** տեղը մի մեծ խոռոչ էր բացվել:
- 2) Բժիշկը պատվիրել էր օրը երկու անգամ դեղ **կաթացնել** հիվանդի աչքերի մեջ:
- 3) Երբ փորձում էի նրան **հիշեցնել** տված խոստումները, չլսելու էր տալիս:
- 4) Երկրաշարժից **տուժած** մարդկանց օգնության ձեռք մեկնեց ողջ աշխարհը:

**118. Ո՞ր նախադասության մեջ դերբայական սխալ ձև կա:**

- 1) Մարի լանջին բուսած մանուշակները բացել էին աչիկները և ժպտում էին արևին:
- 2) Դաշտի խաղաղության մեջ քնքշորեն բուրացող ծաղիկները մի պահ մեղմեցին նրա հոգու ցավը:
- 3) Կապտավուն մժույգ հեծած ձիավորը ընթանում էր լարված և ուշադիր:
- 4) Երեխայի համար գնեցինք հեքիաթներ պատմող մի տիկնիկ և խոսող շնիկ:

**119. Ընդգծված դերբայական ձևերից ո՞րն է սխալ:**

- 1) Գարնանային արևը **հալեցրել** էր ձյունը, ու վարարած գետերը դուրս էին եկել իրենց ափերից:
- 2) Խանութի բացման օրը բոլոր հյուրերին նվիրեցին **խոնավեցնող** քսուքներ:
- 3) Անծայրածիր հեռուներում աստիճանաբար **մզացող** լեռների սուր կատարները ահարկու տպավորություն էին թողնում:
- 4) Ես ամեն կերպ փորձում էի զգույշ **դիպչել** նրա վերքին, որպեսզի ցավ չսպառնառեի:

**120. Ո՞ր նախադասության մեջ դերբայական ձևի սխալ գործածություն չկա:**

- 1) Եթե ես ցանկանայի փախնել, ոչ ոք ինձ չէր խանգարի:
- 2) Այդ միջադեպը քարոզարշավի վրա ոչ մի ազդեցություն էլ չի կարող թողել:
- 3) Շատ կարդալուց վնաս չկա:
- 4) Այդ մարդը ուտելուց միշտ խոսում էր և ծիծաղում:

**121. Ո՞ր նախադասության մեջ դերբայական ձևի սխալ գործածություն կա:**

- 1) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար:
- 2) Որևէ բան մտածելիս նա սովորաբար ձեռքը դնում է ճակատին:
- 3) Քայլելուց դիմացդ էլ չես նայում, դրա համար էլ հաճախ ես սայթաքում:
- 4) Այսբան մտածելուց գլուխս պայթում է:

**122. Ո՞ր նախադասության մեջ բայի խոնարհման սխալ ձև չկա:**

- 1) Ալիքները հսկա սառցաբեկորները թռցրեցին դեպի ծովի խորքը:
- 2) Սարի հետևում հանգչել էին վերջին շողերը, երբ մենք շարժվեցինք դեպի վրանները:
- 3) Ծովի մեղմօրոր ալիքները դիպչեցին նրա մերկ սրունքներին, և նա սրբաբաց:
- 4) Մի պահ միայն գրավվելով լուսնկա երեկոյով՝ թագուհին դարձյալ խորասուզվեց մտքերի օվկիանոսում:

**123. Ո՞ր նախադասության մեջ պատճառական բայի կազմության սխալ ձև կա:**

- 1) Երբեմն նստում էր դիմացս և խոսեցնում մեր սարերից ու լսում էր թաքուն համակրանքով:
- 2) Գրողի ներկայացրած մարդկային աշխարհում իշխում է գեղեցիկը:
- 3) Հետո տիրացուին գրել է տալիս այդ երեք անունները՝ նրան ուրիշ ոչինչ չհայտնելով:
- 4) Առաջին բուժօգնություն ցույց տալու ժամանակ պետք է անշարժեցնել վնասված վերջույթը:

**124. Ո՞ր նախադասության մեջ դերբայի կամ ձևաբայի (կախյալ դերբայի) սխալ ձև չկա:**

- 1) Դատարանը տուժվածից ցուցմունք վերցրեց կատարվածի վերաբերյալ:
- 2) Շատ անսպասելի կորում է նաև տիկնոջ վերջին հույսը:
- 3) Դեմքի թարմ գույնը պահպանելու համար մաշկը պետք է շարունակ խոնավացնել:
- 4) Ջրի ցայտերը դիպչում են ապակուն ու անմիջապես սառում:

**125. Ընդգծված դերբայներից ո՞րն է սխալ գործածված:**

- 1) Արշակը փորձել էր Ջինայի հետ **փախչել** արտասահման, բայց ոստիկանությունը նրան բռնել էր և տեղեկացրել Սմբատին:
- 2) **Կարդալիս** հանկարծ զգում էի, որ կտրվել եմ իրականությունից ու դարձել գրքի հերոսների ուղեկիցը:
- 3) Մթության մեջ խարխափելով՝ փոքրիկներն առաջ էին շարժվում ու հանկարծ իրար **կպնելիս** սարսափած ճչում էին ու կծկվում:
- 4) Շատ **կարդալուց** աչքի լույսը պակասել էր, ու ջահել օրերի նման այլևս մի քանի օրում մի գիրք չէր կարողանում ավարտել:

**126. Ո՞ր նախադասության մեջ հարադիր բայ չկա:**

- 1) Կա՛նգ առ, հողագու՛նդ,  
Քո պտույտի մեջ,  
Թող մայրամուտը մի քիչ երկարի:
- 2) Ամպերը դարձել գթության քույրեր,  
Ջրվեժի վրա ջուր են շաղ տալիս,  
Որ ուշքի բերեն:
- 3) Ջանք է անում ամեն մի՛նը՝  
Շուտով տանի, տիրանա:
- 4) Գործն է անմահ, լա՛վ իմացեք,  
Որ խոսվում է դարեդար:

**127. Ո՞ր դերբայներն են <math>\bar{z}</math> խոնարհման պարզ բայերի դեպքում ձևով նույնանուն:**

- 1) անորոշը և հարակատարը
- 2) վաղակատարը և ապակատարը
- 3) ենթակայականը և անկատարը
- 4) անորոշը և վաղակատարը

**128. Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են ճիշտ կազմված:**

- 1) ցանելիս, կառչել, մգեցնել, ցնծացող
- 2) փրկված, վազացնել, կարճացնել, աղացել
- 3) արածեցնելիս, ասացինք, մոտեցրի, վեր կացա
- 4) խաչակնքել, դառա, թմրեցնել, ընդհարվել

**129. Ընդգծվածներից ո՞րը անորոշ դերբայ չէ:**

- 1) Խոնջացած պառկեց գմբուխտե խոտի գորգին՝ մի փոքր **հանգստանալու**:
- 2) Նրանք գնում էին անհայտ մի ուղով՝ **փրկվելու** հույսը սրտերում պահած:
- 3) Այդ մենք ենք **գալու**, որ հինը փոխենք, որ աշխարհին տանք սեր ու խնդություն:
- 4) Երկար **վազելուց** ուժասպառ եղած՝ մարզիկը մատեց վազքուղու վրա՝ չկարողանալով վերջնագծին հասնել:

**130. Ո՞ր շարքում անորոշ դերբայ չկա:**

- 1) փախել, եղել, շուրջկալել, շանթարգել
- 2) հոգացել, դարձել, տվել, դրել
- 3) բարձրացրել, գրելով, մտել, հավատացել
- 4) վազելիս, նկատելուց, մոտեցել, մեծացել

**131. Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ չկա:**

- 1) Մագուրթի մեջ թաթախված թռչունի նման քո խիղճը կնվա, կնվա ու չի կարողանա ճախրել:
- 2) Մեր դժվարն էլ ինքնիրեն է լինելու, ու քո հեշտն էլ մի պատճառ է հնարելու, որ չլինի:
- 3) Եվ ահա հունական քառակուսի փաղանգը եկավ ու տրորելով անցավ հայերի աշխարհը:
- 4) Այդ հովտի առվից ջուր խմելու էին գալիս եղնիկներ, ուլեր ու գառներ:

**132. Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայ կա:**

- 1) Ալիսոն ճանապարհից դուրս ընկավ, հնձած արտերում դեսուդեն նետվեց. ազատում չկար. կարմիր բիծը ցատկոտում էր նրա դնչի տակ:
- 2) Հակառակ ճանապարհով գնացող մի պառավ՝ կապոցը մեջքին, ասաց, որ մի կապույտ ձի է տեսել գյուղ մտնելիս:
- 3) Ճախարակի պես երգ մանելով, հետո աղմուկ թափելով՝ հռնդաց, անցավ շողերի մեջ սպիտակ ինքնաթիռը:
- 4) Բարձրախոսների մոտով մի աղջիկ էր անցնում քաղաքային սահուն քայլերով, երեխաների ու ձիու լռիկ ստվերներն օրորվում էին կաթնալույսի մեջ:

**133. Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայ չկա:**

- 1) Գրիգոր Նարեկացու մասին պատմող ամենահավաստի աղբյուրները նրա երկերի հիշատակարաններն են:
- 2) Միջնադարյան հայ արվեստն ուսումնասիրողներից շատերը խաչքարագործության վերջնական ձևավորման ժամանակը համարում են 12-13-րդ դարերը:
- 3) Մեծ գրողի ամբողջ ժառանգությունն ունի հային ազատագրելու և հայ պահելու նպատակը:
- 4) Մեր գրի ստեղծողն սկսեց Սուրբ գրքի թարգմանությունները:

**134. Տրված նախադասություններից որո՞ւմ անկախ դերբայ կա:**

- 1) Գրիգորը սաստիկ ջղայնանում էր, երբ սպիտակ պատերի վրա մատիտի խզբզոցներ էր գտնում:
- 2) Հանկարծ ամեն ինչ մշուշվեց նրա աչքերի առաջ, և ձեռքերը շարժվեցին անասելի կատաղությամբ, ինչպես ոճրագործի ձեռքեր:
- 3) Քեզ հանդիպելիս է այդ մասին խոսք բացել:
- 4) Երբ քամին փչում է ծովից և բերում նոր, թարմագույն օրերի բուրումներ, կյանքը դառնում է զգլխիչ մի երագ:

**135. Ընդգծվածներից ո՞րը անորոշ դերբայ չէ:**

- 1) **Հանելով** վերարկուն՝ Պատրիկյանը հոգնած նստեց բազմոցին:
- 2) Նրանք էին **լինելու** այդ սուրբ գործի առաջամարտիկները:
- 3) Պետք էր այդ մասին անպայման **հայտնել** սպարապետին:
- 4) Ամեն գնով խուսափում էր նրան **հանդիպելուց**:

**136. Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ չկա:**

- 1) Ուզում էի շնչել դշխուհու շղարշների շրշյունը:
- 2) Հանդիպակաց կիրճում քչքչալով հոսում էր փոքրիկ վտակը:
- 3) Թվում էր, թե մի սուկալի հրդեհ լափել է քաղաքը:
- 4) Ծխելը վնասակար է առողջությանը:

**137. Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ չկա:**

- 1) Նա հավատարիմ էր մնացել իր ամենօրյա սովորությանը՝ թեյի ժամանակ լրագիր կարդալուն:
- 2) Միայնակ մի թիթեռնիկ երբեմն ճախրում էր՝ թռչկոտելով լույսից ստվեր:
- 3) Նա հիմա շտապում է ասեղնագործել հայոց կարմիր տառերը և ծոցը դրած՝ բարձրանալ Արարատ:
- 4) Քուռակի մայրը գիտեր, որ կայծակը ճայթելու է, ճայթյունը վախեցնելու է քուռակին:



**138. Ո՞ր նախադասության մեջ հարակատար դերբայ չկա:**

- 1) Մայրը ուշադիր հետևում էր, մինչև որ որդին անցավ սառցակալած ճանապարհը:
- 2) Նա գիտակցում էր, որ վաղ թե ուշ պետք է վեր կենա ու երես առ երես նայի իր հետևում կանգնածին:
- 3) Վայրկյաններն անցնում էին, և նա հասկանում էր, որ մոտենում է այն պահը, երբ ստիպված պիտի լինի կանգնել:
- 4) Երեկոյան կողմ նավը հատեց հասարակածը՝ ուղղություն վերցնելով դեպի երկրագնդի հարավային բևեռը:

**139. Ո՞ր շարքում են միայն ենթակայական դերբայներ:**

- 1) վարգող, նվագող, ձիագող, նորոգող
- 2) պայթող, պաշտոնաթող, հայթայթող, գայթող
- 3) խայտացող, հեռացող, կամեցող, անվաղող
- 4) կարդացող, գնացող, մոռացող, հիշող

**140. Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայ կա:**

- 1) Առանց Թորիկի հետ խորհրդակցելու՝ նա մտավ մսագործ Ասատուրի, պատշար Օղասաբի, հացագործ Սիմոնի տները և բոլորից էլ մերժողական պատասխան ստացավ:
- 2) Հրավիրեցին բոլորին՝ դերասանների, լրագրողների, պաշտոնաթող գեներալների, իսկ իրեն մոռացան:
- 3) Գետը վարարել էր ու իր հորձանքի մեջ առած ջրով թռչունների երամը՝ շառաչյունով հոսում էր:
- 4) Վանքի բակից նա արագ դուրս եկավ մղձավանջից խուսափող մարդու նման:

**141. Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայ չկա:**

- 1) Նա հևհև քայլում էր՝ ուշադրություն չդարձնելով մադող անձրևին:
- 2) Հանկարծ մի ճիչ լսվեց. բղավողը իննամյա տղա էր:
- 3) Երեխաները պառկել էին առափնյա քարերին՝ արևկող անելու:
- 4) Հին ու հրաշալի մի արվեստ էր հառնում պատմության թրթռացող մշուշներից:

**142. Ընդգծվածներից ո՞րն է ձևաբայ (կախյալ դերբայ):**

- 1) Իմ շրթունքներից  
**Կախված** է հիմա մի ամբողջ աշխարհ՝  
Մի գունդուկծիկ,  
Բառերի մի պա՛րս...
- 2) Այնպե՛ս **գգվող** է երեկոն անափ....
- 3) Ինձնից նամակներ դու մի՛ **հուսա**,  
Անշնորհք եմ ես նամակներում...
- 4) Ուր էլ լինեմ, չեմ **մոռանա** ես ողբաձայն երգերը մեր...

**143. Ո՞ր շարքում են միայն ձևաբայեր (կախյալ դերբայներ):**

- 1) երգի, մեծացել, հիշի, փախել
- 2) ուտելու, խոսում, թռչել, պարել
- 3) մոտեցնի, հուզվելու, մտնել, հուշել
- 4) եկել, բերել, տանել, պատմել

**144. Ո՞ր տարբերակում ձևաբայ (կախյալ դերբայ) չկա:**

- 1) Թող ոչ մի գոհ չպահանջվի ինձնից բացի,  
Ուրիշ ոտքեր կախադանին թող մոտ չգան...
- 2) Անց են կենում սեր ու խնդում,  
Գեղեցկություն, գանձ ու գահ...
- 3) Փռվեց... Ու միշտ, քանի որ կա  
Շահ ու գերի, ստրուկ ու տեր,  
Չի լինելու երկրի վրա  
Ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք, ո՛չ սեր:
- 4) Օ՛, չի եղել մեր գայլը պղնձյա  
Եվ ո՛չ մարմարիոնյա, և ո՛չ անգամ քարե...

**145. Ընդգծվածներից քանի՞սն են ձևաբայեր (կախյալ դերբայներ):**

*Ամբողջ հորիզոնը ծածկվեց երկնածիզ թթենու փարթամ սաղարթով, և երկնի լազուրը՝ մերթ մուգ կապույտ, մերթ բաց երանգներով, երևում էր միայն երբեմն-երբեմն քամուց օրորվելիս:*

*Նա մեր տանն ապրել էր քառասուն տարի՝ ծառայելով ամբողջ սրտով ու հոգով:*

*Այո՛, կյանքն այնքան էլ մթամած չէր լինի Աստվածատուրի համար, եթե իր մանկության թախծալի օրերը ջնջվեին իր հիշողությունից:*

*Նրա երազուն աչքերը գամվել էին ասես կախարդական ծաղկազարդերից ծնունդ առնող աղավնաթև այն հրեշտակի վրա, որը կենդանանալու էր վարպետի վրձնի մոզական հարվածներից:*

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) հինգը
- 4) վեցը

**146. Ո՞ր տարբերակում վաղակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

- 1) Եվ սպասեց այդպես նա գլխահակ,  
Ինչպես վայել էր հեզ հպատակին:
- 2) Սերում են նրանք և այն վայրենուց,  
Որ էլ չէր կարող ապրել քարայրում:
- 3) Ոչ ոք չի լսել սկիզբը նրա և չի լսելու վախճանը նրա:
- 4) Հեշտ է գուցե գրքեր գրել, ոչ թե կարդալ...

**147. Ո՞ր նախադասության մեջ վաղակատար ձևաբայ (կախյալ դերբայ) չկա:**

- 1) Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ...
- 2) Ինչպե՞ս կարող էր հանգիստ նստել, երբ արդեն գիտեր այդ մասին:
- 3) Նրանց ձգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի...
- 4) Խռնվել են հազարանուն ամբոխները խելագարված:

**148. Ո՞ր շարքում են միայն վաղակատար ձևաբայեր:**

- 1) խաղացել, փախչել, մոտեցնել, ընկել
- 2) տատանվել, բարվոքել, տվել, հիացել
- 3) եկել, տեղացել, թոցնել, հասել
- 4) խաղաղվել, կերել, առնել, անցել

**149. Ո՞ր նախադասության մեջ ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

- 1) Մեռնում էր միլիոնների տերը և ընդհանուր նախանձի առարկան, որն իր հետ էր տանելու մի ծանր վիշտ:
- 2) Անիծվի այն օրը, երբ ինքը թույլ տվեց իր Սմբատին գնալ ուրիշ երկիր՝ ուսումը շարունակելու, անիծվի նա, որ կորզեց իրենից իր որդուն:
- 3) Աղբյուրից փոքր-ինչ հեռու հազիվ նշմարվում էին մի խումբ ձիեր, որոնց իրենց տերերը արածելու էին թողել:
- 4) Մուրը նրանց ժամանակ չտվեց իրագործելու իրենց փայփայած մեծ երազանքը:

**150. Ո՞ր նախադասության մեջ ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

- 1) Մեծ գիտնական դառնալու համար միայն տաղանդը քիչ է. հզոր կամք և աշխատասիրություն է հարկավոր:
- 2) Գնում էր նա՝ հավերժանալու իր նախնիների գրկում:
- 3) Այսօր նա էր լինելու հաղթողը, ում բախտը ժպտացել էր ի վերուստ:
- 4) Այդ խոհեմ լռությամբ օգնում է ըմբռնելու զգացմունքների պոռթկումները, զսպելու սնապարծության դրսևորումները:

**151. Ո՞ր նախադասության մեջ ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

- 1) Միրտ չունեի լսելու եղբոր կշտամբանքները:
- 2) Նա բուժվելու էր գնում եղբոր պնդմամբ:
- 3) Քո ուզածը երբեք էլ չի լինելու:
- 4) Հայաստանում խմելու ջրի մեծ պաշարներ կան:

**152. Ո՞ր նախադասության մեջ ժխտական ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

- 1) Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի...
- 2) ...Որ փնտրում ենք անկարելի մի խնդություն, Բայց չենք գտնում՝ վազքով տարված ու զբաղված...
- 3) Չշլացա խնդուն փառքիդ Անցյալ ու հին փայլով երբեք...
- 4) Չեմ դավաճանի իմ Նվարդին, Որքան էլ դյուքես, օ՜, Շամիրան...

**153. Ո՞ր շարքում են միայն պարզ ժամանակաձևեր:**

- 1) աղո՛քք արա, մի՛ հիշիր, պիտի դուրս գա, պետք է ժպտասս
- 2) կխոսեմ, չի գրի, երգի, սիրեմ
- 3) պիտի խնդրես, հիշեցի, չեմ ների, գրեց
- 4) փախավ, թույլ է տալիս, հավատացինք, խոսեցիր

**154. Ո՞ր շարքում են միայն պարզ ժամանակաձևեր:**

- 1) պետք է գնայի, կկարոտեմ, մի՛ բեր, հարց մի՛ տուր
- 2) կգամ, չի մոռանա, պիտի մոռանաս, երգենք
- 3) չասեմ, մի՛ խոսիր, եկել եմ, կխնդրեմ
- 4) չլսեի, պիտի նայես, հավատացել էի, ժպտանք

**155. Ընդգծվածներից ո՞րն է պարզ ժամանակաձև:**

- 1) Առուն մասուր է տանում,  
Կարմիր սարսուռ է տանում...
- 2) Ջուրը եկել է, ջաղացն է տարել,  
Իսկ դու չախչախն ես համառ որոնում:
- 3) Պետք է ասեմ մի բան, որ կթվա արտառոցից արտառոց:
- 4) Ես չեմ կամենում, որ իմ պատրանքը փոխվի պատանքի  
Եվ հետո, ծվատ, կախվի աշխարհի կեռերից փշոտ:

**156. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ժամանակաձև կա:**

- 1) Մեզ կպատմես ամեն ինչ միայն վերադարձիդ, եթե վերադառնաս, և ոտքդ չդիպչի քարի:
- 2) Անվիատ թող լինի ոգիդ, և կարոտդ թող լինի աննինջ:
- 3) Որքան ժամանակ էլ անցնի, չեմ մոռանա ես այն երջանիկ օրերը:
- 4) Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ, աչքս է հեռուն:

**157. Ո՞ր տարբերակում բաղադրյալ ժամանակաձև կա:**

- 1) Եթե հիվանդ ես դու, և տկար է ոգիդ,  
Եթե հոգնություն է... քո երակներում,  
Այս երգս քեզ չի ամոքի...
- 2) Լավություն արա ու ջո՛րը նետիր...  
Թաքուն մի՛ հուսա հատուցում ու վարձ:
- 3) Ի՛նչ քաղցր է նստել այստեղ,  
Ժպտալ քո խոսքին սեթևեթ...
- 4) Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ...

**158. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ժամանակաձև կա:**

- 1) Որտեղ էի. լեռների վրա պատահեցի մի եղնիկի. առանց երկյուղի կանգնեց նա և նայեց ինձ  
մտերիմ հայացքով:
- 2) Մենք մենակ էինք. ես նստեցի անկյունում՝ պատուհանի մոտ՝ դյուրված հեռավոր, հավերժական  
աստղերով:
- 3) Սլացի՛ր, գնա՛, իմ նժո՛յգ, իմ սե՛ր հրեղեն, և խիզախ սմբակդ դի՛ր, ուր որ կամենաս:
- 4) Աշնան մի օր, երբ մի գյուղից մյուս գյուղն էր նա գնում, մշուշը ծածկեց նեղ արահետը:

**159. Ո՞ր տարբերակում բաղադրյալ ժամանակաձև կա:**

- 1) Երկու ձիգ տարի նա այսպես պիտի  
Ման գա երգելով ու շուրջը դիտի...
- 2) Դու Ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես,  
Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,  
Գիրն ու տառն ես Հայոց երգի:
- 3) Քիչ հետո արդեն նա իրեն կզգա հայի որբ մանչուկ.  
Կուզենա կանչել, Բայց ձայն չի ելնի...
- 4) Եվ վերելքդ թող լինի դժվար,  
Թող գագաթը քեզ անհաս թվա...

**160. Նշվածներից քանի՞սն են պարզ ժամանակաձևեր.**

*մի՛ սիրիր, պիտի հիշես, մեջ մի՛ ընկիր, սիրտ տուր, աղոթք չանես, պետք է հիշես, թույլ մի՛ տուր, գլուխ կբերի, ներս կգա, պետք է խոսի:*

- 1) բոլորը
- 2) յոթը
- 3) ութը
- 4) վեցը

**161. Նշվածներից քանի՞սն են պարզ ժամանակաձևեր.**

*մի՛ հիշեցրու, պիտի խոնարհվես, մեջ մի՛ ընկիր, սիրտ տուր, աղոթք չանես, պետք է վեր կենար, թույլ մի՛ տուր, գլուխ չի բերի, ներս եկա, պետք է հավատ ընծայես:*

- 1) ինը
- 2) յոթը
- 3) հինգը
- 4) ութը

**162. Անցյալ կատարյալի ընդգծված ձևերից քանիսի՞ կազմությունն է սխալ:**

Երիտասարդը վերջին բառերն **ասեց** հավաքվածներին ու ջղային շարժումով **հեռացավ**: Թիկնապահները բերդապետերին **տեղեկացրեցին**, որ նախարարներն են գալիս:

Կաթողիկոսը թիկնօթոցից **վեր կացավ** ու գորովասիրտ դիմավորեց իշխանին:

***Բացվեց** գարնանային առավոտը Արարատյան դաշտավայրում. շիկնեցին Մեծ ու Փոքր Մասիսները:*

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

**163. Տրված բայաձևերից քանիսի՞ կազմությունն է սխալ.**

*հիշեցրեցի, չպիտի վեր կենային, մի՛ փախի, կպչել է, ասեցի, դիպչեց, կորանք, թռած, քնեցրեցի, ծիծաղեցնում եմ:*

- 1) երեքի
- 2) հինգի
- 3) վեցի
- 4) ութի

**164. Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ չկա:**

- 1) Ամպիովանու տակ նստած՝ իշխանը անհամբեր նայում էր ճանապարհին:
- 2) Մերոքը աղբյուրի մոտ մի փոքրիկ հողակտոր վերցրեց՝ հավաքելով այդ տարածքի աղբը:
- 3) Սպասուհիները հապշտապ սենյակ էին մտնում, փռում էին սփռոցները ու շարում արծաթե սպասքը:
- 4) Առավոտյան վաղ արթնացած սպասավորները շտկում էին ոսկեծոպ վարագույրները:

**165. Ընդգծված բայերից քանի՞սն են չեզոք սեռի:**

- Շատրվանները **քրքջում էին** պայծառ ծիծաղով աղամանդեղեն:
- Յոթն անգամ ահա ատում են, ատում իշխանությունը՝ սերունդներ **լափող:**
- Եվ քարավանը, փոշու մեջ **կորած**, քայլում էր դանդաղ, հոգնած, քրտնաթոր:
- Եվ **նգովում են** իշխանությունը՝ հազարաճիրան մոլի բորենին:
- Դե ե կ, վարդապետ, **մի՛ խելագարվիր:**

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) մեկը

**166. Ընդգծվածներից ո՞րն է ներգործական սեռի բայ:**

- 1) Սակայն անհայտ աղբյուրներից երբեմն **հասնում էին** լուրեր:
- 2) Այր մի, որ **եկավ** ապացուցելու, Թե մի տեղ վերջը դառնում է Սկիզբ:
- 3) Ես, ձիու սանձից բռնած, **վազեցի** սանդուղքի կողմը:
- 4) **Ատում են** ձյունը, թե նա տեղում է ամառվա կեսին:

**167. Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

- 1) Գարնանը Արաքսը ելնում է իր ափերից՝ վարար ջրերով տիղմ կուտակելով լայն տափարակի վրա:
- 2) Վաղ մանկությունից գրկվելով ծնողներից՝ Արսենը մնաց միայնակ, մնաց որբ՝ երբեմն-երբեմն արժանանալով հարևանների կարեկցանքին:
- 3) Երբ բակ մտա, ինձ այնպես թվաց, թե սպիտակ տան ներսում ինչ-որ մարդիկ են հավաքվել, ու մեկը, իր ափերից դուրս եկած, գոռոռում է:
- 4) Բայց, ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որն անհրաժեշտ էր գյուղին:

**168. Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

- 1) Խարխուլ սանդուղքով վայր իջավ, մի քանի բույս անհիմաստ քայլեց բակում ու մոտեցավ մառանի դռանը:
- 2) Ինչպե՞ս եղավ, որ աշխարհը այսպես փոխվեց, ո՞ր գնացին այն օրերը, երբ սնդուկում զրնգում էր ոսկին:
- 3) Խառնվել է գլխում հին ու նորը, միտքը սառել է, և էլ երբեք չի իմանա, թե ինչ է բերում վաղվա օրը:
- 4) Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և թվում է, թե փրկության ուղի չկա, և հանկարծ ցոլում է վիթխարի մի կրակ:

**169. Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:**

- 1) Հագրոն առավ իր կնոջն ու աղջկան, անցավ լեռից լեռ, քարանձավից քարանձավ:
- 2) Նա հանեց ծիրանի փողը, որով նվագել էր կապույտ լեռների երգը:
- 3) Եղան բռնություններ, թշնամին ձորերով բարձրացավ մինչև նրանց խեղճ խրճիթները:
- 4) Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և՛ սերմ, և՛ սերմնացան:

**170. Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:**

- 1) Հորեղբայրս պատմում էր երկու արաբների՝ իմաստունի և հիմարի պատմությունը:
- 2) Այդ դեպքերից հետո ես երբեք չեմ մոռանա այն գարնան իրիկունը:
- 3) Այս հանգամանքը վիատեցրեց վերջին դիմադրողներին:
- 4) Հեռվում երևացին մշուշված սարերը:

**171. Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:**

- 1) Ինչո՞ւ ապշած եմ, լճա՛կ,  
Ու չեմ խայտար քու ալյակք...
- 2) Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,  
Երբ ամեն ինչ երագում է հոգու հետ...
- 3) Մի հավք գարկի ես մի օր.  
Թռավ, գնաց վիրավոր...
- 4) Եղյամն էր սունկի գլուխն արծաթում,  
Մրսում էր կարծես վայրի նշենին...

**172. Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:**

- 1) Նա գնում էր մշուշով ծածկված ճամփեզրով՝ գլխահակ ու տխուր խորհելով եղածի մասին:
- 2) Ես բնակվում եմ այդ հեռավոր ու խուլ գյուղում:
- 3) Ու մնում ենք մենք կյանքին սիրահարված:
- 4) Արամն այդ անհաջողությունից չէր վհատվել. գիտեր, որ հույսը չի մարել:

**173. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված բայը կրավորական սեռի:**

- 1) Վիշտը նրա մեջ **խառնվել էր** ուրախությանը:
- 2) Արշալույսի բոսոր ճառագայթները **արտացոլվել էին** ծովի բեկբեկուն ալիքների մեջ:
- 3) Մեր աչքերի առջև **բացվեց** ապշեցուցիչ մի տեսարան:
- 4) Քաղցից ու թշնամուց **հալածված** գաղթականները վերջապես անցան Արաքսը:

**174. Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:**

- 1) Գյուղական գրագիրը բղավեց նրա վրա, նա սթափվեց և բեռը շալակին՝ վերադարձավ յուրայինների մոտ:
- 2) Աննան քաղաքի փողոցներում վախից, անհանգստությունից մոլորվել էր:
- 3) Հաճի աղան տեսել էր ռուս-տաճկական պատերազմը, երբ թուրքը կարծես բնականորեն հետ էր մղվում:
- 4) Նուշիկը երբեմն նախաճաշ չի բերում, իսկ երբ բերում է, հաց է ու խորոված կարտոֆիլ:

**175. Ո՞ր տարբերակում ներկա ժամանակի բայաձև կա:**

- 1) Գնամ. ուր որ է ճերմակ մշուշով  
Չյունն իջնելու է, կիրճերը փակի ...
- 2) Ամայի դաշտում նստեմ միայնակ,  
Մեռնող հուշերս փայփայեմ ու լամ:
- 3) Մի՛ կանչեք ինձ, հույսի նոր  
Խոսքերով ինձ մի՛ դյութեք...
- 4) Չգիտեմ՝ այս տխուր աշխարհում  
Որն է լավ, որը՝ վատ ...

**176. Ո՞ր տարբերակում սահմանական եղանակի ներկա ժամանակի բայ չկա:**

- 1) Ու երկինքը եկավ փարվեց հողին...  
Փառք տանք այս իրիկունն արարողին:
- 2) Լռած զանգ է կյանքս...  
Ես՝ ավերակ վանքս,  
Էլ արարող չունեմ:
- 3) Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր՝  
Գիշերի պես խորհրդավոր....
- 4) Ամպի տակից ջուր է գալիս,  
Դռչ է տալիս, փրփրում:

**177. Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են անցյալ ժամանակով:**

- 1) գայի, կգամ, չեմ եկել, գալիս էիր
- 2) տալիս էի, պիտի տամ, տվեցի, տալու էր
- 3) մի՛ տուր, պետք է տար, տայինք, կտայի
- 4) գրելու էի, գրել է, կգրեր, չի գրել

**178. Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են ապառնի ժամանակով:**

- 1) չեմ նկարի, մոռացի՛ր, դառնանք, չգիտեմ
- 2) կերագենք, չենք վանելու, չես խնայում, ցանկանք
- 3) հավաքեմ, մի՛ հեռացիր, չնայեց, չի գնահատելու
- 4) բարձրացնեմ, չի մոռանա, չանցնես, լվանամ

**179. Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են անցյալ կատարյալ ժամանակով:**

- 1) փախցրեց, գրեր, հասավ, քանդեց
- 2) մոտեցար, լռեցրեց, թռավ, իջանք
- 3) տարավ, գրեց, հայտնեցիր, տեսներ
- 4) ելավ, կարդաց, ասացինք, մտնեի

**180. Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են ապառնի ժամանակով:**

- 1) բարձրանամ, չես մոռանա, չանցնենք, մի՛ լարվիր
- 2) չեմ նկատի, մոտեցի՛ր, դառնամ, չունեմ
- 3) հուսամ, մի՛ համոզիր, չներկեց, գնահատվելու է
- 4) կերգենք, վազելու ենք, չխնայեցի, ցանկանք

**181. Ո՞ր շարքում անցյալ ժամանակի բայաձև չկա:**

- 1) փոխում է, կընտրի, չեմ գնալու, դարձավ
- 2) բախվում ենք, պիտի ճայթի, ջերմացրիր, կերգի
- 3) խմելու են, չեմ բերի, չգաս, մի՛ գայրացիր
- 4) չի երևում, սկսելու ենք, վախեցել է, մի՛ աղմկիր

**182. Ո՞ր տարբերակում ապառնի ժամանակաձև չկա:**

- 1) Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին ...
- 2) Ես արդեն երբեք չեմ մոռանալու  
Աչքերդ՝ անգոր և անօգնական:
- 3) Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ,  
Արքայական խոսքը մեր կմնա հավետ:
- 4) Իմ ապրած կյանքի օրերից արթուն  
Ոչ մեկը չկա այս ճանապարհին:

**183. Ո՞ր նախադասության մեջ ապառնի ժամանակաձև կա:**

- 1) Անձրևաջուրը ծառերի չորացած ճյուղերը տարել էր, հասցրել մինչև գետի բերանը:
- 2) Ինքն իրեն ասաց, որ նստելու լավ տեղ է գտել. կորած ձիու երևալուն սպասելով՝ կարող է մտածել փուչ կյանքի մասին:
- 3) Նա ուզեց գնալ՝ տեսնելու՝ հեռվում օրորվողը ձի՞ է, թե՞ քարակույտ:
- 4) Սա կմնա այսպես, քանի դեռ բետոնը տասը կանգուն շերտով մինչև վերջին թիզը չի ծանրացել այս ցնորական երկրի կավին:



**184. Տրված բայաձևերից քանի՞սն են ապառնի ժամանակով.**

*չուտենք, կպարի, արժեն, երգի՛ր, զգա՛, պիտի ժպտաս, գրեն, գրելու էի, սպասի՛ր, զգալու է:*

- 1) ութը
- 2) յոթը
- 3) ինը
- 4) բոլորը

**185. Ո՞ր շարքի բոլոր բայերն են սահմանական եղանակի:**

- 1) չեմ հավատա, չհուզվեցիմք, պարեհիմք, մեծացրի
- 2) կամեցավ, գրվել է, ունեմ, չի կարծելու
- 3) հուսանք, ասացի, գալիս է, չերգեց
- 4) պատմելու է, դավում են, չի զղջում, խնդրեմ

**186. Ո՞ր շարքի բոլոր բայերն են սահմանական եղանակի:**

- 1) ունեմ, կամեցավ, գրվելու է, չխոնարհվեցին
- 2) հասա, գալիս է, հուսամ, փախավ
- 3) լսելու է, խոսում եմ, չի կարմրել, լվանաս
- 4) չեմ ներկի, չհուսահատվեցին, գնացել եմ, մոտեցրի

**187. Ո՞ր նախադասության մեջ սահմանական եղանակի բայաձև կա:**

- 1) Լինե՛ր, այնպես լինեք, որ ինքը հնձվոր լինեք, նրանց արտը հնձեր, Սոնան հաց բերեր իրեն...
- 2) Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով և չէր հագեմա արդեն դեղնող ծառերի սոսափից:
- 3) Մի՛ կարծիր, թե ահա այս գառիվերը կանցնես, քո վագրը կհեշտանա, էլ հետ չես նայի ու չես տեսնի նրան քո հետևից նայելիս:
- 4) Ու պիտի վեր կենայինք, քնաթաթախ աչքերով չջոկեինք, թե ով է եզները տանելու հանդ:

**188. Ո՞ր նախադասության մեջ անցյալ կատարյալ ժամանակաձև կա:**

- 1) Ինչքան թանձրանում էր մութը, այնքան վառ էին փայլվիլում էլեկտրական լույսերի շղթաները:
- 2) Ամեն քայլափոխի պիտի ընկներ, եթե մահակը քարին դեմ չտար:
- 3) Մենք նստեցինք, մինչև իրիկվա նրբին լազուրը կհավեր մութի մեջ:
- 4) Տարիների հետ պառավել է գյուղը, ուժասպառ եղել տարիքն առած ծերունու պես:

**189. Ո՞ր շարքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ չկա:**

- 1) խորացանք, թռա, եկանք, մոտեցրեցի
- 2) կորչեցի, գտա, հասցրի, դիպանք
- 3) հագա, բարձրացրիք, թռչեցինք, կորանք
- 4) կպա, արբեցին, վազեցրի, հագեցա

**190. Ո՞ր շարքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ չկա:**

- 1) հագեցա, մտա, դիպչեցինք, վերակենդանացրի
- 2) հարցրեցի, արժեցավ, հասա, կերա
- 3) վերցրեցինք, փախանք, հիշեցի, զգացինք
- 4) սառա, հագցրի, դարձա, մտցրի

**191. Ո՞ր շարքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ չկա:**

- 1) հարցրի, սրդողաց, մոտեցա, թողի
- 2) բարձրացրեցի, արեցի, լցրի, հասանք
- 3) հնացրեց, կորավ, հավեց, կառուցեցի
- 4) եկա, մոլորեցրեց, խաղացրինք, հանգչեց

**192. Ո՞ր նախադասության մեջ հրամայական եղանակի կազմության սխալ ձև կա:**

- 1) Մարդիկ, կանգ առեք մի պահ անհայտ զինվորի շիրիմի առաջ:
- 2) Թո՛ղ վարդն իր թփին. եթե քաղես, նա կկորցնի իր գեղեցկությունը ...
- 3) - Աչքիցս մի՛ կորի ու մի՛ գնա հեռու,- խստորեն պատվիրեց մայրը տղային:
- 4) Մի՛ եկ, մի՛ փնտրիր ինձ, մի՛ փորփրիր անցյալը:

**193. Ո՞ր նախադասության մեջ հրամայական եղանակի կազմության սխալ ձև կա:**

- 1) - Ե՛լ և տե՛ս, այն մեր աստղն է. երբ հեռու կլինենք միմյանցից, ամեն օր կնայես նրան ու կխոսես:
- 2) - Մե՛ղա, շարունակի՛ր պատմությունդ, - ասաց թագուհին մեղմ ու հանգիստ ձայնով:
- 3) - Արքայի բանբերն է. բա՛ց արեք դուռը, - ասաց իշխանը:
- 4) - Աբեղա՛, - առանց հետ նայելու ասաց վարպետը, - մի՛ վարանի, խոսի՛ր, ինչո՞ւ լռեցիր:

**194. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ըղձական եղանակի:**

- 1) չխնդրեի, հուսահատվեմք, խոսի, մոտեցրի
- 2) լինեմ, տեսնեի, կայինք, չխոնարհվեմ
- 3) հուսանք, չեմ ասի, չգան, չերգեին
- 4) կատարի, դառնանք, չկարդային, խնդրեմ

**195. Ո՞ր շարքում ըղձական եղանակի բայաձև կա:**

- 1) կկառուցեն, գիտեմ, չեն մոռանալու, եկա
- 2) չբարդացավ, չի ժպտա, կաղմկի, չի գա
- 3) լինելու է, չեմ օգնելու, վերադարձավ, կարթնանա
- 4) վառեց, կգնաս, չհուսանք, կարդացինք

**196. Ո՞ր շարքում ըղձական եղանակի բայաձև չկա:**

- 1) չկարդաք, չենք թռչի, բարձրացա, չի վերադառնա
- 2) ասացինք, չի վերցրել, ելնեմ, եղի՛ր
- 3) փախանք, ներս չենք գա, թողնելու են, հիշեցրի
- 4) կհանդիպի, հեռացրո՛ւ, տեսներ, զարկեցիր

**197. Ո՞ր տարբերակում ըղձական եղանակի բայաձև չկա:**

- 1) Վե՛րջ տվեք ձեր ցուրտ կտկտոցներին,  
Որ չփհատվի սարն Ադոթարան:
- 2) Գնում եմ՝ նրանց սրտանց ողջունեմ  
Եվ նրանց արդար վարդապետության  
Օրենքն ընդունեմ:
- 3) Էլի ցորենն է աշխարհի հիմքը,  
Փառք տանք ցորենին ու օրհնաբանենք:
- 4) Գիտեմ, որ մի օր կմեռնեմ ես էլ...

**198. Ո՞ր նախադասության մեջ ըղձական եղանակի բայաձև կա:**

- 1) Կայծակը չոր ճաթյունով բախվեց ժայռին, մի կողմ շարտվեց և թաղվեց կանաչ գետնի մեջ:
- 2) Եվ դեռ երկար պիտի տանջվեի նրա խոցող ու թունոտ խոսքերից:
- 3) Ես թուքս կուլ տվի ու մտածեցի, որ լավ կլինեիր, եթե իմ անգրագետ մոր փոխարեն նա լինեիր իմ մայրը:
- 4) Բարձր ճակատի տակից բարությանը ժպտում էին այդ աչքերը, իսկ ձայնը սրտագին էր և բարեկամական:

**199. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ըղձական անցյալ ժամանակաձևով:**

- 1) պարսավեցիր, անրջեիր, մտորեիր, մոռանայի
- 2) պարգևեին, շնորհվեիր, զարգացնեինք, հրավիրեիր
- 3) կընդունեիր, փթթեցին, ներեինք, մոռանար
- 4) տոնեինք, հիշեմ, հագեցան, զգար

**200. Ո՞ր նախադասության մեջ ենթադրական եղանակի ժամանակաձև կա:**

- 1) Նա չգիտի՝ գինի՞ պիտի խմեն այդ կժից, թե՞ աղջիկը հարսանիքի ջուրը պիտի տանի, իսկ պապերից լսած իմաստուն խոսքերը նա չի ասի ամեն պատահական մարդու:
- 2) Այնքան գուլալ է մեր գետը, որ կարող ես ջրի տակ խիճերը մեկ-մեկ համրել. խառն է ջուրը, բարձր սարից է գալիս, ուր միշտ մռայլ ամպ կա, ամպի տակ՝ սառույցի հաստ շերտեր:
- 3) Մեզ հաճելի է դիտել ջրի երեսին պտույտ անող մժեղների երամը, ջրածտերի՝ փրփուրի վրայով թռչելն ու ջրվեժի փոշու մեջ կորչելը և նրանց անվախ ծվլոցը լսելը:
- 4) Ամենից զվարթ ու աղմկալի երկու բուսեցներն են. մինչև ուսուցիչը մեկին կարգադրի՝ վազի՞ր, զանգը տո՞ւր, մինչև զանգը հնչի, ու վազենք բակ:

**201. Ո՞ր նախադասության մեջ ենթադրական եղանակի ժամանակաձև չկա:**

- 1) Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա...
- 2) Իմ մահվան օրը կիջնի լռություն...
- 3) Այն, որ ես էի, որ իմն էր առաջ, Արդեն չի հառնի և ոչ մի գրքում:
- 4) Եթե ուզեն, կամքով արի ու աշխարհի հրով վառված՝ Ինչե՛ր միայն չեն կատարի ամբոխները խելագարված:

**202. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ենթադրական ապառնի ժամանակաձևով:**

- 1) չի գնա, կհաղորդի, չեմ երգի, կամենան
- 2) կհյուսի, չէր նորոգի, կժպտանք, չես խախտի
- 3) չեն մոտենա, կօգնենք, կառնի, չես իջնի
- 4) կկախեն, չի խոսելու, չեփես, կծածկեն

**203. Ո՞ր շարքում տրված եղանակին չպատկանող բայ կա:**

- 1) սիրելու եմ, չսիրեցինք, սիրել եմ, սիր.ցի-սահմանական եղանակ
- 2) պարեմ, չպարեմ, չպարեցի, պարեիր-ըղձական եղանակ
- 3) կհավատաս, չեմ հավատա, կհավատայի, չենք հավատա-ենթադրական եղանակ
- 4) պիտի լռեմ, պետք է լռենք, չպիտի լռի, պիտի լռեր- հարկադրական եղանակ

**204. Նախադասություններից քանիստ՞ում հարկադրական եղանակի բայածև կա:**

- Արվեստը թվաբանություն չէ, և ուրեմն պետք չէ թվաբանական չափանիշներով դաստել ստեղծագործության մասին:
- Պետք է կարդալ ոչ միայն բառերը, այլև ժամանակը, որ խոսում է այդ բառերի միջից՝ լիակշիռ արժևորելու համար դարն ու միջավայրը:
- Կերպարը, տիրապետելով դերասանին, պետք է տարրալուծի նրա էությունը, ստեղծի այն էակը, որ ամբողջությամբ ո՛չ դերասանինն է, ո՛չ կերպարինը, այլ բեմինն ու հեղինակինը:
- Դերակատարությունը մի կառուցվածք է, որի յուրաքանչյուր մասը պիտի լրացնի մյուսին, այլապես փուլ կգա ամբողջը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**205. Ո՞ր շարքում անկանոն բայ չկա:**

- 1) երգել, ուրախացնել, պատմել, ասել
- 2) լրջանալ, կանչել, հանդգնել, տանել
- 3) գնալ, քայլել, թռչել, մտնել
- 4) խոնավանալ, իջնել, դառնալ, շնչել

**206. Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ կա:**

- 1) Ով սահմանում է նոր օրենք ու կարգ, Հայտարարվում է և օրենքից դուրս:
- 2) Դու գալիս ես մութ գիշերապահին Եվ լինում ես լուռ:
- 3) Դ-անդաղ քայլեց հայոց շղթայակապ արքան, Ու գնդացին ձեռքի շղթաները ոսկե:
- 4) Իսկ քամին ուրախ սուլում էր հեռվում Եվ ծիծաղում էր անտառի վրա:

**207. Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ չկա:**

- 1) Ինձ թվաց, թե սպիտակ տան ներսը մեկը գոռգոռում էր և ոտքը խփում գետնին:
- 2) Գ-իտեինք միայն, որ քեռիս գինվոր եղած ժամանակ ընդդիմացել է:
- 3) Հետո առաջս են գալիս ուրիշ պատկերներ, ու լսում եմ գյուղի ընտանեկան կյանքի զվարթ աղմուկը:
- 4) Հետո կուշտ կերած մեր հյուրերը սկսեցին բարձրանալ քարոտ արահետով՝ մեկը մյուսին հրմշտելով:

**208. Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ չկա:**

- 1) Հակոբը տեսավ, որ անձանոթը քաղաքը լավ չգիտի:
- 2) Նա լավ էր հասկանում, որ ճրագը վառ պահողը որդին է լինելու:
- 3) Իսկ շատ հեռվից դիտողին թվում է՝ ծովը մարգարտե ցող է՝ պատած երեքնուկի թերթիկներով:
- 4) Ամպերը ճերմակ երամով անցան, իմ սիրտն է լալիս կարոտով անհուն:

**209. Ընդգծվածներից ո՞րն անկանոն բայ չէ:**

- 1) Երագ **տեսա**. Սայաթ-Նովեն մոտս էկավ՝ սագը ձեռին:
- 2) Սիրտս վառեց, մոխիր դարձավ, ինքը կրակ ու հուր մնաց. Դու էլ նրա գո՛վքը **արա**, որ գա՝ օսկե մասը ձեռին:
- 3) Ես էլ մենակ **մանեցի** իմ թելը կյանքում, Ինչքան որ ուժ ունեի՝ անխոնջ ու անքուն:
- 4) Բոլորը **տամ** ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա, Դու չնրսես ձմռան ցրտում. բոլորը քեզ...

**210. Ո՞ր նախադասության մեջ անկանոն կամ պակասավոր բայ չկա:**

- 1) Մթանած երկնքում ամպերը գնալով խտանում էին, մինչև որ երկինքը բոլորովին մթնեց:
- 2) Այդ կինը երգում էր իր կորցրած սիրո մասին, և ոչ ոք չէր համարձակվում որևէ բառ ասել:
- 3) Նա հագել էր կապույտ բաճկոն, դրել էր գլխարկ, որի տակ հավաքել էր շեկլիկ մազերը:
- 4) Ես ամուր առողջություն ունեի և կարող էի առանց հոգնելու մինչև լույս աշխատել:

**211. Տրված հատվածներից որի՞ մեջ պակասավոր բայ կա:**

- 1) Եվ այդ հիմքի վրա ինքը քանի՜ անգամ Մտքով որմ է հանել, խոյակ ու սյուն Եվ ձևերն է դրել նոր տաճարի...
- 2) Եվ երբ չի մնա ոչ մի հույս գաղտնի, Սիրտդ կճշա, արդյոք ո՞ր էս, կա՞ս, Հողը կգրկես և կհեկեկաս...
- 3) Ես չեմ երգելու այժմ շառաչուն Գալիքի մասին, որ գալու է դեռ...
- 4) Այսպես ասաց հայոց ահեղ արքան, Ապա իջավ գահից ոսկեդրվագ Եվ ծանրաթաթ քայլեց սրահներով:

**212. Տրված հատվածներից որի՞ մեջ պակասավոր բայ չկա:**

- 1) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր Ուղիների ժապավեններն անհամար...
- 2) Ո՞ր աշխարհում ունեն շատ բան՝ Միտք եմ անում՝ է՞ս, թե՞ էն...
- 3) Ե՛վ տանջանք, և՛ բեկում, և՛ թախիծ. Սև օրեր ես դեռ շա՛տ կտեսնեմ...
- 4) ...Երբ նայում է, որ ափերին ես չկամ, Մոլորվում է Լորագետը ու գնում:

**213. Ո՞ր նախադասության մեջ է անկանոն բայը անկանոնություն դրսևորել:**

- 1) Ամեն տեղ, ուր էլ որ լինեմ, երբ որոտում է ամպը, թնդում է սիրտս բերկրանքից:
- 2) Մեկ էլ տեսար՝ մի բզեզ թռավ, և նրա բզզոցը լավեց օդում միլիոնավոր բզեզների թևերի բզզոցի ուժգնությամբ:
- 3) Ես ցույց տվի, թե ոչինչ չեմ լսում, այլ միայն կարդում եմ քաջագործությունների մասին գիրքը:
- 4) Առանց հաց ուտելու ես մտա անկողին և շուռ գալով դեպի պատը՝ աչքերս փակեցի:

**214. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված անկանոն բայը տվյալ ժամանակաձևում անկանոնություն դրսևորել:**

- 1) Նրանք **եկել** էին հեռու Իրանից և հայերեն չգիտեին:
- 2) Այդ հուշերն ինձ մի օր **կտանեն** իմ բնօրրանը:
- 3) Մայրը հավատում էր, որ իր որդին **դառնալու** է Թումանյանի նման անվանի գրող:
- 4) Մտածում էինք, թե ինչ պիտի **ուտեր** ճանապարհին, ինչպես պիտի հասներ քաղաք:

**215. Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

- 1) Նա վեր կացավ, մոտեցավ շարխին, և ոտքերն սկսեցին շարժվել համաչափ ռիթմով, ինչպես կես դար առաջ:
- 2) Այդ օրերին գյուղը կրկին ստացավ մի զամբիկ՝ տեղական ձիերից բարձր:
- 3) Կապույտ երկնքում՝ արևի կողքին, մի երկու բուլբուլ շողում են սավառնակի թևերն ու մարմինը:
- 4) Մեղվանոցի մոտով՝ ձորի ճանապարհով, դեպի գետն իջան գյուղ եկած հովեկները:

**216. Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

- 1) Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց, Ո՞ւր է արդյոք հեռացել, մա՛յր իմ անուշ ու անզին:
- 2) Դիմեցե՛ք դեպ անհայտ հեռուները, և հեռուները ձեզ անմահություն կտան...
- 3) Եվ իմացե՛ք ուրեմն, որ ոչ մի աշխատանք Տքնաջան չէ այնքան, որքան ոգու հերկը:
- 4) Լուսինը որդուս օրոցքն է ոսկի, Ու ես եմ կախել աստղերը վրան:

**217. Ո՞ր նախադասության ընդգծված բառը մակբայ չէ:**

- 1) Գիշերը **մշտապես** հավաքվում են գյուղի կատուները, և նրանցով կարելի է հաշվել, թե քանի ծուխ ունի Անտառամեջ գյուղի տերտերը:
- 2) Իսպաներենն ու պորտուգալերենը **հիմնավորապես** սովորել-յուրացնելուց հետո նա անցավ արևելյան լեզուների ուսումնասիրությանը:
- 3) Կարտոֆիլը հետիոտն զառիվերը բարձրացնելը **իսկապես** անմտություն է, որովհետև զառիվերի գլխին կարտոֆիլ կա ցանված:
- 4) Ամիսներ շարունակ նա փնտրում էր իր կորցրած հեծանիվը, մինչև **վերջնականապես** համոզվեց, որ գտնելու ոչ մի հույս չկա:

**218. Ո՞ր նախադասության մեջ *հետո-ն* մակբայ չէ:**

- 1) Քեզնից հետո կանգնած մարդը տարօրինակ տեսք ուներ:
- 2) Հետո նա սկսեց պատմել իր տպավորությունների մասին:
- 3) Արածի ու չարածի համար հետո պետք չէ արդարանալ:
- 4) -Դու հետո՞ արի. զբաղված եմ հիմա,- խնդրեցի նրան:

**219. Ո՞ր տարբերակում մակբայ չկա:**

- 1) Իմ աչքերի մեջ այնքա՛ն կրակներ եմ մարել ես...
- 2) Կանչում է կրկին, կանչում անդադար էն չքնաղ երկրի կարոտը անքուն:
- 3) Ու սիրում ենք առավոտից իրիկուն ճամփա երթալ ու հավիտյան երազել...
- 4) Կբանան ոմանք իմ գիրքը գուցե, Կթերթեն դանդաղ, կկարդան տողեր:

**220. Ո՞ր տարբերակում մակբայ չկա:**

- 1) Մենք դիտմամբ փորձում էինք ջղայնացնել նրանց, սակայն չէր հաջողվում:
- 2) Մեր վարպետներն են հնուց տուֆ սիրել և այն վերածել նախշազարդ քարի:
- 3) Այնտեղ՝ կապուտակ ջրերի ծոցում, իր խաղաղ օրերն էր անցկացնում էն քաջն անվեհեր:
- 4) Երազ աշխարհում Ամեն բան հավետ Գալիս է, գնում Ու ցնդում անհետ:

**221. Ընդգծված բառերից քանի՞սն են մակբայներ:**

- Արժանի չեմ ես **քնավ** ոչ միայն որդի կոչվելու, Այլև անպիտան ու անբան վարձկան:
- ...Որ աստծուն **նույնիսկ** հայիոյողները Շատ ավելի են գերադասելի, Վասնզի նրանց բարկացրել է ինքը հավատը:
- Մշուշի միջից տեսի՛լ դյուքական, Բացվում է **կրկին** Նաիրին տրտում...:
- Ինչպես դարեր **առաջ**, վկան Նարեկացին, Քեզ եմ հղում ես ողբս, ո՛վ Արարիչ:
- Սովորում եմ **միշտ**, սակայն ճշմարիտ գիտության հասու չեմ դառնում երբեք:

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) բոլորը

**222. Տրված բառերից քանի՞սն են մակբայ.**

*այստեղ, որտեղ, բազմիցս, միառժամանակ, այսքան, ինչքան, վաղուց ի վեր, տեղնուտեղը, ամենուրեք, ինչպես:*

- 1) ութը
- 2) վեցը
- 3) հինգը
- 4) բոլորը

**223. Ընդգծված բառերից քանի՞սն են մակբայներ:**

*Նա գնում էր **կրկին** դեպի հեռուն այն լուրք,  
Դեպի լյառը **անհաս** ու վեհանիստ,  
**Դեպի** գազաթը բարձր, որ ժողովուրդը  
Համարել է **հավերժ** իր գոյության խորհուրդը,  
Որ ճաշակե **այնտեղ** հավերժական հանգիստ...*

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**224. Նախադասություններից քանիստ՞ն մակբայ կա:**

- Սկսեց քայլել մինչև փողոցի շրջադարձն ու հետ՝ ուշադիր նայելով անցորդներին:
- Նամակի հետ նա աղջկան ուղարկեց նաև մի քանի անհրաժեշտ իրեր:
- Կնոջ թափառիկ հայացքը հանդիպեց Կոմիտասի աչքերին, հետո նորից կուչ եկավ ոտքերի մոտ, և նա շարունակեց ակնկոր փնտրել կորցրածը:
- Վարագույրների բարձրանալուց հետո տեսա՝ բոլորը ոտքի են ելել և փայլող աչքերով նայում են ինձ:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) ոչ մեկում

**225. Ո՞ր շարքի բոլոր բառերն են չափի մակբայներ:**

- 1) սակավ, հանկարծակի, իսպառ, բոլորովին
- 2) փոքր-ինչ, գեթ, բազմիցս, արագորեն
- 3) սաստիկ, ինչ-ինչ, թեթևակի, փոքրիշատե
- 4) քառասյատիկ, քանիցս, չափազանց, ամենևին

**226. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ժամանակի մակբայներ:**

- 1) ամսեամիս, արդեն իսկ, մասամբ, տարեցտարի
- 2) ժամ առ ժամ, հավետ, նախապես, երկարատև
- 3) երբեք, վերջապես, օրեցօր, միշտ
- 4) օրերս, երբևէ, հավերժաբար, միառժամանակ

**227. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կապեր կամ կապական բառեր:**

- 1) առանց, դեպի, միայն, չափ
- 2) շուրջ, ներքև, շնորհիվ, ի փառս
- 3) ըստ, ապա, բացի, համար
- 4) մասին, նման, այսինքն, վրա

**228. Ընդգծվածներից ո՞րը կապ չէ:**

- 1) Ո՞վ կմտածեր, թե մի քանի ժամ **անց** զեփյուռը պիտի փոխվեր մոլեգին մրրիկի:
- 2) **Իբրև** բրոնզե արձան՝ Մուշեղը ձուլվել էր ամենի երիվարին:
- 3) Այդ բոլոր ձայները միաձուլվում էին անդորրության **մեջ**, և այդ տարերային անդորրը երգ էր դառնում իմ տրտում հոգում:
- 4) Նա չէր կարող թույլ տալ, որ իր սիրելին հեռանա քաղաքից, գնա **հեռու**:

**229. Տարբերակներից քանիստ՞ն կապ կա:**

- Դու մոտեցար որպես քույր ու հեռանում ես ահա, Աղոթք դարձած խնկաբույր՝ դու հեռանում ես ահա:
- Միրտս թռչում է բնից, Եվ կակաչները բրբից Դեպի սարերն են վազում:
- Նստում էին ու սպասում, Մինչև պապը գար, Մինչև բակում Ծաղիկ եզան Չանգը ծլնգար:
- Ծանապարհ ընկնեմ գնամ, Եվ իբրև կրտսեր գրչակից՝ Ներումն խնդրեմ խոնարհ Գուսանաց գուսան Քուչակից:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում



**230. Ո՞ր տարբերակում կապ կամ կապական բառ չկա:**

- 1) Ջուր եմ փախչում, ինձ խաբում,  
Հազար կապ է ինձ կապում...
- 2) Մանկության օրեր, երազի նման  
Անցաք գնացիք, այլ չեք դառնալու:
- 3) Գետակի վրա թեքվել է ուռին  
Ու նայում է նա վազող ջրերին:
- 4) Հայրենի ծփուն արտերի եզրին  
Կանգնած խորհում եմ սրտիս մեջ լռին....

**231. Ո՞ր նախադասության մեջ կապի գործածության կամ հոլովառության սխալ չկա:**

- 1) Կատարվածի համար կարելի է միայն ափսոսալ:
- 2) Այդ նյութի մասին քեզ շատ եմ բացատրել, ոչինչ չես հիշում:
- 3) Ձեր առաջարկների հետ անհնար է չհամաձայնել:
- 4) Նա իրեն համար հանգիստ կարդում էր, երբ հարևանը գրգռված ներս խուժեց ու սկսեց գոռոռալ:

**232. Ո՞ր նախադասության մեջ կապի գործածության սխալ չկա:**

- 1) Հանձինս քեզ՝ ես ունեմ մի լավ բարեկամ:
- 2) Փոխարեն ինձ հետ խոսելուն՝ այդ հարցերն ուղղելիք մտավորականությանը:
- 3) Անհրաժեշտ է, որ բոլորը շատ նրբորեն մոտենան մեր անցյալի նկատմամբ:
- 4) Փաստաթղթի վերաբերյալ ձեր կարծիքը խնդրում ենք ներկայացնել գրավոր:

**233. Ընդգծվածներից ո՞րն է շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) **Հենց** ի՞նձ էիր ուզում բոլորի առաջ նկատողության արժանացնել:
- 2) Խնդրի լուծման **այլ** տարբերակների քննարկման վրա այսօր ժամանակ չենք ծախսելու:
- 3) **Հենց** քեզ նկատեն հակառակորդի դրիքերից իսկույն ազդանշան կտաս:
- 4) Ծակատագրական իրավիճակներում մարդու վարքագիծը անշուշտ **այլ** է լինում:

**234. Ընդգծվածներից քանի՞սն են շաղկապ:**

- Արտասովետլ, լալով էդպես  
Ետ չես բերի էլ գերիդ:
- Դու էլ գընա նոր սեր արա,  
Էսպես է կարգն աշխարհի:
- Ոչ էլ գոհար եմ պահանջում  
Մեր-ընկերից իմ կյանքի:
- Թե տիրես, մե՛ծ Շահ, դու նրա սրտին,  
Թաթուլն էլ անգոր կընկնի ոտիդ տակ:
- Մի՞թե, հայրի՛կ, ինձ մոռացան,  
Էլ չեն բերի հուրն անշեջ:

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) բոլորը
- 4) ոչ մեկը

**235. Ո՞ր շարքի բոլոր բառերն են շաղկապներ:**

- 1) քանի դեռ, որ, բայց, մանավանդ
- 2) թե, եթե, իսկ, ոչ մի
- 3) թեկուզ, հենց, որովհետև, որը
- 4) թե չէ, կամ, քան, թեպետ

**236. Ո՞ր շարքում ստորադասական շաղկապ չկա:**

- 1) հետևապես, այնինչ, թեպետ, սակայն
- 2) այլև, մինչև, այլապես, նաև
- 3) ուրեմն, կամ, իսկ, այսինքն
- 4) չնայած, ապա, նույնպես, բայց

**237. Ո՞ր նախադասության մեջ է *որ*-ը շաղկապ:**

- 1) Աղջիկը, որ կանգնած էր պատուհանի մոտ, մտածում էր վաղվա անելիքների մասին:
- 2) Նրանց մեջ զինվորներ կային, որ հոժարաբար գնում էին կռվելու:
- 3) Անհավատալի էր, որ գործն ավարտվում էր:
- 4) Ճանապարհը, որ ձգվում էր ծառերի միջով, երկար էր թվում:

**238. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ստորադասական շաղկապներ:**

- 1) քանի դեռ, որտեղ, թեպետ, որպեսզի
- 2) մինչ, եթե, քանի որ, թեև
- 3) որովհետև, թեև, ուր, ուստի
- 4) թեկուզ, հենց որ, ինչ, քան

**239. Ընդգծվածներից քանի՞սն են ստորադասական շաղկապներ:**

- **Չնայած** վանք լինելուն՝ Խոր Վիրապը եղել է նաև դպրության կենտրոն:
- Հռոմեացիներին արտաքսելուց հետո պաշտոնական մայրաքաղաք շարունակեց մնալ Արտաշատը. **մինչև** Արշակունյաց հարստության անկումը Վաղարշապատը կատարել է մայրաքաղաքին փոխարինող աթոռանիստի դեր:
- **Մինչ** տեղի կունենար 1319 թ. երկրաշարժը, Անին արդեն բազմիցս ավերվել էր թուրքմենական ցեղերի կողմից:
- Ըստ Նոյ նահապետի և համաշխարհային ջրհեղեղի հետ կապված ավանդության՝ **հենց որ** Նոյը տապանից դուրս է գալիս, ցամաք է տեսնում և բացականչում. «Երև անը». այստեղից՝ Երևան:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**240. Ո՞ր նախադասության մեջ ստորադասական շաղկապ չկա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Թե ուզում ես երգդ լսեն  
Ժամանակիդ շունչը դարձիր:
- 2) Չարմանում եմ թե ով Շռայլ  
Ինչքան շատ ես տվել ինձ...
- 3) Ինչը կհաղթի կյանքում հերոսին  
Թե չլինին կինն ու գինին...
- 4) Քուն թե արթուն օրիս շատը երազ եղավ անց կացավ ...

**241. Ո՞ր նախադասության մեջ շաղկապի սխալ կիրառություն կա:**

- 1) Դու ոչ միայն դրժել ես խոսքդ, այլև դիմել ես սաղրանքների, համախմբել դավադիր իշխաններին:
- 2) Նա ինչո՞ւ չառաջարկեց, որպեսզի այդ հարցն էլ ընդգրկվեր օրակարգում:
- 3) Պապ թագավորը նյարդայնանում էր, քանի դեռ Կոստանդինն իրեն ընդունելության չէր արժանացրել:
- 4) Թեև արշավախումբը փլուզման պատճառով արտաքին աշխարհից լրիվ մեկուսացման մեջ էր հայտնվել, այնուհանդերձ ոչ մեկը խուճապի չէր մատնվել:

**242. Ո՞ր նախադասության մեջ շաղկապի սխալ կիրառություն կա:**

- 1) Ոչ թե պետք է քննադատել նրան, այլ ճիշտ ներկայացնել կատարվածը:
- 2) Այդ միջադեպը, որին նա պատահաբար էր ներկա գտնվել, թեև վաղուց էր կատարվել, սակայն չէր մոռացվել:
- 3) Եթե փախստականները անմիջապես ճանապարհ ընկնեին, ապա ժամանակին կհասնեին քաղաք:
- 4) Ոչ միայն չէր կատարել հանձնարարված աշխատանքը, այլ մյուսներին էլ խանգարել էր, որ չկարողանային աշխատել:

**243. Ստորադաս նախադասություններից քանի՞սն են ստորադասական շաղկապով կապակցվել գերադասին:**

- Եթե հավատում ես ճշմարտության զորությանը, հոգուդ վրա մեղք մի՛ վերցրու:
- Ծերունին, որ տարիքի մեծության հետ ունի մտքի կատարելություն, գովեստի է արժանի:
- Սեփական անձի մասին զգույշ ու չափավոր պետք է խոսել, որ խոսքերն ինքնագովեստի չվերածվեն:
- Գիտուն մեկը, որ պատրաստվել է մի երևելի խնդրի մասին խոսել, յուրաքանչյուր բառ պիտի կշռի:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**244. Ո՞ր նախադասության մեջ ստորադասական շաղկապ չկա:**

- 1) Քանի դեռ ճրագը վառվում էր, երրորդ մարդը, աչքերը լաթով կապած, նստած էր սենյակում:
- 2) Դա միակ գործն էր, որի համար հետագայում այնքա՞ն գղջացել էր նա:
- 3) Մինչ սողունը փախչում էր երիտասարդից, վերջինս գնաց նրա հետևից:
- 4) Թե կյանքը սա է, ես անիծում եմ մահը:

**245. Նախադասություններից քանիստ՞ն շաղկապի սխալ կիրառություն կա:**

- Ասում են, որ ձյունառատ ձմեռը բերքառատ տարի է խոստանում:
- Նա ուզում էր, որպեսզի աշխարհում տիրեր խաղաղություն:
- Ընդդիմությունը պահանջում էր, որպեսզի վերանայվեն ընտրությունների արդյունքները:
- Թշնամին գալիս էր, որ կործաներ հազարամյա վանքեր, այրեր ու կողոպտեր, գերեվարեր կին ու երեխա:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում

**246. Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերաբերականներ:**

- 1) մի՞թե, անկախ, ահա, ախր
- 2) գոնե, հապա, ահավասիկ, լոկ
- 3) իրոք որ, այնքան, անգամ, սոսկ
- 4) միմիայն, ցավոք, թեև, իսկ և իսկ

**247. Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:**

- 1) Սպասավորներից մեկը քնած էր՝ գլուխը սեղանին դրած, մի ուրիշը մեջքը հենել էր պատին և բութ հայացքով նայում էր դռանը՝ ըստ երևույթին քունը հաղթահարելով:
- 2) Ես լավ չեմ հիշում նրան, որովհետև նա սոսկ մեր տան անդամ էր՝ գերծ ջղայնության ախտից:
- 3) Նրա այս վերջին բարեհաճ ընդունելությունն ինձ բերեց այն համոզման, որ ամեն առավոտ ես նրան կհանդիպեմ հենց նույն տեղում:
- 4) Ժպիտը մարող գույներով գծագրվում էր նրանց դեմքերի վրա և իսկույն կեթ անհետանում:

**248. Ընդգծվածներից ո՞րը վերաբերական չէ:**

- 1) **Այո՛**, Լուսինե Չաբարյանից լավ դժվար է հոգևոր երգ կատարել:
- 2) «**Գուցե** մի նոր հյուր եմ բերում», - չարախնդաց բանտապետը:
- 3) Նա **միայն** սպառնում էր ձեր արքային, բայց հարձակվել չի համարձակվի:
- 4) Նա **հազիվ** էր գապում իրեն, որ ձայնը չբարձրացնի:

**249. Ո՞ր շարքի բոլոր վերաբերականներն են հաստատական:**

- 1) հարկավ, բարեբախտաբար, իսկապես, գուցե
- 2) իրավամբ, ցավոք, այո՛, անշուշտ
- 3) անպատճառ, անպայման, մանավանդ, իրոք
- 4) անկասկած, անտարակույս, արդարև, հիրավի

**250. Տրված նախադասության մեջ քանի՞ վերաբերական կա:**

*Մինչև իր եղերական մահը նա թերևս չիմացավ, թե ինչ է կյանքի միջին ճանապարհը. մահն անգամ նա չդիմավորեց սովորական ձևով. սոսկ չմեռավ նա, այլ սպանվեց և սպանվեց, ինչպես պատմում էին, եղերական կերպով:*

- 1) երկու
- 2) երեք
- 3) հինգ
- 4) չորս

**251. Ընդգծված բառերի ձևաբանական վերլուծության մեջ ո՞ր շարքում սխալ կա:**

- **Իբրև** Հիստ՞ու ես դու **արդյոք** լյառ բարձրանում...
- Հագարավոր **չորացած** ծաղիկներ բուրում էին **խտտի** խրճերի միջից:
- Քո հոգու վրա կա մի վարագույր, **Ո՞վ** ես դու, ո՞վ ես, բնավ **չգիտեմ**:
- Քիչ անց **քամին** սաստկացավ փոթորիկ **դառնալու** չափ...

- 1) **իբրև** - նախադիր կապ, **արդյոք** - վերաբերական
- 2) **չորացած** - հարակատար դերբայ, չեզոք սեռ, **խտտի**- գոյական, /ի հոլովում
- 3) **ո՞վ**- հարցական դերանուն, **չգիտեմ** - պակասավոր բայ, ըղձական եղանակ
- 4) **քամին** - հասարակ գոյական, -ու հոլովում, **դառնալու**- անորոշ դերբայ

**252. Տրված բառերի ձևաբանական վերլուծություններից քանի՞սն են սխալ:**

*Չնայած չափազանց թուլությանը՝ մայրս ձեռքը դանդաղ հանում է վերմակի տակից, գուցե այլևս չի էլ տեսնում ինձ, սակայն մատները խարխափում են սավանների վրա, մինչև որ լռելյայն հանդիպում են իրեն պարզած ձեռքերիս:*

- չնայած - ստորադասական շաղկապ
- դանդաղ - ձևի մակբայ
- չի տեսնում - անկանոն բայ
- մինչև որ - համադասական շաղկապ
- պարզած - անդեմ բայ
- գուցե - վերաբերական

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) բոլորը

**253. Ընդգծված բառերի ձևաբանական վերլուծության մեջ ո՞ր շարքում կա սխալ:**

- **-Դե՛**, սիրուն աստղիկներ, երկնքի՛ ճրագներ, **հիմա** գնացե՛ք, գիշերը եկե՛ք:
- Ծնվում ենք **ակամա**, ապրում ենք **զարմացած**, մեռնում ենք կարոտով:
- Լսո՞ւմ ես՝ **այնտեղ** իմ սիրտն է թաղած,
- **Կոխտտի՛ր** նրան քայլերով քո լույս...
- Բոլորը տամ ու նվիրեմ, **ինձ** ոչ մի հուր **թող** չմնա:

- 1) **դե՛** - ձայնարկություն, **հիմա** - ժամանակի մակբայ
- 2) **զարմացած** - հարակատար դերբայ, չեզոք սեռ, **ակամա** - ձևի մակբայ
- 3) **այնտեղ**- տեղի մակբայ, **կոխտտի՛ր** - հրամայական եղանակ, ապառնի ժամանակ, երկրորդ դեմք
- 4) **ինձ** - անձնական դերանուն, առաջին դեմք, **թող** - վերաբերական

**ԲԱԺԻՆ 4 ՇԱՐԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ**

**1. Ընդգծվածներից ո՞րը նախադասություն չէ:**

- 1) Մի փոքր անզգուշություն, և ամբողջ աշխատանքդ ջուրը կընկներ:
- 2) Իմ գայրույթը լիքն է սիրով, **իմ գիշերը՝ լիքն աստղերով:**
- 3) **Կոտորած, կոտորած, կոտորած...**  
Քաղաքներուն մեջ և քաղաքներեն դո՛ւրս...
- 4) Սիրտս, **չգիտես ինչու**, վատ բան է գուշակում:

**2. Ո՞ր նախադասությունն է պարզ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Երկար սպասված գարուն ու սիրտս արթնանում է ձմեռային նիրհից:
- 2) Չգիտեմ այս տխուր աշխարհում որն է լավ որը վատ...
- 3) Ինչպես է կողոպտված այս գյուղում փրկվել այս երիմջը:
- 4) Խնդրում եր իր ընկերոջ մասին ոչ մի աննպաստ կարծիք չհայտնեմ:

**3. Ո՞ր նախադասությունն է պարզ ընդարձակ:**

- 1) Մարդիկ ու մեքենաները անցուդարձ էին անում:
- 2) Անտառն ավելի գեղեցիկ էր թվում:
- 3) Խոսակցությունը կարծես հաճելի էր նրան:
- 4) Յուրաքանչյուր ոք լաց էր լինում:

**4. Ո՞ր նախադասությունն է բարդ:**

- 1) Ավտոմեքենաների բեռնված շարասյունը ձգվում է լեռն ի վեր՝ դեպի Մանթաշի ձորն իջնող խճուղին:
- 2) Բացվում է հեքիաթային մի աշխարհ՝ իր անկրկնելի գեղեցկություններով, վեհատեսիլ Արագածով, փրփրաբաշ ջրերով ու վիթխարի ժայռերով:
- 3) Ես ձեզ ասում եմ՝ կգա Ոգու սով...
- 4) Մի թագավոր սովորություն ուներ ժողովրդի մեջ ծալոված շրջելու՝ իմանալու համար ժողովրդի՝ իր մասին ունեցած կարծիքը:

**5. Ո՞ր նախադասությունն է բարդ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Երգչուհին ուր որ է կհայտնվեր բեմում:
- 2) Մարդիկ հափշտակված նայում էին կարծես առաջին անգամ ըմբռնելով Շեքսպիրի ողբերգության ողջ խորությունը:
- 3) Ասում են ուռիս աղջիկ էր ինձ պես:
- 4) Ժամանակն ու տարիները թվում է ավելի արագ են անցնում:

**6. Նախադասություններից քանի՞սն են բարդ (նախադասությունները կետադրված չեն):**

- Ծերունին նստած էր բակում թթենու տակ մտասույզ հայացքը հառած հեռավոր լեռնապարհին:
- Նրանից անվերջ դժգոհում էին թե նրան ճակատագրի բերումով միանգամայն պատահաբար հանդիպած մարդիկ թե տարիներ շարունակ նրա ղեկավարությամբ աշխատողները:
- Մենակյաց տանտիրուհին թեև անտարբեր էր ժողովրդական երգերի նկատմամբ բավական նրբաճաշակ կին էր:
- Չգիտես ինչու երագում էի մի անկյուն աշխարհից ու աղմուկից հեռու:

- 1) ոչ մեկը
- 2) մեկը
- 3) երկուսը
- 4) երեքը

**7. Նախադասություններից քանի՞սն են բարդ (նախադասությունները կետադրված չեն):**

- Դարդը սրտիս աղքատ ու խեղճ ցուպը ձեռքիս գլխիկոր  
Շատ տարիներ պանդուխտ եղած նորեն դարձա հայրենիք:
- Երևի այդօր ցերեկը ձգվեց  
Քնից նոր զարթնած կտրիճի նման:
- Ծննդկանի շուրջ նստեցին նրանք  
Որդուն մաղթելով արևշատություն  
Նորատի մորը շուտ ապաշխարանք  
Աղվորիկ մի հարս  
Բարի տատություն...
- Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բոթից  
Որպես ընդհանուր աղետից սարսած  
Զարմացած կզգան ինձ այնքան մոտիկ...

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) ոչ մեկը
- 4) երեքը

**8. Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

- 1) Հին գեների՝ տեգերի, աղեղների և գրահների տեղ զինապահեստներում շողշողում էին ծիրանը, դեղձը, նուռը և խաղողը:
- 2) Գաշտում տակավին հարյուր տարի սրանից առաջ ոչ մի տուն չկար. կային միայն ուռենու ճյուղերից շինված խուղեր:
- 3) Ժամանակի ընթացքում ռազմական նպատակների համար կառուցված ամրոցը, որի պատերի մի մասը ավերվել էր բնական երկրաշարժերից, վերածվել էր շուկայի և ընդարձակ պահեստների:
- 4) Հին գետի ափերով հարավի արեգակի շողով ու բույրով գալիս էին ուղտերի քարավանները՝ բերելով հարավի քաղցրությունն ու գույնը:

**9. Ո՞ր նախադասությունն է բարդ ստորադասական:**

- 1) Ծաղիկը, ծառը թե չլինեն, մարդ կխելագարվի:
- 2) Այդ ձին շատ քուռակներ էր ունեցել, բայց այս քուռակը այս կանաչ հովտի ամենագեղեցիկ արարածն էր:
- 3) Շները կորցրին գայլին, ապա կորցրին նաև նրա հետքը:
- 4) Տեր Հարությունը լուռ ու խորհրդավոր ասեղնագործում էր տառերը, օրը մեկ տառ, երբեմն նաև պատմություններ էր անում սուրբ Մաշտոցի մասին:

**10. Ո՞րը բարդ ստորադասական նախադասություն չէ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Պատահում էր օրերով չէր երևում:
- 2) Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները խոնավություն կաթեց քարերի վրա:
- 3) Ինչ որ ես չեմ ասել նա կասի վաղը:
- 4) Մենք էլ նստում էինք այնքան մինչև քունը հաղթեր գլուխներս հենեինք քուրսու թախտին:

**11. Ո՞րը բարդ ստորադասական նախադասություն չէ:**

- 1) Այն, ինչ ամեն օր կար, այդ առավոտ չկար, իսկ այն, ինչ չպետք է լիներ, կար:
- 2) Պահակը պատմում էր այդ տարիների մասին, և դա թվում էր մի պարզ պատմություն:
- 3) Իսկ ինձ թվում էր՝ գնում եմ շատ հեռու մի երկիր:
- 4) Գյուղում մի օր էլ լուր տարածվեց, թե ազատություն է ընկել, գորքը տուն է գալու, թագավոր չկա, կռիվ չկա:

**12. Ո՞ր ստորադաս նախադասությունն է շաղկապով կապակցվել գերադասին (գլխավորին):**

- 1) Միջնադարյան գրիչները գրքի մասին մտածել ու գրել են այնպես, ինչպես կգրեին մարդու մասին:
- 2) Ես պատմում եմ այն, ինչ տեսել ու զգացել եմ սեփական փորձով:
- 3) Արամին եթե բան պատահած չլիներ, արդեն եկած կլիներ:
- 4) Այնտեղ, ուր օձն էր սիրում պառկել ու տաքանալ, ցածրիկ թփերում աղավնին բույն էր հյուսում:

**13. Ընդգծվածներից ո՞րն է գերադաս նախադասություն:**

- 1) Յուրաքանչյուր տներում էր, **պոչն ուժգին խփում այս ու այն կողմ**, գավակն աջ ու ձախ դարձնում, բայց ոչինչ չէր օգնում:
- 2) Վազեցիհնք և **փոսի մեջ տեսանք ծեր աղվեսին**, որ կծկվել, կուչ էր եկել ու դուռնը մոտեցրել էր վերքին:
- 3) Նա որդուն մատնացույց արեց հետնադուռը, որ խանութից տուն էր տանում, և որդին հնազանդ, շատ մռայլ տեսքով դուրս գալով խանութից, **տուն մտավ**:
- 4) **Յոթանասուն տարեկանի մոտ մարդ է մա**, հնարել է տարբեր գործիքներ, որոնք բոլորն էլ օգտակար են:

**14. Ընդգծվածներից ո՞րն է միակազմ նախադասություն:**

- 1) Ո՞հ, կը դողդոջեմ, **տժգույն եմ**, տժգու՞յն:
- 2) Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ,  
Չեմ հասկանում՝ **դեպի ուր...**
- 3) **Լռությու՛ն, լռությու՛ն, լռությու՛ն անսահման...**
- 4) Կյանքն անցնում է տիեզերքում զընգալեն,  
Մեկն ապրում է, **մյուսը՝ սպասում**. թատղ բե՛ր:

**15. Ո՞ր նախադասությունը միակազմ չէ:**

- 1) Բարելավել վերահսկողական աշխատանքները:
- 2) Խելոքին՝ գերի, անգետին՝ ոչ սիրելի:
- 3) Մթնշաղ է. անձրևում է միալար:
- 4) Աշխատանքից հոգնեցին:

**16. Ո՞ր տարբերակում միակազմ նախադասություն չկա:**

- 1) Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով  
Մի քանի կոճղեր դրեց կրակին...
- 2) Կյանքս թեթև, տանուլ տված  
Գրագ եղավ, անց կացավ:
- 3) Մթնում է, ճրագը վառում  
Եվ տխուր իրար ենք նայում  
Իմ հոգնած տարիքը ու ես:
- 4) Գարուն էր: Չեկած ամառ՝  
Փուլ եկավ երկնականար...

**17. Ո՞րն է անենթակա նախադասություն:**

- 1) Քայլե՛լ ու քայլե՛լ, թափառե՛լ մենակ աշխարհի փոշոտ ճանապարհներին....
- 2) Պտուղդ քաղող չկա, մասրենի՛....
- 3) Պտուղը ծառից են ճանաչում:
- 4) Կախարդվածի պես կանգնած՝  
Տնե՛ր, տնե՛ր ավերակ....



**18. Ո՞րն է անենթակա նախադասություն:**

- 1) Մամուռներում կորան արահետ ու կածան:
- 2) Ինձ հառաչել չթողին,  
Էլ ո՞ւր մնաց շառաչել:
- 3) Եկան օրեր ու անցան,  
Ու ինձ ոչինչ չմնաց:
- 4) Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի  
Արձագանքն ահա լսում եմ նորից:

**19. Ո՞ր նախադասությունն է ներգործական կառուցվածքի:**

- 1) Ծաղկած սարի փեշերին  
Դու սպասի՛ր իմ դարձին....
- 2) Քո կասկածներից հոգիս խռովվել,  
Միտքս պղտորվել ու տրտմջում է....
- 3) Նագում ես ու շորորում գմբուխտե քո շորերում:
- 4) Սիրեցի հեզ, անքեն հոգիդ  
Եվ երգերդ մեղմ ու բեկբեկ:

**20. Ո՞ր նախադասությունն է ներգործական կառուցվածքի:**

- 1) Կարծես թե դարձել եմ ես տուն,  
Բոլորն առաջվանն է կրկին....
- 2) Տեսա երազ մի վառ,  
Ոսկի մի դուռ տեսա...
- 3) Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
- 4) Քո խոսքերից անդունդներ են բացվում սրտիս,  
Քո հայացքից սարսռում է ժայռը սրտիս:

**21. Ո՞ր նախադասությունն է կրավորական կառուցվածքի:**

- 1) Նա խռովեց քո պահվածքից:
- 2) Հուզվեցի մի փուչ խոսքից:
- 3) Չայրույթից քահանան նզովեց:
- 4) Հիացմունքից ինձ կորցրած՝ չկարողացա անգամ գովել նրան:

**22. Նշե՛ք կրավորական կառուցվածքի այն նախադասությունը, որտեղ սխալ կա:**

- 1) Քանդակագործի մուրճի հուժկու հարվածների կողմից փշրվում ու ճեղքվում էր քարը՝ աստիճանաբար ուրվագծելով մի գեղեցիկ կերպարանք:
- 2) Մանրավաճառի խանութի դռներն ու պատուհանները թմբկահարվում էին կատաղի քամուց:
- 3) 1604 թ. Հին Ջուղայի և հարակից վայրերի բնակչությունը անգթորեն տեղահանվեց Շահ-Աբասի կողմից:
- 4) Մատենադարանը պետք է պահպանվի ժողովրդի ու պետության կողմից:

**23. Ո՞ր ստորադաս նախադասությունն է հարաբերական դերանունով կապակցվել գերադասին (գլխավորին):**

- 1) Մայրը, որ կյանքում շատ բան էր տեսել, ներողամիտ հայացքով նայեց որդուն:
- 2) Նա չգիտեր, որ իր ընկերները գաղտնիք ունեն իրենից:
- 3) Չիավորները իջան ձիերից, հենց տեղ հասան:
- 4) Ես տանը կմնամ, մինչև դու գաս:

**24. Ո՞ր ստորադաս նախադասությունն է շաղկապով կապակցվել գերադասին (գլխավորին):**

- 1) Թեկուզ դարն է ծնում, և երկիրն է տալիս երգին շունչ ու ոգի, Բայց երգը երկրից ու դարից մի՛շտ երկար է տևում:
- 2) Ուրախ և ցնձալից է Վարդավառը, որ գալիս է հեթանոսական ժամանակներից:
- 3) Լեռների ոտների տակ հեռում էր ծովը, ուր լուսափետուր որորները քնքշորեն խփում էին իրենց կուրծքը կոհակներին:
- 4) Արևը որքան բարձրանում էր, այնքան Արարատյան դաշտավայրը խնկարկում էր իր անուշահոտությունը:

**25. Տրված բառակապակցություններից որի՞ գերադաս անդամը գոյական չէ:**

- 1) խոսքով արդար
- 2) չկրակած գեներ
- 3) վայրի աղջիկ
- 4) դաժան հարված

**26. Ընդգծվածներից ո՞րն է նախադասության անդամ:**

- 1) Արքաների հետ խոսում են **«դու»-ով**, Եթե, իհարկե, լսում են նրանց:
- 2) Հաշվեցե՛ք, **խնդրե՛մ**, հաշվեցե՛ք նաև, Թե մեզնից գոնե՛ մեկը իր կյանքում Քանի՛ կնոջ է տենչանքով նայել...
- 3) Աշխարհին, **այո՛ւ**, մաքրություն է պետք:
- 4) Հեշտ է, **գուցե**, գրքեր գրե՛լ, ո՛չ թե կարդալ...

**27. Ընդգծվածներից քանի՞սն են նախադասության անդամ:**

- Ո՞րք է արդյոք հիմա նա, ո՞րջ է արդյոք, թե՞ մեռած:
- Ի՞նչ պիտի անե աշխարհում **ես** անմիտ-անճարը՝ ասին:
- Որքան աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս, **Այնքան** աշխարհը անուշ ու ցանկալի կլինի:
- **Ավա՛ղ**, լուսնի տակ և վեհ բան չկա...

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) մեկը

**28. Ո՞ր նախադասության մեջ ենթակա կա:**

- 1) Թողնե՛լ աշխարհն այս աղմկոտ, լինե՛լ հեռվում ու ազատ....
- 2) Անձրևում է. թաց մշուշներ, թախծաթաթախ ուռիներ:
- 3) Ո՞վ քեզ ծեծեց, Մարո՛ ջան ...
- 4) Դտերն աշնանն են հաշվում:

**29. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված ենթակա կա:**

- 1) Խրճիթն իր հիմնվելու օրից այդքան ուրախություն երբեք չէր տեսել:
- 2) Աշխատանքի այդ խաղաղ օրերին այնպես էր երևում, թե սարերի ետևում ընկած գյուղի մասին քաղաքում ոչ ոք չգիտի:
- 3) Կածանները նրանց անծանոթ են ու երկյուղալի. չգիտես ինչ ձորեր են մտնում:
- 4) Մեզ հաճելի է դիտել, թե ինչպես ջրածտերը թռչում են փրփուրի վրայով:

**30. Ո՞ր նախադասության ստորոգյալն է արտահայտված կրավորական սեռի բայով:**

- 1) Ծրագների ձեռն սպառվեց, և սենյակում տիրեց խավարը:
- 2) Չորացած տերևներն անհանգիստ խռնվում էին այս ու այն անկյունում:
- 3) Հեռու ձորերում գվվում էին էլեկտրալարերը:
- 4) Այդ վանքը գնահատվել է մահ օտար ճարտարապետների կողմից:

**31. Ո՞ր նախադասության մեջ բայի հրամայական եղանակով արտահայտված ստորոգյալ կա:**

- 1) Երբ Գրիգորը դժգոհում էր մեր ազարակի ծառերից պտուղ քաղողներից, մայրս գորովանքով ասում էր.  
-Թող մի քիչ էլ քաղեն տանեն, ձայն չհանես, դրանով մեր պտուղը չի պակասի:
- 2) -Հայրիկիդ կասեմ, որ թույլ տա՝ թռուցիկ թռցնես,-ասաց մայրս, -բայց այլևս թելը կտուրի ձողին չկապես:
- 3) -Բարեկամներս,-ասաց նիստը վարողը,-խնդրում եմ հարցերը տալ պարզ, որոշակի և տղամարդու պես տեր կանգնել տրված հարցին:
- 4) Նա մեքենան կանգնեցրեց ու ասաց.  
-Մեքենայիս մեջ շատ տեղ չկա. եթե ուզում ես, ճամպուրակներդ դիր, կտանեմ, կողովներիդ հետ դու ոտքով կգաս:

**32. Ո՞ր նախադասության մեջ բայի հարկադրական եղանակով արտահայտված ստորոգյալ չկա:**

- 1) Ուր էլ որ լինեմ, անձրևն սկսվելուն պես պիտի մի առանձին հաճույքով կանգնեմ նրա տակ ու թույլ տամ, որ թրջի ինձ հիմնովին:
- 2) Նա ինձ ասաց, որ ես նոր եմ ոտք դնում կյանք և պետք է իմանամ, թե դեռ ինչեր են սպասում ինձ:
- 3) Գյուղի մեծ փողոցը մեր տան առաջով էր անցնում. ուրիշ գյուղից եկողը մեր տան կողքով պիտի գնար:
- 4) Պետք է պատրույզը բարձրացնել և մինչև ձեռքը հատնի, ավարտել անկրկնելի օրերի պատմությունը:

**33. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- 1) Նա արդեն հույսը կտրել էր ամենքից:
- 2) Տիգրանը միշտ նրան տեսել էր աղոթելիս:
- 3) Քամին քիչ-քիչ սաստկացավ ու երեկոյան դեմ փոթորիկ դարձավ:
- 4) Լառ-Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու աչքերին արցունքներ երևացին:

**34. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- 1) Ա՛նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:
- 2) Եվ լույսը բացվեց, քարը պար եկավ:
- 3) Դեպի երկի՛նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի:
- 4) Սիրո հակառակն ամենևին էլ չսիրելը չէ:

**35. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- 1) Առավոտյան նրա ուղարկած մարդիկ էին հավաքվել Էջմիածնում՝ Մայր տաճարի պատերի տակ:
- 2) Վերջում դուրս էին հանում այդ գործի հետ որևէ առնչություն չունեցողներին:
- 3) Այդ արևազօծ օրերին սահմուկեցնող էր ալիքների շառաչյունը՝ խոյրնթաց և մրրկահույզ:
- 4) Լույսը պիտի ներս ընկներ առաստաղի ձվաձև անցքերից՝ դահլիճում ստեղծելով խորհրդավոր կիսամութ:

**36. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ չկա:**

- 1) Եվ մենք ավելի սիրով ենք իրար «Բարի լույս» ասում:
- 2) Անպրոպից հետո աշխարհը և դու Հասկանալի եք լինում ավելի:
- 3) Ջուրը տվեց հողին ծարավ, Տիղմ ու փրփուր ծովին ծարավ, Այս էր ամբողջը:
- 4) Բանաստեղծություն գրելու պահին Ամբողջ աշխարհը իմ տեղ ու տունն է:

**37. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

*Մանուկ էի՝ ամեն ինչին անգիտակ,  
Մի հասկն ի՞նչ էր, տրորեցի ու անցա:  
Հայրս տեսավ, մտերմորեն նախաստեց.  
«Հացն ափսոս է, չեն տրորի ու անցնի...»:  
Ես մանկական անհոգությանը զարմացա.  
«Ինչո՞ւ է ինձ հայրս այդպես նախատում»:*

- 1) յոթ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

**38. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

*Եվ եթե պիտի գիր ու տառ հիշվի,  
Ապա նա ինքն է այն մեծատառը,  
Որով հասարակ ու պարզուկ բառը  
Աճում է, հասնում խորհրդանիշի,  
Եվ... մարդը ձգվում ու դառնում է Մարդ...*

- 1) ոչ մի
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

**39. Տրված հատվածներում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- *Միշտ նույն խոհերի շշուկին հյու,  
Միշտ նույն կարոտի կսկիծը պահած՝  
Ես դուրս եմ գալիս՝ նորից շրջելու  
Նեղ փողոցներն ու կրկեսները բաց:*
- *Տխրությունս անուշ է, որպես  
Հեռավոր, հեռավոր կարկաչյուն.  
Այնպես մեղմ է իմ սերն ու այնպես  
Անուշ է նա իմ սիրտը տանջում:*
- *Գիշերի՜ դեմ գիշեր է մութ խավարամած նրանց հոգին,  
Որ կարոտով մի կրակոտ սպասում է առավոտին:*
- *Աշխարհն էլ, ասես, մի հեքիաթ լինի՝ անսկիզբ, անվերջ հրաշք դյուրական:*

- 1) հինգ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

**40. Ո՞ր նախադասության ստորոգյալն է արտահայտված բայի ըղձական եղանակով:**

- 1) Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ, Ամենին մոռանալ...
- 2) Նա ուզեց գնալ՝ տեսնելու՝ հեռվում օրորվողը ձի՞ է, թե՞ քարակույտ:
- 3) Անունդ թող փարոս լինի ինձ սուտ կյանքի և դառը մահու դեմ...
- 4) Երբ ջուրն արդեն եռացած պիտի լիներ, պարզվեց, որ ինքը ջուր չի խնդրել:

**41. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ չկա:**

- 1) Իմ աչքերի մեջ այնքա՛ն կրակներ եմ մարել ես:
- 2) Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսավոր:
- 3) Միայն գիտեն, որ կյանքում ինչ-որ երգեր եմ գրել:
- 4) Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի:

**42. Նախադասություններից քանիստ՞ում գործիական հոլովով որոշիչ կա:**

- Շքեղ ապարանքների, այգեստանների ու ծաղկանոցների քաղաք Վանում մ.թ.ա. 8-րդ դարի առաջին քառորդում անցկացվում է 80 կմ երկարությամբ վիթխարի ջրանցք:
- Խորենացու վկայությամբ՝ Երվանդունի արքայական վերջին թագավոր Երվանդը Արաքս և Ախուրյան գետերի միախառնման տեղում է կառուցում Երվանդաշատ քաղաքը:
- Տիգրանակերտի պատմությունը լի է եղել դրամատիկ դրվագներով. բազմիցս ենթարկվել է կողոպուտի ու թալանի, ավերվել է ու վերաշինվել:
- Գվինի կենտրոնում՝ 30-35 մետր բարձրությամբ բլրի վրա, մինչև 15 մետր հաստություն ունեցող աշտարակաշատ պարիսպներով միջնաբերդն էր:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**43. Ո՞ր տարբերակում դերանունով արտահայտված որոշիչ չկա:**

- 1) Ուրիշ բլբուլ կգա կմտնի բաղը, Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը:
- 2) Ու մշուշոտ մեր աչքերը հավիտյան Ռոննեցին պատահական աչքերում Հարդագողի ուղիները ոսկեման...
- 3) Հոգնել եմ ամեն հովից թեքվելուց, Հոգուս մեջ հոգուս ցավը հեզնելուց, Ինքս իմ ստվերից ահաբեկվելուց:
- 4) Ո՞ր երկրի սրտում թախիժ կա այնքան, Եվ այնքա՛ն ներում- ո՞ր երկրի սրտում:

**44. Ընդգծվածներից ո՞րը որոշիչ չէ:**

- 1) Քո արյան և քո շինարար մուրճի Հետքերն է կրում այստեղ **ամեն** քար:
- 2) Հայրենի **քնքուշ** մի հով, Անցնելով բարդուց բարդի, Գնում ու փարվում է լուռ Լանջերին Արարատի:
- 3) **Միայնակ** ես սիրում եմ նստել Երերուն լույսերում...
- 4) Իմ **կարոտած** սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա...

**45. Ո՞ր նախադասության մեջ հատկացուցիչ կա:**

- 1) Չեռքին բռնած կրակխառնիչը՝ երիտասարդը կանգնել էր բուխարու առջև:
- 2) Գողտրիկ հուշարձանի կողքին կանգնել էր Սարանը:
- 3) Վաղորդյան արշալույսին նրանք վրաններ խփեցին անհյուրընկալ լեռան գագաթին:
- 4) Քո երգելու ժամանակ դահլիճը հմայված ունկնդրում էր:

**46. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված հատկացուցիչ չկա:**

- 1) Բուք հեզնեցին մեր կարոտները հրկեզ:
- 2) Ու կնքողս Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:
- 3) Խայամն ասավ իր սիրուհուն. «Ոտքդ զգո՛ւյշ դիր հողին...»:
- 4) Էն սև ծովում տառապելով՝ Լոդ է տալիս իմ հոգին:

**47. Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մեր առջև բացվեց մի հրաշք տեսարան բիրլիական լեռն էր:
- 2) Նա իմ առաջին սերն էր՝ առաջին սերը որ երբեք չի մոռացվում:
- 3) Նրա սկսնակ բանաստեղծի համար սկսվեցին ծանր օրեր:
- 4) Եկողները հաղթանակ տարած նախարարներն էին հայրենիքի համար բազում ճակատամարտերում թրծված:

**48. Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա:**

- 1) Այնպես ես գալիս, այնպես գնում,  
Ո՛վ դու արարող և ավերիչ:
- 2) Գալիս ես որպես իրարանցում  
Եվ անց ես կենում որպես երազ:
- 3) Ես նրանից հուր եմ ուզում,  
Անշեջ հուրը սրբազան:
- 4) Որոտում է ձորն ի վար,  
Հոսում է ինքը, ինքը՝  
Նորին մեծություն փլված երկինքը:

**49. Ո՞ր նախադասության մեջ բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մղձավանջը հետապնդում էր իշխանին որպես մի սովեր:
- 2) Դ-ա մի քարայր էր փորված դեռևս վաղնջական ժամանակներում:
- 3) Նրան ժողովրդի կողմից սիրված ու գնահատված անձնվեր գորավարին չգնահատեց նենգ արքան:
- 4) Քարայրում պատի տակ երկու կմախք կար:

**50. Ո՞ր նախադասության մեջ մասնական բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Որպես փյունիկ կրակից կելնես կելնես նոր  
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:
- 2) Դ-ու որպես արքա ու արդարադատ տեր  
Այսօր դատավոր եղիր մեր միջև....
- 3) Որպես նենգ մի հյուր սողոսկել ամբողջ լոկ կեղտոտ դավեր նյութելու համար:
- 4) Դ-ու մոտեցար որպես քույր  
Ու հեռանում ես ահա...

**51. Ո՞ր նախադասության մեջ բայական անդամի լրացում չկա:**

- 1) Ժամանակները խառն են ու խրթին. ուժգին հողմը ննջում է, մեղմ հովը՝ ըմբոստանում:
- 2) Գետի վշտոցը ներքևում դառնում է շառաչ:
- 3) Հավքերն աղոթք են անում քնելուց առաջ:
- 4) Որտե՞ղ են ննջում իմ վաղմջական առավոտները:

**52. Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր կա:**

- 1) Նրա գրասենյակի ողջ կահկարասին մի խարխուլ սեղան էր, մի աթոռ՝ հազար ու մի թելերով կապկպած, մի թանաքաման և դիմումների համար թղթեր:
- 2) Ժառանգական և ամուսնական դատերի համար աղերսագրերը նա արտագրում էր մի հաստափոր գրքից՝ փոխելով անուններն ու թվականները:
- 3) Սենյակի անկյունում մի ավել կար, որ անգործածելի լինելու պատճառով դարձել էր սարդի բույն:
- 4) Այդ մասին խոսելիս հորաքույրս ախ էր քաշում, և պատրաստ էր արցունքը, որ թափվում էր սև, ծալքոտած այտերի վրա:

**53. Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր չկա:**

- 1) Բայց Պետրոսին հարկավոր էր մի ծածկ՝ անձրևից պատսպարվելու համար, ուստի այդտեղ գտնվող թախտին շտապ-շտապ փռելով իր անկողինը՝ պառկեց քնելու:
- 2) Ծերունի կառապանը երկիմաստ ծիծաղում էր այդ մանրախնդիր մարդկանց վրա:
- 3) Պատշգամբի սյունաշարերին կախված գույնգույն լապտերները լուսավորում էին ծաղկանախշ գորգերով զարդարված սրահը:
- 4) Ժայռը նիրհելով ունկնդրում է ամպերի շրշյունը, մասքենին իր ծաղկաբաժակը պահել է ոսկեգօծ արևի տակ, և կանաչ դաշտում արածում է մի աստղազարդ ձի:

**54. Ո՞ր նախադասության մեջ անուղղակի խնդիր չկա:**

- 1) Անկեղծության պահերին միշտ ներողություն էինք խնդրում մեզից նեղացողներից:
- 2) Միրհավը, հանգիստ քուջուջ անելով, փոխում էր արնագույն տոտիկները և կտուցով քրքրում լորենու փափուկ տերևները:
- 3) Հագրոյի հայրենիքը եղել էր քարոտ Սասունը՝ այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ձորերը դառնում են կիրճեր, լեռների գագաթները՝ ապառաժներ:
- 4) Հանկարծ մրրկաշունչ կայծակը չոր ճայթյունով բախվեց ժայռին, շարտվեց մի կողմ և թաղվեց գետնի մեջ:

**55. Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:**

- 1) Լեռներ, ներշնչված դարձյալ ձեզանով,  
Թնդում է հոգիս՝ աշխույժով լցված:
- 2) Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք,  
Ձեր անդունդներով եկե՛ք չափվեցե՛ք...
- 3) Ու ձորի գլխին մոլորված կանգնած՝  
Նայում է ներքև՝ սիրտը սևակնած...
- 4) Դե իմ անունով երդվի՛ր, անզգամ,  
Որ էլ Սարոյին դու չես սիրելու...

**56. Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:**

- 1) Ես նրան ճանաչեցի ձայնից:
- 2) Գարնանային երկինքը պատված էր սև ու մռայլ ամպերով:
- 3) Թագավորի հրամանով նրան դատապարտեցին մահվան:
- 4) Մարդու ողբերգությունը սկսվում է սեփական անգործությունը գիտակցելուց:

**57. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ներգործող անուղղակի խնդիր:**

- 1) Փոքրիկը վախից գունատվել էր ու ամբողջ մարմնով դողում էր:
- 2) Ի՞նչ է պահանջվում գյուղի ղեկավարությունից, պահանջվում է, որ թույլ տան ձի պահել:
- 3) Տեսնելով կրկեսում վալս պարող այդ ձիուն, ես զգացի, որ ինձ համար թանկ է բեռնաձին, որ մշտապես քրքրվում է **բռռերից**:
- 4) Ես ինձնից գոհ եմ, որովհետև ահա երեկվա գյուղացի՝ հիմա լրիվ ազատված եմ հովիվ դառնալու և **հողացավից** նվալու վտանգից:

**58. Ո՞ր նախադասության մեջ անջատման անուղղակի խնդիր կա:**

- 1) Ցավից տաքացած՝ էլ բան չեն հարցնում, Թռչում են՝ ասես ահից հալածված:
- 2) Փոքրահասակներից մի քանիսը, որոնք սովորում էին դպրոցում, գոգնոցով իրենց դեմքը ծածկեցին և պահվեցին ինձանից:
- 3) Քույր ու եղբայր պատուհանից նայում էին հարևան աղյուսե տան խուլ պարապությանը:
- 4) Վանքի պարիսպներից դուրս կառուցված այդ շինությունը ճանապարհորդների օթևանն էր:

**59. Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:**

- 1) Մի սարսուռ էր անցնում նրա մարմնով, երբ մտածում էր հարազատների կողմից ստեղծված խոչընդոտների մասին:
- 2) Այդ առեղծվածային դեպքերից մի քանի օր շարունակ լարված իրավիճակ էր ստեղծվել ողջ քաղաքում:
- 3) Նրան մեծ պատիվներով ու շուքով ընդունեցին Աշոտ արքայազնի հոր՝ Գագիկի նստավայրում:
- 4) Այդ մարդը, որ հակված էր բյուզանդական կայսեր հետ բարեկամական դաշինք կնքելուն, հիմա խորը տարակուսանքի մեջ էր:

**60. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը միջոցի անուղղակի խնդիր:**

- 1) Բոլոր երկրներում մարդիկ սիրով են դիմավորում Նոր տարվա գալուստը:
- 2) Ճապոնացիները հնուց ի վեր Նոր տարին դիմավորում են մեծ **շուքով**:
- 3) Չինացիները Նոր տարվա սեղանը զարդարում են կարճ կտրած **նարգիզներով**:
- 4) Մշո դաշտը պատված էր թանձր **մառախուղով**:

**61. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը միջոցի անուղղակի խնդիր:**

- 1) Ես եկել եմ այն վերջնական եզրակացության, որ մարդիկ հիանում են իրենց չունեցած **հասկություններով**:
- 2) Թուխ, մաքուր մազերով, բարձր **ճակատով** բարձրահասակ մի տղամարդ էր Լևոնը:
- 3) Ես մտա գրքերի աշխարհը նույն **թափով և կրքով**, ինչ թափով և կրքով Լևոնը մտել էր գործարար աշխարհ:
- 4) Վազում է Քրիստիանեն պարտեզի **կաճաններով**, ինչպես եղնիկն անտառում:

**62. Ո՞ր նախադասության մեջ *դանդաղ-ը* գործածված չէ որպես պարագա:**

- 1) **Գանդաղ** թերթում եմ գրքի էջերը ու էջերի արանքում գտնում սուսամբարի չորացած մի ծաղիկ:
- 2) Նա քայլում էր **դանդաղ**, կորացած, հուսահատ մարդու քայլվածքով:
- 3) Ծիլերը **դանդաղ** բարձրանում են ջերմացած հողից:
- 4) **Գանդաղ** քայլերով անցավ միջանցքով ու վերջապես բախեց դուռը:

**63. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը ժամանակի պարագա չէ:**

- 1) Ջրտուքի այդ **գիշերներին** լուսինը շողք էր զցում առվի մեջ:
- 2) Մինչև գառիվայրի **սկիզբը** ճանապարհին անցնում էր փոքրիկ տափարակով:
- 3) Ամպամած այդօրից **հետո** էլ չեմ բարձրացել բրուտների ճանապարհով:
- 4) **Երբեմն** ինձ հարցնում է իմ տեսած քաղաքների, իմ կարդացած գրքերի մասին:



**64. Ո՞ր նախադասության մեջ տեղի պարագա չկա:**

- 1) Անդոն երբեմն ինձ հարցնում է իմ տեսած քաղաքների, իմ կարդացած գրքերի մասին:
- 2) Գյուղից ներքև՝ մի բարձր ժայռի մոտ, գետն արմունկ է կազմում ու կորչում քարերի արանքում:
- 3) Կուրծքը սպիտակ ջրածտերը թռչում են քարից քար, կրծքերը երերացնում, ծվծվում:
- 4) Ձիերը ահ ու սարսափով կանգնում էին կիսաքանդ կամրջի առաջ՝ վախենալով նրանով անցնելուց:

**65. Ո՞ր տարբերակում պատճառի պարագա չկա:**

- 1) Ինչո՞ւ չես խոսում, ինչո՞ւ չես նայում,  
Դու իմ գերեզմանն ինչո՞ւ ես խըլում...
- 2) Ազնի՛վ եղիր ամեն ինչում-  
Ո՞վ է կյանքում սովից մեռել:
- 3) Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին,  
Թե չլինին կինն ու գինին:
- 4) Ասում են, թե էն Փարվանա  
Ջահիլներն են սիրավառ,  
Շտապելուց թև են առել,  
Դարձել թեթև թիթեռներ...

**66. Ո՞ր նախադասության մեջ պատճառի պարագա չկա:**

- 1) Ինչո՞ւ չես խոսում, ինչո՞ւ ես լռում:
- 2) Պատճառ չունեմ քեզ չհարգելու:
- 3) Իսկ գժվելուց չէ՞ փայտը ճարճատում:
- 4) Սիրուց է իմ սիրտը հեռում:

**67. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված պատճառի պարագա կա:**

- 1) Քո աչքերի, քո աչքերի պատճառով  
Իմ աչքերը ամբողջ գիշեր, ամբողջգիշեր չեն փակվում:
- 2) Ինչո՞ւ իզուր հանգցնում ես Ջահել կրակն աչքերիդ:
- 3) Արդյոք ո՞ւր ես, խորհրդավոր արշալույս:
- 4) Որքա՛ն ենք մենք խաղացել, Իրար ծեծել ու սիրել:

**68. Ո՞ր տարբերակում նպատակի պարագա կա:**

- 1) Երբ էս հին աշխարհը մտա ես տաղով, սագով-քամանչով,  
-Ի՞նչ պիտի անե աշխարհում էս անմիտ-անճարը,-ասին:
- 2) Ինչի՞ց, ինչի՞ց խռովեցիր,  
Գոնե պատճառն իմանամ....
- 3) Ինչո՞ւ ապշած են, Լճակ,  
Ու չեն խայտար քու այլակք:
- 4) Քեզ փորձելու համար եկա,  
Հո չի՞ փոխել կյանքը քեզ:

**69. Ո՞ր նախադասության մեջ հիմունքի պարագա կա:**

- 1) Խունկը բուրելով կայրվի:
- 2) Անգորությունից նա լաց էր լինում:
- 3) Ես նրան աչքերի գույնից ճանաչեցի:
- 4) Ծառուղին պատված էր չորացած տերևների գորգով:

70. Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Մարզիկները ջանք թափելով հասան աննախադեպ արդյունքների:
- 2) Պահարանից հանելով ջութակը նա աղեղը սահեցրեց լարերի վրայով:
- 3) Սայլը ցնցվելով ընթանում էր խորդուբորդ ճանապարհով:
- 4) Ծառերի ճյուղերը գալարվելով փակում էին մարդկանց ճանապարհը:

71. Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված չկա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Մեկը իմ սիրտը փշրելով անցավ:
- 2) Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ Հավետ քեզ կապված քեզ օտար եմ ես...
- 3) Իմ լքված սրտի կարոտը անծայր Ամեն ինչի մեջ որոնում է քեզ...
- 4) Միայնակ ես սիրում եմ նստել Երեբունա լույսերում:

72. Տրված նախադասության մեջ ստորև նշվածներից ո՞րը չկա:

*Եվ ժողովուրդը՝ աշխատասեր, հրաշագործ, ջանք թափելով հողին վերադարձրեց իր երբեմնի քնքշությունը, անտառներին՝ գմբուխտաշող պերճանքը:*

- 1) զեղչված անդամ
- 2) բազմակի անդամներ
- 3) դերբայական դարձված
- 4) հետադաս որոշիչ

73. Նշվածներից ո՞րը չի կարող դրվել բացառական հոլովով:

- 1) ներգործող խնդիրը
- 2) մասնական բացահայտիչը
- 3) հանգման խնդիրը
- 4) գոյական որոշիչը

74. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը դերբայական դարձված (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Եզները **ձիգ տալով** դժվարությամբ քաշում էին ջրաղացքարը բարձրացնող պարանը:
- 2) **Ջուր ծեծելով** ձեր գործն առաջ չի գնա:
- 3) Ես վեր ելա **ոգի առած** Չարկի սրտիս լարերին...
- 4) Պահնորդները **բակ մտներով** ճանապարհ բացեցին հավաքված ամբոխի միջով:

75. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Դ-ահլիճը **քար կտրած** սպասում էր երգչի հայտնվելուն:
- 2) Պատերազմից հետո մենք մուրացկանների մման **ձեռքներս անցորդներին պարզած** կանգնել էինք եկեղեցու նախշագարդ դռան մոտ:
- 3) Հիվանդի ոտքերի կողմում **ձեռքերը կրծքին ծալած** կանգնած էր արտիստը:
- 4) **Շքեղ հագնված** հյուրերը կարծես չէին էլ նկատում տանտիրոջ անհանգստությունը:

76. Տրված նախադասության առանձնացված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից ո՞րն է սխալ:

*Ես մկրտվել եմ հայկական եկեղեցում, որի արմատները ձգվում են մինչև Թադևոս և Բարդուղիմեոս առաքյալների շրջանը:*

- 1) *մկրտվել եմ* - բաղադրյալ ստորոգյալ
- 2) *հայկական* - որոշիչ
- 3) *որի* - հատկացուցիչ
- 4) *արմատները* - ենթակա

77. Նախադասության շարահյուսական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ *չկա*:

*Երկար ճանապարհից հոգնած ուղևորը, ձեռքը ճակատին դրած, գլուխը հենել էր գնացքի պատուհանին ու աշխատում էր մի փոքր քնել:*

- 1) *երկար* - որոշիչ, *ճանապարհից* - տեղի պարագա, *գլուխը* - ենթակա, *դրած* - ձևի պարագա
- 2) *հոգնած* - որոշիչ, *գնացքի* - հատկացուցիչ, *ձեռքը* - ենթակա, *մի փոքր* - չափի պարագա
- 3) *ուղևորը* - ենթակա, *մի փոքր* - չափի պարագա, *հենել էր* - պարզ ստորոգյալ, *գլուխը* - ուղիղ խնդիր
- 4) *ճանապարհից* - պատճառի պարագա, *հոգնած* - ձևի պարագա, *հենել էր* - պարզ ստորոգյալ, *քնել* - ենթակա

78. Տրված նախադասություններում ընդգծված անդամներից քանիսի՞նք շարահյուսական պաշտոնն է սխալ նշված:

- Աստղերից *պոկվող* (որոշիչ) կայծերն ընկնում էին աղբյուրի *ջրերի վրա* (տեղի պարագա):
- Այդ արտասովոր *մարդու* (հատկացուցիչ) մասին քո պատմածը *ինձ* (ուղիղ խնդիր) անչափ հուզեց:
- Նրա համար *ամենից մեծ* (որոշիչ) հաճույքը այգին ու արտերը *ջրելն էր* (բաղադրյալ ստորոգյալ):
- Բլրի լանջին արևկող արած գյուղում *մարդկանց* (հանգման անուղղակի խնդիր) տարօրինակ թվաց զուռնայի զիլ *ձայնը* (ուղիղ խնդիր):

- 1) ոչ մեկի
- 2) մեկի
- 3) երկուսի
- 4) երեքի

79. Տրված նախադասություններում ընդգծված անդամներից քանիսի՞նք պաշտոնն է սխալ նշված:

- *Իմ* (հատկացուցիչ) մտերիմ ընկերուհին՝ *Աննան* (ենթակա), ուսման մեջ չի թերանում:
- Կարապետը բարձր *քարղենու* (հատկացուցիչ) բնում ըմբռնված էին իրենց սիրո *զեղումները* (ուղիղ խնդիր):
- Իմաստունը *դատարանում* (տեղի պարագա) դիմում է օրենքի *պաշտպանին* (հանգման խնդիր):
- *Վատկռուն* (որոշիչ) երիտասարդը դառնում է ալեգարդ *տղամարդ* (ուղիղ խնդիր):

- 1) ոչ մեկի
- 2) մեկի
- 3) երկուսի
- 4) երեքի

80. Տրված նախադասություններում ընդգծված անդամներից քանիսի՞ շարահյուսական պաշտոնն է սխալ նշված:

- *Չարչու կերպ մտած* (ծևի պարագա), ինչպես վիշապ օձ, Անցնում էր ինքը՝ Շահ-Աբաս *արքան* (ենթակա):
- Գուցե անցնի խավարակուռ *մշուշն* (ենթակա) այս չար, և լինենք *մանուկ* (ուղիղ խնդիր), լինենք մաքուր:
- Այդպես աննկատ նա ինձ համար *դարձավ խորհրդատու* (բաղադրյալ ստորոգյալ), ումից ես ոչ մի գաղտնիք *չէի թաքցնում* (պարզ ստորոգյալ):
- *Ուրախ-ուրախ* (որոշիչ) կափկափելով՝ արագիլները պտտվելով իջնում էին *իրենց* (հասկացուցիչ) բներին:

- 1) ոչ մեկի
- 2) մեկի
- 3) երկուսի
- 4) երեքի

81. Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասությունը ենթակա:

- 1) Ով կբերի անշեջ հուրը,  
Նա է ընտրած իմ փեսան...
- 2) Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես...
- 3) Չգիտեմ՝ որտեղից է գալիս  
Զուրթակի հեկեկանքը տխուր:
- 4) Ո՞վ տվեց մարդուն այն իրավունքը, որ իշխի իր նմաններին:

82. Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասությունը ենթակա:

- 1) Տեսնում եմ, որ դուք աստվածացնում եք նրան, որովհետև վախենում եք:
- 2) Դուք, որ ծեր եք, հարգված, արդ պետք է նաև խելացի լինեք:
- 3) Իմաստունը նա է, ով մեծ խելքի առջև գլուխ է խոնարհում, մեծ սրտի առջև՝ ծնկները:
- 4) Ով հարստություն ունի, ժխտում է արդարությունը:

83. Ո՞ր տարբերակում ստորադաս նախադասությունը ենթակա չէ:

- 1) Հաճելի է, երբ զրուցակիցդ խելացի է:
- 2) Դու, որ չհասկացար մերձավորներիդ, չես հասկանա նաև ինձ:
- 3) Լավ է, որ չես շփոթվել ու ժամանակին բժիշկ ես հրավիրել:
- 4) Այլ խնդիր է, որ դու չես ուզում ինձ օգնել:

84. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն ունեն ենթակա ստորադաս նախադասություն:

- Նրան թվում էր, թե բոլորն իրեն ծաղրում են:
- Պարզվեց, որ Ալիշանից հետո Բայրոնի խանդավառ երկրպագուն մեր գրականության մեջ եղավ արևմտահայ բանաստեղծ Ռուբեն Որբերյանը:
- Անմիտ է նա, ով իր թշնամուն չի ճանաչում ու բարեկամ է կարծում:
- Այն, ինչ որ ավելի խորն ես զգում, ավելի վտանգավոր է:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) բոլորը

**85. Ո՞ր տարբերակում ստորագելի ստորադաս նախադասություն կա:**

- 1) Նա ամեն ինչ կատարեց այնպես, ինչպես խոստացել էր:
- 2) Հաճախ չենք պահպանում այն, ինչ ունենք:
- 3) Փաստն այն է, որ գունավոր հեռուստատեսության գյուտարարը հայ է:
- 4) Մարդ երբեք չգիտի գնահատել այն, ինչին հասել է արդեն:

**86. Ո՞ր տարբերակում ստորագելի ստորադաս նախադասություն կա:**

- 1) Ե՞րբ էր, որ նա խոստացավ գալ, շուտ գալ...
- 2) Զարմանալին այն է, որ նրա հայացքները բնավ չէին փոխվում:
- 3) Երանի նրան, ով կարող է գեղեցիկ ստով խաբվել:
- 4) Պատահում էր՝ անձրևը շաբաթներ էր տևում:

**87. Ո՞ր տարբերակում ստորագելի ստորադաս նախադասություն կա:**

- 1) Դ-ա է այն, ինչ ես ուզում եմ:
- 2) Ով աշխատում է, նա ուտում է:
- 3) Իմ ուզածն այն է, որ դուք լավ սովորեք:
- 4) Այն եմ կյանքում շատ ատում, ինչը սուտ է:

**88. Ընդգծվածներից քանի՞սն են ստորագելի ստորադաս նախադասություն:**

- Ինչ որ է, դու այն մարդն ես, որ մատնել է բոլորիս:
- Դ-ա մի մարդ էր, որ ողջ կյանքը նվիրել էր գիտությանը:
- Ով չի սիրում մորը, նա չի կարող սիրել հայրենիքը:
- Դավաճանները նրանք էին, ովքեր անցել էին թշնամու կողմը:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**89. Ո՞ր բարդ նախադասության մեջ որոշիչ ստորադաս նախադասություն կա:**

- 1) Նրա հիշողության խավար անդնդում բոցկլտաց այն օրը այնպես, ինչպես միայնակ աստղը՝ մթին երկնքում:
- 2) Դիլան դային հիշեց այն օրը, երբ Սոնան սրունքները կախել էր և ծիծաղում էր:
- 3) Որքա՞ն մեծ եղավ տղայի ուրախությունը, երբ նա տեսավ երկրորդ տուփը:
- 4) Հալածանքներն ու ներքին վիշտը ներգործում են նրա վրա այնչափ, որ սրտի դառնությունն օդու մեջ անգամ չի կարողանում խեղդել:

**90. Ո՞ր տարբերակում հատկացուցիչ ստորադաս նախադասություն կա:**

- 1) Նրանք, ովքեր շատ շուտ են մտերմանում, շուտ էլ դավաճանում են:
- 2) Թող հավերժ հիշվեն նրանց անունները, ովքեր գոհվեցին հանուն հայրենիքի:
- 3) Ներել նրան, ով ոտնահարել է մարդկային բոլոր իմ իրավունքները, ես չեմ էլ փորձում:
- 4) Ես միշտ փորձել եմ հասկանալ նրան, ով ինձ վատություն է արել:

**91. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն ունեն բացահայտիչ ստորադաս նախադասություն:**

- Ես գիտեմ մի թովիչ առասպել,  
Որ ողջ կյանքդ հրաշք է դարձնում:
- Չի ներվում այն, ինչը կոչվում է առավելություն:
- Դուք, որ աննկուն կորով ունեք, ինչպե՞ս եք տանում այդ տանջանքը:
- Երեկոյան, երբ աղջամուղջը ծածկեց երկիրը, Վարդանը մեկնեց:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**92. Ո՞ր քարդ նախադասության մեջ ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կա:**

- 1) Մինչև վերջին լուսնն միամիտ ծերունին հավատում էր, որ մի օր պատասխանը գալու է:
- 2) Այդպես էլ չիմացվեց, թե ինչ եղավ Եզոր Ադամովը:
- 3) Եվ Միմոնին թվաց, թե իրենց տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը:
- 4) Ես տեսա, թե ինչպես պապս շտապեց դեպի սանդուղքը:

**93. Ո՞ր քարդ նախադասության մեջ ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն չկա:**

- 1) Նրանց ջրակալած աչքերը տեսան, թե ինչպես կամարակապ ախոռում ձմռան գիշերին վրնջում է ձին:
- 2) Երևում է, որ ամբողջ ամսվա ընթացքում աղջիկն աշխատել է եղբոր պարտքի դիմաց:
- 3) Մտածում էի՝ իջնեմ քաղաք, գնամ գտնեմ եղբորս:
- 4) Չէր սիրում, երբ խոսելիս իրեն ընդհատում էին:

**94. Ո՞ր տարբերակում անուղղակի խնդիր ստորադաս նախադասություն չկա:**

- 1) Թագավորը ծերացավ և կառավարության սանձը կամեցավ հանձնել իր ժառանգներից նրան, ով ավելի ընդունակ կլինի այդ դժվարին գործին:
- 2) Ես նրան խաբեցի, որովհետև զգուշանում էի, որ նա փող կառաջարկի:
- 3) Այս հեռագիրը տվել էր երևի նրա համար, որ այլևս չձանձրացնեմ իրեն նոր նամակներով ու հեռագրերով:
- 4) Մեսրոպի ենթադրությամբ այդ հովատակը այդ զամբիկի քուռակն էր, և դա հիմնավորվում էր նրանով, որ երկուսի մեջքին էլ նույն սպիտակ բիծը կար:

**95. Նախադասություններից քանի՞սն են հանգման խնդիր ստորադաս նախադասություն:**

- Ինչ էր պատահել՝ չիմացվեց:
- Առանց երդման էլ ես հավատում եմ,  
Որ հիմա օրդ մի դար է տևում:
- Ես ուզում եմ, որ պարապը լցվի լացով:
- Նա պատրաստ էր, որ քո բոլոր ասածներն ընդունեք անվերապահորեն:
- Արքան ձգտում էր, որ դավադիրները հունից դուրս գալով մատնեին իրենց:
- Ջորջը սպասում էր, որ զորավարը հարձակման հրահանգ արձակի:

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) հինգը

**96. Ո՞ր տարրերակում ձևի պարագա ստորադաս նախադասություն կա:**

- 1) Նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանուշակը:
- 2) Տղան պատմեց, թե ինչպես արծաթ տվող մարդը մոր պատկերը հանեց թերթի վրա և դրեց ծոցը:
- 3) Քամին խշշացրեց թփերը, ինչպես Սոնան՝ սիմֆոնիի երկար ցողունները:
- 4) Այդպես մի անգամ էլ, երբ շատ տարիներ առաջ ճռնչաց այգու դուռը, լի, արև օր էր:

**97. Ո՞ր բարդ նախադասության մեջ պատճառի պարագա ստորադաս նախադասություն կա:**

- 1) Եթե բարձրանար ամպի վրա, Լառ-Մարգարը հեռու սարերի հետևում իրենց գյուղը կտեսներ:
- 2) Քանի դեռ Հովնաթանի շինած անոթները հարզ էին ստանում շուկայում, եղբայրներն անընդհատ բարձրացնում էին բողբոջը:
- 3) Անա զիզին կուզեկուզ բարձրանում է քարի վրա և կանաչ պոմիդորները շարում պատուհանի փայտերին, որ շուտ կարմրեն:
- 4) Ծամաձուվում էր նա ու լաց էր լինում նրա համար, որ այդ շունը՝ ոչնչությունը, իրեն արժանի էր համարում լինելու մարդու հավասար հակառակորդը:

**98. Ո՞ր նախադասության ստորադաս բաղադրիչ նախադասությունը ժամանակի պարագա չէ:**

- 1) Գետը հասնում է քարե այդ մաղին թե չէ, կորչում է:
- 2) Նայում եմ ամպին ու մտածում, թե Անդոն երբ է հասցրել ընկալել այդ ամենը:
- 3) Ու հենց շողաց ցոլքն արևի, Անտես, անհետ, չբացան:
- 4) Ժամանակը մինչև չգա, չասեք, թե ձեր տերը չեմ ես:

**99. Ո՞ր բարդ նախադասության մեջ նպատակի պարագա ստորադաս նախադասություն կա:**

- 1) Հովնաթանը տեսավ, որ պապը իրեն մոտենալու նշան է անում:
- 2) Նա երբեք չէր մտածել, որ կավը, բացի թասերից, գավերից, փարչերից և աղյուսներից, կարելի էր օգտագործել և անմահության համար:
- 3) Նրա համոզմամբ արձաններ քանդակելու գյուտը բացառապես պատկանում էր իրեն, որովհետև նա չէր տեսել՝ արձանն ինչպես են քանդակում:
- 4) Ձեռքը երկարեց, որ դուռը բաց անի, բայց հանկարծ սկսեց լաց լինել մանկան նման:

**100. Բարդ նախադասություններից որի՞ ստորադաս նախադասության պաշտոնն է սխալ նշված:**

- 1) Բոլորովին էլ պատահական չէ, որ մեր մոլորակին սպառնում է գլոբալ տաքացման վտանգը: *(ուղիղ խնդիր)*
- 2) Ծաղիկներ էին շաղ տալիս նրանց ճանապարհին, ովքեր հաղթանակած էին վերադարձել հայրենիք: *(հատկացուցիչ)*
- 3) Մենք, որ կյանքում շատ երազեցիներ, այդպես էլ ոչնչի չհասանք: *(բացահայտիչ)*
- 4) Որոշել էինք, որ քնություններից հետո մի լավ քեֆ անենք: *(ուղիղ խնդիր)*

**101. Բարդ նախադասություններից որի՞ ստորադաս նախադասության պաշտոնն է սխալ նշված:**

- 1) Զգացվում էր՝ Վահանն ասածիս վրա ինչ-որ բան էր մտմտում: *(ենթակա)*
- 2) Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ պես: *(ուղիղ խնդիր)*
- 3) Հետաքրքիր է, երբ մարդ տեսնում է այլ մարդու: *(ժամանակի պարագա)*
- 4) Ինչ տալիս եմ, այն է մնում գանձարանում իմ սրտի: *(ենթակա)*

**102. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները:**

1. Թեև հազիմ ռազմական հանդերձանք էր, սակայն դա բնավ չէր նսեմացրել նրա կանացի թովչանքը:
2. Թե հնար լիներ գտնել ձեռագիր մատյանների և մեղեդու գունային համապատասխանությունը, կստանայինք նրբահյուս մանրանկարների և զարդերի ձայնաշարեր:
3. Նա պարզ տեսնում էր, որ իր հրապույրը մարդկանց աչքում պայմանավորված է մեծ մասամբ իր հարստությամբ:
4. Հենց ծնողների ցանկությունն էլ այն էր, որ նա մոռանար արտասահմանում կրթությունը շարունակելու մասին:

- ա. պայմանի պարագա
- բ. ժամանակի պարագա
- գ. ուղիղ խնդիր
- դ. ստորոգելի
- ե. զիջման պարագա

- 1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-գ
- 2) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
- 3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ

**103. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները:**


1. Նա ավելի քիֆիսյան կինտո էր հիշեցնում, որը թյուրիմացաբար կամ պատահմամբ ժամանակավորապես կառապանի պաշտոն էր ստանձնել:
2. Հենց հարևանները չգիտեին՝ ինչպես հանգստացնեին ծերունուն պառավի մահից հետո:
3. Այն, որ բարեկամները այդ երիտասարդի երեսը օրերով չէին տեսնում, զարմացնում ու զայրացնում էր բոլորին:
4. Նրանք բաժանման հիմնական պատճառը հենց թերևս այն էր, որ յուրաքանչյուրը իբրև թե ուզում էր օգնել, բայց իրականում ոչինչ չէր անում:

- ա. ձևի պարագա
- բ. որոշիչ
- գ. ուղիղ խնդիր
- դ. ստորոգելի
- ե. ենթակա

- 1) 1-ե, 2-դ, 3-գ, 4-ա
- 2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
- 4) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ

**104. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**


*Չնայած չէր ցանկանում, բայց մեկ-մեկ էլ մորեղբայրս ինձ տանում էր անտառ, անտառում դիտմամբ «կորցնում էր» ինձ, որ մենակ մնամ, սովորեմ չվախենալ:*






**105. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

*Երբեմն լինում են պահեր, երբ սարսափելին գրավում է մարդուն հետաքրքիր տեսարանի պես, և մարդ անդիմադրելի ցանկությամբ ուզում է տեսնել այն, թեկուզև վտանգի իրեն:*




**106. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

*Երբ գրկում էի նրան՝ այդ նագելի էակին, և նայում լեռնային աղբյուրների նման նրա վճիտ աչուկների մեջ, տեսնում էի, որ այնտեղ մի թախծայի, երազուն կարոտ կա:*




**107. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

*Թեև մենք իրարից մինչև օրս գաղտնիք չունեինք, բայց վերջերս զգալի կերպով նա լռակյաց էր դարձել, խուսափում էր խոսել այն զգացմունքների մասին, որ բռնկվել էին իր հոգում:*



**108. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

*Ես հավատացրի, թերևս համոզեցի նրան, որ հույսը իրական բան է, և հուսացողը կհաղթի:*



**109. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Արևը վաղուց թեքվել էր դեպի մայրամուտ, և մութն էլ քիչ-քիչ ընկնում էր, .... դաշտում դեռ աշխատող գեղջուկներ կային:*

- 1) քանի որ
- 2) քանի դեռ
- 3) բայց և այնպես
- 4) ինչքան էլ

**110. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Ծանր ժամանակներից ի վեր թեև շատ բան էր փոխվել մեր կյանքում, ..... մայրիկիս սրտում վախ կար վաղվա օրվա հանդեպ:*

- 1) այնուամենայնիվ
- 2) քանզի
- 3) ուստի
- 4) ուրեմն

**111. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Դարերը դարերի հետևից գլորվում էին, ..... ամպերը՝ Կովկասի ճակատների վրայով:*

- 1) քանզի
- 2) ինչպես
- 3) կարծես
- 4) սակայն

**112. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

*Երկրի ..... համաձայն՝ թող ..... , և արքայադուստրը .....սիրտը կտա .....*

(1. հաղթանակել, 2. ինքը, 3. մենամարտել, 4. սովորություն)

- 1) 4, 3, 2, 1
- 2) 3, 1, 4, 2
- 3) 4, 1, 2, 3
- 4) 1, 4, 2, 3

**113. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

*Առավոտյան բոլոր ..... , ..... գեղեցիկ և շքեղ զգեստներով, ..... արքայադստեր դրյակի առաջ՝ նրան ..... իրենց հարգանքը և նվիրվածությունը:*

(1. մրցել, 2. հավաքել, 3. հայտնել, 4. զարդարել)

- 1) 2, 3, 4, 1
- 2) 1, 4, 2, 3
- 3) 2, 1, 3, 4
- 4) 1, 2, 4, 3

**114. Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*..... , ամեն ինչ ներկայացնում էր առասպելական ասացողի երևակայությամբ:*

- 1) Որևէ բան պատմելիս
- 2) Չնայած որևէ բան էր պատմում
- 3) Երբ որևէ բան էր պատմում
- 4) Որևէ բան պատմելու ժամանակ

**115. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Ամենափրկիչ վանքի բակում՝ հարավային պարսպի տակ գտնվող գետնախորշում, ....., այժեճնակաճի վրա թեք էր ընկել Ոսկանը:*

- 1) մի ժամանակ ծառայելով որպես ցորենի մառան
- 2) ուր մի ժամանակ ծառայել էր որպես ցորենի մառան
- 3) որ մի ժամանակ ծառայել էր որպես ցորենի մառան
- 4) քանի որ մի ժամանակ ծառայել էր որպես ցորենի մառան

**116. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Քանի արևի ոսկեդեղձան շողերը պայծառանում էին ու ջերմանում, ....., որ ոտքից գլուխ թրջվել էինք միայն անձրևից:*

- 1) այնքան թուխպերը ծանրանում էին մեզ վրա
- 2) այնքան լեռներից փչում էր սառնություն մեզ վրա
- 3) այնքան պարուրում էր հրճվանքը մեզ
- 4) այնքան լքում էր տաքանալու հույսը մեզ

**117. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Ինչպես էր ընկել այդ ամայի վայրը՝ .....*

- 1) չէ՞ որ չէր հիշում, թե մինչ այդ որտեղ էր եղել:
- 2) որ չէր նկատել ճանապարհից շեղվելը:
- 3) այդ նույն ճանապարհով էլ դուրս պիտի գար:
- 4) այդպես էլ դժվարանում էր պատասխանել:

**118. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Կարկուտն անխնա թափվում էր այգիների վրա, ....., ու ճերմակ ուլունքների պես ցրվում գետնի երեսին:*

- 1) քանի որ բերքահավաքն ավարտվել էր
- 2) վնասում արդեն հասունացած մրգերը
- 3) որոնք տևական անձրևներից արդեն տուժել էին
- 4) որոնք քնած էին ձյան սավանի տակ

**119. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Իսկ հոկտեմբերի տասնիննին՝ ճամփորդության չորրորդ ամսում, ձյունն այնպես առատորեն տեղաց, .....*

- 1) որ իրար խառնեց ճամփա ու կաձան:
- 2) ասես իրար խառնելով ճամփա ու կաձան:
- 3) կարծես չպիտի իրար խառնվեին ճամփա ու կաձան:
- 4) որով իրար խառնվեցին ճամփա ու կաձան:

**120. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Երբ ուշ գիշերին ծխից մթնած սրահում նախագահը քվեարկության դրեց նոր գյուղատեղ փոխադրվելու հարցը, ճրագի թույլ լույսի տակ բարձր մեկնած ձեռքերի հետևում մի պահ չերևացին փափախները. -----*

- 1) որովհետև ճրագը թարթում էր լույսի հետ և տաքություն տալիս:
- 2) թվաց, թե հսկա մի մարմին բյուր ձեռքեր է պարզել դեպի սևացած առաստաղը:
- 3) մինչդեռ ճրագի հետ վաղվա հույսը ջերմություն էր սփռել սրահում:
- 4) որոնք ուրախ աղմուկով դուրս եկան:

**121. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Ոլորանից հետո, ....., գետը զգալիորեն լայնանում էր:*

- 1) մենք վեր էինք բարձրանում
- 2) որ բավականին սուր անկյուն էր կազմում
- 3) մշտադալար փշատերև ծառերի խիտ կամարի տակով
- 4) գետի ափերը հրաշագեղ էին

**122. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Նա համբերությամբ սպասում էր ամբողջ եզերող պարսպի երկաթյա դարպասներից մեկի բացվելուն:
- 2) Նա անտեղյակ էր իր դեմ նյութվող դավերին:
- 3) Նա պատրաստ էր հորից ներում խնդրելու, բայց հայրը խուսափում էր հանդիպումից:
- 4) Նա ամբողջ հարստությունը կտակել էր ոչ թե զավակների, այլ կնոջ վրա:

**123. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Հայերը թշնամու դեմ կռվում լիակատար հաղթանակ տարան:
- 2) Պաղ աղբյուր բերող կաճանով գնում էր Արամը, որը դեռ վաղուց կասկածում էր ընկերոջ վրա:
- 3) Արաբներից կրած պարտությունից հետո արքան վախենում էր նախարարներին հանդիպելուց:
- 4) Ակնթարթ իսկ չանցած՝ դահլիճը թնդաց որոտընդոստ ծափերից. ես իսկույն մտածեցի, որ իմ հաջողությունների համար երախտապարտ եմ իմ բարեկամներին:

**124. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Իր կրոնն ու հայրենիքին ուրացողից ոչ մի լավ բան չսպասես:
- 2) Խնդրի լուծումը կախված է երկու անձնավորություններից:
- 3) Նրանք քաջաբար մարտնչում էին թշնամու գերակշիռ ուժերի դեմ:
- 4) Ուզում եմ ազնվորեն խոստովանել արածս սխալը:

**125. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) - Ես միանշանակ առարկում եմ այդ պաշտոնին նրա նշանակվելը,- կտրուկ վրա բերեց տնօրենը և ելավ աթոռից:
- 2) Ծանոթանալով գործի փաստաթղթերին՝ քննիչը խճճվել էր. թվում էր՝ ձերբակալել են լրիվ անմեղ մեկին:
- 3) Առաջիկա մրցաշարին մասնակցելու ցանկություն ունեցողների թիվը անշափ մեծ է:
- 4) Նա գլխով հասկացրեց, որ համաձայն է ասածներին:

**126. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ չկա:**

- 1) Մի՞թե ես հանցագործ եմ, որ հսկում ես բոլոր քայլերիս:
- 2) Հայրը միշտ սատարել էր որդու բոլոր ձեռնարկումներին:
- 3) Պետք չէ հակադրվել ակնհայտ ճշմարտություններին:
- 4) Ինձ ներողություն մի՛ խնդրիր չարած սխալներիդ համար:

**127. Նախադասություններից քանիստ՞ում խնդրառության սխալ կա:**

- Բոլորն էլ իրենց հայացքներն ուղղում են դեպի լեռան գագաթին, ուր գուցե թե շատերին բախտ չվիճակվեր լինելու:
- Հասնելով կյանքի մայրամուտ՝ նա իր ամբողջ ուշքն ու միտքը կենտրոնացրել էր միակ հարազատի՝ եղբորորդու դաստիարակության վրա:
- Բայց այդ ամենը Կարապետ վարդապետին մազաչափ անգամ չի շեղում իր հոգևոր պարտականությունների կատարմանը:
- Մինչև գագաթ Արարատը պատված էր սառցե հաստ գրահով, որի վրայով առաջ շարժվելն ուղեկցվում էր այլևայլ դժվարություններով:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**128. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Միացյալ Նահանգները փորձում է խաղաղություն հաստատել Սերձավոր Արևելքում:
- 2) Արամին՝ որպես լավագույն ուսանող, պարգևատրեցին արծաթե հուշամեդալով:
- 3) Սարդարապատում հայ ժողովուրդը միասնական պայքարի դուրս եկավ:
- 4) Ամեն ոք ցանկանում էր հնարավորինս շատ տեղեկություն ստանալ:

**129. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Հորս աչքերում կային հոգնությունը քողարկող ժպիտ և քնքշության ցուլքեր:
- 2) Պարզ դարձավ, որ ամբոխը չեն հավատում իրենց առաջնորդին:
- 3) Ներկաների կեսը համաձայն չէր արտահայտված կարծիքներին:
- 4) Մեկն է նրանցից, որ հերոսաբար մարտնչել են հանուն հայրենիքի:

**130. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Գործող բոլոր կուսակցությունները ներկայացնելու են իրենց քաղաքական ծրագրերը:
- 2) Կարծում ենք՝ որևէ լուրջ առարկություն չի ծագի հարցի քննարկման ընթացքում:
- 3) Ե՛վ քույրը, որ վաղուց նեղացել էր իրենից, և՛ հայրը, որ, թվում է, չէր էլ նկատում ոչինչ, և՛ մայրը, որ հաշտության եզր էր փնտրում բոլորի մեջ, այդ պահին չէր մխիթարում նրա խռովված հոգին:
- 4) Այդ պարագային ոչ ոք ուշադրություն չէր դարձրել, մինչդեռ ձախողման պատճառները հենց այդտեղ պետք էր փնտրել:

**131. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Պատուհանից երևացող սարը՝ ձյունաճերմակ գագաթով, նրա փեշերին փռված անտառը՝ եղևնիների ու թխկիների խիտ շարքերով, ինձ հրաշք թվաց:
- 2) Նրանցից մեկը գալու էր մեզ հետ, մյուսները ուղին շարունակելու էին ձորով:
- 3) Նրան՝ որպես գիտակ մասնագետի, գործընկերները բարձր են գնահատում և նրա հետ հաշվի են նստում:
- 4) Սար ու ձոր կանաչ են հագել, կանաչ է ներկվել աշխարհը:

**132. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Ամեն ինչ՝ թագը, գայիսունը, հարստությունը, կարող է աղավաղել մարդկությունը մարդու մեջ:
- 2) Անդրադառնալով ռուս-ուկրաինական վեճին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները հաստատել են, որ պաշտոնական Մոսկվան քաղաքական ճնշում է գործադրում իր հարևանների վրա:
- 3) Մարդկությունը գիտի, որ պատերազմն օրինավոր է, եթե հարկավոր է ժողովրդի և նրա բարօրության համար:
- 4) Երբ առաջնորդը կամ իշխանները անիրավ ու անհավատարիմ են, զարմանալի չէ, եթե ժողովուրդն էլ ապերախտ լինի:

**133. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Կարենը ընկերոջ հետ գնացին աշխատելու:
- 2) Բազմությունը շրջապատել էր հսկայական խարույկը և կազմել զարհուրած դեմքերի, ապշած աչքերի կենդանի օղակ:
- 3) Նրան՝ որպես հմուտ մանկավարժի, կոլեկտիվում բարձր էին գնահատում:
- 4) Դ-րսում ցուրտ էր, և գյուղի փողոցներում ոչ մի մարդ, ոչ մի կենդանի արարած չէր երևում:

**134. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:**

- 1) Ամբողջ ժողովուրդը պապանձված կանգնել էին՝ ասես խլացած Բուդայի մահացու սպառնալիքների առաջ:
- 2) Հազար ու մի հոգս ունեւր, բայց ամեն ինչ մի կողմ դրած՝ զբաղվում էր ինձանով:
- 3) Այս ամենը վկայում են, որ վերահսկողությունը պատշաճ մակարդակի վրա չի եղել:
- 4) Ջոհրակի գորքը սրընթաց անցան գետը, ու սկսվեց մարտը:

**135. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:**

- 1) Բաներ կա, որ եթե իմանաս, կգայրանաս:
- 2) Նա այն մարդկանցից է, որ, հայտնվելով օտար միջավայրում, չեն ենթարկվում նրա ազդեցությանը:
- 3) Պետական բոլոր մուծումները ձեռնարկության կողմից կատարվել է ժամանակից շուտ:
- 4) Այդ օրը պահարանից անհետացավ ամուսնու նվիրած մատանին, մի քանի ուրիշ զարդեր:

**136. Նախադասություններից քանիստ՞ն համաձայնության սխալ կա:**

- Տանջվող ու տառապող ամեն ոք կա՛ն մեղապարտ են, կա՛ն անմեղ:
- Չարերի հաջողությունը և փառքը, հրճվանքն ու երջանկությունը կարճատև է, որովհետև ասուպների մման փոքր-ինչ փայլում է և իսկույն անհետանում:
- Յուրաքանչյուրը պիտի փնտրի և ձեռք բերի իմաստություն և առաքինություն, որոնցով կկարողանա այս աշխարհում գտնել բնական երջանկություն:
- Միտր և հույսի նպատակը բաղձանքների իրականացումն է:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**137. Նախադասություններից քանիստ՞ում համաձայնության սխալ կա:**

- Կարճ ժամանակում կառուցվեց Երևանի մարզահամերգային համալիրը, որը այսօր էլ իր վեհությանը հիացնում է շատերին, և մետրոպոլիտենը, որը զգալիորեն թեթևացրեց մայրաքաղաքի վերգեանյա երթևեկությունը:
- Մեզ մոտ պահվում են ուշ միջնադարի ու նոր ժամանակների գրականությունը:
- Բոլորը, չգիտես ինչու, իրարանցման մեջ էին, բացի հանդարտ հետ ու առաջ անող ժամապահից և պատի տակ կոչ եկած մի խումբ սևասքեմ վանականներից:
- Ծանոթ շները չեն հաչում վրադ, ծանոթ մարդիկ են հաչում քեզ վրա:

- 1) երկուսում
- 2) երեքում
- 3) չորսում
- 4) մեկում

**138. Նախադասություններից քանիստ՞ում համաձայնության սխալ կա:**

- Երկու հավասար մեծություն, հակամարտ գոյություն միևնույն վայրում են և ընդհանուր լեզու չեն կարող գտնել:
- Եթե մարդու կյանքը անվախճան մի շարունակություն լիներ, անհաշիվ կլինեին և՛ երջանիկ, և՛ դժբախտ դեպքերը:
- Միրո կամ ատելության զգացմունքը փոխնիփոխ պարուրում էին նրան, և նա տարուբերվում էր այդ երկուսի միջև:
- Անհատը կապված է միջավայրին, իսկ միջավայրը՝ անհատի հետ. մեկն առանց մյուսի չեն բացատրվում:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**139. Նախադասություններից քանիստ՞ում համաձայնության սխալ կա:**

- Ոչ մի տերև, ոչ մի ծաղիկ, չնայած արդեն ուշ աշուն էր, չէին շարժվում:
- Փարիզի պերճությունը, մարդկանց կենսախինդ առօրյան զարմացրեց ինձ:
- Եթե հարցեր լինի, կարող եք դիմել խմբի ղեկավարին:
- Կիսավեր ամրոց, հողածածկ խաչքարեր, մամռակալած մատուռ. սրանցից յուրաքանչյուրը նկարչի հոգին պարուրում էին քաղցր հիշողություններով:
- Անակնկալ փախուստն ու պարտությունը, ինչպես շատ շուտով պարզվեց, կատաղեցրեց Բեշիրին, բայց նա Մարգպետունու հետ ընդհարվել չէր ուզում:

- 1) երեքում
- 2) չորսում
- 3) հինգում
- 4) երկուսում

**140. Ո՞ր նախադասության մեջ շարահյուսության սխալ կա:**

- 1) Մի քանի չ՛՛ ճանաչված մարզիկներ նախապատրաստվում են օլիմպիական խաղերին:
- 2) Անձրևի մի խոշոր կաթիլ՝ սառն ու պինդ, դիպավ Մանեի ձեռքին:
- 3) Վերջապես կան և հնչյուններ՝ վերադարձի ու վերջին հույսի:
- 4) Լեռներ՝, ներշնչված դարձյալ ձեզանով, Թնդում է հոգիս՝ աշխույժով լցված:

**141. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:**

- 1) Հանրահայտ ֆուտբոլի իսպանական ակումբները մեծ գումարներ են ծախսում լավագույն խաղացողներ ձեռք բերելու վրա:
- 2) Այդ պատմությունը արդեն որերորդ անգամ համբերատար լսում են:
- 3) Իմ արձակուրդը Ֆրանսիայի հարավային փոքրիկ քաղաքներից մեկում, կարծում եմ, հրաշալի կանցնի:
- 4) Եկող տարվա ուսումնական ծրագրերում կլինեն որոշակի փոփոխություններ:

**142. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:**

- 1) Ո՛չ Պազանինին կղադարեր մի մեծ երգահան լինելուց, ո՛չ էլ Ռուբենսը՝ մի մեծ նկարիչ:
- 2) Թատրոնը ժողովրդի հույզերի, նրա անցյալի հիշատակների, նրա հոգեկան մակարդակի անսխալ չափանիշն է:
- 3) Կա մարդկային ձայնի մի որակ, որն ընդունակ է համոզելու, թե դժբախտությունը երջանկություն է:
- 4) Հանցագործության վայրում գտնվել է հնամաշ տղամարդու վերարկու:

**143. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:**

- 1) Նա իր մեծագույն սխալն էր համարում մասնագիտության ընտրության հարցում ծնողներին լսելը:
- 2) Աշխարհի գեղասահքի առաջնություններում ռուս մարզիկները միշտ պատշաճ մակարդակով են հանդես եկել:
- 3) Ողջ աշխարհի հետ չէր փոխի իր կողմից փայփայած, այնքան երկար երազած ու վերջապես իրականություն դարձած սերը:
- 4) Նա միշտ ասում էր, որ եթե իրեն տրվեր գեթ մի փոքր հնարավորություն, ինքը ուրիշների պես չէր վախենա վճռական քայլ կատարելուց:

**144. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ չկա:**

- 1) Այս տարի շատ եվրոպական երկրներում մեծ ցույցեր եղան:
- 2) Հայաստանում նախկին Ուկրաինայի դեսպանը մեկնել է Լոնդոն:
- 3) Խորհրդավոր հայացքով ակնդետ դիտում էր ծովի՝ ցամաքից հազիվ երևացող հեռուները:
- 4) Բոլոր երկրաշարժից տուժած ընտանիքներին պետությունը մեծ նպաստներ է տրամադրել:

**145. Նախադասություններից քանիստ՞ում շարադասության սխալ կա:**

- Մեզ հետաքրքրում են 2009 թվականին շարունակվող Երևան քաղաքի կառուցապատման աշխատանքները:
- Նրա ասածներին հակադրվեցի ես և փորձեցի ինձ արդարացնել:
- Թիերն ասում է, որ անաչառ պետության ղեկավար լինելու համար բավական է ունենալ արդար միտք և երկաթե կամք:
- Երևանի բնակչության կտրուկ ավելացումը հիմնականում պայմանավորված է ոչ թե բնական, այլ մեխանիկական աճով:

- 1) երկուսում
- 2) երեքում
- 3) ոչ մեկում
- 4) մեկում



**146. Նախադասություններից քանիստ՞ում շարադասության սխալ կա:**

- Բայց ամեն Վրաստանի աշխատավոր ոտքի պիտի ելներ կառավարության դեմ:
- Բոլոր քաղաքի մարդիկ ցնցված էին աշխարհահռչակ ջութակահարի ելույթից:
- Աշտարակները միանում էին հարավարևելյան կողմի քարաժայռերի բնական պատնեշներին:
- Շողակաթ եկեղեցին իր պարզ ճարտարապետությամբ նման է ավելի հին Էջմիածնի հուշարձաններին՝ Գայանեին և Հռիփսիմեին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում

**147. Նախադասության մեջ ի՞նչ տիպի սխալ կա:**

*Նրան՝ որպես լավագույն գիտնական, ներկայացրին Նորելյան մրցանակի:*

- 1) խնդրառության
- 2) համաձայնության
- 3) շարադասության
- 4) բառագործածության

**148. Ո՞ր տարրերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Ջրասաշրջիկները կանգ առան Եգիպտոսի հայտնի բուրգերի մոտ, որոնք դարեր շարունակ հիացրել են ողջ մարդկությանը:*

- 1) Ջրասաշրջիկները կանգ առան դարեր շարունակ ողջ մարդկությանը հիացրած Եգիպտոսի հայտնի բուրգերի մոտ:
- 2) Ջրասաշրջիկները կանգ առան Եգիպտոսի՝ դարեր շարունակ ողջ մարդկությանը հիացնող հայտնի բուրգերի մոտ:
- 3) Ջրասաշրջիկները կանգ առան Եգիպտոսի՝ դարեր շարունակ ողջ մարդկությանը հիացնելու պատճառով հայտնի դարձած բուրգերի մոտ:
- 4) Ջրասաշրջիկները կանգ առան Եգիպտոսի՝ դարեր շարունակ ողջ մարդկությանը հիացրած հայտնի բուրգերի մոտ:

**149. Ո՞ր տարրերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և այն մեծահասակներին, որոնք սիրում են մանկական գրքեր կարդալ:*

- 1) Գիրքը հասցեագրված է մանկական գրքեր կարդալ սիրող բոլոր երեխաներին և մեծահասակներին:
- 2) Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և մեծահասակներին՝ մանկական գրքեր կարդալ սիրողներին:
- 3) Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և մանկական գրքեր կարդալ սիրող մեծահասակներին:
- 4) Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և մանկական գրքեր կարդալ սիրող այն մեծահասակներին:

**150. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Կույր է նա, ով չի տեսնում երկինք հասած կրակը:*

- 1) Կույրը երկինք հասած կրակը չտեսնողն է:
- 2) Կույրը նա է՝ երկինք հասած կրակը չտեսնողը:
- 3) Երկինք հասած կրակը չտեսածը կույրն է:
- 4) Կույր է երկինք հասած կրակը չտեսնողը:

**151. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Ես չեմ պատմում այն բանաստեղծի մասին, որ երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովն է նետել:*

- 1) Ես չեմ պատմելու երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետող բանաստեղծի մասին:
- 2) Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետած բանաստեղծի մասին:
- 3) Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմող բանաստեղծի՝ իրեն ծովը նետելու մասին:
- 4) Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետած այն բանաստեղծի մասին:

**152. Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզի:**

- 1) *Ակամա սկսում ես հաշվել այն տարիները, որ ապրել ես հարազատներից հեռու:*  
Ակամա սկսում ես հաշվել հարազատներից հեռու ապրածո տարիները:
- 2) *Երբ հին արկղերի մեջ ինչ-որ գիրք էի փնտրում, հանկարծ հայտնաբերեցի կորած թղթապանակը:*  
Հին արկղերի մեջ ինչ-որ գիրք փնտրելիս հանկարծ հայտնաբերեցի կորած թղթապանակը:
- 3) *Հրաժեշտի պահին, որպեսզի թաքցնեմ աչքերիս մեջ լճացող արցունքները, նետվեցի մորս գիրկը:*  
Հրաժեշտի պահին, աչքերիս մեջ լճացող արցունքները թաքցնելով, նետվեցի մորս գիրկը:
- 4) *Աղջիկը սեղմել էր նրբագիծ շրթունքները, որ թաքցնեք դրանց հուզաթաթավ թրթիռը:*  
Աղջիկը սեղմել էր նրբագիծ շրթունքները՝ թաքցնելու համար դրանց հուզաթաթավ թրթիռը:

**153. Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզի:**

- 1) *Երբ դողանջում են եկեղեցու զանգերը, հավատացյալները գնում են աղոթքի:*  
Եկեղեցու զանգերը դողանջելու ժամանակ հավատացյալները գնում են աղոթքի:
- 2) *Երբ խոսում էին Արայի մասին, Աննան ոտքից գլուխ կարմրեց:*  
Արայի մասին խոսելուց Աննան ոտքից գլուխ կարմրեց:
- 3) *Եթե կորցնում ես խիղճը, վերածվում ես մի սովորական գազանի:*  
Խիղճը կորցնելու դեպքում վերածվում ես մի սովորական գազանի:
- 4) *Երբ հյուրերը գնացին, կինը մենակությունից լաց եղավ:*  
Հյուրերի գնալուց հետո կինը մենակությունից լաց եղավ:

**154. Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզի:**

- 1) *Մի՞թե հնարավոր է մեկ առ մեկ թվել նրանց փորձը, ովքեր չորս տարվա ընթացքում եփվել են դժվարությունների բովում:*  
Մի՞թե հնարավոր է մեկ առ մեկ թվել չորս տարվա ընթացքում դժվարությունների բովում եփվածների փորձը:
- 2) *Ատում եմ, երբ ինձ քծնում են:*  
Ատում եմ ինձ քծնելը:
- 3) *Ճակատագիրը ապակի է. հենց որ փայլում է, ջարդվում է:*  
Ճակատագիրը ապակի է. փայլելիս ջարդվում է:
- 4) *Մերը շատ անգամ արագորեն մարում է, որովհետև ծնված է լինում կարեկցությունից:*  
Մերը շատ անգամ արագորեն մարում է կարեկցությունից ծնված լինելու պատճառով:

**155. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Թարմ, սառը կանաչով ծածկված մարգագետինը առվակի ափից ձգվում էր մինչև գորշ ժայռերը:*

- 1) Մարգագետինը, որ առվակի ափից ձգվում էր մինչև գորշ ժայռերը, ծածկված էր թարմ, սառը կանաչով:
- 2) Մարգագետինը, որ ծածկված էր թարմ, սառը կանաչով, առվակի ափից ձգվում էր մինչև գորշ ժայռերը:
- 3) Այն մարգագետինը, որ ծածկվում էր թարմ, սառը կանաչով, առվակի ափից ձգվում էր մինչև գորշ ժայռերը:
- 4) Առվակի ափերից մինչև գորշ ժայռերը, որոնք ծածկված էին թարմ, սառը կանաչով, ձգվում էր մարգագետինը:

**156. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Չարուհին տարիներ առաջ թույլ տված սխալը հիշելիս չէր կարողանում ինքն իրեն ներել:*

- 1) Երբ Չարուհին տարիներ առաջ թույլ տված սխալը հիշում էր, չէր կարողանում ինքն իրեն ներել:
- 2) Հենց որ հիշում էր տարիներ առաջ թույլ տված սխալը, Չարուհին չէր կարողանում ինքն իրեն ներել:
- 3) Չարուհին, երբ տարիներ առաջ թույլ տված սխալը հիշեց, չկարողացավ ինքն իրեն ներել:
- 4) Չարուհին, երբ հիշում էր տարիներ առաջ թույլ տված սխալը, չէր կարողանում ինքն իրեն ներել:

**157. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) *Այդ կինը և ճոճվելով քայլող այդ տղամարդը ինձ դուր չեկան:*  
Այդ կինը և այդ քայլող տղամարդը, որ ճոճվում էր, ինձ դուր չեկան:
- 2) *Շուռ գալով նա տեսավ իր հետևում կանգնած թշնամուն:*  
Երբ շուռ եկավ, նա տեսավ իր հետևում կանգնած թշնամուն:
- 3) *Սպարապետի մտնելուն պես դահլիճում բոլորը ոտքի կանգնեցին:*  
Հենց սպարապետը դահլիճ մտավ, բոլորը ոտքի կանգնեցին:
- 4) *Սպառազեն խումբը մտրակեց նժույզները և գնաց դեպի հարավ՝ այլաժիններից մաքրելու իր երկիրը:*  
Սպառազեն խումբը մտրակեց նժույզները և գնաց դեպի հարավ, որպեսզի այլաժիններից մաքրի իր երկիրը:

**158. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) *Աղջիկը քնից արթնանալուն պես շտապում էր դպրոց:*  
Հենց որ աղջիկը քնից արթնանում էր, շտապում էր դպրոց:
- 2) *Ես անհամբեր սպասում էի ընկերուհուս՝ քաղաք վերադառնալուն:*  
Ես անհամբեր սպասում էի, որ ընկերուհիս քաղաք վերադառնար:
- 3) *Դու հավատո՞ւմ ես ընկերոջդ՝ քեզ չխաբելուն:*  
Դու հավատո՞ւմ ես ընկերոջդ, որ քեզ չի խաբում:
- 4) *Այդ սրտառուչ երգը ահեղ մարտում ընկածների մասին է:*  
Այդ սրտառուչ երգը այն մասին է, թե ինչպես նրանք ընկան ահեղ մարտում:

**159. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Ես գլխավոր հրամանատարին պատմեցի մարտադաշտում տեսածներիս մասին:*  
Ես գլխավոր հրամանատարին պատմեցի այն, ինչ տեսել էի մարտադաշտում:
- *Ձեզ նայելիս մի անդորրություն է ողողում հոգիս:*  
Երբ ձեզ եմ նայում, մի անդորրություն է ողողում հոգիս:
- *Իր վաղեմի ծանոթի՝ նրան տեսության գալու դեպքում մեր տունը դառնում էր հարսանքատուն:*  
Եթե իր վաղեմի ծանոթը նրան տեսության էր գալիս, մեր տունը դառնում էր հարսանքատուն:
- *Օրիորդը վայելում է իրեն ճանաչողների խոր հարգանքը:*  
Օրիորդը վայելում է նրանց խոր հարգանքը, ում ինքը ճանաչում է:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

**160. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*- Ավելի լավ չէ՞ր լինի,- ասաց ուսուցիչը տնօրենին, - որ Դուք բոլորիս համար ընդունելի որոշում կայացնեիք և մեզ չչարչարեիք:*

- 1) Ուսուցիչը տնօրենին ասաց, թե արդյոք ավելի լավ չէր լինի, որ նա իրենց բոլորի համար ընդունելի որոշում կայացներ և իրենց չչարչարեր:
- 2) Ուսուցիչն ասաց տնօրենին, թե ավելի լավ չէր լինի, որ նա բոլորիս համար ընդունելի որոշում կայացներ և իրենց չչարչարեր:
- 3) Ուսուցիչը տնօրենին ասաց, թե արդյոք ավելի լավ չէր լինի, որ ինքը իրենց բոլորի համար ընդունելի որոշում կայացներ և իրենց չչարչարեր:
- 4) Ուսուցիչը տնօրենին ասաց, որ ավելի լավ չէր լինի, որ նա իրենց բոլորի համար ընդունելի որոշում կայացներ և մեզ չչարչարեր:

**161. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*- Սմբատ, դու պետք է ներողություն խնդրես ինձնից քո անվայելուչ արարքի համար, - ասացի ես:*

- 1) Ես ասացի Սմբատին, որ նա պետք է ներողություն խնդրի ինձնից նրա անվայելուչ արարքի համար:
- 2) Ես ասացի, որ Սմբատը պետք է ներողություն խնդրի նրանից իր անվայելուչ արարքի համար:
- 3) Ես ասացի Սմբատին, որ ինքը պետք է ներողություն խնդրի ինձնից իր անվայելուչ արարքի համար:
- 4) Ես ասացի, որ Սմբատը թող ներողություն խնդրի ինձնից իր անվայելուչ արարքի համար:

**162. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*-Երկու շաբաթ է՝ քույրդ չի զանգահարել, - հուզված ասաց ինձ մայրս, ապա ավելացրեց. - նեղացել է ինձնից:*

- 1) Մայրս հուզված ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել, նեղացել է իրենից:
- 2) Հուզված մայրս ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել, ապա ավելացրեց, որ նա նեղացել է նրանից:
- 3) Մայրս ինձ հուզված ասաց ու ավելացրեց, թե երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել. նեղացել է իրենից:
- 4) Մայրս հուզված ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել, ապա ավելացրեց, որ նա նեղացել է իրենից:

**163. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*-Հարգելի՛ս, ես Ձեզ ոչ միայն չեմ հասկանում, այլև չեմ հավատում Ձեր անկեղծությանը,-ասաց երիտասարդը տիկնոջը:*

- 1) Երիտասարդը ասաց հարգելի տիկնոջը, թե նա իրեն ոչ միայն չի հասկանում, այլև չի հավատում իր անկեղծությանը:
- 2) Երիտասարդը տիկնոջը՝ հարգելիին, ասաց, որ նա նրան ոչ միայն չէր հասկանում, այլև չէր հավատում նրա անկեղծությանը:
- 3) Երիտասարդը տիկնոջը ասաց, որ նա իրեն ոչ միայն չէր հասկանում, այլև չէր հավատում իր անկեղծությանը:
- 4) Երիտասարդն ասաց տիկնոջը, որ ինքը նրան ոչ միայն չի հասկանում, այլև չի հավատում նրա անկեղծությանը:

**164. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*-Ի՞նչ ուժով պիտի հաղթես արաբներին, Մարգալետունի՛ իշխան. մենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունենք,-հարցրեց թագուհին երկյուղած:*

- 1) Թագուհին երկյուղած հարցրեց, թե Մարգալետունի իշխանը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 2) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգալետունի իշխանին, թե նա ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 3) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգալետունի իշխանին, թե ինքը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 4) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգալետունի իշխանին, թե իրենք ինչ ուժով պիտի հաղթեն արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:

**165. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*«Ձեմ հասկանում՝ ինչու նա չվերադարձավ, և ինչ է նշանակում այս ամենը»,-սրդողած խորհում էր նա՝ առերես թաքցնելով վրդովմունքը:*

- 1) Սրդողած խորհում էր նա՝ առերես թաքցնելով վրդովմունքը, որ ինքը չի հասկանում՝ ինչու նա չվերադարձավ, և ինչ էր նշանակում այդ ամենը:
- 2) Առերես թաքցնելով վրդովմունքը՝ նա խորհում էր սրդողած, որ ինքը չի հասկանում՝ ինչու նա չի վերադառնում, և ինչ է նշանակում այս ամենը:
- 3) Առերես թաքցնելով վրդովմունքը՝ նա սրդողած խորհում էր, որ ինքը չի հասկանում՝ ինչու նա չվերադարձավ, և ինչ է նշանակում այս ամենը:
- 4) Առերես թաքցնելով վրդովմունքը՝ նա սրդողած խորհում էր, որ նա չի հասկանում, թե ինչու ինքը չվերադարձավ, և ինչ է այդ ամենը նշանակում:

**166. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*-Դու արածներիդ մասին մտածի՛ր, թո՛ղ՝ ես էլ իմ գործը անեմ,- չթաքցրած հեզմանքով ասաց մտախոհ իշխանը եղբորը:*

- 1) Իշխանը չթաքցրած հեզմանքով մտախոհ ասաց եղբորը, որ նա թող իր արածների մասին մտածի, նա էլ իր գործը կանի:
- 2) Մտախոհ իշխանը չթաքցրած հեզմանքով եղբորն ասաց, որ ինքը իր արածների մասին մտածի, նա էլ իր գործը կանի:
- 3) Մտախոհ իշխանը չթաքցրած հեզմանքով ասաց եղբորը, որ նա թող իր արածների մասին մտածի, ինքն էլ իր գործը անի:
- 4) Մտախոհ իշխանը չթաքցրած հեզմանքով ասաց եղբորը, որ նա իր արածների մասին մտածի, թողնի՝ ինքն էլ իր գործը անի:

**167. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Մտքում հանդիմանում էր գործընկերոջը. «Չեմ հասկանում՝ ինչու ես դու ինձնից անընդհատ դժգոհում»:*

- 1) Մտքում հանդիմանում էր գործընկերոջը, որ ինքը չի հասկանում՝ ինչու է նա իրենից անընդհատ դժգոհում:
- 2) Մտքում հանդիմանում էր գործընկերոջը, որ չի հասկանում՝ ինչու է ինքը նրանից անընդհատ դժգոհում:
- 3) Մտքում հանդիմանում էր գործընկերոջը, թե չեմ հասկանում՝ ինչու ես դու ինձնից անընդհատ դժգոհում:
- 4) Մտքում հանդիմանում էր, որ ինքը չի հասկանում՝ գործընկերն ինչու է իրենից անընդհատ դժգոհում:

**168. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Աննան ասաց հորը, որ ինքը գիտի, որ նա լավ մարդ է, և իրեն համոզել պետք չէ:*

- 1) -Ես գիտեմ, որ դու լավ մարդ ես, և նրան համոզել պետք չի,- ասաց Աննան հորը:
- 2) -Ես գիտեմ, որ դու լավ մարդ ես, և ինձ համոզել պետք չէ,- ասաց Աննան հորը:
- 3) -Ես գիտեմ և համոզված եմ, որ դու լավ մարդ ես,- ասաց Աննան հորը:
- 4) -Ես գիտեմ՝ նա լավ մարդ է, և ինձ մի՛ համոզիր,- ասաց Աննան հորը:

**169. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Նա ասում է, որ չի ուզում անիմաստ ժամանակ վատնել, և գնում է դասի:*

- 1) - Չեմ ուզում անիմաստ ժամանակ վատնել և գնում եմ դասի,- ասում է նա:
- 2) - Չեմ ուզում անիմաստ ժամանակ վատնել,- ասում է նա և գնում է դասի:
- 3) Նա ասում է.  
-Չեմ ուզում անիմաստ ժամանակ վատնել, - և գնում է դասի:
- 4) Նա գնում է դասի և ասում է.  
-Չեմ ուզում անիմաստ ժամանակ վատնել:

**170. Ո՞ր նախադասության մեջ *և*-ից առաջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նրանք երկար սպասում էին և երբ հայտնվում էր որսը նրանցից մեկը դիպուկ նշանառությամբ սպանում էր գազանին:
- 2) Հայոց արքայի Տիգրան Մեծի և Միհրդատ Պոնտացու դաշինքին տեղյակ էին հակառակորդները բայց պահանջում էին հանձնել վերջինիս:
- 3) Արևը նայում է պատուհանիս և խաղում է կուպերիս վրա ես նորաբույր գարնան անսովոր ջերմությունն եմ զգում:
- 4) Ծովը արթնանում է երբ արևելքում ծիրանագույնով է վառվում արևը և ոսկևորում ալիքները:

**171. Ո՞ր նախադասության մեջ *ու*-ից առաջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ոտքից գլուխ ցնցոտիների մեջ նա լռելյայն քարշ էր տալիս ընդարմացած մարմինը ու գլուխը կրծքին հակած քայլում էր հևալով:
- 2) Երբ մեռնում են ճիչերը շփոթ Աղմկոտ քաղաքի մարտկոցում Լուսերես նա մտնում է ինձ մոտ Ու հետս երազում ու լացում:
- 3) Անհունորեն հեռու լինելով բամբասանքից ընդվզում էր քաղքենիական բանասրկության դեմ ու մշտապես այպանում էր ապաշնորհությունը:
- 4) Թվում էր այդտեղ էլ ավարտվում է ճանապարհը ու ոչինչ այլևս չի երևա:

**172. Ո՞ր նախադասության մեջ *Լ*-ից առաջ ստորակետ *չալիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Աչքերիս առջև մթնեց և այլևս ոչինչ տեսնել չկարողացա:
- 2) Ջգաց որ անհագուրդ ծարավից տոչորվում է ու ներսն այրվում է և հիշեց կանաչազարդ ձորակում գորուզիչներ անընդմեջ քչքչացող ականակիտ վտակը:
- 3) Այստեղ ամեն ինչից կազմվում է մի հոգեպարար ներկայացում և այդ ներկայացումը ծնվում է թախծից ու տրտմությունից սիրուց ու հրճվանքից բայց ոչ սին հպարտությունից:
- 4) Գնում ենք երկնակարկառ ժայռերի միջով և ձեռնափայտերը հենելով խորդուբորդ որձաքարերին երբեմն բախվում ենք ամրակուռ ժայռերին:

**173. Ո՞ր նախադասության մեջ *թե*-ից առաջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ախ ուր էր թե գեթ մի աստղիկ ինձ տենչար...
- 2) Ձմեռն թե ամառնա հազած էր լինում իր միակ շորը:
- 3) Աշնանային այդ օրը սաստիկ շոգ էր կարծես թե արևը վայր չէր ուզում իջնել գեմիթից:
- 4) Այդ օրը աղջիկը ծիծաղեց ամուսնության իմ առաջարկի վրա բայց հուշերիս կծիկը քանդելիս հասկանում եմ թե որքան բախտավոր եմ եղել այդ օրը:

**174. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը *չալիտի* տրոհվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Դու ինձ մեղադրում ես **ինչ խոսք** դու ունես մման իրավունք:
- 2) Չեզնից շատերը **իհարկե** հստակ չեն պատկերացնում իրավիճակի լրջությունը:
- 3) Քո սպառնալիքները **լոկ** ներքին վախոյ ծածկելու միջոց են:
- 4) Աշխարհն էլ **այո** գժվել է կարծես:

**175. Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Սևանի լեռնանցքից փոքր-ինչ հեռու ճամփից դուրս է հնամենի մատուռը:
- 2) Ջարմանում եմ ինչպես կարողացավ նա գոյատևել գտնվելով թշնամական և օտար միջավայրում:
- 3) Այնտեղ մթին թավուտների խորքերում կա մի լքված խրճիթ:
- 4) Այդ ամենի հողածածկ կտուրներով տների ու գյուղական խորդուբորդ ճամփաների կարտոն էր զգում մշտապես:

**176. Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Չորի բերանում կտրուկ գառիթափի տակ էր կանգնած եղբայրը գայլի համար լարված թակարդը ձեռքին:
- 2) Պատերազմը նոր էր վերջացել կամ դեռ չէր վերջացել հոր հագին բանակային շինել էր:
- 3) Գերանը չկտրվեց կացնով ուժգին հարվածելուց հետո և սղոցով կտրեց:
- 4) Հայրը երբ էր հնձել լանջի այդ խոտհարքը տղան չէր կարողանում հիշել:

**177. Ո՞ր նախադասության մեջ ստորակետ *չալիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Հանկարծ ծոցից հանելով տետրը սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը օջախի մոտ նստած աչքերը օջախի քարին:
- 2) Նրան թվաց ֆետրե գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամեն ինչ ինչպես աղբյուրի վճիտ ջուրը:
- 3) Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով և չէր հագենա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի սոսափից:
- 4) Վրանները հավաքելուց և հեռանալուց հետո Մարգարը երկու միտք ուներ Թորոսիկին պահել և ծիրանի կորիզները պահ տալ մի ապահով հողում:

**178. Ո՞ր նախադասության մեջ բուֆ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մարությանի առջև բացվեց մի ահռելի տեսարան այս ու այն կողմ ընկած էին վեց մշակների դիակներ:
- 2) Այլալվամ ու գրգռված տեղ հասավ Վահանը որը նկատելով եղբոր դիակը ուշակորույս ընկավ գետնին:
- 3) Օրիորդը ազահորեն ու կլանված լսում էր մարմինը փշաքաղող դյուրիչ նվագը որ պատանի երաժիշտը հնչեցնում էր ջութակի լարերով ինչպես աղբյուրի ակունքից քթչալով դուրս է հոսում պաղպաջուն ջուրը:
- 4) Պատանի արտիստը սրտի թրթիռով կամաց խոնարհվում է իր ծնկանը հանգչող հավերժահարսի դեմքին և նրանց հուզմունքից թրթռուն հայացքներն իրար են հանդիպում:

**179. Ո՞ր նախադասության մեջ բուֆ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ծխի սև քուլաները հրեղեն սյունի հետ գալարվելով ձգվում էին մինչև երկնքի աստղերը:
- 2) Մայրը գտավ նրան տաքության մեջ գառանցելիս:
- 3) Արյան շիթ է ամեն մի վարդ արցունք ամեն մի բողբոջ:
- 4) Ծովն այդ երեկո թվում էր զարմանալի խաղաղ ու խոհուն:

**180. Ո՞ր նախադասության մեջ բուֆ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Լուսնկա մի երեկո երբ տասնիններորդ դարը դեռ չէր հասել իր մեկ երրորդի վերջին մի դեռատի տղամարդ ու կին վերջինիս ձեռքից բռնել էր իննամյա մի աղջնակ մոտենում էին Չմյուռնիայի գյուղերից մեկին:
- 2) Նրանք հոգնած նյարդայնացած անցան տրորված խոտհարքի մոտով և հետևում թողեցին անշրջահայաց անհյուրընկալ բանջարաբույծին:
- 3) Բաթը գայրույթից կորցրել էր իրեն և նրա բիբերը թվում էր ուզում էին դուրս պոռթկալ ակնակապիճներից:
- 4) Ով է ասում աստղազարդ երկինքը միայն քո ծննդավայրի գարդն է:

**181. Ո՞ր նախադասության մեջ բուֆ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Արևի շողերի միջից երևում էր կանաչով պատված բլուրը իսկ բլրի հետևում արտերն էին:
- 2) Իր բախտին ու բեռանը հնազանդ նա դանդաղ բարձրանում էր մեղ արահետով:
- 3) Նախկին ձիանոցը տան անդամների կողմից օգտագործվում էր որպես մառան:
- 4) Որ նրանք հայ լինեն ես իմ հայությունից կհրաժարվեմ հայը հող կվարի ծառ կտնկի շալակով փայտ կբերի:

**182. Ո՞ր նախադասության մեջ բուֆ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պետք է բնակարան գտներ նաև աշխատանքի մասին պիտի հոգար:
- 2) Նա երևում է վաղուց էր ճանաչում այդ մարդուն չգարմացավ նրա արարքից:
- 3) Չգիտեինք աշխարհն ինչ է մարդն ինչ է Մենք դարդի մեջ չգիտեինք դարդն ինչ է ...
- 4) Տղան կանչում էր հորը իսկ նա ձորն իջնելով այլևս չէր լսում որդու կանչը:

**183. Ո՞ր նախադասության մեջ բուֆ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Քիչ հետո բարձրաբերձ լեռները մնացին հետևում և առջևում երևացին գավառական քաղաքի տափակ կտուրներով տները:
- 2) Առաջներում շատ ավելի դժվարություններ էր տեսել օրերով քայլել էր լեռներով անտառներով ու տափաստաններով:
- 3) Գիտաժողովում բացման խոսքով հանդես եկավ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը ողջունելով միջազգային գիտաժողովի մասնակիցներին և հյուրերին նա նշեց անկայուն երևույթների հետազոտության կարևորությունը:
- 4) Նա զգում էր որ լավ կլինեի ինչ-որ բան իմանար այլապես ամեն ինչ գլխում խառնաշփոթի կվերածվեր:



**184. Ո՞ր նախադասության մեջ բուք չսլիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Թեև քաղաքը մոտ էր ճանապարհը մեզ ծանոթ բայց և այնպես ուրիշ աշխարհի թվաց ձորի այդ անկյունը:
- 2) Երեք ամիս է քեզ չեմ տեսել և ամեն օր չարացել եմ քեզ վրա:
- 3) Մարդկային հոգու փրկությանը նվիրված եկեղեցուն կից կառուցված էր գանձարանը որ լեցուն էր գույնզգույն մետաքսներով ոսկով ու աղամանդներով:
- 4) Նա կանգնած նավի առաջամասում գլխիկոր և մտախոհ դիտում էր անդորր ջրի մակերևույթը մարմարի նման անշարժ և մարմարի նման ողորկ:

**185. Ո՞ր նախադասության մեջ բուք չսլիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նոր ժամանած տիկինն սկսեց պատմել իր Լեհաստան և Ֆրանսիա կատարած ճամփորդության և հետաքրքիր հանդիպումների մասին:
- 2) Իմ աչքերի առջև ճանապարհն էր և փիրուզե հավերժահարսը ծովակը:
- 3) Դեռ երեկվանից մտահոգ ու անհանգիստ նա իր թախծոտ աչքերը հառեց Մարգալետունուն:
- 4) Դարյա Ալեքսեևնան նա շատ անհանգիստ և դյուրագգաց կին էր նույնպես զայրացավ այդ տեսարանից:

**186. Ո՞ր նախադասության մեջ բուք չսլիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Չորս ժամ է նա հետ ու առաջ է անում փողոցով:
- 2) Աշնան պայծառ առավոտ էր Արարատյան դաշտի հրաշագեղ մի առավոտ:
- 3) Աշնանային մի օր վաղ առավոտյան տանտիկինն առաջարկեց հրավիրել իր զարմիկի կնոջը:
- 4) Քեովսի բուրգը գտնվում է Կահիրե քաղաքից ոչ հեռու Գիզայում:

**187. Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մարիամը այդպես էր օրիորդի անունը ամոթից շիկնել էր:
- 2) Մնացինք դեմուղեն կանգնած ես ծառի տակ էի արջը քիչ հեռու:
- 3) Ես դուրս եմ գալիս մոտենում Մխիթարի քաջ սպարապետի գերեզմանին պառկում դեղնականաչ խոտերին:
- 4) Նրա բոլոր արարքները որքան էլ անհետաքրքիր ու ձանձրալի գրավել էին ողջ դահլիճի ուշադրությունը զարմացրել բոլորին:

**188. Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ամեն ինչ տվեց հարկի դիմաց և տուն և հող և ապրանք բայց պարտքը մարելու համար ունեցածը չբավարարեց:
- 2) Մեկ առ մեկ հիշեց բոլորի անունները Հրայր Դժոխք Մախլուտո Նիկոլ Դուման Սևքարեցի Սաքո և ուրիշներ:
- 3) Մեսրոպ Մաշտոցը հայերեն տառերն ստեղծեց 5-րդ դարի սկզբին Եդեսիայում այդ ժամանակ Հայաստանի թագավորն էր Վռամշապուհը և բերեց Հայաստան:
- 4) Մեր տան ներքնահարկը մինչև այժմ ոչնչի չի ծառայել այնտեղ տարիներ շարունակ անպետք իրեր են կիտված եղել:

**189. Ո՞ր նախադասության մեջ միջակետ չսլիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Դպրոցում մեզ վայելչագրության յուրատեսակ ձև էին սովորեցնում և մենք աշակերտներս գրում էինք մանր-մանր տառերով դա ամենևին դուր չէր գալիս հայրիկին:
- 2) Հայաստանը մի շարք մայրաքաղաքներ է ունեցել Դվին Անի Արտաշատ Արմավիր և այլն:
- 3) Իրադարձությունները սկսվեցին հետևյալ կերպ Չարուհի անունով օրիորդի մոտ «խռովարարական թղթեր» հայտնաբերեցին ու նրան ձերբակալեցին:
- 4) Նա որոշել էր թե ինչ ասի տնօրենին երեխաները մեծացել են ընդարձակ բնակարան է պետք թանկարժեք կահկարասի:

**190. Ո՞ր նախադասության մեջ միջակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ամբողջ գյուղն այդ գիշեր դուրս էր թափվել բայց արդեն ուշ էր խրճիթը վառվում էր նավթոտ փալասի պես:
- 2) Բայց այդ պահին մտածել սառը դատել անկարող էի բարկությունը նախանձն ու կատաղությունը տակնուվրա էին անում սիրտս:
- 3) Մի օր դա իրենց բաժանման յոթերորդ օրն էր հանկարծ դուռը թակեցին և ինչ-որ անծանոթ մարդ նրան նամակ հանձնեց:
- 4) Հարևան մի կին մի օր իր ծանոթներին հայտնեց թե Իվան բեյը ցնդածի պես է դարձել նա ինքնիրեն շարունակ ժպտում է ձեռքերը մոտեցնում սառը վառարանին ու իրար շփում:

**191. Նախադասություններից քանիստ՞ում միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- Ալեքսանդրիա քաղաքը հիմնադրել է Ալեքսանդր Մակեդոնացին դա եղավ նրա ամենամեծ գործը իր աշխարհակալության հաղթարշավի ընթացքում:
- Պտղոմեոսը գիտնականներ ու փիլիսոփաներ հրավիրեց տարբեր տեղերից նա գիտական միտքը կենտրոնացնելու փորձ էր կատարում:
- Երկար ժամանակ այդ գրադարան-ակադեմիայի տնօրենն էր Էրատոսթենեսը որն առաջինը չափեց անհավատալի կարող է թվալ Երկրի տրամագիծը:
- Մշակութային այդ կենտրոնի համբավը տարածվեց աշխարհով մեկ գրադարանը կարճ ժամանակում աճել էր ու հարստացել:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**192. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նույն օրը Ռուստամյանը սեղանի մոտ նստած զուր ճգնում էր յուր մտատանջությունը մոռանալ ուստի վճռեց մեկընդմիջտ վերջ տալ այդ պատմությանը:
- 2) Ապարդյուն մնաց և այսօր այրի Նատալյայի մայրական հանդիմանությունը նա մատուցարանը վերցրեց և լուռ դուրս գնաց գլուխը խորհրդավոր կերպով շարժելով:
- 3) Այդ օրն աշխատեց որպես լարված մի մեքենա սովորաբար օրվա մեջ նա պարսպում էր գրեթե տասնչորս ժամ և բոլորովին չհոգնեց:
- 4) Նատալյա Պետրովնայի հյուրասենյակը լուսավորված էր մի բարձր և գեղեցիկ կանթեղով այդ կանթեղն այրին վառում էր միմիայն այն օրերին երբ հյուրեր պիտի ընդուներ:

**193. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Այդտեղ ես մի գույնզգույն խեցի գտա նրա կլորավուն գծերում երկնային մարմինների ձևն ու շարժման հեռագիծը հիշեցնող ինչ-որ բան կար:
- 2) Մեր հարևան Փուչիկը այդպես էինք անվանում նրան չափազանց գեր լինելու պատճառով վերջերս այնքան է նիհարել որ նախկին «փուչիկից» ոչինչ չի մնացել:
- 3) Նա փորձեց շարժել անհողորդ որդու սիրտը փղձկալու ու հեկեկալու նման մի սրտաշարժ ձայն հանեց տրորեց աչքերը հուսալով թե գոնե մի քանի կաթիլ արցունք կընկնի իր ճերմակ այտերին:
- 4) Ծառայությունից ապօրինի խուսափելու իմ ցանկության մասին ինքնըստիներքյան հասկանալի է ոչ մեկին չպատմեցի իսկ այդ օրվա իմ անակնկալ անհետացումը քողարկեցի մի ստահող պատմությամբ:

**194. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Արամի դեմքին մի փունջ ցատում է կուտակվել թվում է նա լցված է ահռելի տենդով ու խռովքով:
- 2) Ջեյթունը մի բուռ մոխրակույտ է դարձել հիսուն հոգի են վերադարձել կոտորածից և քաղաքն ավերակ է:
- 3) Շատ ընդունակ լինելով լեզուների հարցում բարեկամս նա կատարելապես տիրապետում է մի քանի լեզուների կարողանում է անկաշկանդ գրուցել օտարների հետ:
- 4) Այգեստանները տիվանդորրի մեջ անշարժանում են կարծես գոյանում է հանճարեղ նկարչի ստեղծած մի բնանկար:

**195. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մի օր երբ թագուհին պարտեզում գրոսնում էր մենակ հանկարծ ականջին հասան ծառերի տակ թաքնված նաժիշտների շուկները:
- 2) Հիշում եմ երբ Վանի արևը կանգնում էր գեմիթում փոքր ժամանակ արևն ինձ մեծ շատ մեծ էր թվում հանկարծ ծովից եկող մեղմ սյուքը փարվում էր քաղաքին:
- 3) Նա ինչպես հետո իմացա քահանայի որդին էր և նոր էր ավարտել Էջմիածնի ճեմարանը:
- 4) Իհարկե իմ առաջին ստեղծագործությունները սակավ հաջողված էին թեև ես այն ժամանակ այդ ամենը չէի ընկալում շատ խակ ու անփորձ էի:

**196. Ո՞ր նախադասության մեջ շեշտ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Այդ օրը թանկագինս վճռվեց իմ ճակատագիրը և կյանքի տարուբերումներն այլևս անգոր եղան շրջելու բախտիս անիվը:
- 2) Նա մեկ մտքով գնում է իր երագած աշխարհը մեկ հեռանում դեպի երկնի անհուն հորիզոնները մեկ նորից հայտնվում երկրի վրա:
- 3) Թող երգեն և թող նվագեն ու հեքիաթներ հյուսեն թող ապրի ամեն մարդ այնպես ինչպես ուզում է:
- 4) Չղադարեք ձեր մարգարտահյուս երգերը նվագել երբ նվագը կանգնեցնեք այն ժամանակ կնվաճվի իմ պետությունը:

**197. Նախադասություններից քանիստ՞ում հարցական դերանվան վրա հարցական նշան պիտի դրվի:**

- Չզգացի՝ ինչպես նիբիրը հաղթեց, ու ես քնեցի:
- Ինչու է երագն այս աշխարհավեր Կախվել մեր գլխին այսպես կուրորեն...
- Եվ ով է հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով, բյուր հրաշքներով ...
- Ապիկա ի մարդիկ, սարուկ ու վախկոտ, ով տվեց սուրը նմանիդ ձեռքին ....

- 1) մեկում
- 2) չորսում
- 3) ոչ մեկում
- 4) երեքում

**198. Ո՞ր նախադասության մեջ է դերբայական դարձվածը սխալ կետադրված:**

- 1) Իր կյանքը փրկած Գրաստամատին Շապուհ արքան մեծ դժկամությամբ արտոնեց մտնել Անհուշ բերդը՝ շղթայակապ Արշակ արքային տեսնելու:
- 2) Չարենցը Կարսի այգու ուռենիների ստվերում մի նստարանի նստած՝ կարդում էր իր սիրած գրքերը:
- 3) Գրավելով այդ բարձունքը՝ Մոնթե Մելքոնյանը լռեցրեց ազերի հրոսակների կրակակետերը և շարժվեց առաջ:
- 4) Հայրենիքը թշնամու ոտնձգություններից պաշտպանելիս շատերն ընկան ռազմադաշտում ու հերոսացան:

**199. Նախադասություններից քանիստ՞ում տրոհվող դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

- Ուղղաձիգ նուրբ քիթն ու երկար թերթերունքները մի ուրույն բարետեսություն են տալիս խաբուսիկ հմայքներով օժտված նրա գունատ դեմքին:
- Միալար անձրևն ու լուսակնատներից փչող միջանցիկ քամին ավելի էին խորացրել այն թախիծը որ նրան տիրել էր աշխատանքն սկսելիս:
- Ճակատին թափված երկար խոպուկները հետ տանելուց հետո նա ուղղեց մեջքը մի պահ լուռ նայեց լույսի երդիկից ներս ընկած սյանը ապա մոտ,ցավ վարպետին:
- Քիչ հետո շունչը պահելով և զգուշորեն անցնելով կամարակապ ու կիսախավար միջանցքը Ոսկանը ականջը մոտեցրեց սևացած դռներից մեկին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**200. Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչից հետո ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Հակոբին ճանապարհ դնելիս հայրս այդ ահեղ մարդն անգամ չկարողացավ զսպել արցունքները:
- 2) Ինձ դաշտային երկրի բնակչիս վրա լեռը մի առանձնակի դյուքական տպավորություն գործեց:
- 3) Մի օր Լոռուց Թիֆլիս եկավ իմ հին ուսուցիչը Տիգրան Տեր-Ռավթյանը դիտելու Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը:
- 4) Ես իբրև հայ բանաստեղծ իմ բարոյական պարտքը համարեցի այցելել Չեր խմբագրատուն:

**201. Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչից հետո ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Բանաստեղծի դստեր Նվարդ Թումանյանի գրի առած գրույցներից ենք իմանում որ Թումանյանը շարունակ անդրադարձել է այդ խնդիրներին:
- 2) Հայ դրամատուրգիայի մյուս մեծությունը Շիրվանզադեն էլ է կրել եվրոպական դրամատուրգիայի ազդեցությունը:
- 3) Իր սիրո երգերում զգացմունքները բնության պատկերներով է զուգորդել նաև սիրո մեծ երգիչը Իսահակյանը հետևելով ժողովրդական երգերի ավանդույթներին:
- 4) Լույս է տեսնում նրա առաջին լուրջ երկը «Ռուզան» պատմական դրաման և *Մուրացան* կեղծանունը շատ արագ հայտնի է դառնում:

**202. Ո՞ր նախադասության մեջ տրոհվող որոշիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Միրում եմ մեր երկինքը մուգ ջրերը ջինջ լիճը լուսե...
- 2) Եղեգնյա ավելը ձեռքին գալիս է արդեն խուլ մի պառավ:
- 3) Հողը չոր ու տեղ-տեղ ճաքճքած ագահորեն ներքաշում էր ջուրը:
- 4) Ամռան շոգին երբ արևն այնքան մոտ է ջերմությունը շատ առվի եզերքին միշտ էլ կարելի է տեսնել Լառ-Մարգարին:

**203. Ո՞ր նախադասության մեջ կետադրական նշան պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Երկրագնդի վրա ապրող մեծաթիվ թե փոքրաթիվ բոլոր ժողովուրդների թիվը հասնում է մոտ երկու հազարի:
- 2) Հզոր աստղադիտակները հնարավորություն են տալիս գիտնականներին թափանցելու տիեզերքի խորքը և ուսումնասիրելու երկնային մարմինների ճառագայթումը:
- 3) Գ-առնիի տաճարի կողքին պահպանվել է բաղնիքի տասնհինգ գույնի բնական քարերից պատրաստված խճանկարով հատակը:
- 4) 1242 թվականի ապրիլի հինգին Չուղ լճի սառույցների վրա տեղի ունեցած ճակատամարտը պատմության մեջ մտավ Սառցաջարդ անունով:

**204. Նախադասություններից քանիստ՞ում տրոհվող հատկացուցիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- Մրրիկը թեև վտանգավոր չէր սակայն ծովաջուրը առատորեն հոսում էր հակերի վրայով և տախտակամածի տարերքից առաջացած ճեղքերից թափվում թիավարների թիկունքին:
- Լուսամուտի թրջված ու խունացած գոգին այրվող մարխն իր կարմիր շողերը սփռել էր Ոսկանի առջև բացված հսկայական գրքի և ածիլված կտոր գլխի վրա:
- Անցնելով ամայի բակով նա ուղղվեց դեպի հարավային դարպասը սիրտը թրթռում էր քիչ առաջ ձեռք բերած իր տարիներով երագած երջանկությունից:
- Պատուհանների մետաքայա ծոպավոր վարագույրները վեր էին բարձրացված և երևում էր ամբողջ պարտեզը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**205. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Թեև թագուհին խնամում էր նրան ամենաքնքրուշ հոգածությամբ, և վիրաբույժը կրկնապատկում էր իր ճիգ ու ջանքերը, սակայն արդյունքը հուսադրական չէր:
- 2) Տարիներ առաջ խախտվեց անտառի անդորրը. հռնդացին սղոցները, և լսվեց կացիների թխկթխկոցը:
- 3) Մի վայրկյան չանցած՝ սպիտակ բիծը նորից երևաց. ևս մի ոստյուն և գայլի ժանիքները կմխրճվեին նրա բրդի մեջ:
- 4) Իսկ իմ հանգիստը, թվում է, մեր հողի մեջ չպիտի լինի. գոնե սուրս մնա մեր տանը՝ Հայաստանում:

**206. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Թագավորն էր. հրեղեն ձին նստած, ահագին փայլուն թուրը քաշած՝ եկավ և խրոխտ կանգնեց դաշտի մեջտեղում:
- 2) Գլուխ տալով ներս մտավ փիլիսոփա Սինանը, որ սուլթանի գրադարանապետն էր:
- 3) Գիտե՞ք որն է ներկայացման հմայքը. այն, որ այդտեղ ամեն ինչ անէացնում է մարդուն, ստիպում ըմբռնել հոգեկան անդորրի վայրկյանները:
- 4) Սուլթանը գահի բարձի տակից հանեց մի գիրք, որ զարդարված էր պարսկական մանրանկարներով, և հանձնեց նշանավոր բանաստեղծին:

**207. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Իսկ Ադամը ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր նրան՝ աչքերը չհեռացնելով նրա՝ բոցերի պես ծփծփացող մազերից:
- 2) Այն զգացումները, որոնք հատուկ են բոլորիս, ամենևին գոյություն չունենին նրա համար և մեղադրել նրան դրա համար անիմաստ էր:
- 3) Ջրադացը, թվում է, անուշ հեքիաթ էր պատմում իմ մանկության մասին:
- 4) Ինչ էր ուզում դրանով ասել՝ այդպես էլ չհասկացա:

**208. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Բաժակը, որ արդեն մոտեցրել էր շուրթերին, դրեց սեղանին և դիմեց մեզ անհանգիստ ու հուզված:
- 2) Ճամփորդը, որ հասնում էր ծանոթ կետին՝ կորամեջք կամրջակին, որտեղից երևում էին քաղաքի թիթեղածածկ տների պատշգամբները, ահով նայում էր ներքև, ինչպես սպանդանոց տարվող արջառը:
- 3) Լրտեսը՝ խորհրդավոր ուղեկիցը, քարակարկառի արանքից հապշտապ դուրս պրծնելով՝ փախավ դեպի շամբուտը:
- 4) Անցնելով խորդուբորդ ճանապարհներ՝ անդադար ստվարացող շարքերով դեպի այդ փոքրիկ քաղաքն էին շտապում հազարավոր մարդիկ:

**209. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Հանդգվելով, որ ոչ ոք իրեն չի հետևում՝ նա միանգամից անցավ փողոցի հակառակ կողմը:
- 2) Ես՝ համաձայն մեր նախնական պայմանավորվածության, կմեկնեմ հաջորդ առավոտյան:
- 3) Մեզ դիմավորեց նրա ընկերը, որն ապրում էր այդ նորակառույց տանը, և հորդորեց ներս մտնել:
- 4) Գիշերը անքուն թափառեց Ադամը՝ երգելով իր ցավագին կարոտը, և անհուն կակիժից փոթորկվեց սիրտը:

**210. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Նրանք՝ բամբասասեր մարդիկ, զանազան հանելուկներ բացահայտելու համար (այդ հանելուկները ոչ մի կապ չունեն իրենց հետ) ծախսում են ժամանակ, աշխատանք և նույնիսկ փող:
- 2) Դժվար է ասել՝ բամբասող մարդիկ չա՞ր են, թե՞ սոսկ իրենց էության մեջ թաքնված հետաքրքրությունն է նրանց մղում առաջ, բայց այդ դժվարըմբռնելի գաղտնիքն ունի մի պարզ հետևանք. նրանք չարախոսում են:
- 3) Մի ուրիշ օր զբոսնում էին Վանա փթթող այգեստաններում, որոնք քաղաքի հարավարևելյան կողմից տարածվելով դեպի հարավ-արևմուտք՝ ամփոփում էին իրենց մեջ փոքրիկ ավաններ, շեներ ու գյուղեր, իշխանական ամառանոցներ:
- 4) Եթե չլինեիր հետաքրքրասիրությունը, մարդկությունը չէր զարգանա, և գուցե մարդկություն չլինեիր էլ:

**211. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Գյուղից ներքև՝ մի բարձր ժայռի մոտ, գետն արմունկ է կազմում ու կորչում ժայռերից պոկված հսկա քարերի արանքում:
- 2) Նրանք անընդհատ բարձրանում էին մութ լեռը, կարծես՝ այդպես պիտի գնային մինչև երկինք:
- 3) Հնձվորը միտք արեց, ուսը քորեց, հետ դարձավ դեպի ձորը՝ հնձելու կորեկի արտը:
- 4) Աղունը, գլուխը երկու ձեռքով բռնած, գլխացավից օրորվելով, գնաց դեպի թախտը:

**212. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Թե ում էի պարտական իմ փրկության համար՝ ես այդպես էլ չիմացա, բայց այդ միտքն ինձ երկար ժամանակ տանջում էր:
- 2) Եվ ամեն օր հոգու թրթիռով նայում էր աշխարհին և ամեն օր զարմանում. կարծես առաջին անգամ էր տեսնում աշխարհը:
- 3) Ձիավորները լուռ էին. ամեն մեկը տարված էր իր մտքերով կամ գուցե լսում էր ձիերի դոփյունը:
- 4) Երբեմն նա դիտում էր բնությունը՝ հոգեթով ու գմայլելի, և մտածում էր հավերժ ձուլվել այդ անհունությանը, միանալ նրա յուրաքանչյուր տարրին:

**213. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Եթե չհաշվենք ծխախոտը, Բակունցն այլ մոլություններ չունեիր. խմում էր դեպքից դեպք, ու խմելու առիթ որոնելը շատ հեռու էր նրանից:
- 2) Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն, Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:
- 3) Կաշվե բազմոցի վրա՝ աթոռներին, թափթփված էին ինչ-որ նամակներ:
- 4) Ըստ սովորության՝ անհրաժեշտ համարեցի նրան տեղեկացնել, թե ուր եմ գնալու:

**214. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Փողոցը, երբ լույսը բացվում էր, մարդաշատ էր ու աղմկոտ, իսկ երեկոյան՝ լուռ ու ամայի:
- 2) Ջրաղացպանը, բահն ուսին, մոտենում է առվին՝ տեսնի՝ ինչու է ջուրը բարակել:
- 3) Թեթև աղմուկից կիսաբաց էին անում քնկոտ աչքերը ու սենյակի կիսախավարում նրանց թվում էր՝ սատանաներ են նայում նկարից:
- 4) Հասկանալով, որ սիրահարվել է սեփական պատկերին՝ Նարգիզը՝ գետերի աստծո որդին, տառապեց անասելի, և միայն մահը կարող էր նրան ազատել անպատասխան սիրո վշտից:

**215. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Նա վերցրեց դաշույնը, որ մի պահ փայլեց կրակի ցուրներից ու սկսեց քայլել ափին զուգահեռ:
- 2) Նա դանդաղեցրեց քայլերը, և նրան թվաց մի պահ՝ իրեն հետևում են:
- 3) Լեռնային նեղ կածաններում, խոր ձորերի ու գանգուր անտառների վրա մաղում էր գարնան անձրևը:
- 4) Սմբատ Բագրատունու՝ Մորիկ կայսեր հրամանով կալանված գորավարի ճակատագիրը որոշվելու էր գազանների դեմ մենամարտում:

**216. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

- Կոստյունը սովորաբար նա գնում էր տասնհինը դոլարով՝ ներառյալ զանազան ծախսերը, որոնց համար, ի դեպ, ժամերով սակարկում էր՝ վերջնականապես զգվեցնելով վաճառողներին:
- Հասկացա՞վ Լենկթեմուրը, թե որն է իսկական հարստությունը, ոչ ոք չի կարող ասել:
- Վաղուց չէին տեսել իրենց համագյուղացուն՝ Եսայուն, որն իր բազկի շնորհիվ դիրքի էր հասել՝ չմոռանալով՝ որտեղից էր ելել:
- «Երկուսս էլ ճերմակ ենք, Արարա՛տ, երկուսս էլ կարոտաբաղձ ենք, ու մեզինց ոչ մեկը չի կարող գետն անցնել,-խորհում եմ հուսահատ.-երանի՛ թիթեռներին, որոնք անարգել խախտելով սահմանը՝ գալիս են դեպի քեզ»:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**217. Ո՞ր նախադասության մեջ կետադրական նշան չսխալի դրվի:**

- 1) Հայաստանի երրորդ մայրաքաղաք Երվանդաշատը արտաքին վտանգներից զերծ պահելու նպատակով Երվանդը Արաքսի ձախ ափին կառուցում է նաև թիկնապահներով ու սպասավորներով բնակեցված դաստակերտ:
- 2) Կոմիտասը գրպանից հանում է սրինգը նվագում դահլիճի քարացած հայացքների ներքո:
- 3) Խորապես ազգային լինելով անվանի նկարիչ Մարտիրոս Սարյանը գեղանկարչության համաշխարհային քարտեզի վրա նշել է Հայաստանի հաստատուն տեղն ու ճշգրիտ սահմանները:
- 4) Վեպի հիմքում ընկած է մի բուռ մարդկանց մուսալեռցիների անձնուրաց պայքարը երիտթուրքական դահիճների դեմ:

**218. Ո՞ր նախադասության մեջ ոչ-ը պիտի տրոհվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Քանի դեռ այդ երամակում այդ նարնջագույն հովատակն էր ուրիշ ձի ոչ սիրտ չէր անի երևալ երամակի մոտերքը:
- 2) Հիմնական գործը թողած ոչ կարևոր գործերով էին զբաղվում:
- 3) Ես նրան որոշեցի խաբել պատմելով ոչ այն մասին ինչն այդ պահին կարևոր էր:
- 4) Նա ում համար ասես լավություն է արել բայց ոչ ինձ համար ես նրանից ոչ մի օգուտ չեմ տեսել:

**219. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի լինի:**

*Միայն մի կետ կա (1) որտեղից նայելիս քարածայրը թվում է տղամարդու վիթխարի գլուխ: Վայոց ձորում է քարեղեն այդ հրաշքը որին ժողովուրդը տվել է անուն(2) Վարդանի քար: Եվ նրան (3) իրոք երբ նայում ես այդ կետից թվում է (4) տեսնում ես սպարապետի կիսադեմը կորնթարդ քթով մորուքով ու ընչացքով (5) նշանավոր սաղավարտով: Անդնդախոր ձորում երկնակարկառ լեռների միջև (6) տեսնում ես վիթխարի անձեռակերտ արձանի գլուխը իսկ մարմինը հողի մեջ է: Կարող ես մտածել թե արձանը դրված է եղել քարձրաբերձ լեռան գլխին քայց մի օր տասպալվել ու ընկել է ձորը (7) և լավ ու մանրագնին որոնելով հնարավոր է գտնել նաև մարմինը:*

*Հինավուրց մի առասպել վկայում է որ Ավարայրի ճակատամարտի ժամանակ երբ ընկան հազարավոր հայ կտրիճներ (8) և ընկավ նաև սպարապետը Վարդան Մամիկոնյանը (9) ժողովուրդը լացուկոծով լցրեց այս խորունկ ձորը որը կոչվեց Վայոց ձոր մարդիկ չէին ուզում հավատալ անվեհեր քաջորդու մահվանը և Աստծուն թախանձագին աղերսում էին (10) վերադարձնի նրան և մի առավոտ մարդիկ տեսան Վարդանի քարեղեն կիսադեմը:*

- 1) 1, 3, 5, 6, 7, 8, 9
- 2) 1, 2, 5, 6, 7, 8, 9, 10
- 3) 2, 3, 4, 6, 7, 8, 10
- 4) 3, 5, 6, 8, 9, 10

**220. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

*Երիտասարդը գառիվերը ելավ (1) և հիմա նրա դեմ նույն պատկերներն են (2) խաղաղ կանգնած ձին (3) արածող գառների կույտը (4) և արևածաղիկները (5) գետաքարե ցանկապատի եզրով շարված: Արևածաղիկների շարքից այն կողմ (6) Օհան ամու ջաղացն է: Երբ երիտասարդը հետ տարավ ցանկապատի հյուսածո դուռը (7) նրա առաջ բացվեց լուսավոր խնամված մաքուր ու գեղեցիկ բակը: Նրան սիրելի էին և գետաքարե այդ ցանկապատը (8) և խաչքարի կողքին (9) դարավանդի պատի տակ իրար վրա դրված ջաղացքարերը: Ջաղացպանը սակայն (10) չկար:*

- 1) 1, 3, 4, 7, 8
- 2) 2, 4, 5, 6, 8,
- 3) 2, 3, 7, 8, 9
- 4) 1, 3, 7, 8, 10

**221. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

*Վենետիկի ազնվական ընտանիքներից մեկում ապրում էր գեղեցիկ Ջուլիետան: Այնքան էր գեղեցիկ նա որ թվում էր (1) հողեղեն չէ (2) այլ մի հավերժահարս որ դուրս է եկել ծովի փրփուրներից: Աչքերը կապույտ էին (3) ինչպես Իտալիայի ջինջ երկինքը: Երբ ժպտում էր (4) կամ կկոցում աչքերը (5) նրա չքնաղ այտերի վրա փոսիկներ էին գոյանում (6) և փոքրիկ բերանի մեջ շողշողում էին սպիտակ ատամները: Երկու գույն էր սիրում (7) կարմիր ու սպիտակ (8) և նրա արդուզարդի վրա միշտ անպակաս էին այդ երկու գույնի ծաղիկները մեխակը և շուշանը: Նա ինքը թարմ ու հոտավետ ծաղիկ էր (9) կարմիր (10) կամ սպիտակ նայած թե ինչ գույնի հագուստ էր հագնում:*

- 1) 2, 3, 4, 5, 6, 8
- 2) 2, 3, 5, 6, 8
- 3) 2, 4, 5, 8, 10
- 4) 1, 6, 7, 9, 10



**222. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

*Մայրուղուց դեպի աջ թեքվելով կարող ես վեցից յոթ կիլոմետր գնալ և քո առաջ անակնկալ կբացվի բնության այդ հրաշալիքը Պարզ լիճը(1) ու կցնցի իր գեղեցկությամբ: Կարծես(2) թե աշխարհի գողտրիկ ծաղիկների քնքուշ թերթիկներին իջած վաղորդյան ցողերը նրբին ու սկանակիտ(3) ձուլվել են իրար(4) գոյացրել լիճը: Այն գուցե(5) կուսական անտառի օրորուն երգի տակ ազատ թռչկոտող եղնիկի վճիտ հայացքի արտասպատկերն է(6) կամ երկնականմարն է իր կտորը մոռացել անտառի գրկում բոլորից հեռու և սպասիով: Ստվերախիտ անտառ(7) թռչունների դայլայլ(8) և անսպասելիորեն աչքիդ առաջ(9) բարձրասաղարթ ծառերի գրկում բացվում է չքնադադեմ լճակը որը իր խոնարհ գլուխն անտառների կրծքին դրած(10) գուլալ հայացքով կանչում է:*

- 1) 1, 3, 4, 6, 8, 9
- 2) 2, 3, 5, 6, 7, 8, 9
- 3) 1, 2, 3, 5, 7, 9
- 4) 1, 3, 4, 6, 7, 8, 10

**223. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

- Հետո ջրերի վրա, նուրբ արահետների վրա ծանրանում է ցուրտ մառախուղը և լոռեցիների բարձր աշխարհում մաղում է ձյունը:
- Հետո աղմկում է ամբողջ անտառը՝ քամին է շառաչում, և հողմահալած մառախուղը կորչում է փչակներում:
- Իմ առջև կանգնած է այդ լեռների մարդը՝ հովիվների շառավիղը՝ մերօրյա հերոսը:
- Հովիհաննես Թումանյանն ինձ թվում էր հաճախ երագրում տեսած կամ մանկական հեքիաթից մեր աշխարհն ընկած մի կախարդական հայելի, որին նայողը կտեսնի իր մանկությունը, մանկությունը՝ մութ ու անվերադարձ:
- Լոռու ձորում կնստի ձմեռը, և ծնակներում կոռնա գազանը, հոտոտելով՝ նա կհասնի մինչև քարափի եզրը և ահից հետ կդառնա՝ տեսնելով լույսերով ողողված ձորը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**224. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

- Գլխին դնում էր խունացած մի գլխարկ, որ գտել էր բազմափեղկ պահարաններից մեկում՝ արկղի մեջ և ցուցամուլաբար թեքում մի կողմի վրա:
- Եվս մի ակնթարթ ու մատներդ որսում են փականի գերտաքացած դեկանիվը:
- Նա վերջապես հասկացավ՝ այլևս չի տեսնելու իր ծննդավայրը և դառնորեն լաց եղավ:
- Վարազին տեսնելով՝ արջը անակնկալից ահաբեկված՝ ճողոպրեց դեպի ելարանը, սակայն խուճապն այնքան մեծ էր, որ շփոթվեց, սայթաքեց ու թրմփալով վայր ընկավ:
- -Գնա՛, տե՛ս ինչպես է այդ կախարդ ծերուկը փոքրիկ վանքի մեջ այդքան մարդ տեղավորում,- սարսափած հրամայեց առաջնորդը պալատականներից մեկին:

- 1) ոչ մեկում
- 2) բոլորում
- 3) երկուսում
- 4) երեքում

**225. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ չկա:**

- Տղան, բարձրացնելով սուրճով լի պարկը, դրեց ուսին, տարավ մոտ հիսուն-վաթսուն մետր և իջեցրեց՝ ոչ միանգամից ուղղելով մեջքը:
- Նա բացեց պատուհանի փեղկը, և ներս խուժեց սարսռեցնող սյուրքը՝ բերելով խոնավ հողի բույրը, ու ժամանակի վարագույրն ընկավ հուշերի նկարներից:
- Անտառի անդորրության մեջ, որն զգալի էր հատկապես հողմի վայրկենական դադարների պահերին, ճանապարհի անձրևից լպրծուն ու սայթաքուն դարձած հատվածներով անցնող մեր ձիերի քայլից տարօրինակ ձայներ էին լսվում:
- Պարսից գորքը ասիերից ելած գարնան փրփրադեզ գետի պես սկսեց գունդ առ գունդ առաջանալ դեպի ճակատի գիծը՝ հորդահոս Տղմուտ գետի եզերքը, ու երկու բանակների միջև գոյացավ մի լայն անջրպետ:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) ոչ մեկում

**226. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ չկա:**

- Չարենցի ստեղծագործության մեջ կենտրոնական տեղ է գրավում մահվան թեման, որը դառնում է նրա՝ մտորումների կիզակետը:
- Այս մթնոլորտում ծնվում է «Մահվան տեսիլը»՝ հայ բանաստեղծության գլուխգործոցներից մեկը:
- Բանաստեղծության մեջ իշխողը՝ մեռնող կյանքի համր, սոսկալի լռության, հոգեվարքի տրամադրությունն է:
- «Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի» տողով է սկիզբ առնում մեռնող երկրի գավակի հոգում ծնվող նորագույն տեսիլը:
- Բանաստեղծությունը 1920 թվականի աշնանը հոգեվարք ապրող Հայաստանի դրության ողբերգական արձագանքն էր՝ հոգեսարս պատկերներով լեցուն:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

ԲԱԺԻՆ 5

ԿԱՊԱԿՅՎԱԾ ԽՈՍՔ

**1. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Այստեղի բնակիչներին շրջանցում են այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են հեպատիտը, քաղցկեղը և այլն, իսկ նրանց ընտանի կենդանիների մեջ երբեք համաճարակ չի լինում:
2. Լեռան կազմության մեջ կան օրգանական նյութեր՝ ցինկ, պղինձ, երկաթ, իսկ ջրում կա քար, որը նպաստում է օրգանիզմից թույլների հեռացմանը, վերականգնում է նյութափոխանակությունը, լավացնում լյարդի և ստամոքսի գործունեությունը:
3. Այդ արտակարգ երևույթը պարզելու համար գիտնականները մի շարք հետազոտություններ են կատարել, և պարզվել է՝ իրենց նախանձելի առողջության համար մարդիկ և կենդանիները պարտական են լեռանը, որի մոտ բնակություն են հաստատել:
4. Չինական Լաոյին գյուղում ապրում է լեռնային մի ցեղ, որի անդամների կյանքի միջին տևողությունը 83 տարի է:

- 1) 4, 2, 1, 3
- 2) 4, 1, 3, 2
- 3) 3, 4, 1, 2
- 4) 3, 1, 2, 4

**2. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Սակայն գործիլան մարդկանց վնաս չէր պատճառում, ուստի կասկածներ առաջացան, որ նա գազան չէ:
2. Եվ իրոք, պարզվեց, որ նա 25-ամյա մի ծուլ երիտասարդ է, որը մտածում էր ոչ միայն մարդկանց վախեցնել, այլև զվարճանալ:
3. Ավստրիայում ձերբակալվեց մի գործիլա, որը մի քանի ամիս շարունակ ահ ու սարսափի մեջ էր պահում երեք քաղաքների բնակիչներին:
4. Ջրոսանքի դուրս եկած մարդկանց նկատելով՝ գործիլան դուրս էր թռչում թփերի միջից, ահավոր մռնչյուն արձակում, վախեցնում նրանց:

- 1) 4, 3, 1, 2
- 2) 3, 2, 4, 1
- 3) 3, 4, 1, 2
- 4) 3, 4, 2, 1

**3. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Տաք երեկոներին մինչև իսկ բացօթյա քնում էի տատիս նվիրած թաղիքի վրա:
2. Այդ պատճառով էլ ամբողջ ամառ ես այգում էի անցկացնում, բացի, իհարկե, անձրևոտ օրերից:
3. Երբեմն տատս էլ էր քնում այգում. մի խուրձ խոտ էր բերում, փռում իմ օթևանի մոտ, պառկում ու երկար-բարակ որևէ բան էր պատմում:
4. Ես սիրում եմ մոտ գտնվել բնությանը, իսկ հնարավորության դեպքում փորձում եմ շատ վայելել նրա պարզևած հաճելի անդորրությունը, առինքնող այն ակնթարթները, որոնք հոգիդ լցնում են յուրօրինակ խաղաղությամբ:

- 1) 4, 2, 1, 3
- 2) 1, 2, 3, 4
- 3) 4, 1, 2, 3
- 4) 1, 4, 3, 2

**4. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Եվ այդ նշան-պատկերները կոչվում էին հիերոգլիֆներ, որոնց քանակը հասնում էր մոտ 750-ի, և դրանք փորագրում էին քարի, փայտի, նաև պապիրուսի վրա:
2. Գրի ստեղծումը դարձավ պահանջ, սակայն սկզբնական գիրը ուղղակի բառի պարզագույն նկարն էր, ինչպես արևը, որ պատկերվում էր կենտրոնում կետ ունեցող շրջանի նշանով:
3. Մ.թ.ա. IV հազարամյակում եգիպտացիների գիտելիքներն այնքան շատ էին, որ դրանց բանավոր փոխանցումը սերնդեսերունդ դառնում էր անհնարին:
4. Հետագայում նշանով սկսեցին արտահայտել ոչ միայն առանձին բառեր, այլև մեկ կամ մի քանի բաղաձայն հնչյուններ՝ բաց թողնելով ձայնավորները:

- 1) 3, 1, 2, 4
- 2) 3, 2, 1, 4
- 3) 3, 4, 2, 1
- 4) 3, 2, 4, 1

**5. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Տուն գնալիս բրուտ Ավագը մի քանի քար է դարսում իրար վրա, վերևն էլ դնում ցաքի փուշ, որպեսզի, ինչպես ինքն է ասում, «քամին խաղա» և չորացնի ամանները:
2. Առաջին մասում «չարխն» է, ջրի կուժը և կավե ցեխը. երկրորդ մասում բերանի վրա շարված են դեռ չթրծած կժեր, կուլաներ, գավաթներ և դարակներ:
3. Բրուտի քարանձավը երկու մասից է. առաջինն ավելի ցածր է, երկրորդը՝ բեմի չափ բարձր:
4. Քարանձավը դուռ չունի, այդ պատճառով էլ բրուտները ուրիշ կերպ են մուտքը փակում:

- 1) 4, 3, 1, 2
- 2) 4, 1, 3, 2
- 3) 3, 2, 4, 1
- 4) 3, 4, 2, 1

**6. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Չարթնում են. ամեն ինչ չքանում է, միայն դեռևս կարծես շարունակում են լսել նրանց մրմունջը:
2. Նրանցից ոչ մեկը չի փախչում, բռնում են, շոյում, սիրում, հանկարծ զգում են, որ երազ է, բայց շարունակվում է երազը. աղավնիները գլխիս վրա են, ուսերիս:
3. Ես երազումս տեսնում էի Ակոբի աղավնիները. իջել են նրանք գլխիս, ուսերիս, թևերիս:
4. Դրսում վառ լույս է արդեն, բայց դեռ երկար շարունակվում է աղավնիների երազի անհիմնալի խայտանքը:

- 1) 3, 4, 2, 1
- 2) 3, 2, 1, 4
- 3) 4, 3, 2, 1
- 4) 4, 1, 3, 2

**7. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Եփեսոս քաղաքում, սակայն, նա ընդունվեց նաև իբրև պտղաբերության խորհրդանիշ:
2. Հելլադայի ամենասիրելի աստվածուհիներից մեկը՝ Արտեմիսը, որսի հովանավորուհին է:
3. Նրանք, ի նշան իրենց սիրո, Օլիմպոսի դիցուհու պատվին որոշեցին կառուցել մի շքեղ տաճար՝ իր տեսակի մեջ եզակի, նախորդը չունեցող:
4. Այդ պատճառով էլ եփեսոսցիները առանձնակի սիրով էին տարփողում աստվածուհու շնորհները, ներբողում նրա չնաշխարհիկ գեղեցկությունը:

- 1) 1, 2, 4, 3
- 2) 1, 4, 3, 2
- 3) 2, 1, 4, 3
- 4) 2, 4, 1, 3

**8. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Նա սկզբում թվարկում է արգելվածները, որոնց մեջ էին բոլոր սողունները:
2. Բոլորը հնազանդվեցին, թեև դժվար էր հրաժարվել դարերով եկած սովորությունից:
3. Քանի որ մինչ այդ Հայաստանում օգտագործում էին ամեն տեսակ միս, արքան գրեց, թե դրանցից որը կարելի է ուտել, որը՝ ոչ:
4. Ասում են՝ հայ ժողովրդի քաղաքակրթության հարցում մեծ նշանակություն են ունեցել Վաղարշակ քազավորի քառասուն հրովարտակները, որոնցից մեկը նվիրված էր միս ուտելուն:

- 1) 4, 2, 3, 1
- 2) 4, 3, 1, 2
- 3) 3, 2, 1, 4
- 4) 4, 2, 1, 3

**9. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Հագար տարի հետո միայն՝ 17-րդ դարում, Գալիլեո Գալիլեյը, աստղադիտակն ուղղելով երկնքի այդ տիրույթը, հաստատեց Շիրակացու առաջ քաշած միտքը:
2. Ժամանակակից աստղագիտական տվյալները փաստում են, որ Ծիր Կաթինի երկնային ուղին անցնում է 32 համաստեղություններով. Դեմեբից սկսած՝ Ծիր Կաթինը ճյուղավորվում է երկու վտակների ու այդպես էլ «հոսում» դեպի հորիզոն:
3. Նրա առավել պայծառ ու խիտ ամպերը դիտվում են Կարապի, Ադեղնավորի, հատկապես Վահանի համաստեղություններում:
4. Աստղային մարմիններով, համաստեղություններով գիտնականները վաղուց են հետաքրքրվել, և դեռևս 7-րդ դարում հայ մեծանուն գիտնական Անանիա Շիրակացին դրանցից մեկի՝ Ծիր Կաթինի մասին գրել է. «...դրանք կուտակված բազմաթիվ մեծ և փոքր աստղեր են, որոնք աղոտ երևալու հետևանքով միավորված լույսով են երևում»:

- 1) 3, 2, 1, 4
- 2) 4, 1, 2, 3
- 3) 1, 4, 2, 3
- 4) 3, 4, 1, 2

**10. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հնչյունական ամենահին գիրը սեպագիրն է: Այժմ, երբ սովորում ենք հին սեպագրերը կարդալ, իմանում ենք նաև այն լեզվի բառերը, որով գրված են տվյալ սեպագրերը: Այս գիրը կոչվում է սեպագիր, քանի որ կազմված է սեպածև նշաններից: Կան երեք տեսակի սեպագրեր՝ վանկագրեր, գաղափարագրեր, ինչպես և որոշիչներ, որոնք ցույց են տալիս տվյալ սեպագրի ինչ լինելը՝ երկիր, քաղաք, գետ և այլն:
2. Պատկերագրերն ու գաղափարագրերը հնչյունական գիր չէին, այսինքն՝ որևէ լեզվի բառեր չէին արտահայտում: Մենք կարող ենք սովորել այդ գրերը կարդալ, բայց չիմանալ, թե ինչպես են հնչել այդ գրերով նշանակված բառերը:
3. Պատկերագրերից հետո մարդիկ անցան գաղափարագրերին: Գաղափարագիրն արդեն մի քայլ առաջ էր պատկերագրից: Նրա նշանները նույնպես պատկերներ էին, բայց գաղափարագրերի տվյալ պատկերը կարող էր ունենալ մի քանի նշանակություն:
4. Գրերի շատ տեսակներ կան: Ամենահին տեսակը պատկերագիրն է: Մարդիկ ժայռի կամ քարի վրա նկարում էին որևէ կենդանի առարկա հենց այդ կենդանու կամ առարկայի իմաստով: Օրինակ, նկարում էին այծ, որը հենց այժմ էլ նշանակում էր:

- 1) 4, 3, 2, 1
- 2) 2, 1, 4, 3
- 3) 4, 1, 3, 2
- 4) 2, 1, 3, 4

**11. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. 26 տարեկան էր, որ ձեռնարկեց անհավատալի դժվար մի աշխատանք: Սի քանդակագործ ավելի քան հինգ մետր բարձրությամբ մարմարե բեկորից սկսել էր արձան քանդակել, բայց փչացրել էր մարմարն ու այդպես էլ թողել: Լավագույն վարպետներն անգամ հրաժարվում էին այդ խեղճված մարմարից քանդակ ստեղծելուց:
2. Քանդակագործն իր հերոսին պատկերել է մարտի պատրաստվելու պահին: Լայն բացած աչքերով նայում է նա հսկային՝ ձախ ձեռքում սեղմած պարսատիկը: Դավիթը լի է վճռականությամբ, հանդարտ է ու ահեղ:
3. Միքելանջելոյի մանկությունն անցել է Ֆլորենցիայում: Արվեստագետի նրա տաղանդը վաղ դրսևորվեց, և նա, հակառակ հոր կամքի, որոշեց նվիրվել արվեստին: Տասներեք տարեկան էր, երբ դարձավ նկարչի աշակերտ, իսկ շուտով հոյակապ քանդակների հեղինակ էր արդեն:
4. Միքելանջելոն հանձն առավ այդ գործը: Երեք տարի անց քանդակը պատրաստ էր: Հինավուրց առասպելը պատմում է, որ մենամարտում Դավիթը հաղթում է իր ժողովրդի թշնամուն՝ հսկա Գողիաթին:

- 1) 3, 1, 4, 2
- 2) 2, 3, 4, 1
- 3) 2, 3, 1, 4
- 4) 3, 4, 1, 2

**12. Պարբերությունները նշող թվերի դասավորության n-ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. 1935 թ. թանգարանի հիմքի վրա կազմակերպվեցին երեք ինքնուրույն թանգարաններ՝ պատմության թանգարանը, ներկայիս Ազգային պատկերասրահը և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը:
2. Թանգարանին տրամադրվեցին նաև Էջմիածնի վանքի, Մոսկվայի Լազարյան ճեմարանի հավաքածուները, Նոր Նախիջևանից Երևան տեղափոխվեցին Ե. Շահազիզի ջանքերով հավաքված թանգարանային արժեքները: Արդեն 1922 թվականին թանգարանն ուներ հնագիտական, պատմագրական, ազգագրական, գեղարվեստական և տնայնագործական բաժիններ:
3. Ներկայումս Հայաստանի պատմության թանգարանում պահվում է շուրջ 250 հազար առարկա: Համալրման հիմնական աղբյուրներն են հնագիտական պեղումների և ազգագրական արշավախմբերի, ինչպես նաև նվիրատվությունների միջոցով ստացված նյութերը: Թանգարանն իր մասնաճյուղերն ունի Սեծամորում և Հառիճում:
4. Հայաստանի պատմության պետական թանգարանը ստեղծվել է հնագիտական, ազգագրական, պատմական նյութերի հավաքածուների հիմքի վրա 1921 թվականի օգոստոսին: Երկու ամիս անց թանգարանը սկսել է ղեկավարել Մարտիրոս Սարյանը: 1921-1922թթ. Թիֆլիսից Երևան փոխադրվեցին Կովկասի հայոց ազգագրական ընկերության հնագիտական ու ազգագրական հարուստ նյութերը և հայագիտական գրադարանը:

- 1) 3, 1, 4, 2
- 2) 3, 4, 2, 1
- 3) 4, 2, 1, 3
- 4) 4, 3, 1, 2

**13. Պարբերությունները նշող թվերի դասավորության n-ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հայաստանի տարածքում գծանկարչության ամենահին նմուշներից են Արագած լեռան վրա, Գեղամա լեռներում, Սյունիքում և այլուր պահպանված ժայռապատկերները:
2. Գծանկարչությունը կերպարվեստի հին տեսակ է. քարանձավների պատերին հնագույն նկարիչների թողած նկարները, հին հունական սկահակների պատկերներն ու գծանկարները, վերածննդի հռչակավոր վարպետների վորագրություններն ու գծանկարները գրաֆիկական հիասքանչ ստեղծագործություններ են:
3. Հետագայում գծանկարչությունը նոր վերելք ապրեց Հովնաթանյանների, ապա Հ. Այվազովսկու, Վ. Սուրենյանցի, Ե. Թադևոսյանի, Մ. Սարյանի արվեստով:
4. Իսկ հին և միջին դարերից մեզ հայտնի են որմնանկարչության, մանրանկարչության, քանդակագործության հոյակապ հուշարձաններ, որոնք վկայում են, թե ինչպիսի կատարելության էր հասել այն ժամանակ հայկական գծանկարչությունը:

- 1) 1, 3, 4, 2
- 2) 2, 4, 3, 1
- 3) 3, 2, 4, 1
- 4) 2, 1, 4, 3

**14. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Մինչև պարանոցը ջրի մեջ կանգնած է Տանտալոսը, իսկ գլխավերևում հասուն մրգերով ծանրաբեռնված ծառի ճյուղեր են:
2. Բայց մի օր նա կասկածեց աստվածներին և ցանկացավ ստուգել նրանց ամենագոր լինելը, որի համար խիստ պատժվեց: Նրան գցեցին ստորերկրյա խավար աշխարհը, որտեղ նա տանջվում էր քաղցից ու ծարավից:
3. Տանտալոսը, ըստ հունական դիցաբանության, Փռուզիայի թագավորն էր, որ վայելում էր Ջևաի և բոլոր աստվածների սերն ու համակրանքը:
4. Երբ ձգվում է՝ միրգը պոկելու, ճյուղերը վեր են բարձրանում, իսկ երբ կռանում է՝ ջուր խմելու, ջրերը ցած են իջնում: Այսպես նա դատապարտված է հավիտենական տանջանքի:

- 1) 1, 3, 4, 2
- 2) 3, 2, 1, 4
- 3) 3, 1, 2, 4
- 4) 1, 4, 2, 3

**15. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հանրահայտ Մեռյալ ծովի ջուրն արտակարգ աղի է, այնքան, որ նրա մեջ չի կարող ապրել ոչ մի կենդանի էակ: Արևմտյան Ասիայի տոթակեզ, անանձրև կլիմայի պատճառով ջուրն ուժեղ գոլորշիանում է ծովի մակերևույթից: Բայց միայն մաքուր ջուրն է գոլորշիանում:
2. Մեռյալ ծովի մեծ աղապարունակությամբ է պայմանավորված նրա այն առանձնահատկությունը, որ այդ ծովի ջուրը նկատելիորեն ծանր է սովորական ծովերի ջրերից: Այդ ծանր հեղուկի մեջ հնարավոր չէ սուզվել:
3. Լուծված աղերը մնում են ծովում և մեծացնում ջրի աղիությունը: Ահա թե ինչու Մեռյալ ծովի ջուրը պարունակում է ոչ թե 23% աղ (ըստ զանգվածի), ինչպես ծովերի ու օվկիանոսների մեծամասնությունը, այլ 27% և ավելի:
4. Մեր մարմնի կշիռը նկատելիորեն փոքր է նույն ծավալով խիտ աղի ջրի կշռից, և, հետևաբար, մարդը Մեռյալ ծովում, ըստ լողալու օրենքի, ջրի երեսն է դուրս գալիս այնպես, ինչպես հավի ձուն է աղի ջրի երեսը դուրս գալիս (իսկ խմելու ջրի մեջ սուզվում է):

- 1) 1, 3, 2, 4
- 2) 4, 1, 3, 2
- 3) 2, 1, 4, 3
- 4) 1, 3, 4, 2

**16. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Այն ժամանակ լրջորեն մտահոգող խնդիրներից էր հանքահորերից պոմպերով ջուր հանելը: Սկզբնական շրջանում Անգլիայում այդպիսի գործերի համար ձիեր էին օգտագործում, որոնք, ի դեպ, շատ թանկ արժեին:
2. Այդ պատճառով էր, որ շոգեմեքենայի գյուտարարը հետաքրքրվեց, թե քանի ձիու կարող է փոխարինել մեկ մեքենան, և ինչպես արտահայտել մեքենայի հզորությունը ձիու հզորությամբ, այսինքն՝ այն աշխատանքով, որ ձին կարող է կատարել մեկ ժամում, մեկ րոպեում, մեկ վայրկյանում:
3. Հզորության միավորի սահմանման անհրաժեշտությունը ծագեց այն բանից հետո, երբ Ջեյմս Ուոտտը կատարելագործեց շոգեմեքենան, և վերջինս դադարեց պարզապես թանկարժեք խաղալիք լինելուց:
4. Ուոտտը փորձնականորեն որոշեց, որ ձին 75 կգ զանգվածով բեռը 1 վայրկյանում կարող է բարձրացնել 1 մետր: Չիու զարգացրած միջին հզորությունն անվանեցին ձիաուժ:

- 1) 1, 3, 4, 2
- 2) 2, 3, 1, 4
- 3) 3, 1, 2, 4
- 4) 4, 1, 2, 3



**17. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Քաղաքի հրապարակում մարդկանց հոծ բազմություն էր հավաքվել: Բոլորն ուզում էին տեսնել օդապարիկ կոչվող այդ հրաշքը, որը շուրջ 15 մ տրամագծով քաթանե գունդ էր՝ լցված տաք ծխով: Արտաքինից սուսնձված էր թղթով:
2. Մոնգոլֆիե եղբայրները հավաքվածներին առաջարկեցին թռչել օդապարիկով: Բայց թռչել ցանկացողներ այդպես էլ չեղան:
3. Ստորին մասում անցք էր բացված, որի անմիջապես տակը կախված էր «կրակարան»: «Կրակարանի» մեջ եղբայրները դրել էին շիկացած ամփսի կտորներ՝ տաքացնելու համար օդապարիկի ներսի օդը: Երբ կտրեցին պարանը, որով օդապարիկը կապված էր սյունին, այն վեր բարձրացավ և շուտով ծածկվեց ամպերի հետևում:
4. Ավելի քան 200 տարի առաջ ֆրանսիական փոքրիկ Անոնե քաղաքը հանկարծ հայտնի դարձավ ամբողջ աշխարհում: Ժոզեֆ և Էտյեն Մոնգոլֆիե եղբայրները օդ բարձրացրին իրենց կառուցած օդապարիկը:

- 1) 1, 2, 4, 3
- 2) 1, 4, 2, 3
- 3) 4, 1, 3, 2
- 4) 4, 2, 1, 3

**18. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Լազարյան ճեմարանն իր գոյության ընթացքում պահպանել է իր հայկական դիմագիծը. հայերենով դասավանդվել են մի շարք հայագիտական առարկաներ, ուսուցիչներից և դասախոսներից շատերը եղել են հայեր: Տարբեր ժամանակներում ճեմարանում դասավանդել են Հ. Ալամդարյանը, Մ. Նալբանդյանը, Ս. Շահազիզը, այստեղ են սովորել ապագա նշանավոր գրողներ Ռ. Պատկանյանը, Գ. Դողդիսյանը, Վ. Տերյանը, արվեստի և գիտության նշանավոր այլ գործիչներ:
2. Ճեմարանում ուսուցումը հիմնականում տարվել է ռուսերենով, սակայն հանրակրթական առարկաներին զուգահեռ դասավանդվել են հայերեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, նաև մի շարք արևելյան լեզուներ՝ պարսկերեն, արաբերեն, թուրքերեն: Խորհրդային տարիներին այս ճեմարանի հիմքի վրա ստեղծվում է Մոսկվայի արևելագիտության ինստիտուտը:
3. 1921 թվականից Լազարյան ճեմարանի շենքը ծառայել է իբրև Խորհրդային Հայաստանի մշակույթի տուն: Ներկայումս այն Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատունն է:
4. Լազարյան ճեմարանը հիմնադրվել է Մոսկվայում 1815 թվականին մեծահարուստ Լազարյանների նախաձեռնությամբ և միջոցներով: Այստեղ ընդունվում էին տարբեր ազգերի 10-14 տարեկան երեխաներ, հիմնականում՝ հայեր և ռուսներ:

- 1) 4, 2, 3, 1
- 2) 4, 2, 1, 3
- 3) 3, 1, 4, 2
- 4) 3, 2, 1, 4

**19. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հետագայում անսովոր երևույթները գրավել են Կալիֆոռնիա այցելող զբոսաշրջիկների կամ նույն վայրում ամառանոց կառուցող ինժեներների ուշադրությունը: Այստեղ մարդիկ իրենց իրական հասակից ավելի բարձր կամ ցածր են թվացել, իսկ մի քանի անգամ վերակառուցված տունը այդպես էլ ուղիղ չի կանգնել, թեև հարթաչափը բազմիցս ցույց է տվել ուղիղ հարթություն:
2. Վերջին տարիներին կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ նման վայրեր կան երկրագնդի տարբեր տեղերում: Սակայն հարկ է նշել, որ դրանք հայտնաբերելը այնքան էլ հեշտ չէ, քանի որ նման անոմալիաները գործում են խիստ սահմանափակ տարածքներում:
3. Երկիր մոլորակը, որքան էլ ուսումնասիրված, այնուամենայնիվ դեռ բազում գաղտնիքներ ունի մեզ համար, գաղտնիքներ, որոնք ուղղակի հնարավոր չէ բացատրել մերօրյա գիտության զարգացման մակարդակով:
4. Մոլորակի ամենաառեղծվածային վայրերից մեկը, որն առաջին անգամ բացահայտել են դեռ հնդկացիները, գտնվում է Կալիֆոռնիայում. այստեղ ֆիզիկայի մի քանի օրենքներ պարզապես չեն գործում, քանի որ գնդերը թեք հարթությամբ գլորվում են ոչ թե ներքև, այլ վերև, առարկաները, որոնք պետք է կանգնեն ուղիղ, անկյամբ թեքված են գետնի վրա, իսկ մարդիկ կարող են քայլել պատերով:

- 1) 4, 2, 3, 1
- 2) 3, 2, 4, 1
- 3) 4, 2, 1, 3
- 4) 3, 4, 1, 2

**20. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Մեկ ուրիշ աղետ էր այն, որ ճառելիս նա ուսը անճոռնի ձևով ցնցելու սովորույթ ուներ, ու դրանից ազատվելու համար նա առաստաղից սուր էր կախում ուղիղ ուսի ուղղությամբ, որ այն իր ծակոցներով զսպի անհարկի շարժումները:
2. Մանկության տարիներին Դեմոսթենեսը թուլակազմ էր ու հիվանդոտ, հասուն տարիքում էլ նա ծաղրվում էր թույլ առողջության, թլվատության, երկչոտության ու ամբոխի առաջ խոսելու անկարողության պատճառով:
3. Նրա համառ պարապմունքները տևում էին մինչ կեսգիշեր կամ ավելի, ու իր փորձերի ընթացքում նա միայն ջուր էր խմում՝ կայտառությունը երկար պահպանելու նպատակով:
4. Բայց նրա մեջ մանկուց մնացել էր հռետոր դառնալու ձգտումը, և թերությունները վերացնելու համար նա գնում էր ծովափ, փոթորկի ժամանակ խոսում ծովի ու քամու հետ՝ ընտելացնելով իրեն աղմուկին զուգընթաց խոսելուն:

- 1) 2, 4, 1, 3
- 2) 3, 2, 1, 4
- 3) 2, 1, 4, 3
- 4) 3, 4, 2, 1

**21. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

*Վաղ հասակում երկկենցաղների մեծ մասը ապրում է ջրում և ձկների նման շնչում խռիկներով: Երբ փոքրիկ շերտիկները մեծանում են, կորցնում են խռիկները և սկսում են շնչել թոքերով, ինչպես բոլոր ցամաքային կենդանիները:*

*Սակայն երկկենցաղների մաշկը բարակ է ու խոնավ և կարիք ունի, որ պարբերաբար թրջվի ջրով: Այդ պատճառով էլ երկկենցաղները ջրից շատ չեն հեռանում: Եթե գորտը կամ տրիտոնը երկար մնա չոր տեղում, կարող է սատկել:*

- 1) Երկկենցաղների մեծ մասը շնչում է խռիկներով:
- 2) Սակայն երբ փոքրիկ շերտիկները մեծանում են, ցամաքային կենդանիների նման սկսում են շնչել թոքերով, որովհետև կորցնում են խռիկները:
- 3) Երկկենցաղների մի մասը կարող է ջրից ազատորեն հեռանալ և մշտապես ապրել ցամաքում:
- 4) Երկկենցաղները իրենց կյանքի մի փուլում շնչառական հատկանիշներով նման են ձկներին, մի այլ փուլում՝ ցամաքային կենդանիներին:

**22. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

*1-ին դարի հռոմեացի բնագետ Պլինիոս Ավագը հավաստում է, որ Հայաստանից համաշխարհային շուկա արտահանվող հիմնական ապրանքների ցուցակն սկսվում էր որդան կարմիրով: Նրա մասին բազմաթիվ վկայություններ կան նաև հայ պատմիչների երկերում: Այն համարվել է աշխարհի ամենագեղեցիկ ներկը, կոչվել է «արքայական ծիրանի», որովհետև նրանով էին ներկում արքայական ու իշխանական հանդերձները: Հայկական որդան կարմիրով է հիմք դրվել «կարմիր թանաքով» ստորագրությանը, որը արքաների ու կաթողիկոսների մենաշնորհն էր:*

- 1) Որդան կարմիրի մասին վկայություններ կան ոչ միայն հայ, այլև օտար պատմիչների երկերում:
- 2) Ըստ հռոմեացի բնագետ Պլինիոս Ավագի՝ հռոմեական որդան կարմիրը համաշխարհային շուկայում համարվում էր համար մեկ ապրանքանիշ:
- 3) Որդան կարմիրը կոչվել է նաև «արքայական ծիրանի» արքայական հանդերձները նրանով ներկելու պատճառով:
- 4) «Կարմիր թանաքով» ստորագրում էին արքաներն ու կաթողիկոսները:

**23. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

*Ուղտին անապատի նավ են անվանում: Եվ իսկապես, երկար ժամանակ ընտանի ուղտերը անապատների միակ փոխադրամիջոցն էին:*

*Այս դիմացկուն կենդանին լավ հարմարվել է անապատային կյանքին: Ուղտը բոլորովին պահանջկոտ չէ կերի նկատմամբ. նա բավարարվում է փշոտ թփերով, որ ուրիշ կենդանիներ չեն ուտում: Բայց այդ համեստ կերն անզամ նպաստում է, որ ուղտի սապատներում ճարպի պաշար կուտակվի: Սնվելով այդ պաշարով՝ ուղտը կարող է մի քանի օր առհասարակ ոչինչ չուտել:*

*Այս կենդանին բավարարվում է ջրի քիչ քանակով և կարող է խմել նաև աղի ջուր:*

- 1) Ուղտն ուտում է մյուս կենդանիների համար ոչ ուտելի բույսեր:
- 2) Ուղտին անապատի նավ են անվանում անապատում երկար ժամանակ եզակի փոխադրամիջոց լինելու պատճառով:
- 3) Քանի որ ուղտը շատ քիչ է ուտում, այդ պատճառով էլ շատ քիչ ջուր է խմում, այն էլ աղի:
- 4) Ուղտը կարող է մի քանի օր առհասարակ ոչինչ չուտել՝ ի հաշիվ սապատներում կուտակված ճարպի պաշարի:

**24. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

*Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» հայ իրավունքի նշանավոր հուշարձաններից է, որը կազմվել է 1184 թ. (ճիշտ անվանումն է «Գիրք դատաստանի»): Այն նպատակ է ունեցել մեղմելու դասակարգային հակասությունները, բարձրացնելու ժողովրդի ազգային-ազատագրական ոգին: «Գիրք դատաստանին» ամրապնդել է տիրապետող կարգերն ու դասային արտոնությունները, պաշտպանել եկեղեցու դիրքը: Այն կիրառվել է նաև Հայաստանի սահմաններից դուրս, հատկապես այն գաղութներում, որտեղ հայ համայնքը ձեռք է բերել ներքին ինքնավարության իրավունք: Սուղանում այսօր էլ պետական դատարանը կիրառում է «Գիրք դատաստանին» հայ համայնքի անդամների քաղաքացիական գործեր լսելիս: Գոշի «Դատաստանագիրքը» բացառիկ կարևոր նշանակություն ունի միջնադարյան Հայաստանի ներքին կյանքին վերաբերող տեղեկություններ հաղորդելու առումով:*

- 1) Գոշի «Դատաստանագիրքը» ամրապնդում էր տիրապետող կարգերը, մեղմում դասակարգային հակասությունները:
- 2) Սուղանի դատարաններն այսօր էլ քաղաքացիական բոլոր գործերը լսելիս հիմնվում են Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» վրա:
- 3) Գոշի «Դատաստանագիրքը» մեզ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում միջնադարում հայ ժողովրդի ներքին կյանքի վերաբերյալ:
- 4) Գոշի «Դատաստանագիրքը» հայ իրավունքի նշանավոր հուշարձաններից մեկն է, որը կազմվել է 12-րդ դարի վերջին:

**25. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

*Պատանի Ալեքսանդրը միշտ տխրում էր՝ լսելով Փիլիպոս II-ի հաղթանակների մասին: Նա մտածում էր, որ հայրը կհասցնի գրավել ամեն ինչ, իսկ իրեն չի հաջողվի կատարել որևէ մեծ ու փառավոր գործ:*

*Գորդիս քաղաքում մարտակառքի վրա խճճված հանգույց էր արված, որ կոչում էին Գորդյան հանգույց: Ասում էին, թե այդ հանգույցը քանդողը դառնալու էր Ասիայի տիրակալը: Շատերի թվում այն փորձեց քանդել և Ալեքսանդրը, ու երբ չստացվեց, նա սրով կտրեց այն: Այդտեղից էլ առաջացավ «Գորդյան հանգույցը կտրել» արտահայտությունը, որ նշանակում է վճռականորեն վերջ տալ որևէ խճճված հարցի: Ալեքսանդրը պատմության մեջ մնաց որպես ամենաերիտասարդ ու սիրված աշխարհակալը, որն իր զինվորի հետ կրում էր ռազմական բոլոր դժվարությունները, անգամ անսպաստում ջուր չէր խմում, քանի որ այն չէր բավարարում զինվորներին, իսկ մենակ խմելը փոքրոգություն էր համարում:*

- 1) Ալեքսանդր Մակեդոնացին մեկ հարվածով կտրել էր մարտակառքի վրա արված խճճված հանգույցը:
- 2) Ալեքսանդրը վախենում էր, որ իրեն չի հաջողվի հռչակվել ավելի, քան հռչակվել է հայրը:
- 3) «Գորդյան հանգույց» արտահայտությունը ստեղծվել է Մակեդոնացու կողմից:
- 4) Ալեքսանդրը իր զինվորների հետ կիսում էր պատերազմական դրության անհարմարությունները:

**26. Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

Կյանքը Երկրի վրա սկիզբ է առել աստիճանաբար Երկրի գոյացումից շատ ու շատ տարիներ անց: Երկրի կեղևը սառել ու պնդացել է միլիարդավոր տարիների ընթացքում: Ջրային գոլորշիները խտացել և տաք անձրևի տեսքով թափվել են Երկրի վրա, սպա աստիճանաբար սառել է նաև ջուրը: Այդ ժամանակ արդեն ջրում կային բազմազան քիմիական նյութեր, որոնցից առաջացան ավելի բարդ քիմիական միացություններ: Այս դրանցից կազմվեցին սպիտակուցի մոլեկուլներ, որոնք աստիճանաբար սկսեցին սնվել՝ կլանելով ջրում լուծված նյութերը, դրանցով կառուցել իրենց սպիտակուցավոր մարմինները, իսկ թափոնները նետել դուրս: Մարմինները հնարավորություն ստացան կիսվելու միջոցով աճելու և բազմանալու: Այդպես համաշխարհային օվկիանոսի օրոքոցում անհիշելի ժամանակներում ծնվեց կյանքը: Բնության հարափոփոխ արվեստանոցում սպիտակուցի փոքրիկ կենդանի գնդիկից միլիարդավոր տարիների ընթացքում առաջացան այսօրվա աներևակայելիորեն բազմազան կենդանի էակները:

- 1) Միլիարդավոր տարիներ առաջ ջրում առկա քիմիական նյութերը ավելի բարդ բաղադրություն ունեին, քան առաջին սպիտակուցային գնդիկները:
- 2) Համաշխարհային օվկիանոսում առաջացած փոքրիկ կենդանի գնդիկները, միլիարդավոր տարիների ընթացքում փոփոխվելով, առաջացրել են ներկայիս կենդանի աշխարհի բազմազան ձևերը:
- 3) Առաջին սպիտակուցավոր մարմինները կիսվում ու բազմանում էին սնվելու և թափոնները դուրս նետելու միջոցով:
- 4) Առաջին սպիտակուցային գնդիկներից կիսման և բազմացման միջոցով կազմվեցին սպիտակուցային մոլեկուլներ:

**27. Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

Օձերի աչքերը, ի տարբերություն այլ կենդանիների, ունեն յուրահատուկ կառուցվածք: Սովորական օձերն «ակնոց» են կրում և մինչև իրենց կյանքի վերջը մի քանի անգամ փոխում են այդ ակնոցը: Օձերի աչքերը մյուս կենդանիների նման անթափանց կոպերով ծածկված չեն, այլ ունեն թափանցիկ կոպեր, որոնք ակնախոռոչներին կպած են այնպես, ինչպես մարդու ակնոցի ապակիները՝ շրջանակին: Երբ մոտենում են մաշկը փոխելու օրերը, այդ «ակնոցներն» աղոտանում են, և օձերի տեսողությունը վատանում է: Մաշկափոխության ժամանակ օձերը դեն են նետում իրենց ամբողջ շապիկը այդ յուրատեսակ «ակնոցի» հետ միասին: Հետագայում առաջ են գալիս նոր կոպեր՝ բոլորովին մաքուր ու թափանցիկ:

- 1) Կենդանիների աչքերը, ի տարբերություն մարդու, սովորաբար ծածկված են անթափանց կոպերով:
- 2) Օձերը իրենց «ակնոցը» ավելի հաճախ են փոխում, քան մաշկը:
- 3) Օձերի կոպերը մարդու ակնոցի ապակիների նման կարծր են:
- 4) Մաշկափոխության ժամանակ օձերի տեսողությունը վատանում է:

**ԲԱԺԻՆ 6 ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**1. Ո՞ր նախադասության մեջ համեմատություն կա:**

- 1) Նրանք անընդհատ բարձրանում էին լեռը. թվում էր՝ այդպես պիտի գնային մինչև մութ երկինքը:
- 2) Մեր բաժին աստված, քո սիրտն էլ քար էր, Որ մեզ քարերը տվիր նվեր...
- 3) Օհան ապերը չոր ցախերը դարսում էր բուխարիկում, պառկում կրակի առաջ և նայում, թե ինչպես են մոխրանում փայտի կտորները:
- 4) Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ձայն հանում:

**2. Տարբերակներից քանիստ՞ում համեմատություն կա:**

1. Ու ես հանգույն երփնալուցկի վառող մանկան՝  
Ջայն գունաժպիտ տեսնեմ ուրիշ դեմքի մը վրան:
2. Ջուրը ցայտքեն ծաղիկ-ծաղիկ կը կաթե.  
Վըճիտ, ինչպես լույսե արցունքը մանկան:
3. Թագուհու հոգին խռովվեցավ, նման ծովափնյա ջրին, որի մեջ հանկարծ գլորվում է լեռան կողերից պոկված քարաժայռ:
4. Գետակի վրա թեքվել է ուռին  
Ու նայում է լուռ վագող ջրերին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում

**3. Ո՞ր տարբերակում համեմատություն չկա:**

- 1) Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ:  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
- 2) Մի թեթև շառագույն փայլեց յուր այտերի վրա, ինչպես ձմեռվա դժգույն արշալույսը, որ զարկում է ձյունապատ ժայռերին:
- 3) Եվ այնպես հեշտ, այնպես խնդուն  
Մատնում ես ինձ, աշխարհին,  
Մինչ դողում է որպես երդում  
Քո անունն իմ շուրթերին...
- 4) Անոնք այնչա՛փ բռնկեր են, որ կարծես  
Հրդեհն իրենց կ'այրե դաշտերը անհուն:

**4. Ո՞ր տարբերակում փոխաբերություն չկա:**

- 1) Չյունն էլ արևի ջահել համբույրից  
Ուրախ լալիս է դաշտերի վրա:
- 2) Սարի հետևում շողերը մեռան.  
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ:
- 3) Ջրերն են անվերջ միգում հեկեկում,  
Իմ սիրտն է լալիս կարոտով անհուն:
- 4) Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,  
Նախ՝ կյա՛նքը, վերջը՝ լացող մ'իր վըրան:

5. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:

*Երգում է քամին, լալիս է նորից,  
Անհույս ու անվերջ մղկտում է նա,  
Այս մութ գիշերում այնքան կա թախիծ,  
Այնքան տրտունջ ու զանգատ կա հիմա:*

- 1) չափազանցություն
- 2) համեմատություն
- 3) հակադրություն
- 4) անձնավորում

6. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

*Այնպես զգվող է երեկոն անափ,  
Ծաղիկներն այնպես նազով են փակվում,  
Շուրջս վառված է մի անուշ տազնապ,  
Մի նոր հուզում է սիրտս մրրկում....*

- 1) շրջադասություն
- 2) մակդիր
- 3) փոխաբերություն
- 4) համեմատություն

7. Ո՞ր տարրերակում անձնավորում կա:

- 1) Մանկության երկինքն էր բացվել վրաս,  
Եվ արշալույսներ կային իմ հոգում:
- 2) Այն գիշերն է, այն հուշերն են տրտմաշուր,  
Այն աստղերն են ցուրտ երկնքում երագում...
- 3) Հրա՛շք աղջիկ, գիշերների՛ թագուհի,  
Ճառագայթող քո աչքերով դու եկար...
- 4) Ժայռից մասուր է կաթում,  
Կարմիր սարսուռ է կաթում,  
Ձորում մշուշ է:

8. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:

*Ձկնիկն առվին խուտուտ տվեց,  
Եվ առուն՝ պարզ ու անբիծ,  
Քրքջալով ուշաթափվեց  
Ու ձորն ընկավ քարափից:*

- 1) համեմատություն
- 2) անձնավորում
- 3) հակադրություն
- 4) չափազանցություն

**9. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

*Ճայերը թրջում են ջրի թևերը,  
Ճախրում ու ճչում են օդում,  
Քամին քանդակում է չքնաղ քո թևերը,  
Շոյում է վարսերը քո թուխ:*

- 1) շրջադասություն
- 2) համեմատություն
- 3) հանգավորում
- 4) անձնավորում

**10. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

*Թեև շա՛տ էր ծերացել Սասաղին, սակայն նրա հոգին երազի աչքերով և ականջով երազի տեսնում էր ու լսում աշխարհի չքնաղ իրերն ու ձևերը, երգերն ու լռությունը անհայտ ոլորտների, որովհետև տակավին գրույց էր անում նրա հետ բանաստեղծության կախարդ ոգին:*

- 1) անձնավորում
- 2) մակդիր
- 3) համեմատություն
- 4) շրջադասություն

**11. Ո՞ր ոճին են բնորոշ տրված բառակապակցությունները.**

*սույնով հաստատել, առ այն, ըստ որոշման, քաղվածք որոշումից, նիստի արձանագրություն:*

- 1) վարչական
- 2) գեղարվեստական
- 3) հրապարակախոսական
- 4) գիտական

**12. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

*«Միամանթոյի «Հայորդիներ»-ում սկզբից մինչև վերջ զարգանում է ազատագրության թեման, որի առանցքը դյուցազնական ըմբոստ կերպարի ստեղծումն է: Հեղինակը փառաբանում է պայքարը, սուրը, հայրենիքի համար կախադաս հանված կամ բանտերում տառապող հայորդիներին»,- գրում է Հեկտոր Ռշտունին գրողին նվիրված մենագրության մեջ:*

- 1) վարչական
- 2) հրապարակախոսական
- 3) գիտական
- 4) գեղարվեստական

**13. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

*Ձկների արծաթագույն գունավորումը դրանցից վերև տարածվող ջրի մակերևույթի գույնին ձկների հարմարվելու արդյունքն է. ներքևից դիտելիս ջրի մակերևույթը հայելային է թվում լրիվ ներքին անդրադարձման հետևանքով: Իսկ այդպիսի ֆոնի վրա արծաթագույն ձկներն աննկատելի են մնում իրենց հետապնդող ջրային գիշատիչների համար:*

- 1) հրապարակախոսական
- 2) վարչական
- 3) գիտական
- 4) գեղարվեստական



**14. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

*Մեր հրետանին կանգնել էր Մեծամոր բլրի տակ, և նրան չէին օգնում ո՛չ հին մագաղաթները, ո՛չ հիքրտաները, ո՛չ էլ Երկիրը գնդած գիտնականները, և աղերսում էին գեթ Արարատյան հանրապետություն, հովտի գոնե կեսը: Ամբողջ օրը մեր հրետանին քանդուքարափ էր անում մեր Մարդարապատը, սպա տղերքը լծվեցին և եզան պես առանց ձայնի արտասվելով՝ թնդանոթները թիզ առ թիզ քաշեցին Արագածն ի վեր՝ Ապարան: Հետո թշնամին գովել էր, թե այդ հայերը կարծես թե տղամարդ են. կռվում են:*

- 1) գիտական
- 2) պաշտոնական
- 3) խոսակցական
- 4) գեղարվեստական

**15. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

*Հայկական քաղաքակրթությունը սկիզբ է առել մոտավորապես մ.թ.ա. 40-րդ հազարամյակից: Հազարամյակներով կուտակված գիտելիքները թույլ են տվել մ.թ.ա. 23-րդ հազարամյակում օգտագործել պարզ աստղագիտական գործիքներ, որոշել, որ Արևի ծագման կետը շարժվում է հորիզոնով, վերադառնում նույն կետին 365 օրվա ընթացքում:*

- 1) գեղարվեստական
- 2) գիտական
- 3) վարչական
- 4) առօրյա-խոսակցական

**16. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

*Ճապոնիայում պատրաստել են էլեկտրոնային մի մեքենա, որը ոչ միայն անգլերենից ճապոներեն է թարգմանում, այլև բարձրաձայն արտասանում է թարգմանած նախադասությունները: Թարգմանիչ մեքենայի բառապաշարը կազմում է 8000 բառ:*

- 1) վարչական
- 2) գիտական
- 3) գեղարվեստական
- 4) առօրյա-խոսակցական

**17. Պնդումներից որի՞ մեջ սխալ կա:**

- 1) Հրապարակախոսական ոճի առանձնահատկություններից է խոսողի ընդգծված անձնական վերաբերմունքի արտահայտումից խուսափելը:
- 2) Գիտական ոճին բնորոշ են բազմաբաղադրիչ բարդ նախադասությունները:
- 3) Վարչական ոճի տարբերիչ հիմնական հատկանիշներից է գրաբարյան և աշխարհաբարյան նախդրավոր կապակցությունների գործածությունը:
- 4) Գեղարվեստական ոճում կարող են հանդես գալ բոլոր ոճերի տարրերը:

**18. Պնդումներից քանի՞սն են սխալ:**

- Գործառական ոճերը վեցն են՝ առօրյա-խոսակցական, վարչական, գեղարվեստական, գիտական, պաշտոնական և հրապարակախոսական:
- Բաղաձայնությամբ ձայնավոր հնչյունի կրկնությունն է խոսքի որոշակի հատվածում:
- Բոլոր որոշիչները մակդիրներ են, և բոլոր մակդիրները՝ որոշիչներ:
- Գիտական ոճը աչքի է ընկնում պատկերավորման-արտահայտչական միջոցների առատությամբ:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) բոլորը

www.atc.am

**ԲԱԺԻՆ 7 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ**

**1. Ո՞ր նախադասությունն է արևելահայերենով:**

- 1) Մենք մեր ընթերցողաց փափագն հագեցնելու համար արժան դատեցինք այս օրվա թերթերնուս մեջ օտար լրագիրներեն քաղվածք մը ընելով հրատարակել:
- 2) Հեռվից մշուշի մեջ Մասիսն ինձ երևաց. իբր ժպտում էր հայրաբար, կանչում էր տուն:
- 3) Ի՞նչ ընելու է ուրեմն, թո՞ղ տալու է, որ բարի մարդերն առանց հիշատակի անցնին երթան:
- 4) Թերևս հարցնողներ գտնվին, թե այս մարդն եթե այսչափ գործունյա է, հիմա ինչո՞ւ չգործեր:

**2. Ո՞ր նախադասությունն է գրաբարով:**

- 1) Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս, լեզուս իմ հանց պըտուղ կու տայ:
- 2) Տասնչորս ավուր լուսնին կը նմաներ, Որ յոթ սարի ետևեն կ'էլներ:
- 3) Շուշանն շողեր հովտին, շողշողեր դեմն արեգականն...
- 4) Նա կը հիշեցնե այն չքաղված խաղողի հատիկը, որ կեցած տեղը, բիրտ հպումներն հեռու թռոմելով, ավելի ևս կքաղցրանա:

**3. Ո՞ր նախադասությունը գրաբարով չէ:**

- 1) Ապա տայր հրաման Շապուհ արքայ Պարսից բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ:
- 2) Տե՛ր արքա, ավելի կմեղանչես, երբ գահդ թափուր թողուս, որուն վրա միշտ հառած են Պարսկաստանի արյունոռուտ աչքերը:
- 3) Յետ այսօրիկ ապստամբեաց ի թագաւորին հայոց եւ ձեռին իշխանութեանն տանն հայոց թագավորին:
- 4) Եթող զարքայն Հայոց եւ գնաց Սաղամուտ տէր Անձտեաց, եւ ընդ նմին իշխանն Մեծի Ծովագ:

**4. Ո՞ր նախադասությունն է արևմտահայերենով:**

- 1) Մեծ պատահարները զիս անտարբեր կը թողուն, բայց մանր դեպքերը՝ չնչին ուրիշների աչքին, լուրջ խորհրդածություններու նյութ են ինձի:
- 2) Եթե հույս ունիմք ապագայի վերա, նորա երևցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան, և ձեր վերա է միակ հույսը:
- 3) Եվ շա՛տ ցավեցոյց զմէջք փափուկ օրիորդին՝ Արագ հասուցանելով ի բանակն իւր:
- 4) Էն լեզվներու՞նը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործերը, նրանց արածներն ու ասածները:

**5. Ո՞ր հատվածը արևմտահայերենով չէ:**

- 1) Ձեռք վերցուցինք աստղերուն,  
Մեր ուխտեցինք իրարու,  
Դողդղղացին աստղերն ալ  
Մեր երդումեն ահարկու:
- 2) Ու գեթ ցոլք մը տայի ոսկի իմ հուրես  
Մութ հոգիի ճըրագներուն ցրտահար:
- 3) Եվ ահա բարեբեր ամառն իր պտուղները զամբյուղ առ զամբյուղ  
Մեր պարտեզին ծառերեն դեպի հողը և դեպի զիս կընծայեր....
- 4) Եթե դու յորս հեծցիս  
Յազատն ի վեր ի Մասիս,  
Ձքեզ կալցին քաջք, տարցին  
Յազատն ի վեր ի Մասիս...

**6. Ո՞ր հատվածն է միջին հայերենով:**

- 1) -Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ  
Պար չես բռնում մանկական,  
Դու դեռ ծովը չի հասած՝  
Սզավոր ես ինձ նման:
- 2) Մեծցայ, սիրու տեր եղայ,  
երեսիս գոյնըն կու գրնայ.  
Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,  
որ սիրուն քարըն չի դիմնայ...
- 3) Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթեր,  
Լեզուին շարժողին  
Քաղցրերգանայր տալիղն...
- 4) Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է՝  
Տեսանելով այսպես սեր  
Դեպի թշվառ մի հայրենիք,  
Որ ոտնակոխ եղած էր:

**7. Ո՞ր նախադասությունն է գրաբարով:**

- 1) Դըռանս առջև կը նըստիմ միշտ տըխրալիր,  
Լուր կ'ուզեմ վրադ ամեն կռունկե՛ որ կ'անցնի:
- 2) Ջիմ եարն ամանաթ կուտամ.  
Ի վարդին մէջն պահեցեք.  
Թէ երթամ ու շուտով դառնամ,  
զամանաթս ի տէ՛ր հասուցեք...
- 3) Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելանէր,  
Ընդ եղեգան փող բո՛ց ելանէր,  
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ...
- 4) Դու տեր համորեն երկնի և երկրի,  
Իսկ ես չեմ իշխում շնչիս ու հոգուս...

**8. Ո՞ր նախադասությունն է գրաբարով:**

- 1) Գազան, անասուն ու հաւ գեմ ունին իրեանց տուն ու բուն. ո՛չ տուն ու ո՛չ տեղ ունին, կու խոցիմ գօրն ի յայն հարկուն:
- 2) Վուրտիղ ժամ, վուրտիղ պատարագ, վուրտիղ սիրով տաղ է ըլում, թեվուր հոգուտ կամքն իս անում, մարմինտ բեղամաղ է ըլում:
- 3) Գողտըր գեղգեղն վարդակարոտ բուլբուլին, բնության դաշնակք, ո՛հ, չեն կրնար նվաճեր Ձեր հառաչներն, որով մռընչեն նոճիներ:
- 4) Ի համատարած ծովէն պղպըջէր գոյնն այն ծաղկին. երփին երփնունակ ծաղկին, շողշողէր պտուղն ի ճղին:

**9. Ո՞ր հայերենով է հետևյալ հատվածը:**

*Գեղեցիկ պատմուճանան գարդարեալ էր,  
ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեզոյ,  
ի յորդանէ՛ նսկեշողեր գոյնն:*

- 1) գրաբարով
- 2) արևմտահայերենով
- 3) միջին հայերենով
- 4) աշխարհաբարով

**10. Պնդումներից ո՞րն է սխալ:**

- 1) 19-րդ դարի սկզբին գրաբարը վերջնականապես դադարում է գործածվելուց, և աշխարհաբարը դառնում է միակ գործածական լեզուն:
- 2) Արևմտահայ և արևելահայ գրական լեզուները ձևավորվել են բարբառային տարբեր հիմքերի վրա:
- 3) Բարբառները ունեն հնչյունական, բառային և քերականական տարբերություններ:
- 4) Հայերենը ցեղակից է հնդկերենին, պարսկերենին, հունարենին, սլավոնական լեզուներին:

**11. Ո՞ր բարբառի հիմքի վրա է ձևավորվել գրական արևելահայերենը:**

- 1) Պոլսի
- 2) Արարատյան
- 3) Կարնո
- 4) Գորիսի

www.atc.am

**ԲԱԺԻՆ 8 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**1. Ո՞ր այբուբենի տառերի հաջորդականությամբ է Մեսրոպ Մաշտոցը դասավորել իր ստեղծած նշանագրերը:**

- 1) լատինական
- 2) հունական
- 3) ասորական
- 4) պարսկական

**2. Գրերի ստեղծումից հետո առաջինը Աստվածաշնչի ո՞ր գիրքը սկսեցին թարգմանել Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները:**

- 1) Ժողովողի գիրքը
- 2) Սողոմոնի առակները
- 3) Ծննդոց գիրքը
- 4) Դավթի սաղմոսները

**3. Պնդումներից քանիստ՞ում սխալ կա:**

- ա. Մաշտոցյան գրերի գյուտը կատարվել է Վռամշապուհ արքայի օրոք:
- բ. Հռոփանոս անունով մի հույն գեղագրից բերված նշանագրերը դարձան մեսրոպյան այբուբենի ստեղծման հիմքը:
- գ. Դանիել եպիսկոպոսի օգնությամբ Մաշտոցը որոշակի ոճ ու տեսք տվեց իր ստեղծած գրերին:
- դ. Մեսրոպյան գրերով գրված առաջին նախադասությունն է. «Պետ վարժից կոչեցայ, ...սուրբ վկայեցայ ի մարդկանէ»:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում

**4. Ո՞ր տարբերակի թվերի դասավորությունն է ճիշտ նշում 5-րդ դարի պատմիչների երկերի ժամանակագրական հաջորդականությունը:**

- ա. Փավստոս Բուզանդ
- բ. Ագաթանգեղոս
- գ. Եղիշե
- դ. Ղազար Փարպեցի

- 1) ա, բ, դ, գ
- 2) բ, ա, գ, դ
- 3) բ, գ, դ, ա
- 4) գ, ա, բ, դ

**5. Տրված բնութագրումներից ո՞րը 5-րդ դարի հեղինակներից որի ստեղծագործությանն է վերաբերում:**

- |  |  |
|--|--|
| <p>1. Կերտված է հայ կրթական, լուսավորչական գործչի առաջին պատմագեղարվեստական կերպարը:</p> <p>2. Սկսվում է Տրդատ Մեծի մահից և հասնում մինչև 387 թվականը, երբ Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:</p> <p>3. Ընդգրկում է շուրջ հարյուր տարվա պատմություն՝ սկսած Հայաստանի մասնատումից Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:</p> <p>4. Ներկայացվում է հայ նախարարական տոհմերի ծագումնաբանությունը:</p> | <p>ա. Փավստոս Բուզանդ, «Հայոց պատմություն»</p> <p>բ. Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն»</p> <p>գ. Կորյուն, «Վարք Մաշտոցի»</p> <p>դ. Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»</p> |
|--|--|

- 1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
- 4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

**6. Ո՞ր պնդումն է սխալ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերաբերյալ:**

- 1) «Հայոց պատմությունը» Խորենացին գրել է իշխան Սահակ Բագրատունու պատվերով:
- 2) Հայ մատենագրության մեջ այն առաջին գրավոր հուշարձանն է, որն ընդգրկում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ նրա կազմավորումից մինչև հեղինակի ապրած ժամանակները:
- 3) Խորենացին իր պատմությունն ավարտել է նշանավոր «Ողբ հայրենասիրի» գլխով:
- 4) Հեղինակը քննական պատմություն ստեղծելու առաջին փորձն է կատարել՝ ստուգելով, ճշտելով իրեն հայտնի բոլոր փաստերը:

**7. Պնդումներից ո՞րն է սխալ հայ ժողովրդական հին վիպական երգերի (վիպասանքի) վերաբերյալ:**

- 1) Մեզ են հասել ամբողջական տեսքով:
- 2) Հատկապես լայնորեն տարածված են եղել Գողթն գավառում:
- 3) Ասացողները դրանք երգախառն պատմել են փանդիոների նվագակցությամբ:
- 4) Նրանցում առկա են տեղեկություններ հարևան ցեղերի հետ ունեցած հարաբերությունների մասին:

**8. Պնդումներից ո՞րը ճիշտ չէ «Հայկ և Բել» վիպերգի վերաբերյալ:**

- 1) Երբ Տիտանյան Բելին հաջողվում է ամբողջ երկիրը գրավել, Հայկը, չկամենալով հնազանդվել բռնակալին, իր ամբողջ գերդաստանով հեռանում է Բաբելոնից և բնակություն հաստատում Արարադի երկրում:
- 2) Բելը կեղծ խոսքերով շողոքորթում է Հայկին և նրա հետ իբր բարեկամական կապեր հաստատելու համար խնդրում է նրա քրոջ ձեռքը:
- 3) Հայկը Բելի պատգամավորներին հետ է դարձնում՝ խստությամբ մերժելով Բաբելոնի տիրոջ առաջարկները:
- 4) Կռվում, երբ ահաբեկված Բելը հետ է քաշվում և ցանկանում ամուր դիրք գրավել, Հայկը, կռահելով նրա միտքը, նետվում է առաջ, ուժգին արձակում երեքթևյան նետը և սպանում Բելին:

**9. Բառերի տեղադրման n-ր տարբերակն է ճիշտ:**

Երկնէր ..... երկնէր .....,  
 Երկնէր և ծովն ծիրանի.  
 Երկն ի ծովուն ունէր և ..... եղեգնիկ.  
 Ընդ եղեգան փող ..... ելանէր,  
 Ընդ եղեգան փող ..... ելանէր.  
 Եւ ի բոցոյն վազեր ..... պատանեկիկ...

(1. ծովս, 2. գկարմրիկն, 3. երկիր, 4. խարտեաշ, 5. բոց, 6. երկին)

- 1) 6, 3, 2, 1, 5, 4
- 2) 3, 6, 4, 5, 1, 2
- 3) 6, 3, 4, 5, 2, 1
- 4) 3, 6, 4, 2, 1, 5

**10. Տողերի դասավորության n-ր տարբերակն է ճիշտ:**

- 1. Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ
- 2. Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն
- 3. Եւ հանեալ գոսկէօղ շիկափոկ պարանն
- 4. Եւ ձգեալ գոսկէօղ շիկափոկ պարանն
- 5. Ընկեց ի մէջք օրիորդին ալանաց

- 1) 3, 1, 2, 5, 4
- 2) 1, 3, 2, 4, 5
- 3) 1, 2, 3, 4, 5
- 4) 2, 1, 5, 3, 4

**11. Գրիգոր Նարեկացու n-ր տաղից է տրված հատվածը:**

*Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ  
 Ծաւալանայր յառաւօտուն,  
 Երկու փայլակնաձև արեգական նման.  
 Ծողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս:*

- 1) «Տաղ Հայտնության»
- 2) «Տաղ Հարության»
- 3) «Մեղեղի ծննդյան»
- 4) «Տաղ Վարդավառի»

**12. Տողերի n-ր դասավորությունն է ճիշտ:**

- ա. Երփին երփնունակ ծաղկին,  
 շողշողէր պտուղն ի ճղին
- բ. Գոհար վարդն վառ առեալ  
 ի վեհից վարսիցն արփենից
- գ. Ի համատարած ծովէն  
 պղպրջէր գոյնըն այն ծաղկին
- դ. Ի վեր ի վերայ վարսից  
 ծաւալէր ծաղիկ ծովային

- 1) բ, գ, ա, դ
- 2) գ, ա, բ, դ
- 3) բ, դ, գ, ա
- 4) գ, ա, դ, բ



**13. Ո՞ր պնդումն է սխալ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի վերաբերյալ:**

- 1) Բանաստեղծը հանդես է գալիս որպես համայն մարդկության ներկայացուցիչ, որն իր վրա է վերցրել բոլորի մեղքերը:
- 2) Տարբեր գլուխներում առաջ է քաշվում մեղքերից մաքրվելու, ապաշխարելու գաղափարը:
- 3) Որքան շատ են թվարկվում մարդկային մեղքերը, այնքան խորանում են հոգու տառապանքն ու ողբերգությունը:
- 4) Երկն ավարտվում է նրանով, որ մարդու հոգին թաղված է մեղքերի մեջ և փրկություն չունի:

**14. Ըստ «Մասնա ծոեր» էպոսի համահավաք բնագրի՝ ի՞նչ պայման են կապում Մեծ Սիերը և Մըսրա Մելիքը:**

- 1) Ով հաղթի մենամարտում, նա դառնա և՛ Սասունի, և՛ Մըսրա թագավոր:
- 2) Ով շուտ մեռնի, նրա ընտանիքին տիրություն անի մյուսը:
- 3) Ով կարողանա հաղթել Սպիտակ Դևին, մյուսը նրան հարկ վճարի:
- 4) Ում տերությանը վտանգ սպառնա, մյուսը նրան գորքով օգնության հասնի:

**15. Պնդումներից քանիստ՞ն սխալ կա «Մասնա ծոեր» վիպերգի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) «Սասունցի Դավիթ» ճյուղի վերաբերյալ:**

- ա. Որբացած Դավթին ուղարկում են Իսմիլ Խաթունի մոտ, բայց նա կարճ ժամանակ անց չի ընդունում վերջինիս կաթը և սնվում է Սասունից ուղարկված մեղր ու կարագով:
- բ. Պատանի Դավիթը Սասունում սկսում է զբաղվել գառնարածությամբ, նախրապանությամբ ու որսորդությամբ:
- գ. Դավիթը կռվում է Մելիքի անհամար զորքի դեմ, և երբ ահաբեկված Մելիքը հետ է քաշվում և ցանկանում ամուր դիրք գրավել, Դավիթը, կռահելով նրա միտքը, նետվում է առաջ, ուժգին արձակում երեքթևյան նետը և սպանում նրան:
- դ. Դավիթը սպանվում է իր աղջկա թունավոր նետից:
  - 1) մեկում
  - 2) երկուսում
  - 3) երեքում
  - 4) չորսում

**16. «Մասնա ծոեր» էպոսում («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ինչպե՞ս է ավարտվում Դավթի և Մըսրա Մելիքի մենամարտը:**

- 1) Դավիթը Թուր Կեծակլով մեջտեղից երկու կես է անում Մելիքին:
- 2) Դավիթը կոտորում է Մըսրա Մելիքի բանակը, և Մելիքը սարսափահար փախչում է:
- 3) Դավիթն իր զարկերը բաշխում է Մելիքի մորն ու քրոջը, և մենամարտ տեղի չի ունենում:
- 4) Դավիթը զուրգով հարվածում է Մըսրա Մելիքին, և վերջինս հաշտություն է խնդրում:

**17. «Մասնա ծոեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսն է ծնվում՝ ձեռքի ափում մի կաթիլ արյուն սեղմած:**

- 1) Բաղդասարը
- 2) Մեծ Սիերը
- 3) Դավիթը
- 4) Փոքր Սիերը

**18. Նշվածներից ո՞վ ում է անիծում՝ ասելով. «Անմահ ըլնես, անժառանգ»:**

- 1) Քեռի Թորոսը՝ Փոքր Սիերին
- 2) արտատեր պառավը՝ Դավթին
- 3) Դավիթը՝ Փոքր Սիերին
- 4) ակտոր ծերունին՝ Մըսրա Մելիքին

19. Պնդումներից ո՞րն է սխալ Դավթի վերաբերյալ «Մասնա ծներ» էպոսում («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր):

- 1) Սպանում է Սպիտակ Դևին և առյուծին երկու կես անում:
- 2) Վերաշինում է Մարութա վանքը և պատժում Մելիքի հարկահաններին:
- 3) Կռվում է Խանդութի հոր թշնամիների դեմ և ոչնչացնում նրանց:
- 4) Սպանում է Մըսրա Մելիքին և նրա պարտված զորքը ազատ արձակում:

20. «Մասնա ծներ» ժողովրդական էպոսում («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսուհին է, որ, Քուկիկ Ջալալին հեծած, մի քանի տարի քաջաբար հսկում ու կառավարում է երկիրը:

- 1) Ծովինարը
- 2) Դեղձուն-Ծամը
- 3) Խանդութը
- 4) Գոհարը

21. «Մասնա ծներ» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) նշված հերոսներից ո՞րը ունի կինն է:

- |                |                   |
|----------------|-------------------|
| 1. Դեղձուն-Ծամ | ա. Մասունցի Դավիթ |
| 2. Արմաղան     | բ. Փոքր Սհեր      |
| 3. Խանդութ     | գ. Մեծ Սհեր       |
| 4. Գոհար       | դ. Սանասար        |

- 1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
- 2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
- 3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 4) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ

22. Ո՞ր պնդումը ճիշտ չէ «Մասնա ծներ» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ:

- 1) Մինչև Խանդութի հետ ամուսնանալը Դավիթը նշանվում է Չմշկիկ Սուլթանի հետ, ումից ծնված աղջիկն էլ հետագայում թունավոր նետով սպանում է հարազատ հորը:
- 2) Քանի որ Փոքր Սհերը չի կարողանում սպանել Չմշկիկ Սուլթանին և հոր վրեժը լուծել, այդ պատճառով փակվում է Ագռավաքարում:
- 3) Կրտսեր Մսրա Մելիքի հայրը Մեծ Սհերն է:
- 4) «Մասնա ծները» բաղկացած է չորս ճյուղից, որոնցից յուրաքանչյուրը վերնագրված է տվյալ ճյուղի գլխավոր հերոսի անունով:

23. Բաղդադում ո՞ւմ գերեզմանին է այցելում Փոքր Սհերը «Մասնա ծներ» էպոսում («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր):

- 1) Գագիկ թագավորի
- 2) Բաղդասարի
- 3) Քեռի Թորոսի
- 4) Չենով Հովանի

**24. Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Հայ իրականության մեջ առակագրությունը ունեցել է բացառապես գրական ծագում:
- 2) Մխիթար Գոշի առակներում առանցքայինը կենտրոնացված միապետության գաղափարն է, հպատակների հնազանդ լինելը պետության գլուխ կանգնած թագավորին:
- 3) Վարդան Այգեկցին հայ գրականության մեջ սկզբնավորել է առակավոր ճառի տեսակը:
- 4) Մխիթար Գոշն ու Վարդան Այգեկցին օգտվել են ոչ միայն հայկական նյութից, այլև Եզոպոսի առակներից:

**25. Վարդան Այգեկցու առակների աղբյուրների վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Իբրև աղբյուր՝ օգտագործել է Եզոպոսի առակներից:
- 2) Առակների հիմնական մասի աղբյուրը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է:
- 3) Առակների մի մասը ինքն է հորինել:
- 4) Որոշ առակներ վերցված են հայ ժողովրդական բանահյուսությունից:

**26. Չախ կողմում նշված են Վարդան Այգեկցու առակները, իսկ աջում՝ դրանցից քաղված մեկական հատված. ո՞ր տարբերակի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

- ա. «Ամբողջ աշխարհի բարեկեցությունն են ես, որովհետև ես եմ վաստակում, չարչարվում ու հոգնում, և ապա դու և քո թագավորն ուտում եք: Եթե ես չվաստակեմ, դու և քո թագավորն իսկույն կմեռնենք»:
- բ. «Ո՛վ դժբախտ, ո՞ր ես գնում, չէ՞ որ քեզ անմիջապես կսպանեն, քանի որ փախչել չես կարող»:
- գ. «Քո հայրը վատ մարդ էր. ես անիծեցի, և նա մեռավ: Դու մատեցիր նրա տեղը՝ ավելի խիստ չար: Եվ այժմ ես վախենում եմ, որ մեռնես, և քո որդին քեզանից ավելի չար լինի»:

- 1. «Իմաստուն զինվորը»
- 2. «Այրի կինն ու իշխանը»
- 3. «Եզր և ձին»

- 1) ա-3, բ-1, գ-2
- 2) ա-2, բ-3, գ-1
- 3) ա-3, բ-2 գ-1
- 4) ա-2, բ-1, գ-3

**27. Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Իր բանաստեղծություններում Ֆրիկը ազգային բողոքը միահյուսել է սոցիալական անարդարությունների դեմ ուղղված գանգատին:
- 2) Հայ հին բանահյուսության նմուշների՝ առասպելների, վիպերգերի հիմնական մասը գրի է առնվել Մովսես Խորենացու կողմից:
- 3) «Սասնա ծռեր» էպոսի պատումներից մեկն առաջին անգամ գրի է առել Գարեգին Սրվանձտյանը:
- 4) Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկն ունի հայրենասիրական բովանդակություն:

**28. Փակագծում տրված բառերի տեղադրման ո՞ր հերթականությունն է ճիշտ:**

*Ես աչք ու դու լոյս, հոգի՛, առանց լոյս՝ աչքըն .....  
 Ես ձուկ ու դու ջուր, հոգի՛, առանց ջուր՝ ձուկըն .....  
 Երբ ձուկն ի ..... հանեն ի այլ ..... ձրգեն, նայ ապրի,  
 Երբ զիս ի քենե՛ գատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի:*

(1. ջրէն, 2. խաւարի, 3. ջուր, 4. մեռանի)

- 1) 2, 4, 1, 3
- 2) 2, 4, 3, 1
- 3) 4, 2, 1, 3
- 4) 4, 3, 2, 1

**29. Փակագծում տրված բառերի տեղադրման n-ր հերթականությունն է ճիշտ:**

*Երբ սերն ի յաշխարհ եկաւ, եկաւ իմ սիրտըս .....  
 Ապա յիմ սրտէս ի դուրս՝ յերկրրէ յերկիր .....  
 Եկաւ ի գլուխս ելաւ, ի ըղեղս ելաւ .....  
 Աչիցս արտաստօք ուզեց, նա արիւն ի վար .....*

(1. թառեցաւ, 2. վաթեցաւ, 3. բնակեցաւ, 4. թափեցաւ)

- 1) 2, 4, 1, 3
- 2) 4, 3, 1, 2
- 3) 3, 4, 2, 1
- 4) 3, 4, 1, 2

**30. Ո՞ր հատվածն է Նահապետ Քուչակի «Ես աչք ու դու լոյս, հոգի» հայրենից:**

- 1) Ապա յիմ սրտէս ի դուրս՝ յերկրրէ յերկիր թափեցաւ...
- 2) Երբ զիս ի քենէ գատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի:
- 3) Երեկ ցորեկով բարով տանեիմ մէկ եար մի ճորով...
- 4) Մըտիկ իմ եարիմ արեք, զինչ հագեր՝ ամենն է կանանչ...

**31. Տողերի դասավորության n-ր տարբերակն է ճիշտ:**

- 1. Թուխ ամպն այլ բամպակ արե՛ք, ի ծաւէն դերձան քաշեցէ՛ք
- 2. Արեւն իւր երեսք արե՛ք, գլուսընկան աստառ ձեւեցէ՛ք
- 3. Քանի՛ ու քանի՛ ասեմ. «Ձիմ եարին կապան կարեցէ՛ք
- 4. Աստղերն այլ կոճակ արե՛ք, զիս ի ներս ողկիկ շարեցէ՛ք»

- 1) 1, 3, 4, 2
- 2) 3, 2, 4, 1
- 3) 3, 1, 2, 4
- 4) 3, 2, 1, 4

**32. Պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) Հայ ժողովրդական էպոսն ունեցել է երգվող հատվածներ:
- 2) Ֆրիկը 13-րդ դարի բանաստեղծ է, որից մեզ հասել են սիրային, խրատական և գանգատական բանքեր:
- 3) Քուչակյան հայրենները տասնհինգվանկանի բանաստեղծական չափով, հիմնականում քառատող բանաստեղծություններ են:
- 4) Մայր-Նովայից մեզ հասած ավելի քան 200 խաղերը գրված են հայերեն, բուրբերեն և վրացերեն:

**33. Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության ո՞ր տողն է բաց թողած:**

*Միա՛ իմ գործ, սիւս՛ դրոշ,  
Շուտ ճի՛ հեծիր քաջի պես,  
Գնա՛ փրկել մեր հայրենիք,  
..... :*

- 1) Բայց իմ հոգին՝ քեզ ընկեր
- 2) Պատերազմի վառ հանդես
- 3) Թո՛ղ կործանվի Ավստրիան
- 4) Եթե կանայք այսպես են

**34. Ո՞ր պնդումն է սխալ Միքայել Նալբանդյանի ստեղծագործության վերաբերյալ:**

- 1) «Մանկության օրեր» բանաստեղծության հերոսը կարծում է, որ կտրիճի ձեռքին ոչ թե քնար, այլ սուր է հարկավոր:
- 2) «Ազատություն» բանաստեղծությունը առաջին անգամ տպագրվել է գրողի «Հիշատակարան»-ի էջերում:
- 3) «Ազատություն» բանաստեղծության մեջ ճակատագիրը պոետին գուշակում է կյանքի լուսավոր ուղի:
- 4) «Կրիտիկա»-ն նվիրված է Պերճ Պոռոյանի «Սուս և Վարդիթեր» վեպին:

**35. Պնդումներից ո՞րն է ճիշտ Միքայել Նալբանդյանի վերաբերյալ:**

- 1) Հայ գրական քննադատության հիմնադիրներից է:
- 2) Առաջին անգամ կիրառել է հայրենի չափը:
- 3) Աշխարհաբարով գրված առաջին գեղարվեստական ստեղծագործության հեղինակն է:
- 4) Գրել է միայն չափածո երկեր:

**36. Ո՞րն է Պետրոս Դուրյանի գլխավոր մտահոգությունը «Իմ ցավը» բանաստեղծության մեջ:**

- 1) երիտասարդ տարիքում մեռնելը
- 2) առանց սիրո վայելքի կյանքից հեռանալը
- 3) ճակատագրի պարտադրած մշտական ցավն ու տառապանքը
- 4) թշվառության մեջ գտնվող հայրենիքին առանց օգնած լինելու մեռնելը

**37. Ո՞ր հեղինակը որ դարաշրջանում է ապրել ու ստեղծագործել:**

ա. Նահապետ Քուչակ	1. 18-րդ դար
բ. Մայաթ-Նովա	2. 13-րդ դար
գ. Հակոբ Պարոնյան	3. 19-րդ դար
դ. Խաչատուր Աբովյան	4. 16-րդ դար

- 1) ա-4, բ-2, գ-3, դ-1
- 2) ա-4, բ-2, գ-1, դ-3
- 3) ա-2, բ-4, գ-1, դ-3
- 4) ա-4, բ-1, գ-3, դ-3

**38. Հակոբ Պարոնյանի նշված ստեղծագործություններից որի՞ ժանրային պատկանելությունն է սխալ նշված:**

- 1) «Պաղտասար աղբար» (կատակերգություն)
- 2) «Ազգային ջոջեր» (դիմանկարների շարք)
- 3) «Քաղաքավարության վնասները» (երգիծական վեպ)
- 4) «Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ» (ակնարկների շարք)

**39. «Մեծապատիվ մուրացկանները» վեպն սկսելով սովորական պատմությամբ՝ ո՞ւմ է հակադրվում Հակոբ Պարոնյանը:**

- 1) կլասիցիստ գրողներին
- 2) ռոմանտիկ գրողներին
- 3) լրագրողներին
- 4) բանաստեղծներին

**40. Ո՞րն է Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի գլխավոր նպատակադրումը:**

- 1) ազգի մտավորականներին մուրացկանության համար մեղադրելը
- 2) ազգի մեծահարուստ մարդկանց բթամտությունը ցույց տալը
- 3) մտավորականների թշվառ վիճակի նկատմամբ ազգային մեծատունների անտարբերությունը ցույց տալը
- 4) գլխավոր հերոսի ամուսնության ձախողման վերաբերյալ զվարճալի պատմություն ստեղծելը

**41. Ո՞ր խոսքը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի որ հերոսինն է:**

- 1. «Արդարև, մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր համարելու է ձեզ պես պատվական ազգայինի մը... Հայրենասեր անձ մը... Ազգասեր, ուսյալ, կրթյալ... Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվադեմ մեկ մը իր մեջ ունենալու համար»:
- 2. «Ես ինքզինքս չէի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կկարծե այս խմբագիրն, բայց հարկավ ան ինձմե աղեկ գիտե իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբագիր մ'է և ուսումնական է...»:
- 3. «Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կռվեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ, ատելությունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ, միաը բանջար,դենին դեմ...»:
- 4. «...Թաղականին գործն ալ այսօր լնցուցինք. կիրակի օրը քվեարկությունը պիտի կատարվի, և բոլոր անդամները պատվավոր մարդիկ պիտի ըլլան»:

- ա. խմբագիր
- բ. բանաստեղծ
- գ. Մանուկ աղա
- դ. Աբիսողոմ աղա

- 1) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
- 2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 3) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
- 4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ

**42. Ո՞ր պնդումն է սխալ Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի վերաբերյալ:**

- 1) Վեպի սկզբում հեղինակը հակադրվում է բոլոր նրանց, ովքեր հակում ունեն իրենց երկերը սկսելու արկածային, խորհրդավոր տեսարաններով:
- 2) Վիպական կառույցում կարևոր դեր ունեն հեղինակային սակավաթիվ մեկնաբանությունները:
- 3) Մեծապատիվ մուրացկաններից յուրաքանչյուրի այցը Աբիսողոմ աղային ըստ էության ծառայում է որպես կերպարների երկկողմանի բացահայտման միջոց:
- 4) Գրողն իր քննադատության ոչնչացնող ծաղրն ուղղում է բացառապես գոյակերպը քարշ տալու համար արժանապատվությունը կորցրած մեծապատիվ մուրացկանների դեմ, որոնց հիմնականում անուն էլ չի տալիս՝ շեշտելով նրանց դիմազուրկ էությունը:

**43. Ո՞ր խոսքը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի որ հերոսինն է:**

- |  |  |
|--|--|
| <p>1. «...Բայց այս տեսակ աղջիկները գործ չեն տեսներ տունը. առտվընե մինչև իրիկուն ծունկ ծունկի վրա կը դնեն և կերգեն, կը պարեն և կամ բոլոր օրը կը պտտին. հիմակվընե ըսեմ, վերջեն ինձի պատճառ չբռնես... անանկներ ալ կան, որ իրենց ուզած մեկը կը սիրեն և շատ անգամ անոր հետ գեղ մը կը փախչին...»:</p> <p>2. «...Անոնք, որ գիրքով կգրադին, թշվառությամբ կգրադին: Հառաջադիմություն կը պոռանք և ետ ետ կերթանք, լույս կը պոռանք և դեպի խավար կերթանք, ...ապագա կըսենք և դեպի անցյալ կը վազենք»:</p> <p>3. «Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կռվեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրչի դեմ, ...կրակը ջուրին դեմ, միսը բանջարեղենին դեմ. իսկ հիմա անցան այն ժամանակները»:</p> <p>4. «Միտքդ ի՞նչ է, եղբայրս, ես քեզի բան մը չըրի, ինչ կուզես ինձմե, գնա քեզի բարկացնողին գրուցե այդ խոսքերը...»:</p> | <p>ա. Արիստոտել աղա<br/>բ. բանաստեղծ<br/>գ. վարժապետ<br/>դ. Շուշան</p> |
|--|--|

- 1) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
- 2) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
- 3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
- 4) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ

**44. Պնդումներից քանի՞սն են ճիշտ:**

- Նարեկացու տաղերում առաջին անգամ կիրառվել է հայրենի չափը:
- Ֆրիկի պոեզիայում դրսևորվել է ոչ միայն սոցիալական, այլև ազգային բողոքի թեման:
- Միամանթոյի բանաստեղծական ժողովածուներից են «Գլուցագնորենը» և «Հայորդիները»:
- «Հացին երգը» Վարուժանի վերջին ժողովածուն է, որը հրատարակվել է հետմահու:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) բոլորը

**45. Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են Բաֆֆու «Սամվել» պատմավեպից:**

- 1) Սահակ Պարթև, Աշխեն, Մուշեղ Մամիկոնյան, Համազասպուհի
- 2) Մերուժան Արծրունի, Հովհաննես կաթողիկոս, Արշակ Երկրորդ, Դրաստամատ
- 3) Որմիզդունի, Վասակ Սյունի, Տաճատուհի, Հուսիկ
- 4) Շապուհ արքա, Փառանձեմ թագուհի, Գոռ իշխան, Սամվել

**46. Ո՞ր պնդումն է սխալ Բաֆֆու «Սամվել» վեպի վերաբերյալ:**

- 1) Վեպում գրողը փորձել է վերստեղծել 4-րդ դարի քաղաքական անցքերի կենդանի պատկերը:
- 2) Մերուժան Արծրունին գլխավոր կերպարներից մեկն է՝ ազգության դավաճան, որի ճակատագիրը վեպում մնում է անորոշ:
- 3) Վեպի գլուխներից մեկում Բաֆֆին պատկերում է Անհուշ բերդում կալանված հայոց արքայի ողբերգական ինքնասպանությունը:
- 4) Վեպի պատերազմական դրվագում Սամվելը շտապում է հասնել հոր վրանը, որպեսզի վրեժով լցված լեռնականները չպղծեն հոր դիակը, պատառ-պատառ չանեն ու ռազմի դաշտով ցրիվ չտան:

**47. Ո՞ր պնդումը ճիշտ չէ Մերուժան Արծրունու կերպարի վերաբերյալ (ըստ Բաֆֆու «Սամվել» վեպի):**

- 1) Մերուժանը դրամատիկ կերպար է, որը տառապագին մտորումներով փորձում է արդարացնել իր արարքը:
- 2) Նա կշտամբում է իրեն՝ կամքի թուլություն ցուցաբերելու և Որմիզդուխտի նկատմամբ սերը հաղթահարել չկարողանալու համար:
- 3) Մերուժան Արծրունին այդպես էլ հետ չի կանգնում իր խոտոր ուղուց:
- 4) Թեև դավաճանը կուրացած է հայրենասեր ուժերի դեմ տաժած իր ատելությունից, բայց կռվի դաշտում հրաժարվում է մոր և նրա զորախմբի դեմ կռվելուց:

**48. Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչներից է Մուրացանը:**

- 1) կլասիցիզմի
- 2) ռոմանտիզմի
- 3) սիմվոլիզմի
- 4) ռեալիզմի

**49. Ո՞րն է Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» վեպի պատմական հիմքը:**

- 1) հայ ժողովրդի հաղթական կռիվները արաբական զավթիչների դեմ 10-րդ դարում
- 2) 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի իրադարձությունները
- 3) հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին
- 4) 4-5-րդ դարերի իրադարձությունները

**50. Ո՞ր ստեղծագործության գաղափարներից է հետևյալը. *այն, ինչ թույլատրելի է հասարակ մահկանացուներին, արգելված է թագավորին:***

- 1) «Սամվել» (Բաֆֆի)
- 2) «Վարդանանք» (Դ. Դեմիրճյան)
- 3) «Վերք Հայաստանի» (Խ. Աբովյան)
- 4) «Գևորգ Մարգալետունի» (Մուրացան)

**51. Գրական ո՞ր հերոսի խոսքերն են.**

*«Երկնքի բոլոր աստղերը կկողոպտեի՝ վարձատրելու համար այն մարդուն, որը կկարողանար մոռացնել տալ իմ անցյալը»:*

- 1) Աշոտ Երկաթի (Մուրացան, «Գևորգ Մարգալետունի»)
- 2) Մերուժան Արծրունու (Բաֆֆի, «Սամվել»)
- 3) Վանահոր (Լ. Շանթ, «Հին աստվածներ»)
- 4) Վասակ Սյունու (Դ. Դեմիրճյան, «Վարդանանք»)

**52. Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» պատմավեպի ո՞ր հերոսի ուխտն է.**

*«Ես չեմ վերադառնա իմ ընտանյաց գիրկը այնքան ժամանակ, քանի դեռ վերջին հազարացին հալածված չէ հայրենիքի սահմաններից»:*

- 1) Աշոտ Երկաթի
- 2) Գևորգ Մարգալետունու
- 3) Վահրամ սեպուհի
- 4) Յիկ Ամրամի



**53. Ո՞ւմ բանակի դեմ է ճակատամարտում Գ-Լորգ Մարզպետունին Մուրացանի համանուն վեպում:**

- 1) Նյուսալավուրտի
- 2) Բեշիրի
- 3) Հասան խանի
- 4) Արտաբանի

**54. Մուրացանի «Գ-Լորգ Մարզպետունի» վեպի ո՞ր հերոսի խոսքերն են.**

*«Ամփոփիր ինձ միջնաբերդի առաջ՝ ժայռերի բարձրության վրա, որտեղից կարողանամ հսկել Աշոտ Բռնավորի շիրիմին, որպեսզի նա յուր շուրջն ամփոփված սրբերին չդավաճանե»:*

- 1) Աշոտ Երկաթի
- 2) Յիկ Ամրամի
- 3) Գ-Լորգ Մարզպետունու
- 4) Սահակ Սևադայի

**55. Մուրացանի «Գ-Լորգ Մարզպետունի» վեպի վերջում ո՞ւմ են տանում Կարս, ցույց տալիս այն եկեղեցին, որը նա կամենում էր վրաց ծեսով օծել, և այնտեղ կուրացնում:**

- 1) Աշոտ Բռնավորին
- 2) Գուրգենին
- 3) Բերին
- 4) Նսրրին

**56. Մուրացանի «Գ-Լորգ Մարզպետունի» պատմավեպի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Աշոտ Երկաթի կյանքի ու պայքարի առաջին շրջանը ներկայացված է Սահականույշի և Սեդայի զրույցների միջոցով:
- 2) Սահականույշ թագուհին գուրկ չէ դշխյական փառասիրությունից:
- 3) Մուրացանը Հովհաննես կաթողիկոսին ներկայացրել է որպես անձնագրի և հայրենասեր գործչի:
- 4) Գ-Լորգ Մարզպետունին չի ընդունում Աշոտ Երկաթի վարքագիծը, բայց ծառայում է նրան որպես երկրի թագավորի:

**57. Մուրացանի «Գ-Լորգ Մարզպետունի» վեպի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ կա սխալ:**

- 1) Մուրացանը վեպում պատկերում է հերոսների հոգեկան ապրումները, Գ-Լորգ Մարզպետունու տագնապները իր միակ որդու՝ Գոռ իշխանիկի ճակատագրի համար:
- 2) «Գ-Լորգ Մարզպետունի» վեպի կենտրոնական դեմքը Գ-Լորգ իշխանն է, որը հանուն հայրենիքի ջանք չի խնայում երկրի կենտրոնախույս ուժերը միավորելու համար:
- 3) Մուրացանն իր վեպում պատկերել է 10-րդ դարի դեպքերը՝ հայերի պայքարը հագարացիների դեմ. օգտվել է պատմիչներ Հովհաննես Դրասխանակերտցու ու Թովմա Արծրունու երկերից:
- 4) Վեպում Մուրացանը մեծ տեղ է հատկացրել հերոսների՝ Սահականույշի և Սեդայի, Գ-Լորգ Մարզպետունու և Սահակ Սևադայի, Մարզպետունու և Ասպրամի, Մարզպետունու և Յիկ Ամրամի երկխոսություններին:

**58. Պնդումներից քանի՞սն են ճիշտ Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոս» վեպի կերպարների վերաբերյալ:**

- Ալիմյանի դուստրը՝ Մարթան, կեղծ է հոգով, նյութամուլ ու քանասարկու, ինչպես ամուսինը:
- Շուշանիկը կարեկից է, ազնվաբարո, սրտացավ և՛ օտարի, և՛ մերձավորի հանդեպ:
- Ոսկեհատը դժբախտ է համարում իրեն, քանի որ որդիներից ոչ մեկը օրինավոր կյանքով չի ապրում, իսկ նրա վիճակը առավել ծանրացնում է դուստրը՝ մորը գրգռելով հարսի և մեծ եղբոր դեմ:
- Անուշ Ղուլամյանը, դառնալով Միքայելի հերթական արկածի առարկան, կործանում է իր ընտանիքը, խայտառակում և՛ իրեն, և՛ եղբորը:

- 1) բոլորը
- 2) երեքը
- 3) ոչ մեկը
- 4) երկուսը

**59. Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչն է Ալեքսանդր Շիրվանզադեն:**

- 1) կլասիցիզմի
- 2) ռոմանտիզմի
- 3) ռեալիզմի
- 4) սիմվոլիզմի

**60. Ո՞րն է Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոս» վեպի հանգույցը:**

- 1) միլիոնատեր Մարկոս Ալիմյանի մահվան և հոգեհանգստի պատմությունը
- 2) Միքայելի կապը «ոսկի երիտասարդության» հետ
- 3) Միքայելի և Մարութխանյանի կազմած կեղծ կտակը
- 4) միլիոնատեր Մարկոս Ալիմյանի թողած կտակը

**61. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոս» վեպի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) «Քաոս» վեպի գրությանը նախորդել է նյութի ուսումնասիրության երկարատև շրջան:
- 2) Վեպի հիմքում Բաքվի հարուստ ընտանիքներից մեկում ունեցվածքի շուրջ ծագած վեճի իրական պատմությունն է:
- 3) Գրողի պատկերած քաոսը վերաբերում է միայն Ալիմյանների ընտանիքի անդամներին:
- 4) «Քաոս» վեպով գրողը մի նոր աստիճանի բարձրացրեց ռեալիստական վեպի արվեստը մեզանում, ձևավորեց գեղարվեստական լեզվի նոր որակ:

**62. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոս» վեպի կերպարների մասին ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Հրդեհի տեսարանում Սմբատը փրկում է ոչ միայն իր երեխաների, այլև բանվորներից մի քանիսի կյանքը:
- 2) Միքայելը ինչ-ինչ դրական գծերով առանձնանում է «ոսկի երիտասարդության» իր միջավայրից:
- 3) Անտոնինա Իվանովնան, շփվելով բանվորական միջավայրի հետ, փոխում է իր կարծիքը հայերի մասին:
- 4) Ինժեներ Սուլյանը սիրահետում էր թեթևամիտ Մարթային:

**63. Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոս» վեպից:**

- 1) Մարկոս Ալիմյան, Միքայել, Արշակ, Բագրատ
- 2) Սմբատ Ալիմյան, Մարութխանյան, Շուշանիկ, Երանուհի
- 3) Չուպրով, Ռասուլ, Կարապետ, Սաղաթել
- 4) Անտոնինա Իվանովնա, Ոսկեհատ, Անուշ, Մարթա

**64. Ո՞րն է Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի հանգույցը:**

- 1) Բագրատը համոզում է Մարգարիտին գողանալ Օթարյանի մոտ գտնվող փաստաթղթերը:
- 2) Անդրեաս Էլիզբարյանը այրում է ճշմարտությունը բացահայտող փաստաթղթերը:
- 3) Օթարյանը պարզում է, որ Էլիզբարյանը կողոպտել է իր հորը, և ցանկանում է վերականգնել իր իրավունքները:
- 4) Մարգարիտն ինքնասպանություն է գործում:

**65. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպի հերոսուհի Անտոնինա Իվանովնայի վերաբերյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:**

- 1) Բաժանվում է Սմբատից և եղբոր հետ մեկնում Մոսկվա:
- 2) Հաշտվում է Սմբատի հետ և նրա ու Ռսկեհատի հետ ապրում է հանքերում:
- 3) Տեղափոխվում է հանքերը, սովորում է հայոց լեզու, և ինքն ու Շուշանիկը նվիրվում են մարդկանց լուսավորելու գործին:
- 4) Մոռանում է ուսանողական տարիներին դավանած իր սկզբունքները և հափշտակվում միլիոններով, ինչպես Սմբատը:

**66. Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի սյուժեին:**

- 1) Անուշը Սարոյի հետ փախչում է սարերը, հետո վերադառնում է հոր տուն:
- 2) Մոսին հետապնդում ու սպանում է Սարոյին:
- 3) Անուշը խելագարվում է և ինքնասպան է լինում՝ նետվելով Դեբեդի ալիքների մեջ:
- 4) Աղբյուրից ուշ վերադառնալու համար մայրը պատժում է Անուշին և արգելում Սարոյի հետ հանդիպել:

**67. Ո՞վ է տրված բանաստեղծական հատվածի հեղինակը.**

*Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան,  
Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.  
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,  
Ոչ սիրած կնկա տված բաժակին...*

- 1) Հովհաննես Թումանյանը
- 2) Ավետիք Իսահակյանը
- 3) Եղիշե Չարենցը
- 4) Հովհաննես Շիրազը

**68. Ո՞ր բառն է բաց թողած:**

*Ազգեր են եկել, ազգեր գնացել և չեն ըմբռնել իմաստը նրրա.  
..... են հասկացել դույզն-ինչ և թոթովում են հնչյուններն անմահ...*

- 1) Երգասաններն
- 2) Բանաստեղծներն
- 3) Սիրահարներն
- 4) Երաժիշտներն

**69. Ո՞ր հատվածը Հովհաննես Թումանյանի որ ստեղծագործությունից է:**

- |   |   |
|---|---|
| <p>ա. Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով<br/>Պիտի գովենք քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով...</p> <p>բ. Անց է կենում դարձյալ տարին:<br/>Նայում է կույսն ամեն օր,<br/>Ոչ մի սարից, ոչ մի ճամփին<br/>Չի երևում ձիավոր:</p> <p>գ. Ու մարդասպանը դուրս եկավ ձորից,<br/>Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.<br/>Սարսափ է կաթում արնոտ աչքերից,<br/>Եվ կերպարանքը փոխված է բոլոր:</p> <p>դ. Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ<br/>Աշխարհի վրա, Ջավախքի վրա,<br/>Ավերակ բերդին, սև ամպի նրման,<br/>Ծուխն ու թռչնամին չոքել են ահա:</p> | <p>1. «Անուշ»</p> <p>2. «Թմկաբերդի առումը»</p> <p>3. «Փարվանա»</p> <p>4. «Հայրենիքիս հետ»</p> |
|---|---|

- 1) 1- գ, 2- դ, 3- բ, 4- ա
- 2) 1- դ, 2- բ, 3- ա, 4- գ
- 3) 1- բ, 2- դ, 3- գ, 4 -ա
- 4) 1- գ, 2- դ, 3 -ա, 4 -բ

**70. Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի դրվագներից ո՞րը բազմամարդ տեսարան չէ:**

- 1) Սարոյի մոր ողբը
- 2) Համբարձման տոնը և վիճակ հանելը
- 3) Սարոյի և Մոսիի կոխ բռնելը
- 4) Անուշի խելագարության տեսարանը

**71. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*Անմուրագ մեռած սիրահարների  
Աստղերը թռած իրար են գալիս,  
Գալիս, կարոտով մի հեղ համբուրվում  
Աշխարհից հեռու, լազուր կամարում:*

- 1) «Բիրլիական» (Հ. Շիրազ)
- 2) «Անուշ» (Հ. Թումանյան)
- 3) «Հավերժական սերը» (Ավ. Իսահակյան)
- 4) «Արա Գեղեցիկ» (Ն. Չարյան)

**72. Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի ո՞ր հերոսն է պոեմի դրվագներից մեկում նկարագրվում հետևյալ կերպ.**

*Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.  
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,  
Եվ կերպարանքը փոխված է բոլոր:*

- 1) Մոսին
- 2) Անուշը
- 3) Սարոն
- 4) ծերունին

**73. Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմում ո՞վ է Անուշին խորհուրդ տալիս.**

*Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝  
Մայիս կգա, մի քիչ կաց,  
Թե լալիս ես՝ յարդ ես ուզում,  
Ա՛խ նա գնաց, նա գնա՛ց...*

- 1) ծերունին
- 2) անցվոր ախպերը
- 3) ընկերուհին
- 4) Անուշի մայրը

**74. Ի՞նչ երազ է տեսնում Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հերոս Թաթուլ իշխանը մատնության գիշերը:**

- 1) Թմկաբերդը հիմնահատակ քանդվել է:
- 2) Տին ու ագռավ լցվել են Թմկաբերդ:
- 3) Վիշապօձը փաթաթվել է բերդին:
- 4) Նաղիր շահը սպանում է իրեն՝ Թաթուլին:

**75. Ո՞ր հատվածը Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմից չէ:**

- 1) Ու կովի դաշտում շահի առաջին Արին մի անգամ գովքը սիրունի. Նրան՝ իր տեսքով, հասակով, ասին, Չի հասնի չքնաղ հուրին Իրանի:
- 2) Պտույտ է գալի ծաղիկ տիրուհին, Անցնում է, հսկում սեղաններն ամեն, Հորդորում, խնդրում, որ ուրախ լինին, Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:
- 3) Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան, Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին. Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության, Ոչ սիրած կնկա տված բաժակին...
- 4) Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին. Նա՛ կավատ, վարար, մի չքնաղ դժոխք, նրա բերանով Իբլիսն է խոսում:

**76. Ո՞ր տողով է սկսվում Հովհաննես Թումանյանի «Գիքորը» պատմվածքը:**

- 1) «Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվավ բազազ Արտեմի տանը»:
- 2) «Մի խաղաղ առավոտ էր, մի տխուր առավոտ»:
- 3) «Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք»:
- 4) «Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել»:

**77. Հովհաննես Թումանյանի նշված ստեղծագործություններից ո՞րը ինչ ժանրի գործ է:**

- |                 |             |
|-----------------|-------------|
| ա. «Անուշ»      | 1. բայլաղ   |
| բ. «Զաջ Նազարը» | 2. պատմվածք |
| գ. «Փարվանա»    | 3. պոեմ     |
| դ. «Գելը»       | 4. հեքիաթ   |
- 1) ա-4, բ-1, գ-3, դ-2
  - 2) ա-3, բ-4, գ-1, դ-2
  - 3) ա-3, բ-1, գ-2, դ-4
  - 4) ա-4, բ-2, գ-3, դ-1

**78. Տրված հատվածներից ո՞րն է Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից:**

- 1) Ե՛վ անապատում, և՛ հավերժական  
Անուրջում հոգիս կլսե, կզգա  
Դողանջը զանգի տիեզերական  
Եվ մեղմ կզգվե տատասկին դժնյա:
- 2) Գնա՛, քարավան, ինձ հետդ քա՛րշ տուր  
Օտար, ամայի ճամփեքի վրա.  
Ուրտեղ կհոգնիս՝ գլուխս վար դիր  
Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
- 3) Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին  
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:  
Դողանջն է միայն ձիգ քարավանի  
Հեռավոր, անհայտ ճանապարհների  
Հրապույրներով դյուքում իմ հոգին  
Թափառումների տենչով անմեկին...
- 4) Գիշերն ահարկու՛՝ և՛ սև, և՛ հսկա, մի չղջիկի պես թևերը փռեց,  
Անձիր թևերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ:

**79. Տրված հատվածներից ո՞րը Ավետիք Իսահակյանի որ ստեղծագործությունից է. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

1. Տիեզերական հազարահանդես դու մեծ խրախճանք, բարի՛ արեգակ,  
Ահա իմ հոգին՝ մի ծարավ բողբոջ, թափի՛ր նրա մեջ զինիդ անապակ:
2. Տեսան շքեղ մեր սալազան, անընկճելի ազատ ոգին,  
Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացրած Թուր-Կայծակին:
3. Այդ հողն է նրան ծնել ու սնել,  
Իր մայրն ու հայրը այդ հողն են դառել:
4. Դու պիտի հնչե՛ս, հնչես հաղթական,  
Իմ հի՛ն հայ լեզու՛ քա՛ղցր ու սրտաքո՛խ:

- ա. «Մեր պատմիչները և մեր գուսանները»
- բ. «Հայրենիքիս»
- գ. «Աբու-Լալա Մահարի»
- դ. «Հայրենի հողը»

- 1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 2) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
- 3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

**80. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*Եվ ողբացին լալահառաչ դժխեմ բախտը Հայաստանի  
Եվ հուսացին արդարության մի խուլ աստծու դատաստանի:*

- 1) «Հոգեհանգիստ» (Հ. Թումանյան)
- 2) «Մատյան ողբերգության» (Գրիգոր Նարեկացի)
- 3) «Մեր պատմիչները և մեր գուսանները» (Ավ. Իսահակյան)
- 4) «Դանթեական առասպել» (Ե. Չարենց)

**81. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*«Ու քանի որ փող կա, մարդ չկա, քանի որ իմ ու քու կա, սեր ու խիղճ չկա: Էստեղից էլ հարուստ ու աղքատ, գրկող ու գրկվող, բանտ, արյունահեղություն»:*

- 1) «Սպիտակ ձին» (Ա. Բակունց)
- 2) «Գելը» (Հ. Թումանյան)
- 3) «Համբերանքի չիբուխը» (Ավ. Իսահակյան)
- 4) «Նեղ օրերից մեկը» (Նար-Դոս)

**82. Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի վերաբերյալ պնդումներից որի՞ մեջ սխալ կա:**

- 1) Աբու-Լալա Մահարին, դառնացած մարդկանցից, մտովի հեռանում է Բաղդադից, երազում է գնալ դեպի անապատը:
- 2) Պոեմն ավարտվում է դեպի արևը թռչող քարավանի պատկերով:
- 3) Պոեմը գրված է քսանվանկանի տողերով և կազմված է գլուխներից, որոնք կոչվում են սուրահներ:
- 4) Հերոսը բողոքում է աշխարհի անարդար կառուցվածքի դեմ, բայց չի ժխտում կյանքի գեղեցկությունները:

**83. Ինչպե՞ս է ավարտվում Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը:**

- 1) Հերոսը անդարձ հեռանում է անապատ՝ դառնալով երդվյալ մարդատյաց:
- 2) Թռչում է դեպի անմահ արևը, որը նոր կյանքի և ազատության խորհրդանիշն է:
- 3) Վերագնահատելով իր սպրած կյանքը՝ վերադառնում է Բաղդադ:
- 4) Իր մահկանացուն կնքում է օձերի և կարիճների բների մոտ:

**84. Ավետիք Իսահակյանի տրված ստեղծագործություններից ո՞րը արձակ չէ:**

- 1) «Լիլիթ»
- 2) «Հավերժական սերը»
- 3) «Սաադիի վերջին գարունը»
- 4) «Համբերանքի չիբուխը»

**85. Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչն է Գրիգոր Չոփրապը:**

- 1) կլասիցիզմի
- 2) ռոմանտիզմի
- 3) ռեալիզմի
- 4) սիմվոլիզմի

**86. Ո՞րը Գրիգոր Չոփրապի նորավեպերի ժողովածուներից չէ:**

- 1) «Խղճմտանքի ձայներ»
- 2) «Սեր թաղը»
- 3) «Կյանքը ինչպես որ է»
- 4) «Լուռ ցավեր»

**87. Ինչո՞ւ էր Գրիգոր Չոփրապի «Չարություն» նորավեպի համանուն հերոսը գողությանը զբաղվում:**

- 1) սիրած աղջկա՝ Վասիլիկի քմահաճույքներին զոհացում տալու համար
- 2) դժվար փորձությունները հաղթահարելու իր բուռն ցանկությունը բավարարելու համար
- 3) համաքաղաքացիներից վրեժ լուծելու համար
- 4) ապրուստի միջոց հայթայթելու նպատակով

**88. Գրիգոր Զոհրապի ո՞ր հերոսի մասին է տրված խոսքը.**

*«Կը բավեր, որ իր ճարտարության փորձը տար ամենն անմատչելի կարծված տուները կողոպտելով, ու հոժարությամբ ետ պիտի տար գողոնը, թե որ բռնվելու վախը չըլլար»:*

- 1) Սահակի
- 2) Մարտիրոսի
- 3) Զաբուղոնի
- 4) Հուսեփի

**89. Ինչպե՞ս է Գրիգոր Զոհրապի «Զաբուղոն» նորավեպի նույնանուն հերոսը բանտ ընկնում:**

- 1) Նրան մատնում է իր սիրած աղջիկը:
- 2) Բռնվում է մեծ գողության մեջ:
- 3) Սպանում է սիրած աղջկա հետ կապված տղային:
- 4) Կռվի է բռնվում ոստիկանության հետ:

**90. Գրիգոր Զոհրապի «Զաբուղոն» նորավեպում Զաբուղոնը, տեսնելով իր սիրած աղջկան ուրիշ երիտասարդի հետ, չի սպանում վերջինիս, որովհետև՝**

- 1) խղճում է Վասիլիկին:
- 2) նրան արժանի չի համարում իր վրեժին:
- 3) գգում է, որ այդպիսով չի կարող վերադարձնել իր սիրած աղջկան:
- 4) ափսոսում է իր՝ դժվարությամբ ձեռք բերված ազատությունը:

**91. Գրիգոր Զոհրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:**

*«Ո՞վ էր տերը այս երկուքին մեջ. երեսուն տարի վերջը, երբ ձախորդությունը իր երկաթե շրջապատյալ օղակներով զինքը կը պաշարեր, այս մարդը կը հասկնար, որ այս անգգա տոպրակը իր տերը եղած էր միշտ»:*

- 1) «Զաբուղոն»
- 2) «Այրին»
- 3) «Այինկա»
- 4) «Ճիտին պարտքը»

**92. Ինչո՞վ է ավարտվում Գրիգոր Զոհրապի «Ճիտին պարտքը» նովելը:**

- 1) Հուսեփի աղան մի օր դուրս է գալիս տնից և անհետանում քաղաքից՝ աղջիկներին թողնելով ծայրահեղ աղքատության մեջ:
- 2) Երկար ժամանակ գործ չգտնելուց հետո վերջապես հաջող առևտրական գործարք կնքած Հուսեփի աղան տուն վերադառնալիս հանկարծամահ է լինում:
- 3) Հուսահատության ծայրակետին հասած Հուսեփի աղան, քարերով լցնելով պայուսակը, կապում է վզից և կամրջից նետվում ջուրը:
- 4) Երբ որոշ չափով շտկվել էր ընտանիքի նյութական վիճակը, մահանում է Հուսեփի աղայի կինը:

**93. Գրիգոր Զոհրապի ո՞ր հերոսուհին է նորավեպի ավարտին դառնում «...սևեր հագնող աղջիկ մը, որ չամուսնանար»:**

- 1) Վասիլիկը
- 2) Տիգրանուհին
- 3) Պերճուհին
- 4) Զարդարը



**94. Նշվածներից ո՞ր Գրիգոր Չոփրապի որ նորավեպի հերոսներից է:**

- |               |                   |
|---------------|-------------------|
| ա. Հուսեփ աղա | 1. «Այինկա»       |
| բ. Հակոբոս    | 2. «Չարուղոն»     |
| գ. Չարդար     | 3. «Ճիտին պարտքը» |
| դ. Վասիլիկ    | 4. «Այրին»        |

- 1) ա-1, բ-3, գ-4, դ-2
- 2) ա-1, բ-4, գ-3, դ-2
- 3) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 4) ա-3, բ-4, գ-1, դ-2

**95. Ո՞ր տարբերակի բոլոր պատասխաններն են ճիշտ նշում, թե բնագրային հատվածներից որը Գրիգոր Չոփրապի ո՞ր նորավեպից է:**

1. «Կը սիրե՞ր արդյոք այն երիտասարդը, որ իր ամուսինը եղած էր. այն կույր ու անտրտունջ հնազանդության մեջ, որ հայուհիներու բոլոր կյանքը կը կազմե այդ կողմերը, ո՛չ խորհելու և ո՛չ զգալու տեղի մնացած է...»:
2. «Այս գավակները՝ իր բոլոր երջանկությունը, հիմա կը ճնշեին զինքը իրենց 14-15 տարու աղջկան անմեղության ժպիտովը, որ հանդիմանությունով լեցուն կ'երևար իր հայրական աչքին»:
3. «Հոս՝ քարահատակ ճամփուն վրա, ձիերու շարք մը կը քալե հագիվ լսելի ոտնաձայնով մը ..., ամբողջ կարավան մը ծխախոտ փոխադրող շրջակա գեղերեն, ու տասնի չափ տղաք կու գան քովեն հետիոտն, հրացանը ուսերնուն կախած, ատրճանակը մեջքերնին»:
4. «Նշանտուրը Պատրիարքարանի մեծ դահլիճը կատարված չէր հարկավ ... Պարզապես, հավիտյան իրար սիրելու խոսք տված էին, գիշեր մը, ծառի մը տակ՝ աստղերը ունենալով իրենց վկա. և աշխարհիս ամենեն մեծահանդես նշանտուրը եղած էր իրենցը»:

- ա. «Այինկա»  
 բ. «Չարուղոն»  
 գ. «Այրին»  
 դ. «Ճիտին պարտքը»

- 1) 1- գ, 2-դ , 3- բ, 4- ա
- 2) 1- գ, 2- դ ,3- ա, 4- բ
- 3) 1- ա, 2- գ, 3- բ, 4- դ
- 4) 1-բ, 2- դ, 3- բ, 4- գ

**96. Ո՞ր պնդումն է սխալ Միսաք Մեծարենցի ստեղծագործության վերաբերյալ:**

- 1) Մեծարենցի տաղերում անթիվ նրբերանգներով իր արձագանքն է գտել բանաստեղծի անձնական կյանքի դրաման:
- 2) «Նավակները» բանաստեղծության մեջ Մեծարենցը ներկայացնում է մարդկային անկատար իղձերի ու սպասման տրամադրությունները:
- 3) Մեծարենցը աստվածացնում է բնությունը, նրա շարժման յուրաքանչյուր ակնթարթի մեջ զգում Աստծու շունչը:
- 4) Գյուղի թեմայով գրված բանաստեղծություններում Մեծարենցը արտացոլում է գեղջուկի սոցիալական կյանքի ծանր պայմանները:

**97. Ո՞ր տողը Միսաք Մեծարենցի «Սիրերգ» («Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՛ն»)** բանաստեղծությունից չէ:

- 1) Համբույրներ կու գան հովեն ու ծովեն
- 2) Լուսեղեն ճամփեն ես կանցնիմ զինով
- 3) Համբույրիդ, գիշե՛ր, պատուհանս է բաց
- 4) Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի՛

**98. Ո՞ր տողով է ավարտվում Միսաք Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունը:**

- 1) Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
- 2) Ի՛նչ հեշտին է մըթնշաղն այս սատափե
- 3) Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե
- 4) Նըվագն անոր կը հեծեծե հեշտական

**99. Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործություններն են Միսաք Մեծարենցինը:**

- 1) «Վայրկյան», «Արևին», «Նավակները», «Յորյանի ծովեր»
- 2) «Հյուղը», «Մեղուները», «Ձմրան պարզ գիշեր», «Տու՛ր ինձի, Տե՛ր...»
- 3) «Աքասիաներու շուքին տակ», «Նեմեսիս», «Սիրերգ», «Վայրկյան»
- 4) «Սիրերգ», «Ձարդ», «Իրիկունը», «Հովը»

**100. Նշված բանաստեղծություններից քանի՞սն են Միսաք Մեծարենցինը.**

«Վայրկյան», «Ձմրան պարզ գիշեր», «Տխրություն», «Աշնան մեղեդի», «Մեղուները», «Քարափը», «Հովը», «Գարուն», «Նեմեսիս», «Հեռացումի խոսքեր»:

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) հինգը

**101. Արևելահայ քնարերգության մեջ ո՞վ առաջինը իր բանաստեղծությունները դասավորեց շարքերի մեջ:**

- 1) Եղիշե Չարենցը
- 2) Հովհաննես Թումանյանը
- 3) Համո Սահյանը
- 4) Վահան Տերյանը

**102. Չախում նշված են Միսաք Մեծարենցի ստեղծագործությունները, իսկ աջում՝ դրանցից մեկական հատված. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

- |   |  |
|---|--|
| <p>ա. «Արևին»<br/>բ. «Սիրերգ»<br/>գ. «Հյուղը»<br/>դ. «Աքասիաներու շուքին տակ»</p> | <ol style="list-style-type: none"> <li>1. Ու լույսն անոնց անխոս հուրի՛ դյուքական,<br/>Հըմայագեղ ու վարսքերով արծաթե,<br/>Շատրըվանին կ'իջնե գուռին մեջ կաթե:</li> <li>2. Հոգիս թռչնիկ մըն է,<br/>Օդ ու լույսի, երգ ու ծիծաղի կարոտ,<br/>Բայց երգը, որ իր ալուցքեն կը թռչի,<br/>Անտես ու ստվերոտ սանդուխներու վրա<br/>Կ'իյնա շնչահեղձ:</li> <li>3. Համբույրներ կու գան հովեն ու ծովեն,<br/>Համբույր՝ լույսեն, որ չորս դիս կը ծաղկի,<br/>Այս գիշեր Տոն է, հոգվույս՝ Կիրակի՛,<br/>Համբույրներ կու գան հովեն ու ծովեն:</li> <li>4. Ու ճամբուն վրա մենավոր,<br/>Ու ճամբուն վրա ոսկեման,<br/>Եկվորներուն դիմավոր՝<br/>Ծըխանիս ծուխն ամպեի:</li> </ol> |
|---|--|

- 1) ա-2, բ-3, գ-4, դ-1
- 2) ա-2, բ-1, գ-4, դ-3
- 3) ա-3, բ-2, գ-1, դ-4
- 4) ա-3, բ-1, գ-2, դ-4

**103. Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

- ա. Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին
- բ. Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին
- գ. Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց
- դ. Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց

- 1) ա, գ, դ, բ
- 2) դ, բ, գ, ա
- 3) բ, ա, դ, գ
- 4) դ, ա, գ, բ

**104. Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

- 1. Առկայծում են կարոտագին, երագուն
- 2. Այն աստղերը՝ որպես մոմեր սրբազան
- 3. Մեղմ գիշերի գեղագանգուր երագուն
- 4. Հավերժաբար իրար կապված և բաժան

- 1) 3, 2, 1, 4
- 2) 2, 3, 4, 1
- 3) 2, 4, 3, 1
- 4) 2, 4, 1, 3

**105. Տողերի ո՞ր դասավորությունն է ճիշտ:**

- 1. Կարոտավառ երագուն ենք միշտ իրար
- 2. Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու
- 3. Ես ու դու էլ շղթայված ենք իրարու
- 4. Աստղերի պես և հարազատ և օտար

- 1) 1, 2, 3, 4
- 2) 4, 3, 2, 1
- 3) 3, 2, 1, 4
- 4) 3, 1, 2, 4

**106. Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն հատվածների համարները, որոնք Վահան Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի բանաստեղծություններից են:**

- 1. Բայց հին ու նոր քո երգերով կանգնած ես դու կենդանի, Կանգնած՝ խոհո՛ւն, խորհրդավոր ճամփին հնի ու նորի...
- 2. Իջնում է գիշերն՝ անգութ ու մթին, Եվ այգը բացվում՝ դառն ու մահահոտ...
- 3. Ու պետք է քայլել ու քայլել համառ՝ Ապրելու հսկա տենչը բեռ արած:
- 4. Դու պիտի հնչես, հնչես հաղթական, Իմ հին հա՛յ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ:
- 5. Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն, Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:
- 6. Մա՞հն է արդյոք, թե նի՞նջը քեզ Պատել, պայծա՛ն Նաիրի:

- 1) 1, 4, 5
- 2) 2, 3, 4
- 3) 1, 3, 6
- 4) 2, 5, 6

107. Ո՞ր բառն է բաց թողած:

*Վտարանդի, երկրում աղոտ,  
Լուսե՛ղ, քեզ եմ երազում,  
Եվ հնչում է, որպես աղոթք,  
..... քո լեզուն:*

- 1) Բիբլիական
- 2) Վաղնջական
- 3) Արքայական
- 4) Հազարամյա

108. Ո՞ր բառն է բաց թողած Վահան Տերյանի «Տխրություն» բանաստեղծության մեջ:

*Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև,  
Մի ..... անցավ՝ ծաղիկ ու կանաչ մեղմիլ շոյելով...*

- 1) աղջիկ
- 2) ուրու
- 3) անուրջ
- 4) ստվեր

109. Տրված հատվածներից ո՞րն է Վահան Տերյանի «Fatum» բանաստեղծությունից:

- 1) Անունդ թող փարոս լինի ինձ  
Սուտ կյանքի և դառը մահու դեմ...
- 2) Թող կիտվի խավարն ավելի խրթին,  
Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ...
- 3) Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,  
Օղակելով լույս աստղերը մեկմեկու:
- 4) Այնպես գգվող է երեկոն անափ,  
Ծաղիկներն այնպես նագով են փակվում:

110. Բանաստեղծական հատվածներից ո՞րը Վահան Տերյանի որ բանաստեղծությունից է:

- |  |   |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> <li>ա. Աշուն է, անձրև... Ստվերներն անձև<br/>Դողում են դանդաղ... Պաղ, միապաղաղ<br/>Անձրև՝ ու անձրև՝ ...</li> <li>բ. Եվ կարոտակեզ ահա կրկին<br/>Վերադառնում եմ, որ առհավետ<br/>Ունկնդիր լինեմ քո հին երգին<br/>Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ...</li> <li>գ. Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ<br/>Մի հեզ նաիրցի՝ գնում եմ անկանգ-<br/>Թող գուժկան գիշերն ահասաստ դավե<br/>Որքան մութը սև՝ ես այնքան համառ.<br/>Երկնի՛ր, իմ երկիր, հավատով անմար,<br/>Սուրբ է քո ուղին և պսակդ վեհ...</li> <li>դ. Ե՛վ տանջանք, և՛ բեկում, և՛ թախիծ-<br/>Սև օրեր ես դեռ շա՛տ կրտեսնեմ.<br/>Անունդդ թող փարոս լինի ինձ<br/>Սուտ կյանքի և դառը մահու դեմ...</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>1. «Իջնում է գիշերն անգութ ու մթին»</li> <li>2. «Իմ խաղաղ երեկոն է հիմա»</li> <li>3. «Որպես Լաերտի որդին...»</li> <li>4. «Աշնան մեղեդի»</li> </ul> |
|--|---|

- 1) ա-3, բ-2, գ-1, դ-4
- 2) ա-4, բ-3, գ-1, դ-2
- 3) ա-1, բ-4, գ-3, դ-2
- 4) ա-4, բ-1, գ-3, դ-2

**111. Տրված հաստիքներից ո՞րը որ ստեղծագործությունից է:**

- |  |  |
|--|--|
| <p>1. – Վարձակն ահա, տեղ բացեք,<br/>վարձակը, վարդ տեղացեք,<br/>Մագերուն մեջ, ոտքին տակ<br/>մարգարիտներ լեցուցեք:</p> <p>2. Ես ուզեցի լուռ մենանալ,<br/>Սիրել փրփիթք, խորշեր թավուտ,<br/>Սիրել կայծերն երկնի կապուտ,<br/>Առտըվան շաղն, իրիկվան բալ... .</p> <p>3. Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի.<br/>Եվ համրագին գիրքը ձեռքես կ' իյնա վար.<br/>Երագներու պերճուհին է որ կ'անցնի,<br/>Ու կը փոթի ծովակն հոգվույս՝ մեղմավար:</p> <p>4. Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չ'ունին,<br/>Անոր համար Նա դրրավ այդ լուսին.<br/>Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,<br/>Նախ՝ կյա՛նքը, վերջը՝ լացող մ'իր վըրան:</p> | <p>ա. «Վայրկյան» (Մ. Սեծարենց)<br/>բ. «Հարճը» (Դ. Վարուժան)<br/>գ. «Տրտունջք» (Պ. Դուրյան)<br/>դ. «Սիրել» (Պ. Դուրյան)</p> |
|--|--|

- 1) 1-գ, 2- ա, 3-դ, 4-բ
- 2) 1-բ, 2-ա, 3-դ, 4- գ
- 3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
- 4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ

**112. «Հեթանոս երգեր» շարքում ինչո՞ւ էր Դ-անիել Վարուժանը դիմում հեթանոս անցյալին:**

- 1) հեթանոսությունը և քրիստոնեությունը հակադրելու
- 2) հեթանոս մեռած աստվածներին վերակենդանացնելու
- 3) մեր հեթանոս նախնիների ուժի և գեղեցկության պաշտամունքի միջոցով իր դարաշրջանի ոգու խեղճությանն ու մյուս արատավոր երևույթներին հակադրվելու
- 4) միայն հեթանոս արքաների և իշխանների հաղթանակները փառաբանելու

**113. Պնդումներից ո՞րն է ճիշտ Դ-անիել Վարուժանի «Հացին երգը» շարքի վերաբերյալ:**

- 1) Գովերգում է հացի արարումն ու պատկերում աշխատանքի և աշխատավորի հոգու գեղեցկությունը:
- 2) Պատկերում է արևմտահայ գյուղի սոցիալական հակասությունները:
- 3) Նպատակաուղղված էր արևմտահայության ուշադրությունը կենտրոնացնելու գյուղատնտեսության վրա:
- 4) Փառաբանում է հայ հեթանոսական անցյալը:

**114. Դ-անիել Վարուժանի «Զոն» բանաստեղծության ո՞ր տողով եզրափակվող վեցատող տունն է բացահայտում հայրենի հինավուրց փառքերը:**

- 1) Ընդ եղեգան փող սիրտս ելաներ:
- 2) Ընդ եղեգան փող բոց ելաներ:
- 3) Ընդ եղեգան փող ողբ ելաներ:
- 4) Ընդ եղեգան փող լույս ելաներ:

**115. Դանիել Վարուժանի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*Արտս խոզանով մընաց,  
- Կ'երթա՞ լուսնակը-  
Դեզերով լեռ եմ շինած,  
-Սի՛րտս է կրրակը:*

- 1) «Յորյանի ծովեր»
- 2) «Հունձք կը ժողվեմ»
- 3) «Չոն»
- 4) «Արտերուն հրավերը»


**116. Դանիել Վարուժանի ո՞ր բանաստեղծություններից են տրված հատվածները:**

ա. Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.  
-Չեզի ընծա՛, հայ մարտիկներ-  
Գրիչս եղավ անթրոց սրբտերու հնոցի...  
- Չեզի ընծա՛, քաջ մարտիկներ...  
բ. Գյուղակներեն հորիզոնները մինչև  
Կը տարածվի մեր մայրությունը հողի.  
Գարունն եկա՛վ, չի բավեր ձյունը թեթև  
Ա՛լ ծածկելու մեր մերկությունը հղի:

գ. Յորեն, կակաչ, կարոտով,  
-Կաքավը կու լա,  
Կապեցի մեկ նարոտով,  
-Չեռքերն են հինա:  
դ. Հովե՛ր կ'անցնին.  
Ա՛յնքան կ'հորդի, կը կատողի դաշտը հուռթի,  
Որ պիտի հոն արածող ուլը խեղդի:

1. «Հունձք կը ժողվեմ...»
2. «Չոն»
3. «Յորյանի ծովեր»
4. «Արտերուն հրավերը»

- 1) ա- 2, բ- 3, գ- 4, դ-1
- 2) ա- 1, բ- 3, գ- 4, դ-1
- 3) ա- 2, բ- 4, գ- 1, դ-3
- 4) ա- 3, բ- 2, գ- 1, դ-4



**117. Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ նշում բանաստեղծական հատվածի համապատասխանությունը վերնագրին:**

- |   |   |
|---|---|
| <p>1. Գյուղակներեն հորիզոնները մինչև<br/>Կտարածվի մեր մայրությունը հողի:<br/>Գարունն եկավ. – չի բացվեր ձյունը թեթև<br/>Ալ ծածկելու մեր մերկությունը հղի:</p> <p>2. Թոթվեց թևերն հոգիս մոլար,<br/>Ճանչեց ըզնե գեղ ու կրակ,<br/>Սիրտն անապակ՝ ինչպես վըռակ.<br/>Անմեղ՝ ինչպես սյուք դալկահար,<br/>Հավատարիմ՝ ինչպես քընար,<br/>Հրաժեշտ տըվավ կյանքի մենակ:</p> <p>3. Հագար բարիք ես տայի.<br/>Գողը կրակին ճարճատուն,<br/>Կութքը բերրի դաշտերուն,<br/>Բոլոր միրգերն աշունի,<br/>Ու մեղր, ու կաթ, ու գինի...</p> <p>4. Այլ եթե գոգդ ալ թափին<br/>Բույքն աստեղաց երկնքին,<br/>Նմանիլ չե՛ս կրնար դուն<br/>Հոգվույս՝ որ է բոց անհո՛ւն:</p> | <p>ա. Սիսաք Սեծարենց. «Հյուղը»<br/>բ. Դանիել Վարուժան. «Արտերուն հրավերը»<br/>գ. Պետրոս Դուրյան. «Լճակ»<br/>դ. Պետրոս Դուրյան «Սիրել»</p> |
|---|---|

- 1) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
- 2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
- 3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ

**118. Ո՞ր աստեղծագործության ենթավերնագիրն է «Հագարամյակ մը մեզնե առաջ»:**

- 1) «Հարճը» (Դանիել Վարուժան)
- 2) «Հին աստվածներ» (Լևոն Շանթ)
- 3) «Վերք Հայաստանի» (Խաչատուր Աբովյան)
- 4) «Սեծապատիվ մուրացկանները» (Հակոբ Պարոնյան)

**119. Ի՞նչ տեսիլով է սկսվում Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման:**

- 1) Սևանա կղզում Ճերմակավորի ու Վանահոր բանավեճով:
- 2) Աբեղան տեսնում է, թե ինչպես է Սևանա լճի փոթորիկը սպառնում խեղդել Սեղային:
- 3) Վանահայրը և Իշխանուհին գրուցում են՝ բացահայտելով իրենց երիտասարդ տարիների սերը:
- 4) Քողավորը շրջում է կղզում և մենախոսում է:

**120. Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի ո՞ր հերոսի մասին է նշված հատվածը.**

*Մանկուց նա մեծացել է փանքում վանահոր հովանավորության ներքո: Վանահայրը նրա հետ է կապել իր հույսերը, սակայն նրան վիճակվում է առնչվել աշխարհիկ կյանքին:*

- 1) կույր վանականի
- 2) Ճերմակավորի
- 3) Ատոմ վանականի
- 4) Աբեղայի

**121. Պնդումներից ո՞րը ճիշտ չէ Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի վերաբերյալ:**

- 1) Հերոսներից մեկը՝ Աբեղան, մանկուց ապրել է վանքում և ոչինչ չի իմացել դրսի աշխարհի մասին:
- 2) Իշխանը գալիս է կղզի, որպեսզի հեթանոսական տաճար կառուցի:
- 3) Դրամայի ավարտին Աբեղան իրեն ծովն է նետում, խառնվում բնության տարերքին:
- 4) Վաղ երիտասարդության տարիներին Վանահայրը սիրել է Իշխանուհուն և մերժվել:

**122. Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայում ի՞նչ է հիշեցնում Ճգնավորը հոգու երկվություն ապրող Աբեղային:**

- 1) Մարդկային կյանքը ունայն է՝ անկախ ապրելու եղանակից:
- 2) Աբեղան մեծացել և հասակ է առել վանքում և պետք է նրան հավատարիմ մնա:
- 3) Մարդը ծնվում է երջանիկ լինելու համար, ուստի պետք է հետևել սրտի ձայնին:
- 4) Աստված փորձություն է ուղարկել Աբեղային, և նա պարտավոր է հաղթահարել:

**123. Խոսքերից ո՞րը Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի որ հերոսինն է:**

- ա. «Իմ կյանքիս գորշ երկնքում դուն ես եղեր ինձի համար լույսի աստղը, ապրելու իմաստը, առանց այդ լույսին, առանց այդ մխիթարության ես չգիտեմ՝ ինչու էի ապրելու»:
- բ. «Ի՞նչ կ'ուզես, կին, ի՞նչ կ'ուզես դուն ինձմե: Ամբողջ կյանքիս կ,սը տառապանք տվիր ինձի, տառապանք ու դառնություն, ջարդեցիր կյանքս, խորտակեցիր երիտասարդությունս, հիմա ալ մոխի՞րը քրքրել կ'ուզես»:

- 1. Աբեղա
- 2. Իշխանուհի
- 3. Վանահայր
- 4. Սեդա

- 1) ա-1, բ-3
- 2) ա-2, բ-1
- 3) ա-3, բ-1
- 4) ա-2, բ-3

**124. Բնութագրումներից ո՞րը Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի որ հերոսի մասին է:**

- 1. Կնամուլ է, ամուսնանում է անբարո ֆրանսուհու հետ և իրեն երջանիկ զգում:
- 2. Մխրճվելով սիրային զգացմունքների մեջ՝ ապրում է սիրո, խանդի, հուսախաբության ու նվաստացման բազմաթիվ պահեր՝ ի վերջո հեռանալով ազգայինից:
- 3. Ամենագաղափարական հերոսն է և արտահայտում է հեղինակի մտքերը՝ առանց ցուցադրվելու կյանքի այլ հանգամանքներում:
- 4. Բազմաթիվ նահանջողների մեջ միայն նա է, որ հուսահատ պայքարում է ազգային դեմքը պահելու համար, խելագարվում է և ապա մահանում:

- ա. Սուրեն
- բ. Հրաչ
- գ. Ջարեհ
- դ. Պետրոս

- 1) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ
- 2) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
- 3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
- 4) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա

**125. Ո՞ր շարքի բոլոր հեղինակներն են ստեղծագործել արևմտահայերենով:**

- 1) Միսաք Մեծարենց, Գրիգոր Չոփրապ, Մուրացյան
- 2) Պետրոս Դուրյան, Միսաք Մեծարենց, Սիամանթո
- 3) Վարդան Այգեկցի, Դանիել Վարուժան, Պետրոս Դուրյան
- 4) Հակոբ Պարոնյան, Խաչատուր Աբովյան, Շահան Շահնուր



**126. Նշված գրողները հայերենի ո՞ր տարբերակով են ստեղծագործել:**

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| ա. Մխիթար Գոշ       | 1. թիֆլիսահայ բարբառ |
| բ. Շահան Շահնուր    | 2. գրաբար            |
| գ. Խաչատուր Աբովյան | 3. արևմտահայերեն     |
| դ. Սայաթ-Նովա       | 4. միջին հայերեն     |
| ե. Ղազար Փարպեցի    | 5. արևելահայերեն     |

- 1) ա-4, բ-3, գ-5, դ-1, ե-2
- 2) ա-2, բ-1, գ-5, դ-4, ե-3
- 3) ա-4, բ-5, գ-3, դ-1, ե-2
- 4) ա-2, բ-5, գ-1, դ-4, ե-3

**127. Մեռած քաղաքի՝ Վանի ողբերգությունը ո՞ր պոետում է պատկերված:**

- 1) «Բիբլիական» (Հ. Շիրազ)
- 2) «Դանթեական առասպել» (Ե. Չարենց)
- 3) «Անլրելի գանգակատուն» (Պ. Սևակ)
- 4) «Աբու-Լալա Մահարի» (Ավ. Իսահակյան)

**128. Ո՞ր պնդումը Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմի վերաբերյալ ճիշտ չէ:**

- 1) Պոեմը սկսվում է պատերազմ մեկնող երիտասարդ կամավորների ուրախ տրամադրությամբ:
- 2) Պոեմում կռվի որևէ դրվագ անմիջականորեն չի ներկայացվում:
- 3) Պոեմում բանաստեղծը նկարագրում է պատերազմի հետքերը Կարսից մինչև Վան ընկած ճանապարհին:
- 4) Պոեմի կենտրոնական դեմքը ինքը՝ զինվոր բանաստեղծն է:

**129. Ո՞ր հատվածը Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմից չէ:**

- 1) Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր  
Կախվել մեր գլխին այսպես կուրորեն:
- 2) Եվ հավատացինք, հարբած ու գինով,  
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի...
- 3) Ու պե՛տք է քայլե՛լ ու քայլե՛լ համառ՝  
Ապրելու հսկա տենչը բեռ արած...
- 4) Չգում էինք, որ մի մութ թշնամի  
Նենգ, դարան մտած, պահվել է հեռուն...

**130. Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

*Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան -  
Ու լուսավոր առավոտները իմ հոգու  
Ո՞վ դարձրեց - մի անկրակ իրիկնաժամ,  
Ու գորշ սյարան, ու երկնուղեշ փայտեր երկու:*

- 1) «Դանթեական առասպել»
- 2) «Անվերնագիր»
- 3) «Մահվան տեսիլ»
- 4) «Վահագն»

**131. Ո՞ր պնդումը ճիշտ չէ Եղիշե Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմի վերաբերյալ:**

- 1) Պոեմն սկսվում է նախերգանք-ուղերձով, որը հղվում է ողջակիզվող հոգիներին:
- 2) Պոեմում հանդես է գալիս պայքարող ժողովուրդը, իսկ որպես խորհրդանիշներ՝ հինը մարմնավորող քաղաքը, երգը, մայրամուտը, արևը:
- 3) Պատկերված է երկաթուղային կայարանը՝ որպես հին աշխարհի խորհրդանիշներից մեկը:
- 4) Քնարական պոեմ է, որի միակ հերոսը բանաստեղծն է:

**132. Ո՞ր շարքում են միայն Եղիշե Չարենցի ստեղծագործությունները:**

- 1) «Ես իմ անուշ Հայաստանի», «Հայրենիքիս հետ», «Գանթեական առասպել»
- 2) «Գեպի լյառը Մասիս», «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում», «Գանգրահեր տղան»
- 3) «Էլի գարուն կգա», «Գարնանամուտ», «Վահագն»
- 4) «Հավերժական սերը», «Տաղ անձնական», «Մահվան տեսիլ»

**133. Ո՞րն է Եղիշե Չարենցի «Վահագն» պոեմի հիմնական գաղափարը:**

- 1) գորշ իրականության մեջ երագող մարդկանց չհասկացված լինելը
- 2) իրական Հայաստանի փոխարեն առասպելական Հայաստան տեսողների դեմ ընդվզումը
- 3) ամպրոպի աստված Վահագնի ուժի և հզորության փառաբանումը
- 4) Գողթան երգիչների բանաստեղծական ձիրքի գովերգումը

**134. Ո՞ր հատվածն է Եղիշե Չարենցի «Վահագն» պոեմից:**

- 1) Թե մի՞՞ք էիր դու... Եկան, երգեցին Մի հին իրիկուն գուսանները ծեր...
- 2) Ինչո՞ւ է երագն այս աշխարհավեր Կախվել մեր գլխին այսպես կուրորեն:
- 3) Որ - տիեզերքի կախարդանքը մառ Չցնդի՞ երբեք ու մնա - երագ...
- 4) Եվ չէինք հիշում այլևս ոչինչ, Եվ չգիտեինք՝ ի՞նչ էինք անում:

**135. Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*...Եվ հավատացինք, հարբած ու զինով,  
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի -  
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով  
Մեր երկիրը հին դարձրին փոշի...*

- 1) «Մահվան տեսիլ»
- 2) «Վահագն»
- 3) «Հեռացումի խոսքեր»
- 4) «Անվերնագիր»

**136. Ո՞րն է Եղիշե Չարենցի «Վահագն» պոեմի առաջին բառակապակցության բաց թողած բառը.**

..... աստված...

- 1) Կրակի
- 2) Կայծակի
- 3) Արևի
- 4) Հողեհի

**137. Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

1. Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կյանքը մի
2. Եվ ո՞ւմ համար - էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի
3. Միրտս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով
4. Ինչ-որ մեկի սրտում բացված - վերք է կարծես այս կյանքը մի

- 1) 1, 4, 2, 3
- 2) 1, 2, 4, 3
- 3) 2, 3, 1, 4
- 4) 4, 1, 2, 3

**138. Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ որ մեզ,  
Ու խնդացին լուսավոր մեր աչքերին,  
Բութ հեզնեցին մեր կարոտները հրկեզ  
Ու հեռացան: Ու ոչ մի լույս չբերին:*

- 1) «Հարդագողի ճամփորդները»
- 2) «Մահվան տեսիլ»
- 3) «Տաղ անձնական»
- 4) «Դ-անթեական առասպել»

**139. Եղիշե Չարենցի ստեղծագործության վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) «Դ-անթեական առասպել» պոեմում Չարենցը ակնառեսի աչքերով նկարագրել է Վանը՝ Մեռած Քաղաքը:
- 2) «Տաղարանում» ընդգրկված են «Ես իմ անուշ Հայաստանի», «Տաղ անձնական», «Էլի գարուն կգա...» և մի շարք այլ բանաստեղծություններ:
- 3) «Գ-անգրահեր տղան» չափածո նովելում Չարենցը ուրվագծում է գալիք Հայաստանի պատկերը:
- 4) «Դ-եպի լյառը Մասիս» պոեմում Չարենցը ներկայացնում է Խաչատուր Աբովյանի վերջին գիշերվա խոհերն ու ապրումները:

**140. Ո՞րը Եղիշե Չարենցի «Դ-եպի լյառը Մասիս» պոեմի քնարական հերոսի՝ Խաչատուր Աբովյանի վերջին գիշերվա խորհրդածություններից չէ:**

- 1) իր կյանքի դորպատյան հուշերը
- 2) Մասիսի գագաթը բարձրանալու վերհուշը
- 3) ստեղծագործական նոր ծրագրերը
- 4) «Վերք Հայաստանի» վեպում արծարծված քաղաքական կողմնորոշման վերանայումը

**141. Ո՞ր հատվածն է Եղիշե Չարենցի «Անվերնագիր» («Իմ մահվան օրը կիջնի լռություն») բանաստեղծությունից:**

- 1) Թե ուզում ես երգդ լսեն,  
Ժամանակիդ շո՛ւնչը դարձիր:
- 2) Քո անկումները եղել են միշտ  
Եղանակի պես պատահական...
- 3) Ու կանգնել եմ ես  
Լեռների վրա իմ ավեր երկրի...
- 4) Այն, որ ես էի, որ իմն էր առաջ,  
Արդեն չի հառնի և ոչ մի գրքում...

**142. Բանաստեղծական հատվածներից ո՞րը Եղիշե Չարենցի որ ստեղծագործությունից է:**

1. Ի՞նչ է ասում այդ գիրքը և ի՞նչ է բարբառում.  
Չուր չէ՞ արդյոք վատնել անհատների իր ձիրքը.  
Եվ չի՞ եղել արդյոք իր ողջունած հեռուն  
Մի թիարան վատթար...
2. Արևը արդեն բարձրացել է քիչ,  
Չնգում է օրը, ինչպես երգեհոն-  
Ու կապո՛ւյտ, կապո՛ւյտ, կապո՛ւյտ երկնքից  
Թափվում է կարծես երգ ու խնդություն:
3. Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,-  
Ու խնդացին լուսավոր մեր աչքերին,  
Բուք հեզնեցին մեր կարոտները հրկեզ-  
Ու հեռացան: Ու ոչ մի լույս չբերին:
4. Եվ մարդիկ՝ անգամ երգերիս անգետ,  
Մարդիկ, որ թեև կյանքիս արձագանք,  
Մնացել են լոկ վկա անտարբեր  
Եվ կարծել են, թե ես վաղուց չկամ,-  
...Չարմացած կզգան ինձ այնքա՛ն մոտիկ  
Եվ հանկարծ այնքա՛ն թանկ ու հարազատ...

- ա. «Հարդագողի ճամփորդները»
- բ. «Դեպի լյառը Մասիս»
- գ. «Գանգրահեր տղան»
- դ. «Տաղ անձնական»
- ե. «Անվերնագիր»

- 1) 1-գ, 2-բ, 3- դ, 4-ե
- 2) 1-ե, 2-դ, 3-ա, 4-գ
- 3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե

**143. Բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:**

- ա. Ու պոետներ, որ չեն պրդծել իրենց շուրթերն անեծքով,  
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով...
- բ. Դու պիտի ծաղկի՛ս, երկի՛ր հայրական,  
Քո ոգով, ոճով և բարձրագլուխ,  
Դու պիտի հնչես, հնչես հաղթական,  
Իմ հին հայ լեզու՝ քա՛ղցր ու սրտաքո՛ւխ:
- գ. ...Բայց հրկեզ հոգիս մորմոռում այս տոթ  
Հավատում է դեռ քո առավոտին...
- դ. Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի,  
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:

1. Ե. Չարենց
2. Ավ. Իսահակյան
3. Հ. Թումանյան
4. Վ. Տերյան

- 1) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 2) ա-2, բ-3, գ-4, դ-1
- 3) ա-3, բ-2, գ-1, դ-4
- 4) ա-1, բ-2, գ-4, դ-3

**144. Ո՞ր շարքում են ճիշտ նշված տրված գրողների ծննդյան տարեթվերը:**

- |                        |         |
|------------------------|---------|
| 1. Հովհաննես Թումանյան | ա. 1897 |
| 2. Եղիշե Չարենց        | բ. 1869 |
| 3. Վահան Տերյան        | գ. 1875 |
| 4. Ավետիք Իսահակյան    | դ. 1885 |

- 1) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
- 3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
- 4) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ

**145. ԹՎերի ո՞ր դասավորությունն է արտացոլում նշված ստեղծագործությունների ստեղծման ժամանակաշրջանի ճիշտ հաջորդականությունը:**

1. «Մթնշաղի անուրջներ» (Վ. Տերյան)
2. «Տաղարան» (Ե. Չարենց)
3. «Սարսուռներ» (Դ. Վարուժան)
4. «Երգեր ու վերքեր» (Ավ. Իսահակյան)

- 1) 3, 1, 4, 2
- 2) 4, 1, 2, 3
- 3) 4, 3, 1, 2
- 4) 4, 1, 3, 2

**146. Ո՞ր ժողովածուն կամ բանաստեղծական շարքը հեղինակներից որինն է:**

- |                       |                |
|-----------------------|----------------|
| ա. «Տաղարան»          | 1. Վ. Տերյան   |
| բ. «Խղճմտանքի ձայներ» | 2. Մ. Մեծարենց |
| գ. «Նոր տաղեր»        | 3. Ե. Չարենց   |
| դ. «Երկիր Նաիրի»      | 4. Գ. Չոփրապ   |

- 1) ա-3, բ-4, գ-2, դ-1
- 2) ա-1, բ-3, գ-2, դ-4
- 3) ա-2, բ-1, գ-3, դ-4
- 4) ա-4, բ-2, գ-1, դ-3

**147. Բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակինն է:**

- |   |                |
|---|----------------|
| ա. - Մենք կժպտանք, գո՛հ կժպտանք մեռնելիս,<br>Որ երագում երագեցինք ու անցանք...                                      | 1. Վ. Տերյան   |
| բ. ...Այս բանը ո՛չ Տրդատես նկատեց, ո՛չ ալ Բակուր.<br>Իրենց անգուսապ մոլուցքին փոշիներեն դարձած կույր...             | 2. Ե. Չարենց   |
| գ. Գնում եմ ես մի մութ աշխարհի, հեռու երկիր, էլ չեմ գալու,<br>Բարի՛ հիշեք ինձ ձեր սրտում, մնա՛ք բարով, մնա՛ք բարով: | 3. Դ. Վարուժան |
| դ. Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար,<br>Եվ ալիք մը թևը բացած կը վազե<br>Գրկել ափունքն իդձիս ոսկի ավազե:          | 4. Մ. Մեծարենց |

- 1) ա-2, բ-3, գ-1, դ-4
- 2) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 3) ա-2, բ-3, գ-4, դ-1
- 4) ա-3, բ-4, գ-1, դ-2

**148. Ակսել Բակունցի նշված պատմվածքներից որի՞ բոլոր հերոսներն են, որ հանդես չեն գալիս իրենց անձնանուններով:**

- 1) «Խոնարհ աղջիկը»
- 2) «Միրհավ»
- 3) «Ալպիական մանուշակ»
- 4) «Սքնածոր»

**149. Ակսել Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքի ստորև բերված սյուժետային դրվագներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) Հեղինակ-հերոսը՝ 17-18 տարեկան մի երիտասարդ՝ բանտից նոր դուրս եկած, իր բարեկամի առաջարկով գնում է Չորագյուղ և զբաղվում ուսուցչությամբ:
- 2) Ուսուցիչը Խոնարհին առաջին անգամ տեսնում է անտառի բացատում:
- 3) Բարեկենդանի օրը ուսուցիչը Խոնարհին տեսնում է աղջիկների հետ իրենց դիմացի տան կտուրի վրա ձյունով խաղալիս:
- 4) Հրաժեշտի օրը Խոնարհը աշակերտների հետ եկել էր դպրոցի բակ՝ ուսուցչին հրաժեշտ տալու:

**150. Չախ կողմում նշված են Ակսել Բակունցի պատմվածքները, իսկ աջում՝ նրանցից քաղված մեկական հատված. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

- |  |  |
|--|--|
| <p>ա. «Սպիտակ ձին»<br/>բ. «Ալպիական մանուշակ»<br/>գ. «Միրհավ»<br/>դ. «Խոնարհ աղջիկը»</p> | <p>1. «Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանուշակը»:<br/>2. «Մեկ էլ դեմքը մոտենում էր, կանգնում էր աչքիս առաջ, և ես ճգնում էի իմանալու՝ ժպտա՞ց աղջիկը, երբ ետ նայեցի, թե՞ միայն ինձ թվաց»:<br/>3. «Յուրաքանչյուր դողում էր: Նրա մեջքի աջ կողմը ավստի չափ վերք էր բացվել և երևում էր կարմիր, տեղ-տեղ փոս ընկած, ճաքճքած միսը»:<br/>4. «Ծով կար նրա մտքում, և այդ ծովը ավի էր շարտում մերթ սև թավիշե գլխարկով գլուխ՝ մազերը կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ՝ քիկունքին երկար ծամեր, մերթ քարե քանդակներ»:</p> |
|--|--|

- 1) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 2) ա-3, բ-4, գ-1, դ-2
- 3) ա-2, բ-4, գ-3, դ-1
- 4) ա-2, բ-3, գ-1, դ-4

**151. Ինչի՞նչով նկարագրությամբ է սկսվում Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքը:**

- 1) Բակուր իշխանի դամբարանի
- 2) Կաքավաբերդի
- 3) Բասուտա գետի
- 4) ալպիական մանուշակների

**152. Ակսել Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*«Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ուստյուն արեց, նրա մագոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակը անասելի թափով իջավ կնոջ քիկունքին»:*

- 1) «Մթնաձոր»
- 2) «Ալպիական մանուշակ»
- 3) «Միրհավ»
- 4) «Խոնարհ աղջիկը»

**153. Ինչո՞վ է ավարտվում Ակսել Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքը:**

- 1) Մեկ տարով գյուղ՝ ուսուցչության մեկնած երիտասարդը վերադառնում է՝ անավարտ թողնելով սկիզբ առած սիրո պատմությունը:
- 2) Տասներկու տարի անց գործնական այցով կրկին գյուղ եկած հերոսը հանդիպում է Խոնարհին, որին ճանաչում է միայն աչքերից:
- 3) Խոնարհը մերժում է ուսուցչի սերը և ամուսնանում ուրիշի հետ:
- 4) Տարիներ անց Խոնարհը փնտրում և գտնում է իրենց գյուղի նախկին ուսուցչին:

**154. Գերենիկ Գեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ է հրամայում Հազկերտը Վարդանին նախարարների կեղծ ուրացությունից հետո:**

- 1) մասնակցել քուշանների դեմ մղվող պատերազմին
- 2) հազարապետի հետ մեկնել Բյուզանդիա
- 3) Հայաստանում մեհյաններ կառուցել
- 4) աջակցել Վասակին ձեռնադրելու արքա

**155. Գերենիկ Գեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում հայ նախարարների կեղծ ուրացությունից հետո ո՞ւմ է Հազկերտը պատանդ վերցնում:**

- 1) Ջոհրակին ու Ատոմին
- 2) Բաբիկին ու Ներսիկին
- 3) Վարազդուխտին ու Կողակին
- 4) Վասակին ու Գաղիշոյին

**156. Ո՞ր շարքում են նշված Գերենիկ Գեմիրճյանի «Վարդանանք» վեպից վասակյանների անունները:**

- 1) Արտակ Մոկաց, Գևորգ Երեց
- 2) Գաղիշո Խորխոռունի, Արտակ Ռշտունի
- 3) Ատոմ Գնունի, Սրվանձտյա Գարեգին
- 4) Ներշապուհ Արծրունի, Դավիթ սեպուհ

**157. Ո՞ր շարքի հերոսները որ ստեղծագործությունից են:**

- |                                      |                         |
|--------------------------------------|-------------------------|
| 1. Մեղա, Սահականույշ, Սահակ Սևադա    | ա. «Զատս»               |
| 2. Ջոհրակ, Շուշանիկ, Արտակ Մոկաց     | բ. «Վարդանանք»          |
| 3. Աշխեն, Որմիզդուխտ, Տաճատուհի      | գ. «Գևորգ Մարգալետունի» |
| 4. Շուշանիկ, Պետրոս Գուլամյան, Սմբատ | դ. «Մամվել»             |

- 1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
- 2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-դ
- 4) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ

**158. Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են Վարդանի կողմնակիցները Գերենիկ Գեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում:**

- 1) Կողակ, Ներշապուհ Արծրունի, Արտակ Ռշտունի
- 2) Արտակ Մոկաց, Վարազդուխտ, Փառանձեմ
- 3) Ատոմ Գնունի, Առաքել, Ջոհրակ
- 4) Համազասպ Մամիկոնյան, Շուշանիկ, Գաղիշո Խորխոռունի

**159. Նշվածներից ո՞վ է հայոց այրուձիի հրամանատարը Գերենիկ Գեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում:**

- 1) Ատոմ Գնունին
- 2) Ընծայնոց Արսենը
- 3) Սրվանձտյա Գարեգինը
- 4) Գաղիշո Խորխոռունին

**160. Գերենիկ Գեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ո՞վ է դիմում Վասակ Սյունուն՝ ասելով.**

*«Ստրկության ուղիներո՞վ ես ազգը տանում ոգեկան ազատության ու պետության: Ազատության ոչնչացմանը ազատություն... Ունա՛յն է հույսդ, և իզուր ջանքերդ...»:*

- 1) Վարդան Մամիկոնյանը
- 2) Վահան Ամատունին
- 3) Մովսես Խորենացին
- 4) Ներշապուհ Արծրունին

**161. Գերենիկ Գեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի վերաբերյալ պնդումներից ո՞րը ճիշտ չէ:**

- 1) Գեմիրճյանը «Վարդանանք» պատմավեպում Վարդանանց պատերազմը ներկայացրել է որպես ազգային-ազատագրական պայքար, որը մղվում էր հայրենիքի ազատության համար:
- 2) «Վարդանանք» պատմավեպում հեղինակը շրջանցել է ժողովրդի դերն ու նշանակությունը:
- 3) Գեմիրճյանի համոզմամբ Ավարայրի ճակատամարտում հայերը տարան իրական հաղթանակ, որի շնորհիվ կարողացան պահել իրենց կիսանկախ վիճակը:
- 4) Պատմավեպը գրելիս հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է փաստերը՝ թափանցելով պատմական իրադարձությունների էության մեջ:

**162. Գերենիկ Գեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) «Վարդանանքի» սկզբնաղբյուրներն են Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» և Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն» երկերը:
- 2) Պատմավեպում կարևոր տեղ է զբաղեցնում ժողովուրդը, որը ցուցադրվում է վիպական գործողությունների ընթացքում:
- 3) Վեպի հիմքում ընկած է հայրենիքի ազատության գաղափարը:
- 4) Ինչպես Եղիշեն, այնպես էլ Գերենիկ Գեմիրճյանը Վարդանանց պատերազմը համարում է սրբազան պատերազմ՝ մղված միայն հավատի պահպանման համար:

**163. Ստեղծագործություններից յուրաքանչյուրում պատկերված իրադարձությունները պատմական ո՞ր ժամանակաշրջանին են վերաբերում:**

- |                                       |                  |
|---------------------------------------|------------------|
| 1. Խաչատուր Աբովյան, «Վերք Հայաստանի» | ա. 4-րդ դար      |
| 2. Բաֆֆի, «Սամվել»                    | բ. 5-րդ դար      |
| 3. Գերենիկ Գեմիրճյան, «Վարդանանք»     | գ. 10-րդ դար     |
| 4. Մուրացան, «Գևորգ Մարգպետունի»      | դ. 1826-1827 թթ. |

- 1) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 2) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
- 4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ

**164. Նշվածներից ո՞վ որ աշխատություններից է հատկապես օգտվել իր նշված պատմավեպը գրելիս:**

- |                                   |  |
|-----------------------------------|--|
| ա. Բաֆֆի, «Սամվել»                | 1. «Վարդանի և հայոց պատերազմի մասին», Եղիշե,   |
| բ. Մուրացան, «Գևորգ Մարգպետունի»  | «Հայոց պատմություն», Ղազար Փարպեցի   |
| գ. Գերենիկ Գեմիրճյան, «Վարդանանք» | 2. «Հայոց պատմություն», Փավստոս Բուզանդ, «Հայոց պատմություն», Մովսես Խորենացի                  |
|                                   | 3. «Հայոց պատմություն», Հովհաննես Դրասխանակերտցի, «Արծրունյաց տան պատմություն», Թովմա Արծրունի |

- 1) ա-2, բ-3, գ-1
- 2) ա-1, բ-3, գ-2
- 3) ա-2, բ-1, գ-3
- 4) ա-3, բ-2, գ-1



**165. Պնդումներից ո՞րն է սխալ:**

- 1) Ավետիք Իսահակյանի «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը գրված է «Մասնա ծոեր» էպոսի հազարամյակի առիթով:
- 2) Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը գրվել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին:
- 3) Մուրացյանը «Գևորգ Մարգարետունի» պատմավեպը գրելիս օգտվել է Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու աշխատություններից:
- 4) Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի հիմքում ընկած են հայ հնագույն առասպելների սյուժեները:

**166. Պնդումներից քանի՞սն են ճիշտ:**

- Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» հիմքում դրել է ինքնաճանաչման խնդիրը, ինչպես նաև ցույց է տվել հայ ժողովրդի և նրա մշակույթի զարգացման ճիշտ ուղին:
  - «Մատյան ողբերգության» պոեմում Գրիգոր Նարեկացին հավատում է ապաշխարությամբ մարդու մաքրագործմանը:
  - Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում արծարծվում են գեղարվեստական գրականության բովանդակությունը արմատապես փոխելու, ինչպես նաև լեզվի և հերոսի ընտրության խնդիրները:
  - Դանիել Վարուժանը «Հարճը» պոեմով հակադրվում է իր ժամանակի քաղքենի աշխարհին:
- 1) երկուսը
  - 2) երեքը
  - 3) չորսը
  - 4) մեկը

**167. Չախ կողմում նշված են հայ գրողների կեղծանունները, իսկ աջում՝ իսկական ազգանունները. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

- |                  |                   |
|------------------|-------------------|
| ա. Դ. Վարուժան   | 1. Սողոմոնյան     |
| բ. Ա. Շիրվանզադե | 2. Մովսիսյան      |
| գ. Ե. Չարենց     | 3. Չպուզբյարյան   |
| դ. Բաֆֆի         | 4. Կարապետյան     |
| ե. Հ. Շիրազ      | 5. Սելիք-Հակոբյան |

- 1) ա-3, բ-2, գ-1, դ-5, ե-4
- 2) ա-1, բ-5, գ-3, դ-2, ե-4
- 3) ա-3, բ-2, գ-4, դ-5, ե-1
- 4) ա-1, բ-2, գ-3, դ-5, ե-4

**168. Ո՞ր պնդումն է սխալ Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակի վերաբերյալ:**

- 1) Վիպակը ինչպես իր՝ հեղինակի, այնպես էլ միլիոնավոր քսոթրականների կյանքի պատմությունն է:
- 2) Վիպակում ցույց է տրված, թե ինչպես ամենաժանր հալածանքների պայմաններում անգամ մարդը փորձում է պահպանել մարդկային արժեքները:
- 3) Վիպակում պատկերված են քսոթրականների կյանքի ծանր, սոսկալի պայմանները:
- 4) Ճամբարային դաժան իրականությունը մարդկանց մեջ սպանել է անգամ մարդկային ամենագեղեցիկ զգացմունքներից մեկը՝ սերը:

**169. Ո՞վ է «Քարափների երգը» ժողովածուի հեղինակը:**

- 1) Եղիշե Չարենցը
- 2) Վահան Տերյանը
- 3) Համո Սահյանը
- 4) Հովհաննես Շիրազը

**170. Համո Սահյանի «Անունդ տալիս» բանաստեղծության մեջ նշվածներից որի՞ մասին չի հիշատակվում:**

- 1) արևոտ մի սար՝ ճակատին ձյունի պատառիկ
- 2) հեռվում ուշացած ինչ-որ ձիերի դոփյուն
- 3) թեքված մի մատուռ ու բերդի տեղահասն մի դուռ
- 4) քարափի կանաչ ափի մեջ թրթռացող երկնքի մի շերտ

**171. Ո՞րը Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուներից չէ:**

- 1) «Ծիածան»
- 2) «Որոտանի եզերքին»
- 3) «Իրիկնահաց»
- 4) «Քարափների երգը»

**172. Ո՞ր պնդումն է սխալ Համո Սահյանի «Քարափը» բանաստեղծության վերաբերյալ:**

- 1) Բանաստեղծության մեջ քարափը անճանաչորված է. այն հիշեցնում է մի նահապետի:
- 2) Քարափը նաև հայրենիքի խորհրդանիշն է. նա անասան է ու հավերժական, ինչպես հողը հայր,նի:
- 3) Բանաստեղծության մեջ հեղինակը խոսում է նոր ժամանակների արատավոր բարքերի մասին:
- 4) Ժամանակի հավերժության մեջ քարափը խորհում է, թե դեռ ինչ է տալու աշխարհին:

**173. Հատվածներից ո՞րը Համո Սահյանի որ բանաստեղծությունից է:**

- |   |  |
|---|--|
| <p>ա. Ծանր նստել է և ամեն մեկին<br/>                 Իրեն արժանի պատիվն է տալիս.<br/>                 Վայրի աղավմուն՝ հանճարը վայրի,<br/>                 Մոլորված ամպին իր քիվն է տալիս,<br/>                 Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:</p> <p>գ. Արևոտ մի սար եմ հիշում՝<br/>                 ճակատին ձյունի պատառիկ,<br/>                 Սարն ի վար բարակ մի առու՝<br/>                 Շուրթերին հայրեն ու տաղիկ...</p> | <p>բ. Կախվել է ժայռը անդունդի վրա<br/>                 Եվ դարեր այդպես կախված է մնում,<br/>                 Ջրերի մեջ են ոտքերը նրա,<br/>                 Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:</p> <p>դ. Փայտահատը հին երգն էր կրկնում<br/>                 Եվ տաք սողոցն իր յուղում էր կրկին,<br/>                 Թեղին անտարբեր ականջ էր դնում<br/>                 Տապալված կաղնու խուլ հառաչանքին:</p> |
|---|--|

1. «Մասրենի»
2. «Անունդ տալիս»
3. «Անտառում»
4. «Քարափը»

- 1) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 2) ա-1, բ-4, գ-2, դ-3
- 3) ա-4, բ-1, գ-3, դ-2
- 4) ա-3, բ-1, գ-2, դ-4

**174. Ծարքերից և ժողովածուներից ո՞րը ումն է:**

- |   |   |
|---|---|
| <p>ա. «Ցեղին սիրտը»<br/>                 բ. «Երկիր Նաիրի»<br/>                 գ. «Նոր տաղեր»<br/>                 դ. «Նաիրյան դալար բարդի»</p> | <p>1. Վ. Տերյան<br/>                 2. Հ. Սահյան<br/>                 3. Գ. Վարուժան<br/>                 4. Մ. Մեծարենց</p> |
|---|---|

- 1) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 2) ա-3, բ-4, գ-1, դ-2
- 3) ա-4, բ-1, գ-3, դ-2
- 4) ա-3, բ-2, գ-1, դ-4

**175. Ո՞ր ժողովածուն կամ քանաստեղծական շարքը հեղինակներից որի՞նն է:**

- |                       |                |
|-----------------------|----------------|
| ա. «Տաղարան»          | 1. Վ. Տերյան   |
| բ. «Խղճմտանքի ձայներ» | 2. Մ. Սեծարենց |
| գ. «Ծիածան»           | 3. Ե. Չարենց   |
| դ. «Երկիր Նաիրի»      | 4. Գ. Զոհրապ   |

- 1) ա-3, բ-4, գ-2, դ-1
- 2) ա-1, բ-3, գ-2, դ-4
- 3) ա-2, բ-1, գ-3, դ-4
- 4) ա-4, բ-2, գ-1, դ-3

**176. Հատվածներից ո՞րը Հովհաննես Շիրազի որ քանաստեղծությունից է:**

- |   |                               |
|---|-------------------------------|
| ա. Ծանթն է բեկվում ճակտիս վրա,<br>Մահ՝ չգիտեմ՝ կա՞ թե՞ չկա<br>Ելնում եմ ես ահերն ի վեր,<br>Ելնում եմ ես մահերն ի վեր,<br>Ահեր, մահեր, գահերն ի վեր:                         | 1. «Կուզեի նստել մի քարի վրա» |
| բ. ...Անդադար նայեմ իմ Արարատին,<br>Մինչ շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա,<br>Եվ մամռած նայե իմ Արարատին:  | 2. «Թագադրում»                |
| գ. -Ի՞նչ թարմություն- ասացին,-<br>ի՞նչ թարմություն, ու բացին<br>Լուսամուտներն իմ առջև, ու ես՝ իմ սիրտը բացել՝<br>Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին...                | 3. «Հայ ժողովրդի երգը»        |
| դ. Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,<br>...Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,<br>Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,<br>Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,<br>Որ գարունները գան ու չգնան... | 4. «Գարնանամուտ»              |

- 1) ա-3, բ-4, գ-1, դ-2
- 2) ա-2, բ-3, գ-4, դ-1
- 3) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 4) ա-1, բ-3, գ-4, դ-2

**177. Տողերի ո՞ր դասավորությունն է ճիշտ:**

1. Եվ գուցե այնժամ ես մահը սիրեմ
2. Երբ գարունները ողջ թագավորեմ
3. Եվ ես երջանիկ կլինեմ այնժամ
4. Երբ անմահ լինեմ, երբ հավերժանամ

- 1) 3, 1, 2, 4
- 2) 3, 1, 4, 2
- 3) 1, 3, 2, 4
- 4) 1, 2, 3, 4

**178. Տրված բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:**

- |  |   |
|--|---|
| 1. Ծաղիկներին՝ դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,<br>Մանուկներին վառ-խլրտուն ասում եմ ես՝ մնաք բարով:                                 | ա. Մ. Մեծարենց                              |
| 2. Եվ հառաչեցին լեռները ցավից.<br>Անեծք ժայթքեցին հրաբուխներով,<br>Դարձան անդունդներ ու խորանալով<br>Այն սեզ լեռների տանջանքը լացին... | բ. Վ. Տերյան<br>գ. Ե. Չարենց<br>դ. Հ. Շիրազ |
| 3. Երբ էս հին աշխարհը մտա ես տաղով, սագով-քամանչով,<br>- Ի՞նչ պիտի անե աշխարհում էս անմիտ-անճարը,- ասին:                               |   |
| 4. Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի.<br>Եվ համրագին գիրքը ձեռքես կ'իյնա վար...   |   |

- 1) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
- 2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
- 3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
- 4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ

**179. Տրված բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:**

- |  |   |
|--|---|
| ա. Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների,<br>Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ,<br>Գնամ ետևից ծիծեռնակների,<br>Նրանց հետ ետ գամ, զարունը բերեմ:        | 1. Հ. Սահյան<br>2. Պ. Սևակ<br>3. Ե. Չարենց<br>4. Հ. Շիրազ |
| բ. Արևոտ մի սար եմ հիշում՝<br>Ճակատին ձյունի պատառիկ,<br>Սարն ի վար բարակ մի առու՝<br>Շուրթերին հայրեն ու տաղիկ:                               |   |
| գ. Ուշ-ուշ են գալիս, բայց ո՛չ ուշացած,<br>Ծնվում են նրանք ճիշտ ժամանակին:<br>Բայց ժամանակից առաջ են ընկնում,<br>Դրա համար էլ չեն ներում նրանց: |   |
| դ. Իմ մահվան օրը կ'իջնի լռություն,<br>Ծանր կ'նստի քաղաքի վրա,<br>Ինչպես ամպ մթին կամ հին տրտմություն,<br>Կամ լուր աղետի՝ թերթերում գրած:       |   |

- 1) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 2) ա-1, բ-3, գ-2, դ-4
- 3) ա-2, բ-1, գ-4, դ-3
- 4) ա-4, բ-2, գ-3, դ-1

**180. Նշված գրողներից քանի՞սը արևելահայ հեղինակներ չեն.**

*Պարոնյան, Աբովյան, Իսահակյան, Վարուժան, Տերյան, Մեծարենց, Չարենց, Բաֆֆի, Բակունց, Դեմիրճյան, Միամանթո, Շահնուր:*

- 1) երեքը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) վեցը

**181. Նշվածներից ո՞րը պոեմ չէ:**

- 1) «Հարճը» (Գ. Վարուժան)
- 2) «Արա Գեղեցիկ» (Ն. Չարյան)
- 3) «Թմկաբերդի առումը» (Հ. Թումանյան)
- 4) «Դանթեական առասպել» (Ե. Չարենց)

**182. Նշվածներից ո՞րը պոեմ չէ:**

- 1) «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» (Պ. Սևակ)
- 2) «Հարճը» (Գ. Վարուժան)
- 3) «Բիրբլիական» (Հ. Շիրազ)
- 4) «Մեր պատմիչները և մեր գուսանները» (Ավ. Իսահակյան)

**183. Գիշերերգությունը նշված ո՞ր ժողովածուի կամ բանաստեղծական շարքի հիմնական թեմաներից է:**

- 1) «Ոսկի հեքիաթ» (Վ. Տերյան)
- 2) «Հեթանոս երգեր» (Գ. Վարուժան)
- 3) «Եղիցի լույս» (Պ. Սևակ)
- 4) «Ծիածան» (Մ. Մեծարենց)

**184. Պնդումներից ո՞րն է ճիշտ:**

- 1) Եղիշե Չարենցի «Տաղարան» շարքը գրված է Նահապետ Քուչակի հայրենների նմանողությամբ:
- 2) Դանիել Վարուժանի «Հացին երգը» շարքը ներկայացնում է հացի արարման ընթացքը:
- 3) «Անլռելի զանգակատուն»-ը Պարույր Սևակի առաջին ստեղծագործությունն է:
- 4) Վահան Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը նվիրված է միջնադարյան հայ մատենագիրներին:

**185. Պնդումներից քանիստ՞ում սխալ կա:**

- Հայրեն կոչվող ոտանավորի չափը մեր բանաստեղծության մեջ առաջին անգամ գործածել է Գրիգոր Նարեկացին:
- Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» կատակերգություն է:
- Նաիրի Չարյանի «Արա Գեղեցիկը» դիցապատմական ողբերգություն է:
- Վահան Տերյանը գրել է սոնետներ, տրիոլետներ, զագետներ և չափածո նովելներ:
- Հովհաննես Շիրազի «Բիրբլիականը» և Պարույր Սևակի «Անլռելի զանգակատունը» պոեմներ են:

- 1) երեքում
- 2) երկուսում
- 3) բոլորում
- 4) ոչ մեկում

**186. Նշվածներից ո՞րը դրամատիկական ինչ ժանրի ստեղծագործություն է:**

- |                                  |                               |
|----------------------------------|-------------------------------|
| ա. «Արա Գեղեցիկ», Ն. Չարյան      | 1. դիցապատմական ողբերգություն |
| բ. «Պատվի համար», Ալ. Շիրվանզադե | 2. կատակերգություն            |
| գ. «Հին աստվածներ», Լ. Շանթ      | 3. դրամա                      |
| դ. «Պաղտասար աղբար», Հ. Պարոնյան |                               |

- 1) ա-1, բ-3, գ-3, դ-2
- 2) ա-1, բ-3, գ-2, դ-2
- 3) ա-3, բ-2, գ-3, դ-1
- 4) ա-2, բ-3, գ-1, դ-2

**187. Տրված ստեղծագործություններից ո՞րը դրամատիկական սեռի չէ:**

- 1) «Պատվի համար» (Ալ. Շիրվանզադե)
- 2) «Պաղտասար աղբար» (Հ. Պարոնյան)
- 3) «Արա Գեղեցիկ» (Ն. Ջարյան)
- 4) «Քաջ Նազար» (Հ. Թումանյան)

**188. Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Մովսես Խորենացին և Եղիշեն 5-րդ դարի պատմիչներ են:
- 2) Ակսել Բակունցն ու Պետրոս Դուրյանը 19-րդ դարի հեղինակներ են:
- 3) Հովհաննես Շիրազն ու Համո Սահյանը ապրել և ստեղծագործել են 20-րդ դարում:
- 4) Եղիշե Չարենցը նորագույն շրջանի հայ գրականության սկզբնավորողն է:

**189. Գրական ո՞ր հերոսը որ ստեղծագործությունից է:**

- |                      |                                    |
|----------------------|------------------------------------|
| ա. Արբակ             | 1. «Գևորգ Մարգալետունի» (Մուրացան) |
| բ. Շուշանիկ          | 2. «Վարդանանք» (Դ. Դեմիրճյան)      |
| գ. դայակ Սեդա        | 3. «Հին աստվածներ» (Լ. Շանթ)       |
| դ. իշխանադուստր Սեդա | 4. «Սամվել» (Բաֆֆի)                |

- 1) ա-1, բ-2, գ-4, դ-3
- 2) ա-4, բ-3, գ-2, դ-1
- 3) ա-4, բ-2, գ-1, դ-3
- 4) ա-1, բ-4, գ-3, դ-2

**190. Նաիրի Ջարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության մեջ ո՞վ է յուրայիններին արգելում սպանել Շամիրամին:**

- 1) Նինուսար
- 2) Նուարդը
- 3) Վաշտակը
- 4) Արքայամայրը

**191. Հովհաննես Շիրազի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*...Եվ ես երջանիկ կլինեմ այնժամ,  
Եվ գուցե այնժամ ես մահը սիրեմ,  
Երբ անմահ լինեմ, երբ հավերժանամ,  
Երբ գարունները ողջ թագավորեն:*

- 1) «Գարնանամուտ»
- 2) «Բիբլիական»
- 3) «Արարատ»
- 4) «Թագադրում»

**192. Բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակինն է:**

- ա. Վ. Տերյան
- բ. Ե. Չարենց
- գ. Դ. Վարուժան
- դ. Մ. Մեծարենց

1. Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի.  
Ես՝ հաշմանդամ ու խելագար ու հավիտյա՛ն վտարանդի,  
Գեպի երկի՛նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի՛  
Իմ բա՛րձր, հին ու աստղային երազների ճանապարհով...
2. Հունձք կը ժողվեմ մանգաղով,  
-Լուսնակը յարս է-  
Ակոս-ակոս ման գալով:  
-Սիրածս հարս է:
3. Կախարդական մի շղթա կա երկնքում՝  
Աներևույթ, որպես ցավը խոր հոգու.  
Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն՝  
Օղակելով լույս աստղերը մեկնելու:
4. Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե  
Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,  
Հոգիներուն կ'իջնե երազ մը բուրյան,  
Ի՛նչ հեշտին է մըթնշաղն այս սատափե:

- 1) ա-1, բ-3, գ-2, դ-4
- 2) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 3) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 4) ա-3, բ-2, գ-1, դ-4

**193. Ո՞րը դրամատիկական սեռի ստեղծագործություն չէ:**

- 1) «Հարդագողի ճամփորդները» (Ե. Չարենց)
- 2) «Հին աստվածներ» (Լ. Շանթ)
- 3) «Արա Գեղեցիկ» (Ն. Չարյան)
- 4) «Պատվի համար» ( Ալ. Շիրվանզադե)

**194. Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործություններն են Հրանտ Մաթևոսյանինը:**

- 1) «Մթնածոր», «Ծիրանի փողը», «Նժույզս, նժույզս»
- 2) «Կանաչ դաշտը», «Նարինջ գամբիկը», «Աշնան արև»
- 3) «Կանաչ դաշտը», «Գոմեշը», «Սպիտակ ձիւն»
- 4) «Օգոստոս», «Մենք ենք, մեր սարերը», «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը»

**195. Ո՞ր շարքի ստեղծագործություններից ոչ մեկի հեղինակը Հրանտ Մաթևոսյանը չէ:**

- 1) «Արևին», «Նամուս», «Կանաչ դաշտը»
- 2) «Նարինջ գամբիկը», «Վարք մեծաց», «Հայ ժողովրդի երգը»
- 3) «Ավելորդը», «Հայոց վիշտը», «Տոհմի կանչը»
- 4) «Համբերանքի չիբուխը», «Աշնան արև», «Հայրենի հողը»

**196. Պնդումներից ո՞րն է սխալ Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի վերաբերյալ:**

- 1) Վիպակում գործողությունները ծավալվում են Հայրենական մեծ պատերազմի, նրան նախորդող և հաջորդող տարիներին:
- 2) Աղունը և Սիմոնը մեծացել են միասին, և ի վերջո նրանց մանկական մտերմությունը փոխվել է սիրո:
- 3) Աղունի բոլոր ձեռքբերումները իրականություն են դարձել համառ կամքի ու տոկունության շնորհիվ:
- 4) Աղունը լեզվանի է, Սիմոնը՝ լռակյաց, Աղունն անհանգիստ բնավորություն ունի, Սիմոնը՝ հանգիստ, դանդաղաշարժ և անճարակ:

**197. Ո՞ր շարքում է ճիշտ նշված հերոսների և ստեղծագործությունների համապատասխանությունը:**

- |                             |                                      |
|-----------------------------|--------------------------------------|
| 1. Աղուն, Արմենակ, Սիմոն    | ա. «Պատվի համար» (Շիրվանզադե)        |
| 2. Անուշ, Շուշանիկ, Պապաշա  | բ. «Նահանջը առանց երգի» (Շ. Շահնուր) |
| 3. Մուրեն, Բագրատ, Մարգարիտ | գ. «Աշնան արև» (Հ. Մաթևոսյան)        |
| 4. Պետրոս, Նենեթ, Մուրեն    | դ. «Քաոս» (Շիրվանզադե)               |

- 1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
- 2) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
- 3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
- 4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

**198. Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» երկի ո՞ր հերոսները վիպական գործողություններին անմիջականորեն չեն մասնակցում:**

- 1) Աղունի սկեսուր Արուսը և սկեսրայր Աբելը
- 2) Սիմոնը և Աղունի մայր Շողերը
- 3) Աղունի Իշխան հայրը և Արմենակ որդին
- 4) Սիմոնի քույր Արփիկը և Մերո որդին

**199. Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի հերոսուհի Աղունն ինչո՞ւ էր պատրաստվում քաղաք գնալ:**

- 1) տղային՝ Արմենակին, ամուսնացնելու
- 2) Սիմոնից բաժանվելու
- 3) կրտսեր որդուն՝ Մերոյին, քաղաք տանելու
- 4) գյուղից ու գյուղական աշխատանքից հանգստանալու

**200. Ինչո՞վ է ավարտվում Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակը:**

- 1) Աղունը և Սիմոնը կրկին վիճում են, և քաղաք՝ Արմենակի մոտ մոր փոխարեն գնում է փոքր եղբայրը՝ Մերոն:
- 2) Սիմոնը Աղունին ձիով ուղեկցում է մինչև բեռնատար մեքենան, որը նրան կայարան էր հասցնելու:
- 3) Արմենակը լուր է ուղարկում, որ մայրը չգա, որովհետև ինքը կնոջ հետ Մոսկվա է մեկնում:
- 4) Առանց ձիու աշխատատեղ գնացած Սիմոնը այնքան ուշ է վերադառնում, որ արդեն գնացքին հասնել չէին կարող, և Աղունի մեկնումը անորոշ ժամանակով հետաձգվում է:

**201. Բնութագրումներից յուրաքանչյուրը ո՞ր հեղինակին է վերաբերում:**

- |  |               |
|--|---------------|
| ա. Սփյուռքահայ գրականության առաջին ներկայացուցիչներից և ականավոր դեմքերից է, ով առաջինը հնչեցրեց սփյուռքահայերի ձուլման վտանգի ահազանգը: | 1. Հ. Սահյան  |
| բ. Նա ստեղծեց քարափների, ջրվեժների ու ծիածանների մի գունագեղ աշխարհ:   | 2. Վ. Սարոյան |
| գ. Համաշխարհային հռչակ վայելող օտարագիր հայ գրող է:  | 3. Շ. Շահնուր |
| դ. Նա իր հետ բերեց զանգեզուրյան բնաշխարհի նախնական ու վայրի պատկերները:  | 4. Ա. Բակունց |

- 1) ա-3, բ-2, գ-1, դ-4
- 2) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 3) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 4) ա-4, բ-2, գ-1, դ-3



**202. Ո՞ր պնդումը ճիշտ չէ:**

- 1) Հովհաննես Թումանյանը համոզված էր, որ ժողովրդական բանահյուսությունը կարող է անսպառ նյութ տալ գրողին:
- 2) Մովսես Խորենացին կարևորում է ազգային միասնության և պետականության գաղափարները:
- 3) Եղիշե Չարենցի կերտած գանգրահեր տղան խորհրդանշում է հենց իրեն՝ հեղինակին:
- 4) Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը պատկերում է քսրոյալների տառապանքը Սիբիրում:

**203. Պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) Նորավեպը փոքրածավալ արձակ ստեղծագործություն է, որտեղ գործողությունները զարգանում են արագ ու սրընթաց: Այն ունենում է կտրուկ ու անսպասելի ավարտ:
- 2) Պոեմները լինում են պատմողական (էպիկական), քնարական (լիրիկական) և քնարապատմողական (լիրո-էպիկական):
- 3) Հայ գրականության մեջ քնարական պոեմի դասական օրինակներ են Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» և Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմները:
- 4) Առակը փոքրածավալ ստեղծագործություն է, որին հատուկ են այլաբանությունն ու բարոյախրատական եզրակացությունը:

**204. Նշված հատկանիշները բանաստեղծական ո՞ր տեսակին են բնորոշ:**

*Ութտողանի բանաստեղծություն է, որի առաջին տողը նույնությամբ կրկնվում է որպես չորրորդ և յոթերորդ տող, իսկ երկրորդ տողը՝ որպես ութերորդ:*

- 1) հայրենի
- 2) սոնետ
- 3) գազել
- 4) տրիոլետ

**205. Երկտող տներից կազմված բանաստեղծությունը, որում տների երկրորդ տողերը հանգավորվում են առաջին տան տողերի հետ, կոչվում է՝**

- 1) սոնետ
- 2) հայրենի
- 3) տրիոլետ
- 4) գազել

**206. Գրական ո՞ր ուղղությանն են բնորոշ նշված առանձնահատկությունները:**

*Կյանքի պատկերման մեջ առաջ է մղվում ցանկալին: Գրողը հաճախ գիտակցաբար հրաժարվում է տիպական երևույթների պատկերումից և իր հզոր երևակայությամբ ստեղծում է այն, ինչ ցանկանում է տեսնել կյանքում:*

- 1) սիմվոլիզմին
- 2) ռեալիզմին
- 3) ռոմանտիզմին
- 4) կլասիցիզմին

**207. Գրական ո՞ր ուղղության բնորոշ գծերն են՝**

- բանականության պահանջ, տրամաբանական օրենքներով ղեկավարվելու կոչ՝ հաճախ ի վնաս հուզականության,
- ժանրերի բաժանում «բարձր» (հերոսական պոեմ, ողբերգություն, ներբող) և «ցածր» (կատակերգություն, առակ) խմբերի:

- 1) կլասիցիզմի
- 2) ռոմանտիզմի
- 3) սիմվոլիզմի
- 4) ռեալիզմի

**208. Գրական ո՞ր ուղղության բնորոշ գծերն են՝**

- Հռչակում է գրողի ստեղծագործական ազատության սկզբունքը:
  - Պատկերելով կյանքի արատները՝ դրանց հակադրում է իր իդեալը՝ ստեղծելով գաղափարական հերոսներ:
- 1) կլասիցիզմի
  - 2) սիմվոլիզմի
  - 3) ռեալիզմի
  - 4) ռոմանտիզմի

**209. Գրական ո՞ր ժանրի բնութագրումն է հետևյալը՝**

*Իրականությունը պատկերվում է այլաբանորեն, մարդկանց և անձնավորված կենդանիների, բույսերի, առարկաների միջոցով:*

- 1) բալլադի
- 2) առակի
- 3) պատմվածքի
- 4) պոեմի

**210. Բնութագրումներից ո՞րը գրական որ ժանրին կամ տեսակին է վերաբերում:**

- |   |  |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Փոքր ծավալի արձակ ստեղծագործություն է, որտեղ դեպքերն ունենում են սուր ընթացք և անսպասելի ավարտ:</li> <li>2. Դրամատիկական ժանր է, որը միջին տեղ է գրավում ողբերգության և կատակերգության միջև, արծարծում է հոգեբանական խնդիրներ:</li> <li>3. Չափածո մեծածավալ ստեղծագործություն է, որտեղ կա դիպաշար. այդ դիպաշարը ուղեկցվում է հեղինակային միջամտություններով:</li> <li>4. Քառասող բանաստեղծություն է, որն ունի ավարտուն միտք և փիլիսոփայական բովանդակություն:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>ա. քնարական պոեմ</li> <li>բ. նորավեպ</li> <li>գ. դրամա</li> <li>դ. քառյակ</li> <li>ե. քնարաէպիկական պոեմ</li> </ol> |
|---|--|
- 1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
  - 2) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ
  - 3) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ
  - 4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե

**211. Պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) Երգիծանքը իրականության գեղարվեստական արտացոլման ձևերից մեկն է, որին հատուկ է ծաղրը:
- 2) Ողբերգությունը և կատակերգությունը պատկերում են կյանքի երկու ծայրաթևերը՝ ողբերգականը կամ ծիծաղելին:
- 3) Դրամայի մեջ կարող են լինել ինչպես ողբերգական, այնպես էլ կատակերգական առանձին երանգներ, բայց դրանք չեն դառնում բացարձակորեն գերակշռող:
- 4) Պատմվածքը և նորավեպը (նովել) փոքր ծավալի արձակ երկեր են, որոնք աչքի են ընկնում սրընթաց գործողությամբ, պատմվող դեպքի բացառիկ բնույթով և անսպասելի վախճանով:

**212. Տրվածը բանաստեղծության ո՞ր տեսակն է:**

*Երեկ ցորեկով բարով տանեին մեկ եար մի ճորով.  
Ըզնա ճորով է տարած, կամ խարած է զինք դրամով:  
Մերրն որ դրամով լինի, զինք էրել պիտի կրրակով.  
Մերրն խրնձորով պիտի ու դրամ-դրամ շեքերով:*

- 1) սոնետ
- 2) տրիոլետ
- 3) հայրեն
- 4) զանձ

**213. Տրվածը բանաստեղծության ո՞ր տեսակն է:**

*Իջնում է գիշերն անգութ ու մթին,  
Եվ այգը բացվում դառն ու մահահոտ,  
Բայդ հրկեզ հոգիս մորմորում այս տոթ  
Հավատում է դեռ քո առավոտին:*

*Թող կիսովի խավարն ավելի խրթին,  
Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ,  
Ու թող գա՛, թե կա, ավելի՛ չար բոթ,  
Մեխվի զոհ-երկրիս անարգված սրտին:*

*Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ  
Մի հեզ նահրցի՝ զնում եմ անկանգ.-  
Թող գուժկան գիշերն ահասատ դավե -  
Որքան մութը սև՝ այնքան ես համառ,  
Երկնի՛ր, իմ երկիր, հավատով անմար,  
Սուրբ է քո ուղին և պսակըդ՝ վեհ:*

- 1) տրիոլետ
- 2) գազել
- 3) քառյակ
- 4) սոնետ

**214. Տրվածը բանաստեղծության ո՞ր տեսակն է:**

*Չեմ դավաճանի իմ Նվարդին,  
Որքան էլ դյութես, օ՛, Շամիրամ,  
Որպես արքան այն, մանուկ Արան,  
Չեմ դավաճանի իմ Նվարդին,  
Որքան փորձանք գա իմ զոհ-սրտին,  
Որքան էլ փայլդ փայե նրան,  
Չեմ դավաճանի իմ Նվարդին,  
Որքան էլ դյութես, օ՛, Շամիրամ:*

- 1) սոնետ
- 2) տրիոլետ
- 3) գազել
- 4) հայրեն

## ԳԼՈՒԽ 2 ԿԱՐԾ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

### ԲԱԺԻՆ 1 ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### I ՏԵՍԱԿ

1. **Տրված բառերից և բառաձևերից քանիստ՞ում չի գրվում է.**  
սիր-րգ, այժմ-ական, առօր-ական, երբևից-, հյուլ-, որևից-, գոմ-շ, հետզհետ-, չ-նք, աշտ-, միջօր-, ամենա-ական:
2. **Տրված բառերից և բառաձևերից քանիստ՞ում է գրվում օ.**  
մի-րիմակ, օրեց-ր, չ-ժանդակել, նախ-րյակ, ան-թ, ամեն-րյա, մեղմ-րոր, աման-րյա, թիկն-թոց, ան-թևան, հանր-գուտ, արծաթագ-ծ:
3. **Տրված բառերից և բառաձևերից քանիստ՞ում չի գրվում ք.**  
ունկ-նդիր, առ-նթեր, ակ-նբախ, ին-սուն, մթ-նկա, չ-մբռնել, անակ-նկալ, ակ-նհայտ, հոտ-նկայս, շր-խկոց, օր-ստօրե, ան-ստույգ:
4. **Տրված բառերից և բառաձևերից քանիստ՞ում է գրվում ք.**  
հնդկ-նկույզ, երկ-նտրանք, ան-ստզյուտ, ճեպ-նթաց, չ-նկնել, առ-նչվել, մթ-նկա, դանդաղ-նթաց, գահ-նկեց, այլ-նտրանք, ան-նդմեջ, ինքն-ստիճյան:
5. **Բառերից քանիստ՞ում է գրվում եվ.**  
ուղ-որվել, բ-եռել, գեր-արել, թր-ել, ոգ-որել, գոտ-որել, ոսկ-որել, արժ-որել, սեթ-եթել, կար-որել:
6. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում եվ.**  
գոտ-որել, հոգ-արք, գեր-արել, ոսկ-որել, տար-երջ, սերկ-իլ, դափն-արդ, սեթ-եթել, կար-եր, հոգ-որ, հոգ-իճակ, եղ-նուտ:
7. **Բառերից քանիստ՞ում է գրվում չի.**  
Գ-ա-րիել, ար-շիռ, թրմ-ալ, թմ-կահար, Հայար-ի, հար-ած, Հռի-սիմե, հարածու-, հա-շտապ, հա-շտակել:
8. **Բառերից քանիստ՞ում է գրվում ք.**  
բարվո-, գո-նոց, գո-ավոր, ջրապապա-, նորո-ել, հո-ս, հավա-ել, հո-նաբել, ո-ելից, ոռո-ել, Մար-ար, հովեր-ություն:
9. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում դ.**  
Նվար-, Չվար-, անգայ-, անդա-րում, կորնթար-, ակնթար-, խոր-ուրոր-, զար-ոնք, զար-, նշ-արենի:
10. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում ս.**  
բա-կաթոռ, իշիա-, որպե-զի, պար-կա, վ-կապ, Հա-կերտ, վա-քուղի, Մար-պետունի, զա-րախոս, ան-գա, Տո-պ, թիկնա-որ:
11. **Տրված բառերից և բառաձևերից քանիստ՞ում չի գրվում յ.**  
ուխտադրու-ժ, աղյուս-ակ, վա-րկյան, Միքա-ել, Մերգե-ի, հաստարու-ն, գու-ժկան, Իսրա-ել, Ռաֆա-ել, միմ-այն, պո-եմ:
12. **Տրված բառերից և բառաձևերից քանիստ՞ում է գրվում յ.**  
հա-ելի, գա-խոն, ոսպն-ակ, տրամվա-, Նա-իրի, մի-այն, խնա-ել, քրիստոն-ա, լռել-այն, քահանա-ի, արքա-որդի, հոգ-ակ:

13. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *խ*.**  
ապու-տ, ք-կի, կթ-ա, հա-ճապակի, ու-տազնաց, խա-տել, նա-շ, կ-տար, Վա-թանգ, վա-ճան, փա-  
չել, վ-տալ:
14. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *ց*.**  
հանդիպակա-, հոգա-ություն, դաղ-, ապաթար-, պախուր-, տր-ակ, լվա-ք, խուր-, մտա-ածին,  
երկյուղա-ություն, կ-կտուր, ճրագալույ-:
15. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *հ*.**  
հայ-ոյել, Հով-աննես, հեղ-եղուկ, ապաշխար-ել, արհամար-ել, խոնար-, հայթ-այթել, հեղ-եղատ,  
օր-նանք, շնոր-ալի, խոր-ին, ընդ-ուպ, չնաշխար-իկ:
16. **Տրված բառերից քանիստ՞ում *չ/ի* գրվում *հ*.**  
ընդ-անուր, քամա-րել, ճանապար-, նշխար-, ընդ-ուպ, նախագա-, վրդո-վել, շնոր-ք, խոր-ուրդ,  
հուպ-ուպ, հեղ-եղատ:
17. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *շ*.**  
դ-կամ, խա-ակն, խա-ամուժ, դ-խուհի, եռա-անի, դր-ել, հու-կու, գու-կան, աշխույ-, օ-արակ,  
պատ-գամք, խա-նարած:
18. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *ժ*.**  
խա-ամ, ապա-ավանք, ան-եջ, դ-խեմ, դ-խո, պատ-գամք, ու-ազնաց, ան-տապ, դ-նդակ, ա-  
տանակ, դ-նի, ժու-կալ:
19. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *ջ*.**  
անգի-ում, թռ-ուկ, գեղ-ուկ, ա-ակողմ, խոխո-, գղ-ալ, գեղ-ել, խառնիճաղան-, փայտո-իլ, լա-  
վարդ, գա-աճ, առ-և:
20. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *չ*.**  
պ-րանք, կտրի-աբար, դար-ին, մի-և, անտերուն-, ակնակապի-, փար-, փ-ակ, մոն-յուն, փու-,  
գեղ-ել, Սո-ի:
21. **Տրված բառերից քանիստ՞ում *չ/ի* գրվում *մ*.**  
Սա-վել, ա-բարիշտ, ա-պամած, ճա-պրուկ, ա-փոփոխ, ա-բարտավան, սի-ֆոնիա, ա-բասիր,  
բա-բակ, բա-բեր, ա-բիոն, ճա-փա:
22. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *ն*.**  
բա-բեր, ա-պաճույճ, ա-պատկառ, ա-պայման, ա-բիոն, բա-բիռ, ա-փույթ, ա-բրոս, ա-պարփակ,  
ա-բիծ, Մա-վել, հա-պատրաստից:
23. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *ց*.**  
կուր-ք, թյուրիմա-ություն, անդամալույ-, ցն-ուղ, կեցվա-ք, հինավուր-, անեղ-, ցն-ել, դեր-ան,  
ցան-կեն, հոգա-ություն, կ-կտուր:
24. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *թ*.**  
հար-արել, անգայ-, վար-ապետ, անդա-բում, բուր-, խոր-ուբորդ, հար-աշաղախ, լյար-, զար-  
ուցիչ, ըն-արմանալ, լեր-անալ, վր-ովել:
25. **Տրված բառերից քանիստ՞ում *չ/ի* գրվում *ռ*.**  
կ-ծել, գանգու-, մրմու-, խ-ճիթ, ե-եսուն, ա-ժանի, մա-մա-, փ-փ-ել, խա-նիխուն, գո-շ, ա-ծիվ,  
փ-փ-ալ:
26. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *ռ*.**  
ա-տնին, վա-վ-ուն, կ-թնել, կ-ծել, կե-ման, փ-փ-ալ, սահմ-կել, զմ-սել, գ-գիռ, հ-հռալ, կա-ք, խու-  
ներամ:

- 27. Տրված բառերից քանիստ՞ում չի գրվում *խ*.**  
լեզ-ն, Բյուզանդ-ն, Նապոլ-ն, ամ-բա, գիլ-տիմ, ընտան-ք, արդ-ք, թ-րեն, քամել-ն, ակորդ-ն:
- 28. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *խ*.**  
օվկ-նոս, փաս-ն, Ջաքար-, կր-, Անդր-ս, Երեն-, ակադեմ-, Մար-մ, Եպրաքս-, դաստ-րակ, հր-, Բեն-մին:
- 29. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *յա*.**  
լռել-յն, Երմոն-, ման-կ, Վոլոդ-, Վիլ-մ, Արաքս-, բար-ցակամ, Մարի-, առօր-, գործուն-, եղ-մ, բամ-:
- 30. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *տն*.**  
օր-րդ, չենպ-ն, հ-րոզիֆ, ամ-բա, մարմար-ն, Թ-դոսիա, ակորդ-ն, քամել-ն, լեզ-ն, Նապոլ-ն, թ-րեն, ֆել-տոն:
- 31. Նախադասություններից քանիստ՞ում *դ*-ով գրվող բառ կա:**  
Չորրորդ օրը ու-տապանը ճանապարհ ընկավ:  
Հավաքված տա-տակներից լաստ պատրաստեցին:  
Նրա փ-ձկոցը անհանգստացնում էր հավաքվածներին:  
Քննադատները շարունակում էին ձա-կել սկսնակ բանաստեղծին:
- 32. Նախադասություններից քանիստ՞ում կրկնակ *վ*-ով գրվող բառ *չկա*:**  
Հո-ի մախաղը թեթևացավ նախաճաշից հետո:  
Նա վրդո-եց՝ այդ լուրը լսելով:  
Երեկվա հո-ից հետո անտանելի է այսօրվա տապը:  
Նրանք ժողո-ել էին հողե տանիքի վրա:
- 33. Նախադասություններից քանիստ՞ում կրկնակ բաղաձայն ունեցող բառ կա:**  
Հեղինակի ու-եզրությունները հետաքրքրեցին ընթերցողներին:  
Տորենի մ-իկը մեծ վնաս հասցրեց հանդիմ:  
Մասնիկները արագորեն տա-ալուծվեցին ջրում:  
Քաղաքական գործչի ըն-իմադիր կեցվածքը զարմացրեց բոլորին:
- 34. Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**  
որձկալ, աշխարհացունց, բամբիշ, ուղղարկել, կերկերուն, փռփռալ, համբյուր, մեղալյոն, շանբուտ, սպանախ, աղճատել:
- 35. Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**  
բաղդատել, դյուզն-ինչ, դշխուհի, անհողդիողդ, երկորյակ, դիցուկ, գորգոռոց, գաղթագողի, կորնթարթ, փողկ, գլուխկոնձի:
- 36. Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**  
տաքդեղ, դաստիրակ, տարրալուծել, ուխտադրույժ, առընչվել, աշխարհացունց, սրախողխող, հայթհայթել, յուրովսանն, մգացնել, մեղմօրօր:
- 37. Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**  
մտացածին, հինավուրձ, հղբանալ, ոստրե, լուսատուիկ, կառկառուն, նախկին, թմկաթաղանթ, ընդդարմանալ, ժալիրի, ի հեճուկս:
- 38. Տրված տեքստում քանի՞ ուղղագրական սխալ կա.**  
Հակառակ իր վանող արտաքինին՝ նա մարդախույս չէր. ընդհակառակը, չափազանց բարիացակամ քրիստոնիս էր և աշխատում էր աչքի չնկնել: Կլիներ հիսունիննից վացուն տարեկան: Հանապազօրյա աշխատանքին զուգընթաց տարվում էր մարգարեական խորդածություններով, որոնք անդորր էին բերում խռովահույզ հոգուն, ոսկոռտ մարմնին:

39. **Տրվածներից քանիստ՞ում են բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչները գրվում մեծատառով.**  
 ԶՈՐՁ ԲԱՅՐՈՆ, ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ, ԱՐԻՍՏԱԿԵՍ  
 ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ, ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐ, ԵՐԵՄՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ, ՉԱԽՈՐԴ ՓԱՆՈՍ,  
 ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ:
40. **Տրվածներից քանիստ՞ում են բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները գրվում մեծատառով.**  
 ԱՆՆԱ-ՄԱՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ,  
 ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, ՏՐԴԱՏ ԱՌԱՋԻՆ, ԴԱՎԻԹ ԱՆՀԱԳԹ,  
 ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏ:
41. **Քանի՞ քառակապակցության մեջ մեծատառի գործածության սխալ կա.**  
 Նոբելյան Կոմիտե, Թուրքմենչայի պայմանագիր, Թուխմանուկ վանք, Էկվադորի  
 հանրապետություն, Բենիլյուքսի Երկրներ, Բևեռային աստղ, Պիպին կարճահասակ, Բուլոնյան  
 Անտառ, Բյուրականի աստղադիտարան, Եվրասիական տնտեսական համագործակցություն:
42. **Տրվածներից քանի՞սն են գրվում *առանձին*.**  
 հույն(պարսկական), ասել(լսել), ասես(թե), աման(չաման), բաց(դեղին), մի(գուցե), վեր(կենալ),  
 (չորս)հինգ, հյուսիս(ամերիկյան), հինգ(մետրանոց), քաջ(առողջ), լիտր(վայրկյան):
43. **Տրվածներից քանի՞սն են գրվում *միասին*.**  
 հինգ(ճյուղանի), հոդս(ցնդել), ինչ(որ)է, քանի(երորդ), ի(սպառ), իննսուն(ինը), գիրկ(ընդ)խառն,  
 վեր(լուծել), դաս(դասել), առ(հավետ), նոր(նորքցի), ուր (էր)թե:
44. **Տրվածներից քանի՞սն են գրվում *գծիկով*.**  
 գլուխ(կոտրուկ), գուգվել(գարդարվել), անդր(բևեռային), գագ(այրիչ), գյուղե(գյուղ), խեթ(խեթ),  
 աղաչանք(պաղատանք), հետ(ծննդյան), փոխ(արքա), ըստ(ամենայնի), ոչ(ինչ),  
 ուսուցիչ(ուսուցչուհի):
45. **Քանի՞ բաղաձայն հնչյուն կա *ոչնչացնել* բառում:**
46. **Քանի՞ բաղաձայն հնչյուն կա *որմնանկար* բառում:**
47. **Քանի՞ ձայնավոր հնչյուն կա *սերկկի* բառում:**
48. **Քանի՞ ձայնավոր հնչյուն կա *ծկնկիթ* բառում:**
49. **Բառերից քանիսի՞ բոլոր վանկերն են փակ.**  
 անրջել, որդնել, արվարձան, տնտեսվար, աղջամուղջ, Երեմիա, հանդերձանք, բարձրացնել,  
 ապշել, արցունքոտ, ընդհանուր, ենթարկել:
50. **Բառերից և բառաձևերից քանիսի՞ բոլոր վանկերն են փակ.**  
 համրանալ, վայրկյաններ, կրծքավանդակ, ընդունված, հնձվոր, խոչընդոտ, ենթարկվել,  
 կապտել, աջհամբույր, պատճառներ, ընտրարշավ, օգտագործել:
51. **Բառերից և բառաձևերից քանիսի՞ բոլոր վանկերն են բաց.**  
 հնամենի, վայրենի, մեծարգո, կատաղի, գարի, քարե, ունելի, պատանի, աերոբազա, առաքինի,  
 լեզու, ժամանակակցի:
52. **Տրված բառաշարքի բառերում մեկից ավելի բաց վանկ ունեցող քանի՞ բառ կա.**  
 թևավոր, բժշկական, պտղահյութ, շերտավոր, պսպղուն, վկա, ռեպորտաժ, շնչակտուր,  
 սառցաշերտ, վերջնահնչյուն, շրջակայք, միաձույլ:

**53. Բառերից քանիստ՞ում գաղտնավանկ չկա.**

ծանրամարտ, ունկնդիր, ըմբոստ, երփներանգ, ընկերական, ծաղկաման, աննկատելի, կարծր, ակնահաճո, առանցք, ջերմաչափ, չարչարանք:

**54. Բառերից քանիստ՞ում գաղտնավանկ կա.**

թռչուն, շրջագայություն, հստակություն, հնարամիտ, ըմբշամարտ, թվարկություն, գրաշար, նկարակալ, վնասագերծել, ձեռնամարտ, զմրուխտյա, խոսակից:

**55. Բառերից քանիստ՞ում է ընդգծված է-ն արտասանվում է.**

անեզր, զարկերակ, կիսանեփ, վերելք, գետեզր, ինքնատեռ, աներեր, մենեթ, ուղերթ, զուգերգ, ամենաներագկոտ, ակներև:

**56. Բառերից քանիստ՞ում է ընդգծված ռ-ն արտասանվում օ.**

տարրորոշել, հնաճո, արջառոր, անորակ, անորոշ, անողոք, մարդառոր, քաջորդի, ութտունուկ, սառնորակ, ձկնորս, վաղորդայն:

**57. Բառերից քանիստ՞ առաջին արմատն է միավանկ.**

սրբազան, մարդասպան, ձվածև, նեղգադավ, հպանցիկ, վարդաբույր, գրադարան, թիավարել, գարեջուր, ուխտադրուժ, ուսանող, բարձրաշխարհիկ:

**58. Բառերից քանիստ՞ առաջին արմատն է միավանկ.**

խրձածև, պնդողակ, ուսումնատենչ, սնապարծ, բարձրուղեշ, ագեվագ, տարեդարձ, հայրենադարձ, հուշարձան, հպանցիկ, հարցասեր, կարեվեր:

**59. Բառերից քանիստ՞ առաջին արմատն է բազմավանկ.**

ճամփաբաժան, վարչական, բուրումնալից, նկարակալ, աշխարհագոր, ջարդուփշուր, երախտամոռ, հավատափոխ, անձկություն, կարկտաբեր, ծաղկափթիթ, արծվաբույն:

**60. Բառերից քանիստ՞ վերջին արմատն է միավանկ.**

կաթնակեր, արևելահայություն, գրահապատել, առանձնատիպ, մեծարժեք, կիսավերարկու, ալեկոծ, երկնաքեր, հիմնադրել, լրտես, հանքափոր, խառնաշփոթ:

**61. Բառերից քանիստ՞ վերջին արմատն է միավանկ.**

հաղորդակցություն, շրջմուխիկ, ակնահաճո, նույնանիշ, թանկարժեք, երթևեկություն, շրջանավարտ, կպրապատ, ծովահեն, երկդիմի, ընդդիմադիր, երդմնագանց:

**62. Բառերից և բառաձևերից քանիստ՞ վերջին վանկը չի շեշտվում.**

խշխշոց, սիրտ տալ, մարգարիտ, մաքրություն, զարթոնք, հողմեր, ուրիշ, սպեղանի, նկարակալ, աշակերտական, քանիերորդ, արեգակ:

**63. Բառերից քանիստ՞ում է(են) ձայնավորի հնչյունափոխություն կա.**

հանդիսատես, սիրահոժար, հանդիպակաց, ուղեգորգ, կիզանուտ, միգապատ, գիտակ, սիգաճեմ, զինակիր, համատիրություն, քմահաճույք, մտամոլոր:

**64. Բառերից քանիստ՞ում է ձայնավորի հնչյունափոխություն կա.**

դիզել, գիտական, ալեհույզ, գիտակից, հոգաբարձու, խցանում, փթթուն, ժպտուն, փոշեկուլ, մտնել, դիմակայել, ընչացք:

**65. Բառերից քանիստ՞ում է ձայնավորի հնչյունափոխություն կա.**

ընկնել, ընչացք, ընչաքաղց, ընդունակ, ընձուղտ, ընկեր:

**66. Բառերից քանիստ՞ում ու ձայնավորի հնչյունափոխություն կա.**

ըղձալի, ընդհանուր, ընչաքաղց, ըմպել, ընդունայն, ընկեր, ընտրանի, ընդեղեն, ընդամին:



**67. Բառերից քանիստ՞ում յա երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

ատենակալ, հորեղբայր, սենեկապետ, քրիստոնեություն, սյունակ, մատենագիր, առօրեական, կենարար, միութենական, գործունեություն:

**68. Բառերից քանիստ՞ում երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

այժմեական, գյուղեգյուղ, անբնական, փոշեկուլ, փութալ, գուշակ, գուժկան, խուզարկու, վայրկենական, ընտանեկան, ձնաբուք, կապտականաչ:

**69. Բառերից քանիստ՞ում երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

բնավայտ, ձկնաբուծարան, բուրաստան, անթույլատրելի, անգոյշորեն, գուժկան, ուխտադրուժ, քրիստոնեություն, դաշունահարել, անգուգադրելի, կուտակել, վայրկենական:

**70. Բառերից քանիստ՞ում երկհնչյունի հնչյունափոխություն չկա.**

հրապուրիչ, կղզյակ, բուրյան, ողջունել, մատենագիր, թուլակազմ, կեցություն, լուսավիթի, խուսափուկ, զեկուցագիր, գործունեություն, ցուցլալ:

**71. Բառերից քանիստ՞ում ձայնավորի սղում կա.**

ծանրացնել, գրկել, ամսագիր, ընտրել, գլխիկոր, իրիկնադեմ, լլկանք, խնկարկել, ջրառատ, հրաման, հոգաբարձու:

**72. Քանի՞ բառում արմատի հնչյունափոխություն կա.**

հանգուցյալ, ժողովածու, մրցույթ, պատանեկան, սառցաշերտ, թախծախառն, լիտրուկես, վարչական, դիակիզարան, ահագնացայտ, վերստին, հայրենադարձ:

**73. Քանի՞ բառում արմատի հնչյունափոխություն կա.**

իշիաս, իշամեղու, իշխան, իշաբեռ, իջեցում, իսլամ, իսկույն, իջևանատուն:

**74. Քանի՞ բառում արմատի հնչյունափոխություն կա.**

սրտագին, արարչագործ, ծնունդ, կպչուն, հնչեղ, կուտակել, տխրություն, լծորդ, փախստական, ակնթարթ, փափկել, հեռաստան:

**75. Քանի՞ բառի առաջին արմատում հնչյունափոխություն կա.**

պատմագետ, հանրամատչելի, ուխտագնաց, առվեզերք, գետնանուշ, բնավեր, տպարան, սիգանեմ, առվույտադաշտ, խորաքնին, բռնակալ:

**76. Քանի՞ բառի երկրորդ արմատում հնչյունափոխություն կա.**

մեղմահնչյուն, կարգադրել, սպառազեն, մասնակցություն, հրկեզ, ձայնագրել, լրատվական, գիտահանրամատչելի, արևմտյան, ուսումնատենչ, խաղաշրջան:

**77. Քանի՞ բառում ածանցի հնչյունափոխություն կա.**

ներկայացուցչություն, վարչություն, վարձատրել, գերապատվություն, տեսչական, ուսուցչություն, կառուցապատում, բնութագրական, նկարչական, միջնապատ, մատուցարան, ժողովրդական:

**78. Քանի՞ բառում ածանցի հնչյունափոխություն չկա.**

անասնաբույժ, ենթավերնագիր, գիտնական, ծաղկեփունջ, օրացուցային, լուսանկարչատուն, գործունեություն, վերնագգեստ, քրիստոնեություն, աղեկեզ, ուժգնություն, վերջնական:

**79. Չայնավորի հնչյունափոխության քանի՞ դեպք կա տրված բառերում.**

ճոքակոշիկ, ոսկեզօծ, ընչացք, խորհրդատվություն, ակնթարթ, ծննդյան, մտահոգ, վիժանուտ, գուշակ, մեղրահաց, արքայադուստր, բարեկիրթ:

**II ՏԵՄԱԿ**

**80. Նշել այն բառերի համարները, որոնցում գրվում է *զ*.**

1. ան-ր, 2. ան-գա, 3. ան-փոփ, 4. ան-քող, 5. Տո-սյ, 6. Մար-սլետունի, 7. վա-քուղի, 8. ան-գույշ,
9. ան-ուզակյան:

**81. Նշել այն շարքերի համարները, որոնցում ուղղագրական սխալ կա.**

1. սեփ-սև, հուսախաբ, խարխաբել, լիրբ
2. հապշտապ, տարփողել, թարփ, ամրակոպ
3. նրբանկատ, խափկանք, բորբ, սպրդել
4. սրբել, թայրտալ, շամբուտ, ծուպավոր
5. աղուսյակ, ծփծփալ, սափրիչ, կափկափել
6. կառափնարան, երկնահուփ, հղփանալ, գիպս

**82. Նշել այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ կա.**

1. ամբասիր, 2. անբարիշտ, 3. գիրկընդխառն, 4. գրաբար, 5. գգուշորեն, 6. բամբիռ, 7. տարրորոշել,
8. քարակարկառ, 9. խորդուբորդ:

**83. Նշել այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ կա.**

1. արծարծել, 2. բարբաջել, 3. բարբառել, 4. սեթևեթել, 5. հեթեթալ, 6. առթառթալ, 7. ելևեջել,
8. կայծկլտալ, 9. կռկռթալ:

**84. Նշել այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ կա.**

1. տարրորոշել, 2. տարրալուծել, 3. միատար, 4. տարրական, 5. տարրնթաց, 6. տարադրամ:

**85. Նշել այն բառերի համարները, որոնք գրվում են առանձին.**

1. վեր(կենալ), 2. ծայրից(ծայր), 3. դաս(դասել), 4. թեթև(քաշային), 5. ձեռք(բերում), 6. ի(ծնել),
7. դեմ(հանդիման), 8. ի(դերև)ելնել:

**86. Նշել այն բառերի համարները, որոնք չեն գրվում առանձին.**

1. շիլա(շփոթ), 2. չար(որակ), 3. հետ(ճգնաժամային), 4. ի(հեճուկս), 5. ըստ(ամենայնի),
6. դույզն(ինչ), 7. գիրկ(ընդ) խառն, 8. հարյուր(մեկերորդ):

**87. Նշել այն բառերի համարները, որոնք չեն գրվում միասին.**

1. առ(հավետ), 2. թելիկ(մելիկ), 3. չորս(հինգ), 4. մաս(մաքուր), 5. երկու(երրորդ), 6. հինգ(հարկանի),
7. ամենա(երկար), 8. խոսքի(մասային):

**88. Նշել այն համարները, որոնցում բաղադրյալ հատուկ անունների *աչ* բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով.**

1. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ, 2. ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 3. ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, 4. ԳԱՅԼ ՎԱՀԱՆ, 5. ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ, 6. ԹԱՄԱՆՅԱՆ ԴԻՎԻԶԻԱ, 7. ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ, 8. ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:

**89. Նշել այն բառերի համարները, որոնցում *ռ*-ն արտասանվում է *լօ*.**

1. բարձրորակ, 2. ամենաորակյալ, 3. որևէ, 4. որդեսեր, 5. բազմաոստ, 6. անողոք, 7. նրբաոճ,
8. ոգելից, 9. չարորակ:

**90. Նշել այն տառակապակցությունների համարները, որոնց թվային արժեքը սխալ է նշված.**

1. ՆԾ-460, 2. ՌՋՆ-1980, 3. ՅՈԿ- 6660, 4. ՎՅԳ-3330

**91. Նշել այն բառերի և բառաձևերի համարները, որոնցում *ե* տառը *յէ* երկինչյունի գրային նշանն է.**

1. հորեղբայր, 2. ինքնառ, 3. լուսնեղջյուր, 4. շքերթ, 5. փութեռանդ, 6. երևույթ, 7. միջերկրական,
8. տասներկու, 9. ամենաերջանիկ:

**92. Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.**

1. ձանձրությ, 2. սրբագիր, 3. ծաղրուծանակ, 4. հյուրասարահ, 5. հացաբույր, 6. մրահոն,
7. սեղանակից, 8. տատասկապատ, 9. ձեղնահարկ:

**93. Նշել այն բառերի համարները, որոնցում երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

1. եղջերավոր, 2. տարակուսանք, 3. ծննդավայր, 4. կազմալուծել, 5. ուխտադրուժ, 6. խուզարկու,
7. համահունչ, 8. ժուժկալ, 9. բնափայտ:

**94. Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխության 3 դեպք կա.**

1. թռչնաբույժ, 2. գիտաարտադրական, 3. ժողովրդախոսակցական, 4. որմնանկարչություն,
5. հոգեդատրիկ, 6. մանրէաբուծություն, 7. պատմալեզվագիտական, 8. սննդամիջոց,
9. վերաքննություն:

**95. Նշել այն բառերի համարները, որոնցում ձայնավորի հնչյունափոխություն կա.**

1. գունային, 2. տեղեկատվություն, 3. զինագործ, 4. հանրամատչելի, 5. մսամթերք,
6. զգուշավորություն, 7. խայտաբղետ, 8. ատենակալ, 9. հազարաթերթիկ:

**96. Նշել այն բառերի համարները, որոնցում ձայնավորի տղում կա.**

1. նախնական, 2. ընտանեկան, 3. կենդանական, 4. ծաղրանմանակում, 5. խեցեգործություն,
6. ներդրում, 7. առօրեական, 8. գիտնական, 9. բռնագրոսիկ:

**97. Նշել այն շարքերի համարները, որոնց բոլոր բառերում ույ երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

1. հանգուցալուծում, հուսադրել, հավաքուծարան, մթնկա
2. զեկուցագիր, մածնաթան, լվիճ, գուժկան
3. խուսանավել, կուտակում, պաճուճանք, զուգահեռ
4. թուլակազմ, մշակութային, ընկուզենի, համբուրել

ԲԱԺԻՆ 2 ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

I ՏԵՍԱԿ

1. **Քանի՞սն են *ավանդություն* բառին հոմանիշ.**  
տվյալություն, կանխավճար, զրույց, կտակ, պատմություն:
2. **Քանի՞սն են *բազրիք* բառին հոմանիշ.**  
հենակ, մետաղյա զրահ, նստարան, աստիճանավանդակ:
3. **Բառագույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից.**  
պախարհ-կխտար, բամբասանք-ասեկոսե, ոստոստալ-դալլալել, ընչացք-բեղ, հակամետ-իրարամերժ, սյուր-հովիկ, ակադճուն-դատարկ, ասպնջական-ժլատ:
4. **Բառագույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից.**  
ամբարտավան-գոռոզ, անձուկ-նեղ, չքմեղ-մեղավոր, հանուն-համար, հափշտակել-գողանալ, կողակից-ամուսին, դրացի-հարևան, արտևանունք-հոնք:
5. **Բառագույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից.**  
մանածագործ-ջուլիակ, սենեկապետ-նաժիշտ, ատյան-դատարան, ռահվիրա-առաջնորդ, համհարզ-թիկնապահ, աշտարակ-մոմակալ, ասպարոշ-գլխաշոր, ժուժկալ-ազահ:
6. **Հոմանիշների քանի՞ տեղակ կարող է կազմվել տրված բառացանկից.**  
ելուզակ, լուրթ, երեց, անագորույն, մավի, հեն, բարբարոս, ավագ, ավարառու, խաշնարած, մով, վայրենաբարո:
7. **Հոմանիշների քանի՞ տեղակ կարող է կազմվել տրված բառացանկից.**  
մեծարել, երկարաբանել, մեծանուն, ասպախույժ, փառաբանել, ջատագովել, դատարկախոսել, համբավավոր, ճամարտակել, երևելի, գետածի, վարգածի:
8. **Հոմանիշների քանի՞ տեղակ կարող է կազմվել տրված բառացանկից.**  
անագորույն, անսիրտ, ճարտար, տեգ, հմուտ, ժանտ, գեղարդ, անպատկառ, ժպիրի, վարժ, բարբաջանք, մկունդ:
9. **Հոմանիշների քանի՞ տեղակ կարող է կազմվել տրված բառացանկից.**  
երիզ, գանակոծել, մական, ուղենիշ, կուլա, ձաղկել, մահակ, գավ, ուրվապատկեր, փարչ, մտրակել, գայխոն:
10. **Հոմանիշների քանի՞ տեղակ կարող է կազմվել տրված բառացանկից.**  
խոտոր, կեղծավոր, աղոտություն, զարտուղի, փարիսեցի, ասպականություն, փափկամորթ, շեղ, երկերեսանի, աղտեղություն, հովանի, մորթապաշտ:
11. **Բառերից քանի՞սն են հականիշ *ժուժկալ* բառին.**  
անզուսպ, հախոռն, առատածեռն, չափավոր, շվայտ, չքմեղ:
12. **Բառագույգերից քանի՞սն են կազմված հականիշներից.**  
հոռետես-լավատես, փորձանք-հաջողություն, պարծենկոտ-համեստ, երախտագետ-անշնորհակալ, ակնդետ-անքթիթ, ակադճուն-լի, պիրկ-թույլ, ուսյալ-իմաստակ:
13. **Բառագույգերից քանի՞սն են կազմված հականիշներից.**  
աղքատ-մեծատուն, կիպ-մերձ, դյուրին-բարդ, հանգույն-ոսկեգույն, գողունի-գեղեցիկ, գժովել-ընդհարվել, նզովք-անեծք, զառամյալ-դեռատի:
14. **Բառերից քանիսի՞ իմաստն է սխալ բացատրված.**  
**ներառել**-ընդգրկել, **սոնետ**-նետի տեսակ, **փայլատ**-փայլվիլուն, **ներդիր**-վերնագիր, **մեզ**-մառախուղ, **ներբողել**-ձաղկել, **խոնջանք**-սեթևեթանք:

**15. Բառերից քանիսի՞ իմաստն է սխալ բացատրված.**

**Ներդաշնակ**-համահունչ, **անկոր**-ուղիղ, **անհարիր**-անհամատեղելի, **անոսր**-նոսր, **անտունի**-մուրացիկ, **ապար**-հանքատեսակ, **սրդողել**-վախեննալ:

**16. Քանի՞ բառ չի արտահայտում եփվել բառի իմաստներից և ոչ մեկը.**

եփ գալ, հարստանալ, փորձվել, բորբոքվել, թափվել:

**17. Նախադասություններից քանիստ՞ն փոխաբերական իմաստով գործածված բառ կա:**

Ամենքը շտապում էին մահամերձ միլիոնատիրոջ տուն, որ վերջին անգամ տեսնեն նրան և գուցե մի բան իմանան կտակի մասին:

Այդտեղ օդն այնքան խեղդուկ էր, որ մարդիկ հագիվ էին կարողանում շունչ քաշել:

Այսօր բաց էին պատուհանների ապակե փեղկերը, և փողոցի տոթն առատորեն լցվում էր ներս:

Բայց նախանձը կուրացրել էր մարդկանց, և հնարում էին ամեն ինչ, որ կարող էր քիչ թե շատ հանգստացնել իրենց:

**18. Տրված դարձվածքներից քանի՞սն ունեն նաև ուղիղ իմաստ.**

նոսրը քաշել, նոսրը քարին առնել, ոտին տեղ անել, նոսրը կտրել, նոսրը կապել, նոսր գալ, ոտի տակ ընկնել, ոտի տակը փորել, ոտները լիզել, ոտից գլուխ, ոտից-ձեռից ընկնել, նոսր փուշ մտնել

**19. Տրվածներից քանիստ՞ն է ետևից ընկնել դարձվածքի իմաստը սխալ բացատրված.**

մեկին հետապնդել, մի բանով հետաքրքրվել, սայթաքել, ձեռնարկել մի բան, գերազանցել:

**20. Տրվածներից քանիստ՞ն է ճակատ կազմել դարձվածքի իմաստը սխալ բացատրված.**

հաղթանակ տանել, դիմադրել, խոժոռվել, դիմագրավել:

**21. Բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.**

նետ-աղեղ, մեծ ու փոքր, գլուխ տալ, իրարով անցնել, աման-չաման, անթիվ-անհամար, մարդ-մուրդ:

**22. Բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.**

առոք-փառոք, այսօր-վաղը, նուի-նոր, լեփ-լեցուն, տուն-թանգարան, դիու-գուռնա, լավ-վատ:

**23. Բառերից քանի՞սն են հոդակապով.**

աղեկտուր, առևտուր, բանիմաց, ուղեվճար, կիսաքանդ, ծաղկաման, հաղթանդամ, ամպամած, կղզյակ, գինեգործ:

**24. Բառերից քանի՞սն են հոդակապով.**

ուղեկցորդ, վրիժառու, ձայներիզ, փոթորկահույզ, որոտընդոտ, փառատենչ, հպատակ, բարեգութ, անարզանք, շնորհակալ:

**25. Բառերից քանի՞սն են անհոդակապ.**

աղցան, լուսամուտ, գծագիր, լավատես, գարեհաց, այգեբաց, սողանք, հորդառատ, վազանց, սակագին:

**26. Բառերից քանի՞սն են անհոդակապ.**

սարսափազդու, թափանիվ, շաքարավազ, միզանուշ, ջրկիր, զարկերակ, կարոտակեզ, բարեգործ, այգեէտ, առապար:

**27. Բառերից քանի՞սն են բարդ.**

աշխարհագետ, հարկադիր, աստղադիտակ, փշարմավ, արգելափակոց, դեսպանատուն, արևայրուք, բազմաթիվ, բանտապետ, բոցավառ:

**28. Բառերից քանի՞սն են բարդ.**

ատենակալ, ատամնաբույժ, վրիժառու, կիսանջատ, ժուժկալ, քառակուսի, բաղաձայն, թվարկելի, գինետուն, տրամաչափ:

**29. Բառերից քանի՞սն են բարդ.**

միջնորմ, գործագուրկ, կորստաբեր, ըմբշամարտիկ, հանգստավայր, տեսախցիկ, հեռադիտակ, խոսքաշեն, տնաքանդ, գնացուցակ:

**30. Բառերից քանի՞սն են բարդ.**

ռազմակոչ, շնչասպառ, հրապարակ, աշակերտ, մակաբույժ, կարմրագույն, դաշունահար, ավեժուփ, ընչացք, պատշար, հացթուխ, վեհագույն:

**31. Տրված բառաշարքում *ապ-* նախածանցով քանի՞ բառ կա.**

ապակի, ապականել, ապուշ, ապաբախտ, ապահով, ապաստան, ապարդյուն, ապերախտ, ապարանջան, ապուր:

**32. Տրված բառաշարքում *-ակ* վերջածանցով քանի՞ բառ կա.**

դանակ, լճակ, ագարակ, աթոռակ, պատգարակ, ձորակ, այլակ, ավանակ, նամակ, դիտակ:

**33. Բառերից քանիսի՞ն արմատներից որևէ մեկին կարող է միանալ *-ում* վերջածանցը և բառ կազմել առանց 2-րդ ածանցի.**

հրահրիչ, սրտահույզ, երկնածիզ, արյունլվա, թաղապետարան, երկրաշարժ, բազկաթոռ, դրդապատճառ, պարտվել, արժանահավատ:

**34. Բառերից քանիսի՞ն արմատներից որևէ մեկին կարող է միանալ *ան-* նախածանցը և բառ կազմել առանց 2-րդ ածանցի.**

պատեհապաշտ, մոլեգին, ինելակորույս, բթամիտ, անուշեղեն, հանգստավայր, լավագույն, գերազանց, գնացուցակ, փորագրություն:

**35. Բառերից քանիստ՞ն կա *պատ* արմատը.**

պատվեր, պատշար, պատվիրան, պատմուճան, պատգարակ, պատշաճ:

**36. Բառերից քանիստ՞ն կա *գին* արմատը.**

սակագին, հեշտագին, լալագին, թանկագին, հիվանդագին, ցավագին:

**37. Բառերից քանիստ՞ն կա *առ* արմատը.**

խելառ, առաջին, առևտրական, առտնին, առարկել, արևավառ:

**38. Բառերից քանիստ՞ն կա *ամեն* արմատը.**

ամենագետ, ամենակույ, ամենասուղ, ամենահաղթ, ամենաբիրտ, ամենաթող:

**II ՏԵՄԱԿ****39. Համարակալված բառերից որո՞նք են իրար հականիշ.**

1.խելամիտ, 2.ներքուստ, 3.հակիրճ, 4. համառոտ, 5. անկշռադատ, 6.նախկին:

**40. Համարակալված բառերից որո՞նք են իրար հականիշ.**

1.իրական, 2.ժուժկալ, 3.պղտոր, 4.պատիր, 5.կեղծարար, 6. քուր:

**41. Համարակալված բառերից որո՞նք են հականիշ *պարզ* բառին.**

1. պղտոր, 2. հեռու, 3. տեղյակ, 4. բարդ, 5. խրթին, 6. շքեղ:

**42. Նշել այն բառերի համարները, որոնք հոմանիշ են *հանգույն* բառին.**

1. դարչնագույն, 2. անգույն, 3. նման, 4. նույնիսկ, 5. հանածո:

**43. Նշել այն բառերի համարները, որոնք հոմանիշ են *քուր* բառին.**

1. մաքրասեր, 2. շիտակ, 3. կեղծավոր, 4. գթառատ, 5. ազդու:

**44. Նշել այն բառերի համարները, որոնք հոմանիշ են *ստեպ-ստեպ* բառին.**

1. հաճախ, 2. դանդաղաշարժ, 3. շտապ, 4. երբեմն, 5. տափաստան:

45. Նշել այն բառերի համարները, որոնք հականիշ են *գոս* բառին.

1. թաց,
2. չոր,
3. գոլ,
4. տաք,
5. սառը:

46. Նշել այն բառերի համարները, որոնք հականիշ են *իմաստակ* բառին.

1. տխուր,
2. ուրախ,
3. խելացի,
4. բթամիտ,
5. համեստ:

47. Նշել այն շարքերը, որոնցում բառիմաստի բացատրության սխալ կա:

1. **երախտիք** – 1. ուրիշին արած բարի գործ, բարերարություն, 2. բարձր գնահատության արժանի օգտակար գործ, 3. առհավատչյա, 4. վաստակ
2. **հազվադեպ** – ոչ հաճախ պատահող, տեղի ունեցող, քիչ անգամ, մեծ ընդմիջումներով
3. **խտրականություն** – 1. իրավունքների անհավասարություն՝ ըստ ազգային տարբերությունների, 2. ոչ միատեսակ վերաբերմունք իրավական տեսակետից
4. **զգացմունք** – 1. մարդու ֆիզիկական և հոգեկան զգայությունների ամբողջություն, 2. վերաբերմունք մեկի կամ մի բանի հանդեպ
5. **խաբեություն** – 1. խաբելը, 2. խարխափելը, 3. դավ, նենգություն

48. Նշել այն բառակապակցությունների համարները, որոնք ունեն դարձվածային իմաստ.

1. ամպերից ընկնել,
2. ամպերում սավառնել,
3. ամպերից ցած,
4. ամպոտ օր,
5. ամպամած երկինք,
6. սև ամպեր կուտակվել,
7. ամպերը երկնքից կախվել:

49. Նշել այն դարձվածքների համարները, որոնց իմաստը սխալ է բացատրված.

1. **առաջն առնել**-կանխել,
2. **ատամը կտրել**-ուժը պատել,
3. **բերանից թույլ**-բերանփակ,
4. **բան դուրս գալ**-հաջողվել,
5. **վիշտը կիսել**-անտարբեր լինել,
6. **դարձանի տակի ջուր**-խորամանկ:

50. Նշել այն դարձվածքների համարները, որոնց իմաստը սխալ է բացատրված.

1. **եզան տակ հորթ փնտրել**-բծախնդիր լինել,
2. **դիմակը պատռվել**-կեղծիքը բացահայտվել,
3. **դարձի գալ**-զղջալ,
4. **դեպքից դեպք**-մշտապես,
5. **գույնը թափվել**-խուճանալ,
6. **գրպանը ծակվատնող**:

51. Նշել այն դարձվածքների համարները, որոնց իմաստը սխալ է բացատրված.

1. **ասպարեզ տալ**-բեմբարձրանալ,
2. **աստղը թեքվել**-ձախորդության մեջ ընկնել,
3. **աստծու առավոտ**-արարչագործության երրորդ օրը,
4. **ավանդ թողնել**-պատվիրել, կտակել,
5. **ավարի մատնել**-զրպարտել,
6. **գրպանը դնել**-յուրացնել:

52. Նշել այն դարձվածքների համարները, որոնց իմաստը սխալ է բացատրված.

1. **դուռը ցույց տալ**-վնդնել,
2. **դափնիների վրա հանգստանալ**-այլևս չառաջադիմել,
3. **ծուխը քամուն տալ**-օջախ վառել,
4. **զլխին տալ**-ճնշել,
5. **դաս առնել**-ուսուցչություն անել,
6. **գուռնայի տակ պարել**-հարսանիքի մասնակցել:

53. Նշել այն դարձվածքների համարները, որոնց իմաստը ճիշտ է բացատրված.

1. **ընկած-ելած**-առողջացած,
2. **թթու դնել**-ձմեռը գալ,
3. **ժամավաճառ լինել**-ժամացույց վաճառել,
4. **խելքը առնել**-համոզել,
5. **կանաչ-կարմիրը կապել**-ամուսնացնել,
6. **ձեռքից գնալ**-չնտածել:

54. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.

1. Ջոկատն անձնուրաց մարտի նետվեց՝ հաղթելով թշնամու դիրքերի առաջ եղած արգելապատնեշները:
2. Այդ կինն իր ողջ էությանը ինձ չեխույան կերպարանք էր հիշեցնում:
3. Ամերիկայի Միացյալ Նահանգները 1945-ին ճապոնական երկու քաղաքների վրա ատոմային ռումբ է նետել:
4. Մարզիչը զովեստով խոսեց մարզիկների մասին, որոնք մրցանակային տեղի հավակնոտ են:
5. Ատոմային ռումբի օգտագործումը պատերազմական նպատակներով շատ մեծ անհանգստություններ առաջացրեց ամբողջ աշխարհում՝ հասկացնելով, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ այն մարդկության հետագա ճակատագրի վրա:

**55. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.**

1. Հնուց եկած մի ավանդույթի համաձայն՝ Փարվանա լիճը գոյացել է արցունքներից:
2. Գիտական նստաշրջանի ընթացքում ընթերցված բազմաթիվ ծավալուն և բազմաբովանդակ գեկույցներ աչքի էին ընկնում հրատապ հիմնախնդիրների արծարծմամբ:
3. Քրեագետների երկու խմբերի՝ առաջին փորձաքննություններին վերաբերվող կարճառոտ գեկույցումները գրեթե նույն բանն էին փաստում:
4. Աստվածաշնչյան մի ավանդույթ պատմում է ընտանեկան հարկը լքած և օտարության մեջ անառակ կենցաղով ապրող մի երիտասարդի մասին:
5. Որոշ երկրներում կա մի զարմանալի ավանդույթ, որի համաձայն Ամանորի գիշերը պատուհաններից դուրս են նետում հին իրերը:

**56. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.**

1. Հանձինս մանկատներին նվիրատվություններ կատարած բարերարների՝ այդ հաստատությունների ֆինանսական վիճակը բավականաչափ բարելավվել է:
2. Վերահասու վտանգից խուսափելով՝ մարդիկ լքում էին իրենց տները՝ փորձելով գնալ որքան հնարավոր է հեռու:
3. Ճապոնական գիտնականները տարիներ շարունակ գիտափորձեր են անցկացրել բույսերի վրա՝ պարզելու՝ դրանցից որոնք են առավել լավ կլանում փոշին:
4. – Ես ինձ համար կառուցել եմ մի այնպիսի դամբարան, որ իր վեհությամբ անգերազանցելի մնա բոլոր ժամանակներում,- ասում էր փարավոնը:
5. Աստղագետ Վ. Համբարձումյանը իրավացի մեր ժամանակների ամենակարկառուն գիտնականներից էր:

**57. Նշել այն բառերի համարները, որոնք բարդածանցավոր են.**

1. արժանահավատ, 2. արտադրանք, 3. շարականագետ, 4. ոսկեզմրուխտ, 5. ջրմուղագիծ, 6. ակնածանք, 7. ջրբաժան, 8. ջրվեժ, 9. ջրտուր:

**58. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ պարզ են.**

1. անուրջ, 2. փետուր, 3. վարագույր, 4. քաղքենի, 5. փափուկ, 6. խոսք, 7. որսորդ, 8. գանգուր, 9. կիսատ:

**59. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ ածանցավոր են.**

1. կարևոր, 2. դավանանք, 3. գղակ, 4. կիսատ, 5. ագռավ, 6. քարափ, 7. նամակ, 8. հայելի, 9. ծածուկ:

**60. Նշել այն բառերի համարները, որոնք ունեն մեկից ավելի ածանց.**

1. անպարտելի, 2. անկոտրում, 3. միջնորմ, 4. վարչական, 5. գիտնական, 6. ապուշություն, 7. ուսուցիչ, 8. կիսալուսին, 9. բամբակենի:

**61. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ նախածանցավոր են.**

1. հարանուն, 2. ապերասան, 3. ենթասպա, 4. նախահայր, 5. գերեվարել, 6. գերձայն, 7. առձեռն, 8. համտես, 9. չքնաղ:

**62. Նշել այն բառերի համարները, որոնցում վերջածանց կա.**

1. կծու, 2. հեռու, 3. ազդու, 4. ստնտու, 5. օձյալ, 6. բանակ, 7. ելուստ, 8. դանակ, 9. մասնաբաժին:

**63. Նշել այն բառերի համարները, որոնցում վերջածանց կա.**

1. տեսուչ, 2. քնատ, 3. դիմում, 4. փափուկ, 5. արջուկ, 6. բանուկ, 7. մասունք, 8. փոխնիփոխ, 9. գուշակ:

**64. Նշել այն բառերի համարները, որոնք ընդհանուր ածանց ունեն.**

1. համտես, 2. համարձակ, 3. համաձույլ, 4. համընդհանուր, 5. համախմբել:



65. Նշել այն բառերի համարները, որոնք ընդհանուր արմատ ունեն.

1. թզենի, 2. թզաչափ, 3. թզահամ, 4. թզաշիր, 5. թզաջեմ:

66. Նշել այն բառերի համարները, որոնք ընդհանուր արմատ ունեն.

1. դաստակերտ, 2. աշակերտ, 3. քարակերտ, 4. մարմարակերտ, 5. տուֆակերտ:

67. Նշել այն բառերի համարները, որոնք ընդհանուր արմատ ունեն.

1. ավանային, 2. ավանաբնակ, 3. ավանակ, 4. բանավան, 5. մերձավան:

68. Նշել այն բառերի համարները, որոնք ընդհանուր արմատ ունեն.

1. մենապար, 2. պարահանդես, 3. առապար, 4. խմբապար, 5. գուգապար:

69. Նշել այն բառերի համարները, որոնք ընդհանուր արմատ ունեն.

1. սևակ, 2. դասակ, 3. խաժակ, 4. ակնոց, 5. բյուրակն:

70. Նշել այն բառերի համարները, որոնք ընդգծված մասն առանձին արմատ է.

1. անասնակեր, 2. արտասուք, 3. ասպետ, 4. ասպար, 5. ասպագեն:

71. Նշել այն բառերի համարները, որոնցում *-եղեն* վերջածանցը ածականակերտ է.

1. ժայռեղեն, 2. ձավարեղեն, 3. կայծակեղեն, 4. կոշկեղեն, 5. հագուստեղեն, 6. լուսեղեն, 7. հրեղեն:

72. Նշել այն բառերի համարները, որոնց արմատներից մեկին կարող է միանալ *-ուկ* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.

1. փափկասիրտ, 2. թզաչափ, 3. մանրաքայլ, 4. աչքածակ, 5. բանվոր, 6. ջերմաչափ, 7. ծածկամիտ, 8. հեղինակային, 9. գերեվարել:

73. Նշել այն բառերի համարները, որոնց արմատներից մեկին կարող է միանալ *-ան* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.

1. պատվիրատու, 2. գարնանային, 3. քնքշօրոր, 4. գերեվարել, 5. հուգախռով, 6. ոլորապտույտ, 7. չարագույժ, 8. անվանացանկ, 9. մենապար:

**ԲԱԺԻՆ 3 ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**I ՏԵՍԱԿ**

1. **Տրված բառաշարքում սրել բառի քանի՞ բառաձև կա.**  
սրած, սրություն, սրեցի, սրեր, սրի, սրիչ, պիտի սրենք, մի՛ սրեք, սրել ենք, սրելիս, սրատես, չսրող:
2. **Տրված բառաշարքում ինքը բառի քանի՞ բառաձև կա.**  
իրենք, ինքնիրեն, իրենով, նրա, նրան, իր, ինքնին, իրենց, ինքնուրույն, ինձնից, իրենցով, ինքնակամ:
3. **Տրված սյունակներում բառերը առանձնացված են՝ ըստ իրենց արտահայտած նյութական, քերականական կամ վերաբերմունքային իմաստների. բառերից քանի՞սն են սխալ տեղաբաշխված.**

Նյութական իմաստ արտահայտող	Քերականական իմաստ արտահայտող	Վերաբերմունքային իմաստ արտահայտող
մասին մենություն անել ինչպիսի	հանուն փոխանակում վերստին որևէ	ինչևէ խշխշոց ուր վահ

4. **Քանի՞ գոյական կա տրված հատվածում:**  
Նա սովորական հոգևորականներից ավելի ազդեցիկ էր խոսում, և գրուցակիցը ստիպված էր լինում առանց այլևայլության ենթարկվելու նրան: Նա ուներ հուսալի խելամտություն և գիտելիքներ, որոնցով օժտված են միայն իրոք հոգևոր անհատները: Խոստովանում եմ՝ ես շատ բան ունեի սովորելու այդ մարդուց:
5. **Քանի՞ գոյական կա տրված հատվածում:**  
Ե՛վ հայոց մեր շարժումները, որն այնքան բան է ասում, և՛ ծնկներին խփելն ու պայթյուն ծիծաղը, և՛ հայերեն բառը, նայվածքը, ժպիտը զարմանալի այս ցեղի զորավոր հառնումն են ցուցադրում:
6. **Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է սխալ կազմված.**  
բեռնակիրներ, փայտահատեր, հետագծեր, ամսաթվեր, երևանցիներ, դերբայեր, դուստրեր, գրաշարեր, հացատներ, որմնադիրներ, ժամացույցներ, սպաներ:
7. **Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում -եր վերջավորությամբ.**  
մեներգ, ազգասեր, կինոաստղ, ջրմուղ, լողափ, ձիաբեռ, մաքրամուլ, տակդիր, հողատեր, մատուկ, միջնաշերտ, գեղագետ:
8. **Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում -եր վերջավորությամբ.**  
մականակիր, ճառախոս, ճիմաթումբ, մարզաձող, միլիմետր, ներքնահարկ, յուղաներկ, նախաստիպ, ստորոտ, ներքնաշոր, սյունակալ, վարքագիր:
9. **Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում -ներ վերջավորությամբ.**  
օրենսդիր, քննացանկ, ֆելիետոն, փոստատար, քառանկյուն, ցողաշիթ, ջրկիր, տողասկիզբ, տափածուկ, վերադիր, տանձաչիր, սիգաբոյս:
10. **Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում -ներ վերջավորությամբ.**  
միլիարդատեր, ճառագիր, ձեռնակապ, կարգավար, համաձին, բարեգործ, ավեզր, գրահակիր, ըմպան, թիսպարտ, ժամկետ, լծափոկ:
11. **Բառերից քանիսի՞ հոգնակի թիվը կարող է ցույց տալ երևույթի տևականություն.**  
քամի, տարի, շոգ, սպունգ, ատաղձ, կոհակ, անձրև, ծոպ, սլաք, երեխա, ցուրտ:

**12. Բառերից քանի՞սն են ենթարկվում ներքին հոլովման.**

շարժում, արյուն, հենասյուն, ազգանուն, կնքահայր, ամառ, կարկաչյուն, հնչյուն, եռանկյուն, հացատուն, մոնչյուն, գալուստ:

**13. Բառերից քանի՞սն են ենթարկվում *ան* կամ *վա* հոլովումների.**

ծնունդ, հունվար, առավոտ, մանուկ, դերանուն, անկյուն, կիրակի, ցերեկ, ամիս, արևագալ, զեկուցում, քաղաքադուռ:

**14. Տվյալ տեքստում որոշյալ առումով գործածված քանի՞ բառ կա:**

Հայրս վերադարձին մի սնդուկ էր հանձնում մորս և այլևս ոչնչի չէր խառնվում: Բայց, սովորության համաձայն, բոլորն էլ, իրենց մանուկներին գրկած, գնում էին նրա ձեռքը համբուրելու: Հայրիկը օրհնում էր յուրաքանչյուրին և երեխաներին համբուրում:

**15. Հոդի սխալ գործածության քանի՞ դեպք կա:**

- Ահա լեռներն, ուր աղջիկների ու տղաների հետ բանջար էինք քաղում, երբ ընկերներիս հետ հովիվ էի:
- Ամաչում էի, երբ մտածում էի, որ իմ՝ տարիներով ստեղծած գրքերս պիտի փողով ծախվեն:
- Հերոսը սիրում ու կարեկցում է մեզ բոլորին, որովհետև նա իրեն շատ է սիրում:
- Եվ դուք չե՞ք լսում տիեզերքի լեզուն՝ լռությունը, որ իմ հոգումս ամեհի երգ դարձավ:
- Հայր աշխարհից է, բայց աշխարհին՝ օտար. մարդկանց ավագ եղբայրն է, բայց մարդկանցից՝ ազատված:

**16. Դիմորոշ հոդ ունեցող քանի՞ բառ կա:**

- Եթե արքան մեզ՝ ստրուկներիս, կարողանա տեսնել հրեղեն, թևավոր նժույզին նստած, այն ժամանակ նա իրեն պարտված կզգա:
- Դու ինքդ ես, ո՛վ մահ, ծերությունն ու ախտերը բոլոր, կախաղան, պատերազմ և հուսահատություն:
- Երբ լսեցի նրա մարտահրավերը, սիրտս թնդաց, թողեցի ծնողներիս, զինավառվեցի և բազեի պես թռա նրա մոտ:
- Մեր կռիվներն ավարտվեցին, և բոլորս ցրվեցինք մեր տները:
- Ես գայրացա ապերախտ հայրենակիցներիս վրա, որք թռռանս վերցրի և հեռացա հայրենիքիցս:
- Երբ պահակները հեռանում էին միջանցքից, բանտարկյալներս մոտենում էինք դռներին և սկսում էինք խոսել:

**17. Ընդգծված բառերից քանի՞սը ցուցական կամ ստացական հոդ ունեն:**

- Էն ժամանակ հարուստը կլինի աղքատ, աղքատը՝ հարուստ. **աշխարհիս** մեջ ամեն բան կփոխվի:
- Դեռ **խոսքերս** չէի ավարտել, երբ Հասան աղան երկու ձեռքով ամուր ծափ զարկեց ու գոռաց:
- Եվ **հուշերիս** զմբուխտյա գետը քո նվիրական դաշտերով տանում է **մոլորվածիս** դեպի երջանիկ մանկությունը:
- Ես կանգնում էի վազոնի դռների մեջտեղում և պատուհաններից նայում էի դուրս. երբեմն՝ աջ **կողմս**, երբեմն՝ ձախ:
- Երբ նայում եմ քեզ, Շիրակի՝ երկինք, հրաշքի պես փոխվում է ամեն ինչ. **աշխարհս** դառնում է երազ:
- Եվ հիշում եմ միշտ քո անմոռաց գրույցները, և քո համբերանքի չիբուխի խաղաղ ծուխը **աչքերիս** առջևն է դեռ, և քո հանգիստ ձայնը **ականջումս** է տակավին:

**18. Քանի՞ անգամ կա տրված հատվածում:**

Մի օր մեղմաշունչ մի քամի, բարձունքներից վար սահելով, անցավ փարավոնների բուրգերի վեճ ճակատների վրայով, իջավ ոսկեալիք Նեղոսի ափերը և մի վայելչակազմ ու դեռատի արմավենու ոտքերի տակ փռվեց հևիհև:

- Իմ հրաշագեղ թագուհի, ես՝ աշխարհի անսանձ ու ըմբոստ ոգիս, հավերժ կմարեմ ոտքերիդ տակ:

Արմավենին լռելյայն խոնարհում էր գլուխը և արհամարհում:

Հեծծեց քամին և մեղմիվ գրկեց նրա նուրբ իրանը, ուզեց համբուրել, բայց արմավենին զայրացած հրեց նրան:

**19. Քանի՞ անգամ կա տրված հատվածում:**

Փոքրիկ հյուղակը, որը կտուրից վերև բարձրացող ժայռին էր հենվում և պաշտպանված էր հյուսիսային քամիներից, բանաստեղծական էր, որովհետև նրա կտուրին լեռնային ծաղիկները պսակ էին կազմել: Ծածկի ու տնակի միջև գտնվող ժայռում փորված կոպիտ սանդուղքը նրա բնակիչներին թույլ էր տալիս ապառաժի գագաթը բարձրանալ՝ թարմ օդ շնչելու: Հյուղակի ձախ կողմում ժայռը միանգամից ցածրանում էր, և այնտեղից երևում էին մի շարք արտեր, որոնցից առաջինը, անկասկած, պատկանում էր այս ագարակին:

**20. Տրված անգամներից քանի՞սը համեմատության աստիճան *չունեն*.**

արու, մերկ, անջատ, խրթին, վարդագույն, հավասար, ծալովի, ճաղատ, անհեթեթ, բուսակեր, պարզ, ընտիր:

**21. Տրված հատվածներում գոյականաբար գործածված քանի՞ անգամ կա:**

- Մաղթանքս նորերին ասեմ,  
Շահաձս տամ հովերին,  
Կորածս ծովերին ասեմ:
- Կակաչի կարմիր թևին  
Մի կարմիր գատիկ է նստել,  
Կակաչի սև սրտի մեջ  
Սև բողբոջ-գավթիչ է նստել:
- Աչքդ միշտ կուշտ կմնա,  
Հոգիդ՝ գոհ քեզ հասած քչից,  
Բոլորին բաժին կտաս  
Քո մաքուր, մաքրված խղճից:
- Դարեր են կուլ տալիս կիրճերը,  
Ի՞նչ անեն ինձ նման խեղճերը...

**22. Տրվածներից քանի՞սն են թվական.**

տասնյակ, հարյուրական, մեկ չորրորդ, քառորդ, հինգհարյուրամյա, միլիոնավոր, իննուկես, հազարավոր, հնգակի, քառասյակ, երեքս, երկակի:

**23. Տրված նախադասություններում գոյականաբար գործածված քանի՞ թվական կա:**

- Անհիշելի ժամանակներից սկսած՝ այդ գյուղում մշտապես ապրում էր հարյուր քսանյոթ մարդ. նրանցից քսանինը տղամարդիկ էին, մնացածը՝ կանայք ու երեխաներ:
- Այդ գիտնականը թարգմանություններ էր անում հարյուր տասնչորս լեզվից, վարժ խոսում էր երեսունինը լեզվով, մասնակի տիրապետում տասնմեկին:
- Ներկայումս երկրի տարբեր անկյուններում աշխատում են երեսուն գիտաբանական կենտրոններ, որոնցից տասներկուսը եղել են արտասահմանից:
- Երկրագնդում կան տասը հազար արհեստական ծովեր և լճեր, որոնց ընդհանուր տարածությունը մոտ հինգ հարյուր հազար քառակուսի կիլոմետր է:

**24. Տրված հատվածներից քանիստ՞ում են բոլոր ընդգծված բառերը դերանուններ:**

- Իմ բաժին աշխարհն այս մեծ աշխարհում  
Կերգի շուտով երգն իր կարասի,  
Բան չի փոխելու, **ինչքան** տառասպի  
Իմ բաժին աշխարհն **այս** մեծ աշխարհում:
- Ամեն տարիք, ամեն պայման,  
**Ամեն** սահման պիտի հերքեմ,  
Ես ծնվել եմ երգի համար  
Ու **մինչև** մահ պիտի երգեմ:
- Ու ես չասացի **ոչ ոքի** ոչինչ,  
Մինչև այս երգը լույս աշխարհ եկավ,  
Ու կարդալու ես դու երկար, երկար  
Եվ թրջելու ես արցունքով **քո** ջինջ:
- Հանդիպելիս **թող** մոռանան  
Ամեն տեսակ ցավ ու մորմոք.  
Ինձ պես այրվածն ու քեզ նման  
Տառասպածը՝ **ուրիշ** անգամ:
- Ասա՛, մեզ ուրիշ **ի՞նչ** է հարկավոր,  
Որ մենք **իրարից** կարոտ չմնանք:

**25. Տրված հատվածներից քանիստ՞ում որոշյալ դերանուն կա:**

- Ամեն տեղ ես իմ չափն իմացա,  
Պարտք տալով պարտքի մեջ խրվեցի:  
Բաշխեցի, ինձ ոչինչ չմնաց,  
Հրճվանքից ես իմ մեջ փլվեցի:
- Ամեն ինչ պարզ չի ասվում,  
Ողջո՛ւյն ձեզ, չակե՛րտ, փակագի՛ծ:  
Խելագար կիրքը չկա,  
Իմաստուն խոհին եմ թասակից:
- Դառնացած լեզվիս վրա  
Դրախտի նեկտար է կաթում,  
Ուրիշ **ի՞նչ** բախտ որոնեմ,  
Բոլորին այս բախտն եմ մաղթում:
- Նստել եմ, լաց եմ լինում  
Ման եկած վայրերիս համար,  
Մեկմեկու մերժած, լքած,  
Այս խռով ծայրերիս համար:
- Շա՛տ ապրեք, շատ ապրեցի,  
Ցամաքներ ու ծովեր անցա,  
Փորձեցի ինչքան ասես,  
Մի աշխարհ փորձի տիրացա:

**26. Ընդգծվածներից քանի՞սն են անորոշ կամ ժխտական դերանուն:**

- Եվ հետո **ինչքան** հեռացա,  
Ես **քո** իշխանաց իշխան  
Կարոտի ստրուկը դարձա:
- Էլ ջրի ճամփին կուժ չի կտրվում,  
Էլ մաճի համար ծառ չի կտրվում:  
**Ոչ ոքի** առջև էլ վիզ չի ծովում,  
Ահա թե **ինչի** համար եմ հրճվում:
- **Ոչ մի** երգիչ **այս** երկրի մեջ  
Քեզ չի հիշել իր երգի մեջ,  
Եվ չի տեսել մինչև անգամ  
Իր երազի եզերքի մեջ:
- Շինել ենք **մենք** տունը ուրիշի,  
**Ուրիշը** մեր տունը քանդել է:
- Ինձ թվում է, թե **մի քանի** անգամ  
Հերքել եմ արդեն  
Ես անդարձության օրենքն անողոք,  
Մի քանի անգամ գնացել - եկել,  
Ապրել եմ **այսպես** և ապրում եմ դեռ:
- Կիզում է քեզ մի հուր կնիք,  
**Մի** հմայող ու հին խոստում,  
Եվ մի՞թե այդ վշտիդ համար  
Չեմ սիրում **քեզ** այսպես քնքուշ:

**27. Բայերից քանի՞սն են ա խոնարհման.**

զվարճացել ենք, ուրախացան, զարգացած, խաղացող, սփրթնած, գղջացել եք, բազմանում են, հեռացե՛ք, տվեց, ծիծաղում, ե՛կ, շողացող:

**28. Տրված տեքստում է խոնարհման քանի՞ քայ կա.**

Աշուն է, թեթև քամի, այգին տերևաթափ է ապրում, ծխում են խաշամի կույտերը, շարժվում են սիմինդրի տերևները: Ծերունին վեր է կենում, հուշիկ քայլում այգով, ծածկում այգու դուռը, գնում փողոցն ի վար, և նրա կողքով ընթացող կյանքը կարծես չտեսնելու է տալիս նրան, նա կարծես չկա այդ կյանքի համար:

**29. Տրված հատվածներում քանի՞ սուկածանցավոր բայ կա:**

- Մարդոց ժխտը թողնեմ ու հեռանամ, Լիք-լցված սրտով նստեմ միայնակ, Գրկեմ վարդերս՝ դալուկ, դժգունակ:
- Ա՛խ, այս ցուրտ երկրի անհայտում անհուն Ընկնել ու կորչել և ննջել հավետ:
- Կեսգիշերն անցավ: Ես տուն չեմ գնում, Երկար, անդադար մայթերն եմ մաշում. Շրջում եմ անվերջ, երբեք չեմ հոգնում, Ոչինչ չեմ հիշում, ոչինչ չեմ հիշում:
- Սակայն ուզում եմ, որ ինձ չտեսնես, Չգիտեմ ինչու ձեր զանգն եմ տալիս, Փախչում եմ, գնում և հեռանալիս Փառաբանում եմ, օրհներգում եմ քեզ:

**30. Ընդգծվածներից քանի՞սն են սուկածանցավոր բայ:**

- Փախչում է հեռուն թռիչքով անտես, Դառնում է անկեղծ ճիշով խելագար, Ահաբեկում է և կանչում է քեզ, Հեծկլտում է խեղճ, անգոր ու տկար:
- Եվ իջնում է մի անսահման թախիծ, Հիշում եմ նորից օրերս մեռած, Տխրություններս անուշ ու անբիծ Եվ ընդմիշտ անդարձ անուրջ ու երագ:
- Դանդաղ սահում են օրերը դժկամ, Անձրև՝ ու քամի՛, տրտո՛ւնջ ու թախի՛ծ, Լույսերս ոսկի ընկան ու հանգան, Ցաված է սիրտս, փայփայեցե՛ք ինձ:
- Ինձ ահեղ թվաց խնդությունս նոր, Կարծես մի վերին ու նուրբ հրաշքով Լուսացավ իմ մեջ առավոտն անհուն:

**31. Տրված բայերից քանի՞սն են բազմապատկական.**

ծեծկռտել, փետրատել, մրտտել, ճռռալ, գոռգոռալ, ճանկռտել, ճխլտել, նստոտել, ժանգոտել, վազվզել, փայլփլել, փշրտել:

**32. Տարբերակներից քանիստ՞ն պատճառական բայ կա:**

- Նրան իր հոր տանը պահել, մեծացրել էին այնպես փափուկ, ինչպես արքայական բուրաստանի գողարիկ շուշանին:
- Եգերացիները ուռենու դալար ճյուղերով կապկպում էին գերանները, միացնում և լաստեր կազմելով՝ իջեցնում գետը:
- Մի քանի կետերում հապճեպորեն քարաբեկորներ կուտակել տվեցին, որոնցով պետք է հարվածեին զորքին:
- Մի ջերմացնող համակրանք պատեց նրան Առաքելի և մյուս շինականների նկատմամբ:
- Վարդանը զինվորներին դանդաղ մոտեցրեց Տղմուտի ափին:
- Նա հիշեցնում էր հոռետես նկարչի քմահաճ վրձնի տարօրինակ ստեղծագործություն:

**33. Տրված բայերից քանի՞սը ածանցման միջոցով պատճառական չեն կազմի.**

կովել, բերել, լարել, վախենալ, օրհնել, սովորել, օգտագործել, հաչել, փայլել, նկարել, ծիծաղել, նվազել:

**34. Ընդգծված բայերից քանի՞սն են չեզոք սեռի:**

- Որքա՛ն փոխված եք, պճնված ճոխ, Գեմում եք որպես դշխ հպարտ:
- Երբ դառն օրերի անխինդ խոհերում Վհատություն է տիրում իմ սրտին, Մեր ճեմարանն եմ ես մտաբերում, Որպես հոր տունը՝ անառակ որդին:
- Իմ երկինքը հիմա բացված է, Իմ աչքերը հիմա լցված են, Լցված են զվարթ ոսկով:
- Եվ աղոթեց նա հիվանդ որդուն, Օրհնեց երկրային ուղիս դժվար, Եվ լուսեղեն էր գիշերն արթուն, Եվ սիրտս ցավին պարզվեց հոժար:
- Արևն արթնացավ, արևը մեզ ի՞նչ, Նա մեզ չի բերում իր շողերը ջինջ:

**35. Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ.**

Մեզ համար դյուրին էր մի ակնթարթում քրդին տապալելն ու երեխային խլելը, բայց ստիպված էինք զսպել մեզ՝ չկամենալով խաթարել հայ բեկորներին քրդերից հավաքելու գործը:

**36. Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ.**

Ի վերջո սկսեցի կասկածել մի աշակերտի և ձեռագիրը համեմատելու համար արտագրելու պատրվակով մի տետր խնդրեցի և համեմատելով համոզվեցի, որ նամակի հեղինակը նա է:

**37. Ընդգծվածներից քանի՞սն են ձևաբայ:**

- Աղջիկը **հոգնած՝** մի փչակի մեջ  
Կուչ եկավ, քնեց մինչև լուսաբաց,  
Գյուղը **դառնալու** ճամփա որոնեց,  
Բայց դարձյալ ծառեր, անտառ անթափանց:
- Տխուր ամպերը կամար են **կապել**,  
Անձրև՝ ու քամի՝, տրտո՛ւնջ ու թախի՛ծ,  
Դուք կարող եք գեթ սուտ սիրով **խաբել**,  
Հիվանդ է սիրտս. փայփայեցե՛ք ինձ:
- Աղոթքս պարզ է և նրբահյուս,  
**Մեռնողի** վերջին կանչ,  
**Հայտնվի՛ր** որպես լույս արշալույս  
Իմ հոգուն մահատանջ:
- **Բացված** է արդեն մի ուրիշ երկիր,  
Ես այստեղ եմ, բայց ուրիշ եմ հիմա,  
Ոսկի հայացքով **կախարդել** է նա,  
Այլ սիրով լցրել հոգիս վշտակիր:
- Եվ **արբած** կյանքի անուշ գաղտնիքով,  
Ողջույն **կտամ** ես ջրին ու հողին,  
Կկանչեմ զվարթ ու արթուն երգով  
Անցուդարձողին:

**38. Քանի՞ վաղակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Ամբողջ մի դար՝ հարյուր տարի էր ապրել Մարգարիտ տատը, և որդիներն ու դուստրերը վաղուց արդեն իրենք էին ալեգարդ պապիկներ ու տատիկներ դարձել, բայց նա դեռ ապրել էր ուզում և արարել:

**39. Քանի՞ վաղակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Նա առաջարկություն էր արել նրան և պնդել, որ նրա մասին ասվածները բանասարկուների անհեթեթ բամբասանքներ են, և խնամքով թաքցնել էր փորձում Էմմայի նողկալի արարքը:

**40. Քանի՞ ապակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Ինքնըստիներքյան հասկանալի է, որ նրանք ծնվելու են և մեռնելու՝ առանց հասկանալու ապրելու խորհուրդը:

**41. Քանի՞ ապակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Թվում էր՝ ուղևորը չի հասկանալու իր լեզուն և չի պատասխանելու իր հարցերին, բայց նահանջելու միտք չունեի, և ուղևորին հետապնդելու և հարցաքննելու մոլուցքը հանգիստ չէր տալիս նրան:

**42. Տրված հատվածներում քանի՞ ենթակայական դերբայ կա:**

- Չվող թռչուններն անցան-գնացին  
Շարան առ շարան,  
Մնացողները կծիկ են դառնում  
Թրջվելու վախից:
- Բացվող օրվա հետ վեր թռան հանկարծ  
Լույսի խտուտից զարթնած սարերը:
- Ու եկողներն էլ խորհուրդ չեն տալու  
Փնտրել անհնարն ու անկարելին:
- Նստեցե՛ք, հով անեմ շոգին,  
Մրգերս քաղեցե՛ք մեկ-մեկ,  
Տնկողիս ողորմի՛ տվեք:

**43. Ընդգծվածներից քանի՞սն են ապակատար ձևաբայ :**

Արժե՞ր, որ այդքան ժայռեր փշրեիր  
 Քարքարոտ մի հուն **մտնելու** համար,  
 Պարզ ու նախնական  
 Մի ճշմարտություն **կրկնելու** համար:  
 Արժե՞ր, որ այդքան դու քեզ քրքրեիր,  
 Երբ որ ուժերդ չէին **ներելու**՝  
 Քո իսկ էության  
 Փախած բևեռներն իրար **բերելու**:  
 Երբ ամպրոպի պես չէիր **պայթելու**,  
 Չէիր **վանելու** այս մեղկ մարդկության

Եվ մարդու մեղքերն աշխարհից հեռու,  
 Արժե՞ր, որ այդքան դու որոտայիր:  
 Խոնարհվի՛ր նրանց շիրմաքարերին,  
 Ով գնաց, գնաց, էլ ետ չի **գալու**,  
 Ու եկողներն էլ խորհուրդ չեն **տալու**,  
 Փնտրել անհնարն ու անկարելին:  
 Ու բաժանվելիս տխրենք ես ու նա,  
 Ինքը հոտոտի հետքերը ներու  
 Կամ իր վիթիկին կուրծք **տալու** գնա,  
 Ես գնամ նորից՝ ինձ **որոնելու**:

**44. Տարբերակներից քանիստ՞ում մեկից ավելի անկատար ձևաբայ կա:**

- Երբ ձյուն է նստած սարերի վրա,  
 Եվ դեռ չեն պայթել հունդերը հողում,  
 Որոտնաբերդի քարերի վրա  
 Օձերն այդ պահին շապիկ են փոխում:
- Որոտանի կիրճ ասելիս  
 Ես կիրճի պես խորանում եմ,  
 Ես սրբերի խորանում եմ  
 Որոտանի կիրճ ասելիս:
- Հատակից քար ես հանում,  
 Մաքուր է այնքան,  
 Քարից բուրմունք ես առնում  
 Կարմրախայտ ձկան:

- Օվկիանոսները ելնում են ափից  
 Եվ պատառոտում իրենց անխնա,  
 Խելագարվել է կյանքը տագնապից,  
 Իսկ ինձ ասում են թե՛ խելո՞ք մնա:
- Երկրպագում եմ ստվերը հասկի,  
 Թող ընդունի իմ խանդն ու ողջույնը  
 Հասկի ստվերում մնա՞ծ մրջյունը:

**45. Տարբերակներից քանիստ՞ում սահմանական եղանակի բայաձև կա:**

- Ես շատ սերեր ունեի,  
 Ո՞ր մնացին սերերս,  
 Կանաչ-կարմիրս թռավ,  
 Երես առան սևերս:
- Չէ՛, ամայությունը, ասենք ուղղակի,  
 Կապերն է կտրել, երես է առնում:
- Հավքե՛ր, երևի գիտեիք նրան,  
 Չվելուց առաջ լաց եղաք վրան:

- Տուն կզան, բուն կդնեն  
 Քո Լորի լորերը նորից,  
 Ափսո՛ս, որ հետ չեն գալու  
 Քո ապրած օրերը նորից:
- Բաշխել եմ, ինչ ունեի,  
 Ինձ համար նշխար չեմ պահել,  
 Իմ ապրած երկար կյանքից  
 Չգիտեմ, թե ինչ եմ շահել:

**46. Տարբերակներից քանիստ՞ում սահմանական եղանակի մեկից ավելի բայաձև կա:**

- Այնքան եմ հեռացել ես  
 Իմ սիրո հպարտ հասակից,  
 Որ ձայնս հետ չի գալիս  
 Ջրհորի խորունկ հատակից:
- Քեզանից նամակ չկա.  
 Փոստատարն ամոթով մնաց,  
 Իրենն էր մեղքը կարծես,  
 Շփոթվեց, թողեց ու գնաց:

- Ու տեսնեմ արցունքն ուրախ՝  
 Մեռնի մերանը տատիս,  
 Աշխարհիս տատերի մեջ  
 Էլ չկա նմանը տատիս:
- Երկրպագում եմ ստվերը հասկի,  
 Թող ընդունի իմ խանդն ու ողջույնը:
- Դաշտերին, դաշտերին բռերով  
 Տանում են ջուր տալիս կիրճերը,  
 Մի պարան-առվակի ջրով  
 Քերծերն են շուռ տալիս կիրճերը:



**47. Ընդգծվածներից քանի՞սն են ըղձական եղանակի բայաձև:**

- Գլուխներս առած գնում ենք այսպես, Մինչև մոլորված մեր ոտքը **գայթի**, Եվ **ընկնենք** անտակ անդունդն անհատակ:
- Մինչև նրանք **հասցնեին** Հանգուցյալից պատմել մի հուշ, Ջարթնամ հավքը **կանչեց** քարին. Ծնվող օրվա ճիշն էր անուշ:
- Ինձ **կհիշեն** ամեն անգամ, Երբ ամպը **թաղկի**, Եվ քարափի թամբից կախված Մասրենին ծաղկի:
- **Գիտեմ**, որ հետ եք գալու Դուք հոգնած ու լուռ, կռունկներ: **Չտխրեք**, թե որ տեսնեք Իմ տեղը թափուր, կռունկներ:
- Լուսաբացի թավշյա փեշով **սրբեմ** Ծիր-կաթինոտ ճակատն իմ Սալվարդի, Հոգնած իմ տարիքից **չնեղսրտեմ**, Խմեմ պաղ ջուրն ու կաթն իմ Սալվարդի:

**48. Տարբերակներից քանիստ՞ում հարկադրական եղանակով դրված բայ կա:**

- Ամենևին պետք չէ մարդկանց նեղացնել մանրուքների պատճառով:
- Այնպիսի երգեր են պետք, որ հուզեն ամենքի հոգիները:
- Նա հայտնեց, որ իրեն մի քանի անհրաժեշտ իրեր գնելու գումար է պետք:
- Նա անպայման պետք է ինձ հետ աշխատի:
- Նա խոստացավ, որ պիտի մի քանի օրից գործընկերներին հանդիպի:

**49. Տրված հատվածներում հրամայական եղանակի քանի՞ բայաձև կա (առոգանության նշանները դրված չեն):**

- Երեկոն փռեց իր թևերը մութ, Անուշ նիրհեցին երկինք ու երկիր, Աչքերդ փակիր, ինձ քնքուշ գրկիր, Սուտ կյանքին խառնիր երազանքը սուտ:
- Լաց վերջին լացդ, սիրտ իմ մենավոր, Վերջին արցունքդ հեկեկա, թափիր, Երազ երգ ու սեր, օրոր ու օրոր, Սիրտ իմ, հանդարտվիր:
- Անցեք հուշեր իմ ապարդյուն, Դարձեք ընդմիշտ մոռացված էջ, Անհուն փռվիր, սև լռություն, Միայնության իմ հոգու մեջ:
- Դանդաղ է քայլում հոգնատանջ իմ ձին, Եվ տաղտկալի է այս ուղին մոլոր, Չհիշել, մերժել տենչերս բոլոր Եվ ցնորքներս, որ ինձ խաբեցին:

**50. Տրվածներից քանի՞սն են պարզ դիմավոր ձևեր.**

չէր ապաքինվել, պետք է մտածեիր, եփեցինք-թափեցինք, կարժանանա , մի՛ վարանիր, կանգ էր առել, դուրս եկավ, չպիտի լսես, թույլ մի՛ տուր, սիրտ արեց:

**51. Տրվածներից քանի՞սն են բաղադրյալ ժամանակաձևեր.**

ցավ զգաց, երգչուհի պիտի դառնամ, մի՛ վիատվիր, չի հավատա, չպետք է ներես, երես մի՛ տուր, պետք է գնամ, տարավ-բերեց, ցավ կապրեմ, հարց չեմ տա:

**52. Տրված հատվածներում քանի՞ անկանոն և պակասավոր բայ կա:**

- Չգիտեմ՝ որտեղից է գալիս Ջութակի հեկեկանքը տրտում Եվ լալիս է անվերջ ու լալիս Եվ անվերջ ծավալվում իմ սրտում:
- Ա՛խ, երանի չէ՞ր բյուր և բյուր անգամ, Որ կույր ու անգետ լինեի կրկին:
- Դու անցնում ես ամեն օր, Անցնում, ինձ չես նկատում, Եվ դարձել եմ ես սովոր Քամահրանքիդ անհատնում:
- Տարիներն անցան, և հին օրերին Նայում եմ ահա անտարբեր սրտով, Եվ որպես գերին հլու իր բեռին, Տանում եմ կյանքի օրերն անվրդով:

**53. Տրված հատվածներում քանի՞ պակասավոր բայ կա:**

- Կա միայն մի խնդություն՝  
Արժան և հավետ,  
Լինել անզեն ու անտուն,  
Չարչարվել անվերջ:
- Ի՞նչ ունեն ես,  
Սիրտ իմ անքուն, մրրկուն,  
Սիրտ անարզված, սիրտ հրակեզ,  
Իմ երկրի պես, իմ երկրի պես հավետ նկուն:
- Արժե՞ր, որ այդքան դու քեզ քրքրեիր,  
Երբ որ ուժերդ չէին ներելու:  
Ինչ եղել եմ, եղել,  
Սիայն չասեք, թե ես  
Ավելորդ եմ եղել:
- Գալիս ես որպես իրարանցում  
Եվ անցնում ես որպես երագ,  
Կյանք իմ, դու ձրի ներկայացում,  
Բայց ինչքան թանկ ես նստում վրաս:
- Ես կգամ, կնստեմ հողիդ,  
Եվ հողդ գորանալ կտա,  
Ամեն մի քարդ ինձ կառնի,  
Մտքիս մեջ խորանալ կտա:

**54. Տրված հատվածներում քանի՞ պակասավոր բայ կա::**

- Իմ այս երկար կյանքում  
Շատ եմ տեսել, մարդիկ,  
Մայրամուտի կարմիր հոգեվարքից հետո  
Քարափները երկար կարմրին եմ տալիս:
- Ամպրոպից հետո  
Բարի է լինում արևն ավելի,  
Եվ մենք ավելի սիրով ենք իրար  
Բարի լույս ասում:
- Տվել եմ քեզ բախտս անխառ,  
Արևս, երկինքս  
Եվ ինչքս, որ մինչև անգամ  
Չունեի ես ինքս:
- Եթե մինչև անգամ  
Լսած լինեա, թե ես այս աշխարհում չկամ,  
Կգամ, ինչ էլ լինի, կգամ:
- Ի՞նչ եմ շնջում  
Ակներից փախած  
Իմ առվակները:  
Վեր կենամ գնամ,  
Քարեքար ընկնեմ,  
Գտնեմ ակները:

**55. Նախադասություններից քանիստ՞ում մակբայ կա:**

- Արտաքուստ նա մեր աչքին շատ հանգիստ էր երևում:
- Նա խոստացավ առհավետ հավատարիմ մնալ իր խոստումին:
- Մանկուց նա դրսևորել էր իր արտակարգ ընդունակությունները:
- Նորից չեն սիրում, սիրում են կրկին:
- Բազմիցս խոսել էինք այդ մասին, սակայն արդյունքի չէինք հասել:

**56. Քանի՞ կապ կա տրված հատվածում:**

Գղյակի ստորոտի և գրանիտե ժայռերի միջև բարձրանում է եկեղեցին: Թութակի աշտարակը, որի վրա շինված էր օրիորդի բնական տունը, իր հիմքով հենվում է անդունդի հենց խորքին ու բարձրանում մինչև եկեղեցու տափարակը: Այս տնից հայացքով կարելի է ընդգրկել քաղաքի մեծ հրապարակը, որ երեք դարի հնություն ունեցող փայտաշեն տներով է շրջապատված: Այդ տները եկեղեցու հետ կազմում են մի փակուղի, որ հասնում է մինչև Սուրբ Լեոնարդոյի դարպասը:

**57. Նախադասություններից քանիստ՞ում է առաջ-ը կապ:**

- Առաջ նա այդպես չէր ընկալում իմ խոսքերը:
- Դռան առաջ նստած շունը ուշադիր նայում էր մեզ:
- Նա կպատասխանի քեզնից առաջ:
- – Առա՞ջ,- հրամայեց գորավարը:
- Երիտասարդը մի փոքր էլ առաջ գնաց, և մի չքնաղ տեսարան բացվեց նրա առջև:

**58. Տրված բառերից քանի՞սն են կապ.**

հանդերձ, միջև, երիցս, երբ, գրեթե, շնորհիվ, պատիվ, ի հեճուկս, հոգուտ, վրա:

**59. Նախադասություններից քանիստ՞ում է շաղկապը կապել նախադասության անդամներ (նախադասությունները կետադրված չեն):**

- Միլիոնատիրոջ և աղքատ աղջկա միջև չի կարող լինել ոչ մի առնչություն:
- Հանկարծ մի լույս ցայտեց և սկսեց պտտվել վանքի խոժոռ պատերին:
- Չեկա և չիմացա ոչինչ:
- Կին թե տղամարդ դուրս էին եկել շաքաթօրյակի:
- Չիմացավ թե երբ նրա սրտում բույն դրեց այդ զգացմունքը:

**60. Քանի՞սն են համադասական շաղկապ.**

բայց, թեկուզ, մինչև որ, սակայն, որոնք, իսկ, եթե, երբ:

**61. Ընդգծվածներից քանի՞սն են վերաբերական:**

- –Ա՛յ **հիմար** անմիտ, - հայհոյեց ծերունին:
- Նա **երևի** այսօր չի գա դասի:
- Թանձր քողի **նման** ծուխը նստում էր կտուրի վրա:
- **Հենց** ավարտես աշխատանքդ, տեղյակ պահիր:
- **Հենց** քեզ էի ուզում տեսնել:

**62. Նախադասություններից քանիստ՞ում վերաբերականներ կան:**

- Եթե այդպես կարձես, կսխալվես:
- Կարձես երեկ լիներ մեր ծանոթությունը:
- Ինչպես մի մռայլ ուրվական, խավարի միջից նայում էր վանքը:
- Ինչպե՞ս պիտի այսուհետ ապրեմ:
- Ամենահասարակ հարցն անգամ չկարողացավ լուծել:

**63. Թվարկվածներից քանի՞սն են վերաբերականներ.**

երևի, գուցե, պատահաբար, եռակի, արդեն, իսկապես, հիրավի, հանկարծակի, գեթ, այո, անհրաժեշտաբար:

**64. Նախադասություններից քանիստ՞ում ձայնարկություն չկա (նախադասությունները կետադրված չեն):**

- Վայ նրան ով կղավաճանի իր հայրենիքին:
- Ախ մեր սիրտը լիքը դարդ ցավ:
- Ինչ ես այ պառավ էլ ինձ անիծում...
- Շուտ փախեք եկավ....
- Տո անզգամ ինչ ես կանգնել դուրս գնա...

**65. Տարբերակներից քանիստ՞ում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:**

*Կանաչության անորոշ բույրերով հագեցած թնրաբեր օդից և երկար ժամանակ պառկած լինելուց նա քայլում էր հաճելի մի գլխապտույտով և մերթընդմերթ թիկունքի տակ զգում սպիացած վերքի թույլ տնքոցը:*

- **զգում էր** – սահմանական եղանակ, անկատար անցյալ
- **հագեցած** - հարակատար դերբայ, ներգործական սեռ
- **լինելուց** - պակասավոր բայ, անորոշ դերբայ
- **տակ** - կապ, հետադրություն
- **կանաչության** - գոյական, **ան** արտաքին հոլովում

**66. Տարբերակներից քանիստ՞ում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:**

*Դեռ մի քանի ժամ կար մինչև ճաշը, բայց դահլիճն արդեն կազմ ու պատրաստ էր. պատուհանների ու դարակների մետաքսյա վարագույրները վեր էին բարձրացած, և նրանց միջից երևում էին բոլոր թանկագին անոթները:*

- **կար** - պակասավոր բայ, ըղձական անցյալ
- **մինչև** - կապ, նախադրություն
- **բոլոր** - անորոշ դերանուն
- **երևում էին** - սահմանական եղանակ, ներգործական սեռ
- **նրանց** - անձնական դերանուն, հոգնակի թիվ
- **բարձրացած** – պատճառական բայ, հարակատար դերբայ

**67. Տարբերակներից քանիստ՞ում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:**

*Օգոստոսի արևը կիզել էր վտիտ բուսականությունը, և գորշ տափաստանն իր ամալությամբ ճնշում էր բոլոր ճամփորդների հոգիները:*

- **օգոստոսի** – հատուկ գոյական, սեռական հոլով, **և** - համադասական շաղկապ
- **կիզել էր** - դիմավոր բայ, բաղադրյալ ժամանակածև, **վտիտ**- ածական
- **բուսականությունը** - գոյական, **ան** հոլովում, **իր** - անձնական դերանուն, սեռական հոլով
- **ճնշում էր** - դիմավոր բայ, ներգործական սեռ, **բոլոր** - անորոշ դերանուն
- **գորշ** – ածական, **հոգիները** - գոյական, **ի** հոլովում

**68. Տարբերակներից քանիստ՞ում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:**

*Շատ տարիներ են անցել այն օրից. այժմ իմ արածն ինձ որոշ չափով դոնքիշտություն է թվում, և ես գրականության մեջ գտել եմ իմ նշանաբանը:*

- **այն** – ցուցական դերանուն, **թվում է** - անկատար ներկա, ներգործական սեռ
- **անցել են** – սահմանական եղանակ, չեզոք սեռ, **այժմ** – ժամանակի մակբայ
- **իմ** - անձնական դերանուն, սեռական հոլով, **արածն** – հարակատար դերբայ, անկանոն բայ
- **որոշ** – որոշյալ դերանուն, **ես** - անձնական դերանուն, ուղղական հոլով
- **տարիներ** – հասարակ գոյական, **ի** հոլովում, **գտել եմ** - դիմավոր բայ, ածանցավոր

**69. Տարբերակներից քանիստ՞ում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:**

*Նրա դեմքը գունատվել էր, աչքերը կայծակներ էին արձակում հակառակորդի վրա, իսկ նա մերթ ցատկում էր տեղից հանկարծակի խայթվածի պես, մերթ քարանում:*

- **նրա** - անձնական դերանուն, սեռական հոլով, **գունատվել էր** – սահմանական եղանակ, կրավորական սեռ
- **աչքերը** – հասարակ գոյական, որոշյալ առում, **քարանում էր** - անկատար ներկա, տոսկածանցավոր բայ
- **վրա** - կապ, հետադրություն, **իսկ** – համադասական շաղկապ
- **մերթ** – մակբայ, **ցատկում էր** - դիմավոր բայ, անկատար անցյալ
- **խայթվածի** - գոյական, սեռական հոլով, **պես** – կապ, հետադրություն

**70. Տարբերակներից քանիստ՞ում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:**

*Բարձրանալով քարե փոքրիկ սանդուղքներով՝ մտա մի ընդարձակ սենյակ՝ ցածր առաստաղով. այնտեղ կային ինչ-որ անձանոթ դեմքեր, որոնք վիճաբանում էին:*

- **բարձրանալով** - անդեմ բայ, չեզոք սեռ, **դեմքեր** – հասարակ գոյական, հոգնակի թիվ
- **մտա** - պարզ ժամանակաձև, անցյալ կատարյալ, **մի** – քանակական թվական
- **սանդուղքներով** – գոյական, գործիական հոլով, **այնտեղ** – տեղի մակբայ
- **կային** - դիմավոր բայ, անկատար անցյալ, **ինչ-որ** – հարաբերական դերանուն
- **որոնք** – հարաբերական դերանուն, **վիճաբանում էին** – սահմանական եղանակ, ածանցավոր բայ

**71. Տարբերակներից քանիստ՞ում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:**

*Ինձ դիմավորեց գունատ դեմքով մի պատանի և առաջնորդեց մի ուրիշ սենյակ, և այդ վայրկյանին այնտեղից արագ քայլերով դուրս եկավ մի կարճահասակ ծերունի:*

- **ինձ** - անձնական դերանուն, սեռական հոլով, **դիմավորեց** – ե խոնարհման պարզ բայ
- **պատանի** – հատուկ գոյական, **ու** հոլովում, **առաջնորդեց** – սահմանական եղանակ, պարզ ժամանակաձև
- **ուրիշ** - անորոշ դերանուն, **և** - համադասական շաղկապ
- **այնտեղից** – ցուցական դերանուն, **արագ** - ձևի մակբայ
- **դուրս եկավ** – հարադիր բայ, չեզոք սեռ, **ծերունի** - անձնանիշ գոյական, **ու** հոլովում

**72. Տարբերակներից քանիստ՞ում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:**

*Արծրունին ինձ ընդունեց բարեկամաբար, և կարծես առաջին անգամը չէր, որ հանդիպում էինք իրար. այդ հանգամանքը ինձ գրավեց:*

- **ընդունեց** – սահմանական եղանակ, պարզ ժամանակաձև, **բարեկամաբար** – ձևի մակբայ
- **կարծես** – վերաբերական, **առաջին** - դասական թվական
- **հանդիպում էինք** - դիմավոր բայ, չեզոք սեռ, **իրար** - փոխադարձ դերանուն
- **այդ** - ցուցական դերանուն, **հանգամանքը** – հասարակ գոյական, որոշյալ առում
- **ինձ** - անձնական դերանուն, **առաջին** դեմք, **գրավեց** – սահմանական եղանակ, ներգործական սեռ

**73. Տարբերակներից քանիստ՞ում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Այդ լռին ու ինքնամփոփ մարդը երբեք իր հայրական սերը չէր արտահայտում սովորական գուրգուրանքով, բայց նայելով նրա մռայլ դեմքին՝ ես զգացի՝ որքան խորն է նրա վիշտը:*

- **այդ** - ցուցական դերանուն, **ինքնամփոփ** - ածական
- **երբեք** - անորոշ դերանուն, **զգացի** – սահմանական եղանակ, պարզ ժամանակաձև
- **չէր արտահայտում** - անկատար անցյալ, ներգործական սեռ, **բայց** – համադասական շաղկապ
- **նայելով** - անորոշ դերբայ, չեզոք սեռ, **դեմքին** - գոյական, որոշյալ առում
- **որքան** – հարաբերական դերանուն, **նրա** - անձնական դերանուն, սեռական հոլով

**II ՏԵՍԱԿ**

**74. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում որոշիչ հոդի սխալ գործածություն կա:**

1. Մութն որ իջավ, թևերը քարշ տալով հայր արագիլը հասավ բնին:
2. Խեղճը փովել էր գետնին, և արյունը անընդհատ հոսում էր քնքուշ բերանից, աչքերն հանգել էին արդեն:
3. Հյուսիսից բարբարոս հրոսակները ներխուժեցին մեր դրախտային հայրենիքը:
4. Ես անտառումն էի. որոտում էին երկինք ու երկիր, ամպերը քարի ծանրությամբ կախվել էին գլխիս:
5. Հավիեցին ձմռան սառույցները, գարունն եկավ, ծիծեռնակները վերադարձան իրենց բները:
6. Սմբակների տակ տրորում էին ծաղկած արտերն ու այգիները, ավերում էին բարգավաճ քաղաքներն ու ավանները:

**75. Ո՞ր շարքերի բոլոր գոյականները չունեն հոգնակի թիվ.**

1. սուգ, դեղորայք, սով, մութ
2. բաղձանք, առածանի, գորք, միտք
3. խռովք, վախ, գես, ազգ
4. շաքարավազ, վարս, գեփյուռ, ցորեն
5. լող, նամականի, եղյամ, ուսանողություն
6. բեմ, մամուլ, շախմատ, աման

**76. Ո՞ր շարքերի բոլոր դերանուններն են միևնույն տեսակի.**

1. նույն, այդ, այդպիսի, միևնույն
2. ես, դու, ինքը, ով
3. բոլորը, յուրաքանչյուր ոք, ամենքը, ողջ
4. ինչ-որ, երբևէ, այլ, մեկը
5. այսպես, այդպիսի, որպիսի, նույնպիսի
6. որտեղ, ինչպես, երբ, մի քանի

**77. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի ածական կա:**

- |  |  |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Գիշեր է իջել. լռել են բոլոր Աղմուկները չար, խոսքերը պատիր, Ջրերը մեղմիվ երգում են օրոր:</li> <li>2. Եվ իմ սրտի մեջ, այլ խավարում էլ Մի քաղցր վիշտ է մեղմաբար խոսում, Մեկն այնտեղ իր հեռուն է վառել:</li> <li>3. Ես մի ճամփորդ եմ՝ մթնում մոլորված, Ու հոգնած սիրտս դարձել է խոնարհ, Չեմ ուզում կանչել ցնորքս մեռած:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>4. Գառնություն է լցված ու թախիժ Քեզ օտար պոետի երգերում. Ո՞ր կողմից եկար դու, որտեղի՞ց Նետեցիր քո նետերն իմ հեռուն:</li> <li>5. Ես գիտեմ հիմա՝ ամենքի նման Մի սովորական աղջիկ էիր դու, Ես պճնել էի փայլով դյութական Գորշ պատկերը քո կյանքի ու հոգու:</li> <li>6. Տանջանք են ու խոց հուշերս բոլոր, Մտքերս ամեն՝ անամոք ցավեր, Խավար է շուրջս, և՛ մահ, և՛ ավեր, Մութով է լցված իմ ուղին մոլոր:</li> </ol> |
|--|--|

**78. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ածանցավոր բայ չկա:**

1. Բարակ առուն մարած գետակից մի շիթ առել ու հոսում էր թեք լանջերով:
2. Խլացնելով շրջապատի աղմուկը՝ ծավալվեց հարսանեկան գունայի զվարթ մեղեդին:
3. Հարսանիքը կառավարում էր թամադան՝ ասող-խոսող մի երիտասարդ:
4. Այդ դիպվածը խռովել էր բանաստեղծի ողջ ներաշխարհը:
5. Երիտասարդը մի պահ կորցրեց հավասարակշռությունը:
6. Իսկ աղջիկը չուզեց անտեսել նրա փաղաքշական վերաբերմունքը:

**79. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ենթադրական եղանակի բայաձև կա:**

1. Եթե ուզեն, կամքով արի ու աշխարհի հրով վառված՝ Ինչե՛ր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...
2. Մի տեսակ տագնապ կա, որ Չես ասի ոչ մի բառով:
3. Երկինք չի տեսել թուփն այդ հիրավի, Երկինքն էլ երբեք չի տեսել նրան:
4. Հանկարծ կգարթնի ջերմ լալու փափագ, Միրտս չի գտնի ոչ մի արտասուք:
5. Ու նոքա, որ սիրեցին, սիրտս նրանց չտվի. Գնացին ու չդարձան, ու ինձ ոչինչ չմնաց:
6. Չի հասկանա ձեր հոգին՝ և՛ ծույլ, և՛ օտար, Տաճար է մեր երկիրը, սուրբ է ամեն քար:

**80. Նշել այն տարբերակների համարները, որոնցում բոլոր բառերը դերանուններ են:**

1. ինքներս, այնքան, ոմանք, ինչպիսի
2. ոչ ոք, ամենայն, միմյանց, մի քանի
3. ամեն ոք, մյուս, համայն, որևիցե
4. յուրաքանչյուր, մինչդեռ, նույն, որոշ
5. նույնչափ, ինչ-որ, ինչպիսի, նախքան
6. միևնույն, իրար, ոչինչ, մյուս

**81. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ցուցական դերանուն կա:**

- |  |   |
|--|---|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Թվաց` երբևէ այդ հեռու-հեռու<br/>Բևեռներն իրար չեն հանդիպելու:</li> <li>2. Վերջացավ կռիվը... ինչքան ժամանակ<br/>Քեզնից ոչ մի լուր ու ոչ մի նամակ:</li> <li>3. Ու հանդիպեցինք մենք արևելքում<br/>Ինչ-որ հարկի տակ, ինչ-որ համերգում:</li> <li>4. Քայլերս նույն տունն են բերում,<br/>Ինչքան ճամփաս շեղում եմ ես:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>5. Խորհուրդն այնքան խրթին,<br/>Եվ խաղն այնքան բարդ է,<br/>Որ կարող է հանկարծ<br/>Մարդը իր տունը քանդի:</li> <li>6. Ջրվեժի ծիծաղ, մամուռի արցունք,<br/>Հավքերի երան, ժայռեր` ծանր ու մեծ,<br/>Ամեն ինչի մեջ` ինձանից մասունք,<br/>Եվ ամեն ինչից մասունք կա իմ մեջ:</li> </ol> |
|--|---|

**82. Նշել այն տարբերակների համարները, որոնցում բոլոր բայերը չխոնարհման են:**

1. փախանք, լալիս է, կվախենա, հագած
2. գվարճացել ենք, հիացնում է, նկարած, խոսող
3. չկանգնեն, սառչող, ասացինք, կերանք
4. ելած, ընկրկում է, ըմբոշխնող, սպրդեցինք
5. ուղարկում ենք, առանք, կորչեն, մեռա

**83. Նշել այն տարբերակների համարները, որոնցում մեկից ավելի ածանցավոր բայեր կան:**

- |  |   |
|--|---|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Օտար դաշտերի անանց մշուշում<br/>Տխուր լռության գիշերն է իջել.<br/>Իմ սիրտը հավետ թախիծն է մաշում,<br/>Մի լուսե երգ է իմ հոգում ննջել:</li> <li>2. Սև գիշերն իջավ իր անհայտ գահից<br/>Եվ մութով լցրեց երկինք ու գետին,<br/>Խավարեց հեռվում փարոսը հետին,<br/>Սասանվում եմ ես ջրերի ահից:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>3. Շողում են, դողում աղմուկով գվարթ,<br/>Անխոս քարանում ու նորից խաղում,<br/>Անդունդից ելնում, դեմքիս ծիծաղում,<br/>Խուլ շառաչում են, լարում են թակարդ:</li> <li>4. Կանգնած եմ նորից ահեղ անտառում<br/>Ճանապարհների բաժանումի մոտ,<br/>Հանգչում են վերջին կրակներն աղոտ,<br/>Ու մութն է կրկին իջնում ու փռվում:</li> </ol> |
|--|---|

**84. Նշել այն տարբերակների համարները, որոնցում պատճառական բայ կա:**

1. Ամեն առավոտ բերելով օրվա ուտելիքը և թարմացնելով կփի ջուրը` սպասավորը միշտ կրկնում էր նույն խոսքերը:
2. Աբեղան տխուր ժպտում էր, հանգստացնում պատանուն` ասելով, որ ինքը լավ է զգում:
3. Գետնափորի թանձր խավարն ու գերեզմանային լռությունը հիշեցնում էին, որ այդ բոլորն արդեն անդարձ երազ է:
4. Երկար ժամանակ քարացած հայացքով նայում էր խավարի մեջ. հետո նրա պրկված դիմագծերն ասես թուլացան:
5. Վերջացնելով նախադասությունը` նա ավագ ցանեց վերջին տողերի վրա և նայեց Ոսկանին:
6. Լինում էին վայրկյաններ, երբ նա ուզում էր թողնել սքեմը, հեռանալ և անհայտության մեջ մոռացության տրվել:

**85. Նշել այն տարբերակների համարները, որոնցում չեզոք սեռի բայ կա:**

- |   |  |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Մշուշի միջից` տեսիլ դյուրական.<br/>Բացվում է կրկին Նաիրին տրտում,<br/>Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,<br/>Եվ այնքան ներում` ո՞ր երկրի սրտում:</li> <li>2. Եվ մայրս ահա հիվանդ,<br/>Մրսում է, արև ուզում,<br/>Նստած է հետս դրսում<br/>Անխոս ու մեղմ, հնազանդ:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>3. Ժեռ սարի կրծքից դու դուրս ես թռչում,<br/>Մառույցը ճեղքում, գոհարներ ցողում,<br/>Ծաղրանքով ձյունի երեսն ես թրջում,<br/>Մռայլ երկնի դեմ պայծառ ծիծաղում:</li> <li>4. Լռել եմ արդեն երգերը հզոր,<br/>Ու էլ չեն հնչում խոսքերը հպարտ,<br/>Խավարն է գերել մեր հոգին այսօր<br/>Եվ լռությունը` հավետ մահապարտ:</li> </ol> |
|---|--|



**86. Նշել այն տարբերակների համարները, որոնցում կրավորական սեռի բայ չկա:**

1. Փոքրիկ սենյակը՝ առանձին սանդուղքով ու մուտքով, գտնվում էր տան երկրորդ և երրորդ հարկերի մեջտեղում: 2. Նեղիկ պատուհանը դեմ հանդիման ցցված երկհարկանի տան կտուրին էր նայում: 3. Ամբողջ հորիզոնը ծածկված էր երկնածիթ թթեմու փարթած սաղարթով: 4. Երկնի լազուրը փերթ-փերթ երևում էր միայն երբեմն-երբեմն ծառի՝ զովաբեր քամուց օրորվելիս: 5. Այդ մենաստանում եմ գրել իմ առաջին տպագրված ոտանավորը: 6. Կարդացել եմ Դուրյան և լաց եմ եղել, ապա հափշտակված ըմբռնել Մեծարենցի քնարը: 7. Մենք զայրույթով հետևում էինք չարախոս գրչակների կողմից նրա դեմ սկսված պայքարին:

**87. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ներգործական սեռի միայն մեկ բայ կա:**

- |   |  |
|---|--|
| 1. Թող ազգերի կամքն անվարան<br>Մահվան բերանը պատռի,<br>Ինձպեսները զան ու զնան,<br>Աշխարհին բան չպատահի:                       | 4. Եկել է մրրիկը ասիական,<br>Եկել է ասիական մարախը,<br>Խժռել է մեր հունձքը վաստակած<br>Դատարկել մառանն ու մարագը:            |
| 2. Չարերի հետ նստում հացի<br>Ու ժխտում է չարը,<br>Այս չարչարված, չարագուշակ<br>Ու չարխափան դարը:                              | 5. Ապառաժներ են հոշոտում<br>Ժամանակի ժանիքները,<br>Իրար գլխի փուլ են գալիս,<br>Իրար հերքում հոխորտալով<br>Ժամանակի ալիքները: |
| 3. Ծլել ենք: Ապրել ենք ու բացել<br>Մեզ համար մեր հոգու խորունկը<br>Եվ էլի դժվար ենք հասկացել<br>Մեր ցեղի գոյության խորհուրդը: |  |

**88. Նշել այն տարբերակների համարները, որոնցում միայն անկախ դերբայներ են:**

- աղացել, հեռանալ, տեսնել, իջնել
- վխտալ, փախչել, ընթերցել, հագել
- ուրախացնել, մոտենալիս, ծիծաղել, նստած
- ծխալիս, հանգչող, կպած, մեծանալ
- վախեցել, թվալ, տեսել, բուրել

**89. Ընդգծվածներից նշել ձևաբայերի համարները:**

Շատ դարեր առաջ արևելքում մի փառահեղ իշխան 1. է լինում: Անունը 2. մոռացվել է, բայց գործը 3. հիշվում է: Շարունակ դավեր 4. է նյութել դրացի իշխանների դեմ՝ 5. գրավելու նրանց սեփական երկրներից մասն ու խոշոր հողամասեր, և դավերի ու կռիվների մեջ 6. հաջողելով՝ 7. դարձել է բոլորից մեծ և բոլորից ուժեղ: Այդ կռվասեր իշխանը շրջապատի իշխանությունները 8. փորձացնելուց ու հարկատու դարձնելուց հետո 9. ելնում է աշխարհակալության:

**90. Նշել այն տարբերակների համարները, որոնցում փոխանվանաբար գործածված հարակատար դերբայ կա:**

- |   |  |
|---|--|
| 1. Ջրի բերածը տանք նորից ջրին,<br>Թող թեփը տանի, ոսկին լոկ մնա:   | 5. Եթե մինչև անգամ ինձ վտարած լինես,<br>Վերհուշերիդ վերջին խոնավ քարանձավից,<br>Միևնույն է, կգամ, ինչ էլ լինի, կգամ:         |
| 2. Ծառերը մրսած մատների վրա<br>Իրենց քրքրված սովեր-կմախքի<br>Ֆողերն են հաշվում:                                     | 6. Խելքս քո խրատից չկշտացավ,<br>Տված ու խլածից չկշտացավ,<br>Ա՛խ, կրակված սիրտս, անսիրտ աշխարհ,<br>Անսիրտ քո կրակից չկշտացավ: |
| 3. Սովերները խեղդվում են շոգից,<br>Բարդիները մրսում են,<br>Մեր տանը մեռածներն են, հոգի՛ս,<br>Ապրողները դրսում են... |  |
| 4. Ինձ՝ երգի տաժանքն ու գերությունը,<br>Մնացածը՝ ձեզ,<br>Չեզ այս աշխարհն ու այս տերությունը:                        |  |

**91. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ապակատար ձևաբայ կա:**

1. Այդպիսի դեպքերում նա կարծես ապշում էր, թե ինչ կար ծիծաղելու, հետո ինքն էլ էր սկսում սրտաբուխ ծիծաղել:
2. Այդ օրն ընդամենը երեք աշխատող էին, որոնցից մեկը գործիք բերելու էր գնացել, իսկ մյուսը փայտ էր կտրատում:
3. Ես այդպես էլ գլխի չընկա, որ նա էր ինձ հետ գալու, և արագ առաջ անցա:
4. Հենց որ տաղտուկ եմ զգում, մեջս ցանկություն է առաջանում մարդկանց տեսնելու, անմիջապես նստում եմ ուղղաթիռ ու թռչում:
5. Նա շուտով Եվրոպա էր վերադառնալու, և ոչ ոք հույս չունեի նրան այլևս տեսնելու:
6. Նա աղջկան թարմ կերակուրներ բերելու է ուղարկում, և քիչ անց արդեն տանը մի թունդ գինարբուք է սկսվում:

**92. Նշել այն տարբերակների համարները, որոնցում անկանոն բայ կա:**

1. – Ի՞նչ ես ասում, բան չեմ հասկանում,- բարկացավ տղան:
2. Եվս մի վայրկյան, և նա իրեն տվեց մի գեղեցիկ հուշի:
3. Աղջկա խոսքը, բարեբախտաբար, հետևանքներ չունեցավ:
4. – Կանգնած սպասում է, շուտ արա, իրեն հասի՛ր,- գոռաց հայրը:
5. Միմոնն ու երեխան ձորն անցել էին, գնում էին գյուղամիջի շեկ ճանապարհով:
6. Երբ ելավ գյուղամիջի ճանապարհի, ուր երեխաները ֆուտբոլ էին խաղում, նա իրեն ազատ զգաց:

**93. Նշել այն տարբերակների համարները, որոնցում անկանոն բայերը խոնարհման կանոնավոր ձևերից շեղվել են:**

- |   |   |
|---|---|
| 1. Ծիածանների լարերը վրան՝<br>Ինձ քնար տվեց երկինքը մի օր:  | 4. Օրոր էր ասում աշունն անտառին,<br>Բայց դեռ անտառի քունը չէր տանում: |
| 2. Գարուն էր: Չեկած ամառ՝<br>Փուլ եկավ երկնակամար:          | 5. Ծանր նստել է և ամեն մեկին<br>Իրեն արժանի պատիվն է տալիս:           |
| 3. Հայաստա՛ն, անո՛ւնդ տալիս<br>Ժայռի մեջ մի տուն եմ հիշում: | 6. Արթնացող ամպի հառաչն առաջին<br>Գալիս մտնում է ականջը նրա:          |

**94. Նշել այն տարբերակների համարները, որոնցում դերբայական սխալ ձևերի գործածություն կա:**

1. Նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն Չինաստան գնալուց և վերադառնալուց երկու անգամ անցել է Հայաստանով:
2. Չկնկիթ դնելուց ձկները դարձյալ հեռանում են իրենց բնակվելու մշտական անդորրավետ վայրերը՝ վերադառնալով միայն հաջորդ տարի:
3. Կինը թերսնվելուց լրիվ թուլացել էր:
4. Ամաչելուց նրա դեմքն ամբողջովին շառագունել էր:
5. Որդու մասին խոսելուց աչքերը լցվում էին արցունքով:
6. Իր աճեցրած բարիքներից հաճախ քաղում և տալիս էր հարևաններին:

**95. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ենթադրական եղանակի բայաձև կա:**

- |   |  |
|---|--|
| <p>1. Որտեղի՞ց եկանք և ո՞ր ենք գնում,<br/>Երեկ չկայինք, վաղը չենք լինի,<br/>Ջրից դուրս գալիս կրակն ենք ընկնում՝<br/>Խոկալով խորհուրդն այս երկրայինի:</p> <p>2. Ինձ կհիշեն ամեն անգամ,<br/>Երբ մտնեն անտառ,<br/>Լսեն խելոք կաղնիների<br/>Հեքիաթներն անբառ:</p> <p>3. Քեզ այցի կգամ, ապրում եմ քանի,<br/>Ու լաց կլինեմ հուշերիս վրա,<br/>Եվ կհեռանամ՝ քո գերեզմանի<br/>Քարի ծանրությունն ուսերիս վրա:</p> | <p>4. Կռիվ տայի անդադար,<br/>Որ փրփրեի ջրի պես,<br/>Թափառեի քարեքար,<br/>Քար փշրեի ջրի պես:</p> <p>5. Չէ՛, աշխարհի սարերի մեջ<br/>Չունեմ հավասարը<br/>Հարգանքը մեծ ու սիրտը մեծ<br/>Աղոթարան սարը:</p> <p>6. Հավք ուզեիր, նա քեզ կտար<br/>Մեկի տեղ հազարը,<br/>Հավքի բույն էր փեշից կատար<br/>Աղոթարան սարը:</p> |
|---|--|

**96. Ընդգծվածները տրված եղանակներից որո՞նց են համապատասխանում (նշել համարները՝ հաջորդականությունը չխախտելով):**

*Դառն օրերի տառապանքում սրտմաշուկ,  
Խավար կյանքի ուղիներում չարական  
Հոգիս յսեց սիրակարոտ մի շշուկ,  
Մեկը սրտիս թաքուն ժպտաց. «Ես կգամ»:*

1. սահմանական
2. հարկադրական
3. ըղձական
4. ենթադրական

**97. Նշել այն տարբերակների համարները, որոնցում հարկադրական եղանակի բայեր կան:**

1. Այսպես «պիտի»-ն պիտի  
Նստի գահի վրա,  
Իսկ մենք մնանք ոտքի,  
Երկրպագենք նրան...
2. Եվ օղը սենյակիս  
Պիտի շարունակի մենակություն բառից անվերջ դողալ...
3. Թվում է, թե հիմա էլ չպիտի լինի ոչ մի ստվեր...  
Ու երբ պետք է ձեզ,  
Սրտաճաք ճիշով  
Արթնացնում եմ ձեզ,  
Որ քնով չընկնեք:
4. Պետք չէ, որ մարդ հեկեկա անքուն  
Աշխարհում մի օր ապրելու համար:
5. Չգիտեմ՝ ինչ պիտի փոխվեր,  
Մակայն ես նույնը մնացի...

**98. Նշել այն տարբերակների համարները, որոնցում բաղադրյալ ժամանակաձև կա:**

1. Վոլոդյան սենյակի աջ անկյունում ծնկի իջավ՝ բարձրաձայն աղոթելով:
2. – Ա՛խ, դեռ մի՛ տարեք նրան,- սրողած հառաչեց կինը:
3. Այդ խաղատունն է նրան շեղել ճիշտ ճանապարհից:
4. Դու պետք է հավատաս քո գործի հաջողությանը:
5. Նա հապշտապ դուրս եկավ քաղաքից՝ քայլելով դեպի դաշտերը տանող խորդուբորդ ճանապարհով:
6. Իհարկե, կոշիկն ու արվեստի ստեղծագործությունները տարբեր են, բայց պետք է համոզված լինես, որ բարձրարժեք աշխատանքները երբևէ չեն կորչի:

**99. Նշել այն տարբերակների համարները, որոնցում չեզոք սեռի բայ կա:**

1. Այս ամենին նայելով՝ Հայաստանը կամա-ակամա կոչում ես քարե:
2. Հիվանդ հոր մոտ նստած՝ նա պատմում էր ողջ եղելությունը:
3. Մեր թեմական դպրոցը գտնվում էր Թավրիզի հռչակավոր բերդի տակ՝ մի ընդարձակ պուրակում:
4. Նա անտարբեր դիտում էր հասնող հրացույթը և ոչինչ չէր ձեռնարկում:
5. Դասամիջոցին գրեթե բոլոր աշակերտները դուրս էին գալիս պուրակ՝ ըմբոշխնելու մաքուր օդը:
6. Ու ոչ թե ջղայնացած փորձում էի մի մտացածին պատմություն հորինել, այլ պարզել ճշմարտությունը:

**100. Նշել մակբայների համարները.**

1. հագիվ, 2. բացի, 3. դանդաղորեն, 4. մոտակա, 5. ձեռաց, 6. գոնե, 7. երբևիցե, 8. հոտնկայս, 9. վերջին:

**101. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մակբայ կա:**

1. Իշխան Անդրեյը համբուրեց քրոջը և ասաց, որ նա լացկան է, ինչպես առաջ: 2. Իշխանուհին անդադար խոսում էր: 3. Վերին կարճ շուրթը մի ակնթարթ արագությամբ իջնում էր, դիպչում ստորին շուրթին և երևան հանում շողացող ժպիտը: 4. Նա պատմում էր իրեն պատահած դեպքի մասին և անմիջապես հայտնում, որ իր բոլոր զգեստները թողել է Պետերբուրգում: 5. Նա պնդում էր, որ Անդրեյը բոլորովին փոխվել է, դարձել անճանաչելի, տարօրինակ կերպով ծերացել: 6. Մարիան մինչև վերջ չլսեց և շարունակելով իր մտքերի թելը՝ ինչ-որ հարց տվեց հարսին: 7. Լիզայի վերին շուրթն իջավ, նա երեսը մոտեցրեց տալոջ դեմքին և կրկին անսպասելի լաց եղավ: 8. Բոլորը մի պահ լռեցին: 9. Անդրեյը պատվիրեց, որ Լիզային տանեն իր սենյակը, որ այդ երեկո չընկնի նույն վիճակի մեջ:

**102. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ստորադասական շաղկապ չկա.**

1. այսինքն, երբ, եթե, և՛...և՛
2. սակայն, կամ, այլև, նաև
3. բայց, ու, ուր, ինչքան
4. ինչպես և, հենց որ, ոչ, այնպես էլ

**103. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Բաֆֆին պատասխանեց.*

*-Այո՛, բոլորն են ինձ սիրում, բայց այժմ ես որոշել եմ ավելորդ այցելուներ չընդունել, նաև գիտեմ, որ Դուք իմ անկեղծ երկրպագուներից եք:*

1. **պատասխանեց** - դիմավոր բայ, պարզ ժամանակածև, **այո** - հաստատական վերաբերական
2. **բոլորը** - հավաքական գոյական, **սիրում են** - անկատար ներկա, ներգործական սեռ
3. **բայց** - համադասական շաղկապ, **գիտեմ** - ըղձական եղանակ, առաջին դեմք
4. **որոշել եմ** - սահմանական եղանակ, ներգործական սեռ, **այժմ** - ժամանակի մակբայ
5. **չընդունել** - անդեմ բայ, անձանցավոր, **անկեղծ** - ձևի մակբայ

**104. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Նույն վայրկյանին ներս մտան երկու մութ պատկերներ՝ գիշերային ոգիների նման լուռ, հապճեպ գրկեցին ճերմակ տեսիլն ու չքացան նրա հետ:*

1. **նույն** – ցուցական դերանուն, **վայրկյանին** - գոյական, **ի** հոլովում
2. **ներս մտան** – հարադիր բայ, չեզոք սեռ, **նրա** – դերանուն, սեռական հոլով
3. **նման** – ածական, **ոգիներ** – հասարակ գոյական, **ու** արտաքին հոլովում
4. **հապճեպ** – ձևի մակբայ, **գրկեցին** – պարզ ժամանակաձև, անցյալ կատարյալ
5. **չքացան** – **ա** խոնարհման բայ, սոսկածանցավոր, **հետ** – մակբայ

**105. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Բարու գալով՝ մի օր հանդիպեցի ուսուցչիս. որքա՛ն փոխվել էր նա. զգզզված մորուքը ճերմակել էր բամբակի պես, արագաշարժ ոտքերը թուլացել էին, վառվռուն աչքերը մարել էին մեռած աստղերի պես:*

1. **գալով** - անկանոն բայ, անորոշ դերբայ, **մի** - անորոշ դերանուն
2. **թուլացել էին** - **ե** խոնարհման բաղադրյալ բայաձև, վաղակատար անցյալ, **որքա՛ն** - հարցական դերանուն
3. **զգզզված** – հարակատար դերբայ, չեզոք սեռ, **պես** – կապ, հետադրություն
4. **արագաշարժ** – մակբայ, **մարել էին** - դիմավոր բայ, սահմանական եղանակ
5. **վառվռուն** – ածական, **մեռած** – **ե** խոնարհման բայ, չեզոք սեռ

**106. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Մի քանի անգամ փորձեցի խոսել հետը՝ գիտենալու համար՝ արդյոք հա՞մը է, բայց նա աչքերը չոտմ էր, նայում էր երեսիս ասպուշի պես, ասպա ժպտում էր և նորից գլուխը կրծքին թեքում:*

1. **մի քանի** – որոշյալ դերանուն, **խոսել** - անորոշ դերբայ, չեզոք սեռ
2. **գիտենալու** - ապակատար դերբայ, ածանցավոր, **համար** – կապ, հետադրություն
3. **արդյոք** – վերաբերական, **թեքում էր** – սահմանական եղանակ, չեզոք սեռ
4. **բայց** – համադասական շաղկապ, **պես** – կապ, հետադրություն
5. **նորից** – մակբայ, **նայում էր** - անկատար անցյալ, ներգործական սեռ

**107. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Մի քանի ամիս անցած՝ հայրս վերադարձավ Ղուբայից, ուր լինում էր տարվա մեծ մասը. նա, իհարկե, բարկացավ ինձ վրա, երբ մայրս հաղորդեց նրան իմ հանդուգն արարքի մասին:*

1. **մի քանի** - անորոշ դերանուն, **անցած** – հարակատար դերբայ, ածանցավոր
2. **վերադարձավ** – սահմանական եղանակ, անցյալ կատարյալ, **լինում էր** - անկանոն բայ, ներգործական սեռ
3. **իհարկե** - վերաբերական, **երբ** - հարաբերական դերանուն
4. **նրան** - անձնական դերանուն, տրական հոլով, **բարկացավ** - **ա** խոնարհման պարզ բայ, չեզոք սեռ
5. **հաղորդեց** – **ե** խոնարհման պարզ բայ, ներգործական սեռ, **մասին** – կապ, հետադրություն

**108. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Մորեղբայրս պատվիրեց ինձ մի որևէ բան գրել խնամքով և տալ իրեն, իսկ ես տողացույցը դրեցի մի մեծ թերթի տակ և ամենայն զգուշությամբ ընդօրինակեցի գեղագիտական տեսրակի ամենազեղեցիկ էջերից մեկը:*

1. **պատվիրեց** - անցյալ կատարյալ, պարզ բայ, **որևէ** - անորոշ դերանուն
2. **գրել** - անորոշ դերբայ, ներգործական սեռ, **իրեն** - անձնական դերանուն, տրական հոլով
3. **իսկ** – համադասական շաղկապ, **տակ** – կապ, հետադրություն
4. **ամենայն** – որոշյալ դերանուն, **զգուշությամբ** - գոյական, գործիական հոլով
5. **ընդօրինակեցի** – պարզ ժամանակաձև, սահմանական եղանակ, **մորեղբայրս** – **n** ներքին հոլովման գոյական, որոշյալ առում

**109. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Ամեն ինչ ինձ համար նոր էր, գրավիչ, մի երազ լիներ ասես. նայում էի մեղմիկ սահող մակույկներին, որ կարասյների նման լռելյայն սահում էին այս ու այն կողմ:*

1. **ամեն ինչ** - որոշյալ դերանուն, **համար** - կապ, հետադրություն
2. **մի** – անորոշ դերանուն, **ասես** – բայ, հրամայական եղանակ
3. **նայում էի** - անկատար անցյալ, չեզոք սեռ, **որ** – ստորադասական շաղկապ
4. **մեղմիկ** – ձևի մակբայ, **սահող** - անդեմ բայ, ենթակայական դերբայ
5. **նման** –կապ, հետադրություն, **լռելյայն** - ածական

**110. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Մի բան, ինչ ես սիրում էի այդ գեր ու կենսախիճ մարդու մեջ, այն էր, որ երբեք ինձ խրատներ չէր տալիս, որը ինձ համար հազվագյուտ շնորհ էր:*

1. **ինչ** – ստորադասական շաղկապ, **ես** - անձնական դերանուն, ուղղական հոլով
2. **այդ** - ցուցական դերանուն, **սիրում էի** – պարզ բայ, ներգործական սեռ
3. **մարդու** - գոյական, **ու** հոլովում, **մեջ** –կապ, հետադրություն
4. **երբեք** – ժամանակի մակբայ, **չէր տալիս** - անկանոն բայ, անկատար անցյալ
5. **հազվագյուտ** – ձևի մակբայ, **շնորհ** - գոյական, ուղղական հոլով

**111. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Նրա` ածուխի պես սև ու խիտ մորուքն սկսվում էր համարյա աչքերի տակից ու ծածկում ամբողջ երեսն ու կոկորդը, իսկ արծվային քիթն անգամ ծածկված էր մագերով:*

1. **նրա** - անձնական դերանուն, սեռական հոլով, **պես** –կապ, հետադրություն
2. **սկսվում էր** – սահմանական եղանակ, կրավորական սեռ, **համարյա** - մակբայ
3. **ամբողջ** - անորոշ դերանուն, **երեսը** - գոյական, ուղղական հոլով
4. **ծածկված** – **ա** խոնարհման բայ, չեզոք սեռ, **արծվային** –ածական
5. **անգամ** – վերաբերական, **մագերով** - գոյական, գործիական հոլով

**ԲԱԺԻՆ 4**

**ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ**

**I ՏԵՄԱԿ**

**1. Ընդգծվածներից քանի՞սն են բայական բառակապակցություն:**

Նոր միջավայրը **թեև ճանճրալի**, բայց հետաքրքիր էր ինձ համար: Օրը **յոթ ժամ արտագրելով** իմ իշխանավորների ստեղծագործությունները՝ բնավ չէի մտածում, որ իմ **միտքն ու զգացումները** կարող են օր օրի բթանալ: Ես **մի անծանոթ մեքենայի** չնչին մասնիկներից մեկն էի: Ինչ էր շինում **այդ մեքենան**՝ բոլորովին չէի հետաքրքրվում: **Ինձ համար** անհասկանալի, նույնիսկ ծիծաղելի էր այն լրջությունը, որով իմ պաշտոնակիցները կատարում էին իրենց պաշտոնը՝ **մտազբաղ դեմքերով վազելով մի սեղանից մյուսը:**

**2. Նախադասություններից քանի՞սն են համառոտ:**

- Վահրամն էր միայն գնում - գալիս:
- Իսկ ժողովուրդը տեղից տեղ է թափառում:
- Չէ՛, հա՛յր սուրբ, ամբոխը չի հանգստանա:
- Ճարտարապետին կանչե՞մ, հայրիկ:
- Է՛, ա՛յ որդի, դու թագավոր էլ կդառնաս:
- Քաջերի սահմանը իրենց զենքն է:

**3. Տրված հատվածում քանի՞ համառոտ նախադասություն կա:**

Մտա խանութ: Որքա՛ն դաժան երևացին ինձ այդ մարդիկ, որոնք, իրոք, դաժան էին: Մի պահ կամեցա դուրս գալ, բայց արդեն ուշ էր. առջևս մալականի սպառնալի կերպարանքն էր: Նա փակում էր փախուստի ճանապարհը: Ով չի կրել այդ վայրկյանները, չի կարող երևակայել նրանց դառնությունները: Միրտս բաբախում էր. կարծես մտել էի հիվանդանոց: Երբ բերանս բաց արի, ձայնս դողաց, և նրա հնչյունն ինձ օտարոտի թվաց:

**4. Տրված հատվածում քանի՞ համառոտ նախադասություն կա:**

Առաջին եվրոպացին էր, որին հանդիպում էի: Նա ամեն ինչով տարբերվում էր տեղացիներից: Ես գլուխ էի խոնարհում նրա առջև, թեև երիտասարդ էր: Ինչ գիտեի, որ պետք է հիասթափվեմ: Հաճախ գործերով նրա առանձնասենյակը մտնելով՝ չգիտես ինչու, հուզվում էի:

**5. Ընդգծվածներից քանի՞սը նախադասություն չեն:**

Մուղանի անապատն է: **Ոչ մի ծառ**, ոչ մի կանաչ թուփ, ոչ մի թռչուն: Կարծես մի սոսկալի հրդեհ լափել էր երկրի կյանքը՝ **թողնելով միայն միլիարդավոր մոծակների**, որոնք, **թվում է**, երկրի տերերն են և ամեն ինչ կարող են անել: Իրիկնադեմին նրանց փոխարինում են ճահիճների գորտերը՝ **իրենց կվկվոցներով վրդովելով երկրի լռությունը:** **Մի ինքնատեսակ համերգ**, որ ինչ-որ համակրանք է ներշնչում ինձ դեպի այդ անարդարացի անարգված կենդանիները:

**6. Ընդգծվածներից քանի՞սն են նախադասություն:**

- Ամբողջ ժամանակ նրանք անբաժան էին. հրամայողը թզուկն էր, **հպատակվողը՝ հսկան:**
- Ինձ թվում էր, որ այս պատիկ մարդը ճիգ էր անում **իր հասակից բարձր երևալ:**
- **Քանի քաղաքից հեռանում ես**, այնքան նա պայծառանում է՝ անընդհատ պտտվելով ինքն իր շուրջը:
- **Ահա թե ինչ**. ուրեմն երագս վերջապես իրականանում է, և ես պիտի ճամփորդեմ:

**7. Տարբերակներից քանի՞սն են բարդ նախադասություն:**

- Մեր առջև Արծրունու միհարկանի տնակն էր՝ շրջապատված շքեղ պարտեզով, որի մի մասը ծաղկանոցն էր, մյուսը՝ մրգանոցը:
- Ուղիների վրա սփռված դեղնագույն դեղձերն ու ծիրանները, արծաթագույն տանձերը, իրար խառնվելով, գույների քմահաճ ներդաշնակությամբ հիշեցնում էին Սպահանի գմայլելի գորգերը:
- Խոսելով Փարիզի այն ժամանակվա հայ գաղութի մասին՝ ես չեմ կարող մոռացության տալ իմ հայրենակիցներին՝ ժամանակավոր այցելուներին՝ մի քանի ամսով Փարիզ եկած:
- Երբեք մենք միանգամից չենք հաշտվում մեր գլխին եկած չարիքի հետ՝ մեր սնուտի հույսերը, պարզ է, դնելով նույնիսկ աներևակայելի հրաշքների վրա:

**8. Տրված հատվածում քանի՞ բարդ նախադասություն կա:**

Սայթաբելով լարծուն տախտակամածի վրա՝ քաշվեցի դեպի նավի ծայրը: Երկու ձեռքերով ամուր բռնելով մի երկաթե գլանից, որի վրա փաթաթված էր խարիսխի շոթան, նայեցի դեպի վեր: Նավը՝ որպես հարձակվելու պատրաստ վագր, բարձրացնում էր առջևի մասը: Ինձ թվում էր՝ նա պիտի գլխիվայր թավալվի իր առջև բացված վիհի մեջ: Երբեմն վայրագ կոհակներն ուժգին թափով բարձրացնում էին նրան իրենց բաշերի վրա, նետում այս ու այն կողմ: Ինքնըստիներս հասկանալի է, դա տարերքների ցասկոտ հեզմանքն էր:

**9. Տրված հատվածներում քանի՞ բարդ համադասական նախադասություն կա:**

- Երբ ես կամեցա ոսկե արևի շողերը գրկել,  
Մարդիկ նենգամիտ խոնավ նկուղում ինձ շոթայեցին:
- Ու նայում եմ ես դեպի ցած,  
Ուր դաշտերն են մրափում:
- Իսկ հիմա ահա կանգնել ես ինձ մոտ  
Ու նախատում ես ժպիտով տխուր:
- Մի՞թե չկա ոչ մի հոգի հարազատ,  
Մի՞թե չկա ոչ մի մոլար ուրվական:

**10. Նախադասություններից քանի՞սն են բարդ ստորադասական:**

- |  |  |
|--|--|
| • Հրաշք լիներ, կրկնվեր<br>Այն հրաշքը իրական,<br>Առուն ստվերս տաներ<br>Ջաղացպանի աղջկան:                    | • Ծիածանը տեղս լիներ՝ կսևանար դավից...                     |
| • Ա՛խ, կռո՛ւնկ, իմ մանկության<br>Կիրճի՞ց ես թռած գնում,<br>Թե՞ հայոց հին «Կռունկի»<br>Միջից ես թռած գնում: | • Թե մորդ անգամ մտքից հանես,<br>Քո մայր լեզուն չմոռանաս... |

**11. Նախադասություններից քանի՞սն են բարդ ստորադասական:**

- Նրանց սերը ծնվել էր աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանուշակը:
- Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին...
- Դիլան դային հետ նայեց. մարդ չկար. աշնան մերկ դաշտերն էին:
- Ու խշշոցը կաքավներին հասավ թե չէ, իսկույն փռռալով իջան արևոտ արտերի վրա:



**12. Տրված հատվածներում քանի՞ միակազմ նախադասություն կա:**

- Կա միայն մի խնդություն՝ Արժան ու հավերժ, Լինել անգեմ ու անտուն, Չարչարվել անվերջ:
- Տեսա երազ մի վառ, Ոսկի մի դուռ տեսա:
- Հեռացիր, աշուն՝ համրորեն լացող, Ողջո՛ւյն քեզ, մրրիկ սհեղաշաչյուն:
- Նստել այստեղ, անվերջ նստել ու նայել Աշնանամուտին և քրքրել հին հուշերը:

**13. Տրված հատվածներում քանի՞ բաղադրիչ թերի նախադասություն կա:**

- Պարզ ջրի վրա եղեգը հանդարտ, Անդողոջ կանգնած էլ չի շշնջում:
- Ինչո՞վ ես մեզ գերում, աշխարհ, Քիչ տալիս, շատ ենք առնում:
- Մոտեցած երկնից աստղերը պայծառ ժպտում են խաղաղ քո աչքերի պես:
- Օգնի՛ր ինձ, որ քեզ օգնական լինեմ, Սուրբ մասունքներիդ օրհնաբան լինեմ:

**14. Տրված հատվածներում քանի՞ բաղադրիչ թերի նախադասություն կա:**

- Է՛լ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես՝ ապրողն ապրի սրտալի, Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի:
- Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անց կացավ, Երագն էլ նուրբ ու խուսափուկ, վազ եղավ, անց կացավ:
- Ես շնչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր, Ես լսում եմ նրա անլուռ կանչն ու հունչը ամենուր:
- Անհիշելի վերհուշերի մշուշներում նրբադոտ Երբեմն ասես զգում եմ ես, թե կհասնեմ Նրա մոտ:

**15. Տրված հատվածներում քանի՞ ենթակա կա:**

- Ի՞նչ է մնում գնացողին, Ի՞նչ է մնում ինձ անելու:
- Ինքս ինձ էլ երանի տամ, Որ ձեզ պես թիկունք եմ ունեցել:
- Ջրերը ձորից սար են բարձրանում, Անձրև են դառնում արտերի վրա:
- Վերջապես քի՞չ կան հրճվելու բաներ, Եվ լալու բաներ քի՞չ կան աշխարհում:
- Ա՛խ, ինչեր, ինչեր, ինչեր են անում, Որ միլիոն տարվա մեր ծուխը կտրեն:

**16. Տրված հատվածներում գոյականով արտահայտված քանի՞ ենթակա կա:**

- Մեկն իմ աչքի փուշն է հանել, Մեկն իմ խոսքից մեղր է քամել:
- Գնամ մարդկանց մոտ իմ բնաշխարհի, Որոնք դեռ հողում արմատներ ունեն Եվ հողի վրա՝ երազներ հողոտ:
- Թող ազգերի կամքն անվարան Մահվան բերանը պատռի:
- Ամեն-ամեն ինչ դարձել է անցյալ, Ու մենք առափնյա այգում ենք դարձյալ, Ծովն ափից փախել, փոխվել է այգին, Եվ այգում միայն նստարան կա հին:

**17. Տրված հատվածներում դերանունով արտահայտված քանի՞ ենթակա կա:**

- Ես ձեր խիղճն եմ, ինձ մի՛ խաբեք, Ձեր թևերն եմ, ինձ մի՛ կապեք:
- Կուզես պայթի՛ր, կուզես ճչա՛: Մեզ մարդու տեղ դնող չկա:
- Երեխաներ ենք բոլորս մի տան, Ողջո՛ւյն քեզ, հրա՛շք հավիտենություն:
- Տեսնես ի՞նչ էին ասում իրար, Երբ լսում էին դողանջը մեր Մանուկ արևը սարերն ի վար Եվ մեռնող մութը ձորերն ի վեր:

**18. Տրված հատվածներում դերանունով արտահայտված քանի՞ ենթակա կա:**

- Ջերմ կարոտով սպասում են անհամբեր,  
Որ մեկը իմ փակ դռները կբանա:
- Ո՞վ պիտի գա, գուցե գունատ մի սովեր  
Լուռ ներս սողա ու նորից լուռ չքանա:
- Ի՞նչ մնաց ինձ. ոսկյա մի ցանց, ուրիշ ոչինչ,  
Մարգարտաշար հուշերի գանձ, ուրիշ ոչինչ:
- Ի՞նչ ես փնտրում, սիրտ տազնապող, անխնդում  
Մեր բանտն անել, զուր է տանջվել ու վայել:

**19. Տրված հատվածում քանի՞ պարզ ստորոգյալ կա:**

Նա շատ անգամ էր դուրս եկել կովի դաշտ և այս անգամ էլ ձայն տվեց Գարիբալդիին և կանչեց հայրենիքի այն բոլոր քաջերին, որոնք ուրախությամբ կկռվեին և կմեռնեին հայրենիքի համար: Այն ժամանակ քսան-քսանհինգ տարեկան երիտասարդ էի: Ես ներկայացա նրան. այն ժամանակ մի փոքր ալեխառն էր նրա մորուքը: Ի՛նչ գեղեցիկ էր նա, իսկական տղամարդ, իսկ աչքերը փայլում էին հայրենիքի սիրով ու վրեժով:

**20. Տրված հատվածում քանի՞ պարզ ստորոգյալ կա:**

Ձիով դանդաղ գնում են այն գյուղը, ուր ջրաղաց ունեինք և ընդարձակ հողեր: Ահա լեռներ, ուր գիշերել են ոչխարների հոտերի մոտ, երբ ընկերներիս հետ հովիվ էի: Վաղուց ցամաքել է մեր ջրաղացի առուն, որովհետև ավերակ է մեր ջրաղացը: Նվիրական վայրեր են, ուր անցան իմ մանկությունն ու պատանեկությունը: Ձիուս սմբակների տակից բարձրանում է ճանապարհի փոշին, և հուշերս ինձ երագ են թվում:

**21. Տրված հատվածներում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- Վաղուց է փախել աշխարհն իր հունից,  
Մեկ էլ ե՞րբ է նա իրեն գտնելու:
- Տատրակները սեր են անում  
Պատշգամբիս քիվաքարին:  
Կարծես մի գույգ սիրահարված  
Տատրակ դարձել և այս պահին  
Տիեզերքն է իջել հանկարծ  
Պատշգամբիս քիվաքարին:
- Աշխարհն ինձ համար հովիտ է բարու,  
Ցավերն ինձանից դեռ հեռու էին:
- Հոգուդ կրակը թե՛՛ պիտի պահես.  
Եղանակները վաղ են ցրտելու:

**22. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

Սիրտը նույնպես խաբվում է, ինչպես և բանականությունը. նրա մոլորությունը ոչ պակաս կորստաբեր է, բայց նրանից ազատվելն ավելի դժվար է, քանի որ ցավ է պատճառում:

**23. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

Կործանված վանք է հավատն իմ հոգու,  
Լոկ մի կանթեղս՝ վառված իմ աչքով,  
Պեղում է մահվան խավարն ահարկու,  
Ա՛խ, գուցե հառնի մայրս հրաշքով:

**24. Տրված հատվածում քանի՞ ստորոգելի կա:**

Թե գրկածս չես, դրախտ ես, ո՛վ կին,  
Քո մի համբույրով մեռյալն է հառնում,  
Ո՛վ կին, երբ մայր ես դառնում կաթոզին՝  
Սիրո սրբության սանդուղքն ես դառնում,  
Չնաշխարհիկ ես դառնում դու, մա՛յր-կին:

**25. Տրված հատվածում քանի՞ ստորոգելի կա:**

Մի բերան սուտն էլ դառնում է թախիծ  
 Ու մահ է դառնում քեզ համար կարծես,  
 Եվ մի պուտ հավատ կորցնելու վախից  
 Կորցնում ես դու քեզ...

**26. Տրված հատվածներում դերանունով արտահայտված քանի՞ ստորոգելի կա:**

- Ես կույր եմ հիմա, անբախտ ու մենակ, Հավերժում կորած մի մոլոր ասուպ:
- Առաջինները նրանք են, ովքեր Կարողանում են ամեն ինչ ճեղքել:
- Զո հոգու վրա կա մի վարագույր, Ո՞վ ես դու, ո՞վ ես, բնավ չգիտեմ:
- Ե՛վ թախիծ, և՛ տրտունջ, և՛ տանջանք, -Դո՞ւ ես այն, թե՞ աշխարհն է լացում:

**27. Տրված հատվածում քանի՞ որոշիչ կա:**

Նա երջանիկ թագավորություն մաղթեց նորընծա արքային, և պատանի Գագիկն այնքան մեծահոգի դարձավ, որ նորեկ դեսպանի հետ Սարգսին էլ արքայական կառք հրավիրեց և իր կողքին բազմեցրեց: Առավոտյան պայծառ արեգակը բոլորին զվարթ տրամադրություն էր հաղորդել:

**28. Տրված հատվածներում ածականով արտահայտված քանի՞ որոշիչ կա:**

- Փրկեցե՛ք ինձ այս բանտից, խավարից այս սրտախոց, Սավերներից այս տրտում, ամբոխից այս համր ու հոծ:
- Լույս երազների աղմուկը ահեղ, Համբույրը ուրիշ օրերի կզգամ:
- Հիմա տասները ծաղկում, Ի՛նչ քաղցր կանչում են քեզ, Նորք:
- Լուռ նստում եք պուրակում, Համր ու անխոս հեռանում, Ժպտում եք ինձ ու այգուն Ժպիտով խոր ու խոհուն:
- Միբուռ եմ պարզկա քո լեզուն, Ձեռներդ՝ մաշված ու բարակ:

**29. Տրված հատվածներում դերանունով արտահայտված քանի՞ որոշիչ կա:**

- Ես գիտեմ մի թովիչ առասպել, Ուր ողջ կյանքը հրաշք է դառնում:
- Միշտ նույն խոհերի շշուկին հլու, Միշտ նույն կարոտի կսկիծը պահած՝ Ես դուրս եմ գալիս նորից շրջելու Նեղ փողոցներն ու կրկեսները բաց:
- Այս գիշեր նորից լավիս է քամին Իմ դռան առաջ, իմ պատերի տակ:
- Ուրիշ հավքեր են թռչում, Ուրիշ ցողեր են թրջում Հոգնած ոտքերս:

**30. Նախադասություններից քանիստ՞ն է որոշիչն արտահայտված բառակապակցությամբ:**

- Նրա եղբայրը թագավոր է՝ հզոր, պատերազմասեր. գնացել է մի աշխարհ և հիմա վերադառնում է:
- Կարմիր կակաչներով բոցավառված ցորենի մատաղ արտերը ցոլում են ու ծուփ տալիս:
- Իրար սիրող ընկերները խոսում էին մանկության քաղցր օրերից:
- Մորթիների վրա մեծ քանակով կախված էին զանազան տեսակի և ոճի զենքեր՝ մանր ու խոշոր դաշույններ, սրեր, հրացաններ:

**31. Տրված նախադասություններում քանի՞ հատկացուցիչ կա:**

- Դրությունը անորոշ է. փող չունենմ, տանտիկինս ուզում է, ես նեղվում եմ. ընթրիքի, ճաշի փողը չեմ տվել, շորերս մաշվել են, վրաս ծիծաղում է հասարակությունը:
- Ձյունի վրայով սահում էր գյուղացու նախակերտ սահնակը, և ես այն զգացումն ունեի, թե լուսնի դաշտերի վրայով է, որ սահում եմք:
- Նրանց հայացքի մեջ զարմանք չկար. գիտեին, որ իրենց սիրելի քահանան մի տեղին առակ ունի լեզվի տակ, որ հիմա պատմելու է:
- Ճանապարհի եզերքին՝ դալար թումբի վրա, կանգնել էին երեք գեղջուկ պատանիներ՝ մախաղները մեջքներին կապած:

**32. Տրված նախադասություններում դերանունով արտահայտված քանի՞ հատկացուցիչ կա:**

- Մեր՝ երեխաներիս աչքը չէր հեռանում նրանցից. ուշիուշով դիտում էինք արագիլների ամեն մի շարժումը:
- Այս գեղգեղանքը սիրավառ սրտի, հրեղեն արցունքների և անծայր կարոտի մի ամբողջ հեքիաթ էր:
- Ես շատ էի լսել սոխակի երգերը, լսել ու հիացել, բայց բոլորի սրտերը գերող այսպիսի երգ առաջին անգամ էի լսում:
- Մենք նստեցինք իրար մոտ և երկար նայում էինք միմյանց. այսպես ճանաչեցինք իրար:

**33. Տրված հատվածում քանի՞ հատկացուցիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

Փոքրիկ օղակները լայնացան հավվեցին ձուլվեցին ծովի արևից փայլող անդորր երեսին: Լառ-Մարգարը ոչ ոքի չասաց թե ինչու արցունքներ երևացին իր աչքերում երբ առաջին անգամ գնացքի պատուհանից հայրենի եզերքը տեսավ: Իր բնօրրանում պիտի ծլեին կորիզները: Լառ-Մարգարը գիշեր-ցերեկ առունների վրա էր լինում ջուրը բաժանում հսկում ջրտուքը առունների մաքրությանը հետևում:

**34. Տրված նախադասություններում քանի՞ մասնական բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- Ինքը Գ-արիբաղին գայրացած պատռեց կայսրի նամակը և պատռած կտորները ուղարկեց նրան:
- Քառասուն-հիսուն կրծքից բխած այս հուժկու և միահամուռ ձայնը որպես հայոց լեզու Երասխի շառաչի հետ փռվելով Արարատյան աշխարհի վրա թվում էր թե սլանում է ազատ Մասիսն ի վեր:
- Հայրս որպես իմաստուն մարդ ինձ ասաց որ մարդ ինչ անելու է մինչև հիսուն տարեկանը պետք է անի:
- Մինչև այժմ ես այն կարծիքին էի որ պիտի կռվել և Տաճկահայաստանը ձեռք բերել և պաշտպանել իբրև ազատ երկիր:

**35. Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:**

Վեստ Սարգիսը անփոխարինելի դարձավ պալատում, իսկ Պահլավունիները անմասնակից մնացին երկրի կառավարմանը: Կրկին հունական ոսկու քաղցրահնչյուն զնգոցը ստվարացրեց «հունասերների» բանակը, կրկին բյուրավոր դրամատենչ հայացքներ բաղձանքով դեպի արևմուտք բևեռվեցին: Եվ երկիրը կրկին գլորվեց իր հունը, իսկ կայսրության գահը ձեռքից ձեռք էին գլորում: Միքայելին կուրացրել ու բանտ էին նետել, իսկ կայսրուհին ոչ մի կերպ չէր փարատում իր կասկածը:

**36. Տրված հատվածներում դերանունով արտահայտված քանի՞ ուղիղ խնդիր կա:**

- Չեմ նկատում օրերիս չուն,  
Ակնթարթ է թվում տարիս:  
Բայց բևեռներս իրարից փախչում,  
Իրար լքում են գույգ բևեռներս:
- Ես առնեի իմ գրկի մեջ  
Եվ իմ ցողով քեզ մաքրեի:
- Կյանքում մի բան լավ հասկացա՝  
Մահվան ահը ծանր է մահից:
- Փակվում են ակունքներն իմ երգի,  
Բախտն իրե՞ն, թե՞ մեզ է ծանակում:
- Արքաներն ինչքա՞ն են անհոգի,  
Նրանց խիղճն ո՞վ պիտի ոռոգի:

**37. Տրված հատվածներում գոյականով արտահայտված քանի՞ հանգման անուղղակի խնդիր կա:**

- Ինչպես ծերունին ձայնով պառաված  
Չայնակցում է ժիր թռնիկի երգին,  
Այնպես էլ ծերուկ անտառը կամաց՝  
Արձագանք տալիս ջրի աղմուկին:
- Ասավ, սեղմեց սովալլուկ  
Չավակներին իր լանջին,  
Ու շրթունքի վրա դալուկ  
Սառավ համբույրը վերջին:
- Ու քարշ եմ գալիս, ու քարշ եմ գալիս,  
Անքուն ջրի պես դիպչում քարերին,  
Անշունչ քարին էլ երնեկ եմ տալիս:
- Տիեզերքում աստվածային մի  
ճամփորդ է իմ հոգին,  
Երկրից անցվոր, երկրի փառքին  
անհաղորդ է իմ հոգին:

**38. Տրված հատվածներում դերանունով արտահայտված քանի՞ անջատման անուղղակի խնդիր կա:**

- Ես քեզնից դառնացած հեռացա,  
Ես քեզնից հեռացա ու լացի:
- Պատասխանն այս հարցի  
Ո՞ւմից ես իմանամ,  
Ի՞նչ հրաշքով բանամ  
Դռները անդարձի:
- Ի՞նչ եղավ: Մենք մեզանից  
Հեռացանք կամաց-կամաց,  
Մեկմեկու հիշել անգամ  
Թերացանք կամաց-կամաց:
- Քեզանից նամակ չկա.  
Փոստատարն ամոթով մնաց,  
Իրենն էր մեղքը կարծես  
Շփոթվեց, թողեց ու գնաց:
- Աչքդ միշտ կուշտ կմնա,  
Հոգիդ՝ գոհ քեզ հասած քչից,  
Բոլորին բաժին կտաս  
Քո մաքուր-մաքրված խղճից:

**39. Հատվածներից քանիստ՞ւմ են ընդգծվածները անջատման անուղղակի խնդիրներ:**

- Հայաստան երկրի  
Տարդեղի կարմիր **հրդեհից** հետո  
Միջինաֆրիկյան միջօրեների  
Թանձր համբույրներն անգամ  
Շուրթերս վառել չկարողացան:
- Խելքս քո **խրատից** չկշտացավ,  
Տվածից ու խլածից չկշտացավ,  
Անսիրտ քո կրակից չկշտացավ:
- Եթե մինչև անգամ ինձ վտարած լինես  
Վերհուշերիդ վերջին խոնավ **քարանձավից**,  
Միևնույն է, կգամ, ինչ էլ լինի, կգամ:
- Անդունդների **ծոցից**, ջրվեժների բոցից  
Ես լսում եմ կարծես վերջին ճիչը նրա:

**40. Հատվածներից քանիստ՞ւմ են ընդգծվածները միջոցի անուղղակի խնդիրներ:**

- Եկան, ոռնացին սաղարթներիդ մեջ  
Ու ոլորելով, **ճկելով** մեկ-մեկ  
Դալար ճյուղերդ փշրեցին, առան:
- Եվ վերջապես ես չեմ կարող  
Չարհամարիել այն պատանուն,  
Որ հոր առաջ հորից խլած  
**Գլխարկով** է հպարտանում:
- **Մեկով** հիացա, մեկից խոցվեցի,  
Այնքան փորձեցի, այնքան փորձվեցի,  
Բայց էությունս, ավա՛ղ, մինչև վերջ  
Բաշխել, բաժանել չկարողացա:

**41. Տրված հատվածներում քանի՞ անուղղակի խնդիր կա:**

- Եվ մատներով նուրբ որպես հող  
Թմբած ու թույլ սրտիս դիպար,  
Հողմով տարար ամպը կապար,  
Լազուր ու լուրթ գարուն անուշ:
- Դու կգաս ու կրկին հեքիաթով կոյուբես,  
Լուսերես կցրես մառախուղն իմ հոգու:
- Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս  
բարով,  
Բորբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես մնաս  
բարով:
- Թներով թեթև թռել է արդեն,  
Իմ արտույտն անուշ թռել է հեռուն:

**42. Տրված հատվածում ընդգծվածներից քանի՞սն են պարագա:**

Տարածեց ձեռքը իշխանը **փութով**,  
Լռեց դահլիճը պերճ ապարանքի,  
Պատվիրակները պատմեցին **վշտով**  
Թշվառ վիճակը մայր հայրենիքի:  
Չայրացավ հոգին քաջ գորավարի,  
Համհարզները իր **սաստիկ** գայրացան,  
Առավ ընկերներին հին կռիվների,  
Եվ **հողը** հայրենի թողին, հեռացան:  
Գնացին նրանք. **սահմանը չանցած՝**  
Շինականն արտից առավ մի բուռ հող,

Լցրեց քսակը և **արագընթաց**  
Հասավ իշխանի ապարանքը ճոխ:  
Հին հայրենիքի մեղեդիները հին  
Մեղմ կարկաչեցին **առվակների պես**,  
Գուսանը վառման երգեց **սրտագին**  
Ճերմակ լեռների կատարները վես:  
Աչքերը լցված սրտի **արցունքով՝**  
Խոնարհում է հեզ գլուխն արքեմի,  
Եվ **երեք անգամ** անհուն կարոտով  
Համբուրում է նա հողը հայրենի:

**43. Տրված հատվածներում դերանունով արտահայտված քանի՞ պարագա կա:**

- Եկա, որ այստեղ ձեզ համար այսօր  
Հրեղեն խոսքեր կռնեմ ու խնդում,  
Լսեմ հաղթական մարտի ցնծություն:
- Քույրս տարամերժ ձայն տվեց, անցավ.  
-Քեզ որտե՞ղ թաղեմ, վիշտ իմ մոլեգին,  
Ինչո՞վ բուժեմ քեզ, անբուժելի՛ ցավ:
- Որքա՞ն փոխված եք, պճնված ճոխ,  
Ճեմում եք որպես դշխոս հպարտ:
- Ինչո՞ւ է այսպես սիրտս մոկտում,  
Այսպես, նոյեմբեր, քո հողմի նման  
Լալիս անդադար և աղեկտուր,  
Կարծես նեղ լինի աշխարհն  
անսահման:

**44. Տրված հատվածներում մակբայով արտահայտված քանի՞ պարագա կա:**

- Կանչում է կրկին, կանչում անդադար  
Էն չքնաղ երկրի կարոտը անբուն,  
Ու թևերն ահա փռած տիրաբար՝  
Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն:
- Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,  
Երկնքի մթնած ամպերից իջներ,  
Ինչպես փոթորիկ՝ սաստիկ սրընթաց,  
Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ:
- Սրընթաց պախարա՞, թե՞ գայլ գիշատիչ  
Շեշտակի անցավ փարախի մոտով,  
Այծյա՞մը հանկարծ մոտակա ժայռից  
Անդունդը մի քար գլորեց ոտքով:

**45. Տրված հատվածներում կապական կառույցով արտահայտված քանի՞ պարագա կա:**

- Տարան անտակ էն ժեռ քարից,  
Որ կանգնած է մինչ էսօր,  
Էն ահավոր քարի ծերից  
Գլորեցին դեպի ձոր:
- Ավերակ բերդին սև ամպի նման  
Ծովսն ու թշնամին չոքել են ահա:
- Ամբողջ մի ամիս խումբը զինավառ  
Մարեր ու ձորեր ոտնատակ տվեց՝  
Չորան Մարոյին գտնելու համար,  
Որ սարից իջավ, Անուշին փախցրեց:
- Էն մենավոր ծառի տակ  
Փոս փորեցին մի խորին...

**46. Տրված հատվածներում քանի՞ պատճառի պարագա կա:**

- Բանաստեղծություն, դու պիտի փրկվես Անճարակության համաճարակից, Այս ներմուծական ախտ ու վարակից, Բանաստեղծություն, դու պիտի փրկվես:
- Սի հավք ծկլթաց ծառի սաղարթում, Վախից վայր ընկավ ծաղիկը ձեռքից:
- Ձեռքիս սավերից կուրծքդ թրթռաց, Եվ ուշքս գնաց մագերիդ բույրից:
- Ինչո՞ւ են քարերը մոռացել քայլելը, Երևի տարիքը արածը արել է:

**47. Տրված հատվածներում ընդգծվածներից քանի՞սն են պարագա:**

- Խորհուրդն **այնքան** խրթին, Եվ խաղն այնքան բարդ է, Որ կարող է հանկարծ Մարդը իր տունը քանդի:
- Ինձ կհիշեն **ամեն անգամ**, Երբ մտնեն անտառ, Լսեն խելոք կաղնիների Հեքիաթներն անբառ:
- Կարոտներս էլ վեր են կենում, **Խումբ-խումբ** գնում, մատտում են Պապենական թոնրի շուրթին:
- Վերջին անգամ արի մստենք, **Սի քանի** բառ ասեմ, գնամ:

**48. Տրված հատվածներում քանի՞ դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

- Ես գնում էի ոչ թե հարստություն ձեռք բերելու այլ մի կտոր հաց շահելու մորս ու երկու քույրերիս համար:
- Ես չունեի ոչ մի նպատակ ոչ մի երագ բացի օրվա պարենս վաստակելուց և հորս պարանոցի վրա մի ավելորդ լուծ չդառնալուց:
- Միակ փափագս շարունակել ուսումս վաղուց մեռել էր ինձ համար:
- Բայց զգում էի որ իմ ներկայությամբ զսպված արցունքը այժմ առատորեն հեղեղում է նրա հուժկու դեմքը:

**49. Տրված հատվածում քանի՞ դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

Ես շունչ առնելով շտապեցի դուրս: Այդ թղթադրամները կարծես այրում էին դողացող ձեռքերս: Տալով դրանք կառապանին ես քաշվեցի նեղ փողոցներից մեկի անկյունը և ազատություն տվեցի երկար ժամանակ զսպված արցունքներիս: Տանջվում էի ոչ միայն բարոյապես այլև ֆիզիկապես կարծես մի կենդանի ու շնչող մարմնից կտրվել էր մի մասը և գցվել բոցավառված խարույկի մեջ: Իհարկե այժմ աղոտ լուսավորված այդ խանութի մեջ ինձ ծաղրում են ու հայհոյում և վաղն իմ բացահայտ ստորանալը հայտնի է դառնալու մեր բոլոր ազգականներին:

**50. Տրված հատվածում քանի՞ ներդրյալ միավոր կա:**

Ավարտելով քաղաքային դպրոցի դասընթացը՝ ես, պարզ է, ստիպած եղա խեղդել իմ մեջ ուսման ծարավը և մի գործի մտնել: Բայց ի՞նչ գործ կարող էի գտնել մի կիսավեր քաղաքում, որ ոչ արդյունաբերություն ուներ և ոչ քիչ թե շատ խոշոր վաճառականություն: Մեկը մեր հարևաններից, ինչպես ինձ հայտնի էր, ուներ աղի պահեստ: Նա ինձ հրավիրեց՝ իր մոտ ծառայելու աղ կշռողի պաշտոնով: Աշխատավարձի մասին խոսք չբացելով՝ ուրախությամբ ընդունեցի նրա հրավերը (չընդունել չէի կարող) և հաջորդ օրվանից սկսեցի աշխատել:

**51. Նախադասության շարահյուսական վերլուծության տարբերակներից քանի՞սն են սխալ:**

*Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, որդին՝ Սամվելը, վերադարձավ Աշտիշատի վանքից և անմիջապես մորը հայտնեց իշխանի գալստյան մասին:*

- **հաջորդ օրը** – ժամանակի պարագա, **վերադարձավ** – պարզ ստորոգյալ
- **վաղ առավոտյան** – ժամանակի պարագա, **մորը** – հանգման անուղղակի խնդիր
- **վանքից** - անջատման անուղղակի խնդիր, **անմիջապես** – ձևի պարագա
- **հայտնեց** – պարզ ստորոգյալ, **իշխանի** – հատկացուցիչ
- **Սամվելը** - ենթակա, **գալստյան մասին** – վերաբերության անուղղակի խնդիր

**52. Նախադասության շարահյուսական վերլուծության տարբերակներից քանի՞սն են սխալ:**

*Ընդմիջումից հետո հանդեսի երկրորդ մասը պիտի սկսվեր մի բանաստեղծությամբ, որ արտասանելու էր Խոնարհի քույրը, և երբ վարագույրը շարժվեց, փոքրիկ աղջիկը մանկան զիլ ձայնով սկսեց արտասանել:*

- **ընդմիջումից հետո** - ժամանակի պարագա, **հանդեսի** – հատկացուցիչ
- **երկրորդ** - որոշիչ, **պիտի սկսվեր** - բաղադրյալ ստորոգյալ
- **որ** – ուղիղ խնդիր, **արտասանելու էր** – պարզ ստորոգյալ
- **քույրը** - ենթակա, **Խոնարհի** – հատկացուցիչ
- **երբ** – ժամանակի պարագա, **զիլ** – որոշիչ

**53. Բարդ ստորադասական նախադասություններից քանիսու՞մ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն կա:**

- Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր Ուղիների ժապավեններն անհամար...
- Չեմ սիրում, երբ քիկունքիս հետևից օտարն իմ մամակն է կարդում:
- Ջգացվում է, որ շուտով ցրտերն ընկնելու են:
- Ա՛խ, արդյոք ու՞ր է այն ձեռքը սուրբ, Որ պիտի ցմահ փայփայե ինձ...

**54. Բարդ ստորադասական նախադասություններից քանիսու՞մ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն կա:**

- Ամենքին կարելի է ներել, բայց ոչ նրան, ով կոչված է կառավարելու մարդկանց:
- Ինչ որ կապված է մանկության լուսավոր օրերի հետ, չի մոռացվում:
- Թագավորը քաշվեց Կաքավաբերդ և սպասում էր, որ իշխաններն օգնության հասնեն:
- Իշխանը հայացքը շրջում էր այս ու այն կողմ՝ տեսնելու համար, թե ով է արձագանքում իր կոչին:

**55. Բարդ ստորադասական նախադասություններից քանիսու՞մ խնդիր երկրորդական նախադասություն կա:**

- Հավատում եմ ես՝ կգա ժամանակ, Կցնդեն վայրի օրերը վայրագ...
- Երբեք մի՛ հակաճառիր այն մարդուն, ով իրեն անսխալական է համարում:
- Երանի նրան, ով հայրենական Խաղաղ հարկի տակ ննջում է հիմա:
- Հպարտանում էր, որ նման գավակներ է մեծացրել:



**56. Բարդ ստորադասական նախադասություններից քանիստ՞ն անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն կա:**

- Ով համարձակ է, նա է շահում:
- Գիտեր, որ այնտեղ սրտի թրթիռով են սպասում դրսից եկած լուրերին:
- Ում հավատում եք, նրան էլ ընտրե՞ք ձեզ առաջնորդ:
- Ում վստահել էր իր սրտի գաղտնիքը, այսօր նրանից խուսափում էր ամեն կերպ:

**57. Բարդ ստորադասական նախադասություններից քանիստ՞ն պարագա երկրորդական նախադասություն կա:**

- Չեմ վերադառնա իմ ընտանյաց գիրկը, մինչև վերջին հազարացին չհալածեմ հայրենիքի սահմաններից:
- Չեմ մոռանա այն օրը, երբ Աշոտն այցելեց մեզ:
- Էս որ պատահեց, մեր Դավիթ հսկան Մի մանուկ էր դեռ՝ յոթ-ութ տարեկան:
- Գ-յուղը, որտեղ ծնվել է բանաստեղծը, գտնվում է սահմանի վրա:

**58. Բարդ ստորադասական նախադասություններից քանիստ՞ն ստորոգելի երկրորդական նախադասություն կա:**

- Ամենակարևորը, սակայն, մեզ համար այն էր, որ մեր տոհմը հոչակված էր իր ազնվությամբ:
- Այն էլ իմացանք, որ կտրվելուց հետո է միայն երևում ծառի բուն հաստությունը:
- Ես այն եմ եղել, ինչ որ եղել եմ...
- Վատն է այն թռչունը, որ աղտոտում է սեփական բույնը:
- Գեղեցիկ հագուստը չէ, որ մարդուն ազնվացնում է:

**59. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- *Իմ մանկական տվայտանքների աղբյուրն այն էր, ինչ որ տեսնում ու լսում էի ոչ միայն դրսում, այլև տանը:*  
Ոչ միայն դրսում, այլև տանը տեսածս ու լսածս իմ մանկական տվայտանքների աղբյուրն էր:
- *Երևի նրա մանկական սիրտը նախազգում էր, որ մի օր այդ փորձանքը պատահելու է:*  
Երևի նրա մանկական սիրտը նախազգում էր այդ փորձանքի՝ մի օր պատահելը:
- *Իսկ ի՞նչն է, որ զբաղեցնում է մեծ փիլիսոփայի միտքը:*  
Իսկ ի՞նչն է զբաղեցնում մեծ փիլիսոփայի միտքը:
- *Դա հենց այն է, ինչը պահել է տիեզերական հավասարակշռությունը:*  
Դա հենց տիեզերական հավասարակշռությունը պահողն է:

**60. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- *Տասնյոթ տարեկանում ես այնքան միամիտ էի, որ հավատացի Բալասան ապոր կատակին:*  
Տասնյոթ տարեկանում այնքան միամիտ լինելուս պատճառով ես հավատացի Բալասան ապոր կատակին:
- *Թե արձանն էլ պիտի հանեք, պատվանդանը զուր եք քանդում:*  
Արձանն էլ հանելու դեպքում պատվանդանը զուր եք քանդում:
- *Ամենահաճելի գրուցակիցը նա է, ով չի հակադրվում մեր ստերին:*  
Մեր ստերին չհակադրվողը ամենահաճելի գրուցակիցն է:
- *Ես գնում էի մի երկիր, որ ապաստան էր դարձել շատ բախտախնդիրների համար:*  
Ես գնում էի շատ բախտախնդիրների համար ապաստան դարձած մի երկիր:

**61. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված պարզի:**

- *Հիշում եմ այդ երջանիկ օրը, երբ ծնողներս ինձ տեղափոխեցին եկեղեցական դպրոց:*  
Հիշում եմ ծնողներիս՝ ինձ եկեղեցական դպրոց տեղափոխելու երջանիկ օրը:
- *Իր արվեստի շատ գեղեցկություններ արտիստն ստացել է նրանցից, ովքեր դասավանդել են իրեն պատանության տարիներին:*  
Իր արվեստի շատ գեղեցկություններ արտիստն ստացել է պատանության տարիներին իրեն դասավանդածներից:
- *Ես չգիտեի, թե ինչ տարբերություն կա փողոցի և դպրոցի միջև:*  
Ես չգիտեի փողոցի և դպրոցի տարբերությունը:
- *Բախտավորություն է, որ խելքին համապատասխան գործ են գտնում:*  
Բախտավորություն է խելքին համապատասխան գործ գտնելը:

**62. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված պարզի:**

- *Ներհակ ուժերի հակամարտությունն է, որ հնարավոր է դարձնում գոյության ընթացքը:*  
Ներհակ ուժերի հակամարտությունն է հնարավոր դարձնում գոյության ընթացքը:
- *Չնայած մենք մշտապես դատապարտում ենք սուտը, երբեք չենք խորշում օգտվել նրա ծառայություններից:*  
Չնայած մեր՝ սուտը մշտապես դատապարտելուն՝ երբեք չենք խորշում օգտվել նրա ծառայություններից:
- *Ես ունեի մի մայր՝ գմայլելի մի գեղեցկուհի, որ ծնվել էր իր ճակատագիրը լռությամբ կրելու համար:*  
Ես ունեի մի մայր՝ իր ճակատագիրը լռությամբ կրելու համար ծնված գմայլելի մի գեղեցկուհի:
- *Միջավայրը, որ ծնեց մեծ գրողին, թաղված էր անթափանց խավարի մեջ:*  
Անթափանց խավարի մեջ թաղված միջավայրը ծնեց մեծ գրողին:

**63. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- *Այսօրվա հանգիստ պայմաններում ստեղծագործողները չեն կարող պատկերացնել այն ժամանակվա գրողի վիճակը:*  
Նրանք, ովքեր ստեղծագործում են այսօրվա հանգիստ պայմաններում, չեն կարող պատկերացնել այն ժամանակվա գրողի վիճակը:
- *Բա.Ֆ.Ֆին ամեն օր հորդորում էր Շիրվանզադեին մի խոշոր գործ գրել ամսագրի համար:*  
Բա.Ֆ.Ֆին ամեն օր հորդորում էր Շիրվանզադեին, որ մի խոշոր գործ գրի ամսագրի համար:
- *Հավանաբար շատ դժվար է քաղաքականությամբ զբաղվող կանանց գործը:*  
Հավանաբար շատ դժվար է այն կանանց գործը, ովքեր զբաղվում են քաղաքականությամբ:
- *Իսկական ընկերները ապառիկ շահը կանխիկ շահից գերադասողներն են:*  
Իսկական ընկերներ են նրանք, ովքեր ապառիկ շահը գերադասում են կանխիկ շահից:

**64. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- *Բժիշկը պիտի ամաչի հանիրավի իրեն մատուցված երախտագիտությունից:*  
Բժիշկը պիտի ամաչի նրանցից, ովքեր իրեն հանիրավի երախտագիտություն են մատուցում:
- *Դերասանի արժանիքները թվարկելիս Փափազյանն առաջնային էր համարում նրա իմացականության աստիճանը:*  
Երբ Փափազյանը թվարկում էր դերասանի արժանիքները, առաջնային էր համարում նրա իմացականության աստիճանը:
- *Պատժվելուս պատճառը հորս՝ բողոքականներին չսիրելն էր:*  
Պատժվեցի, որովհետև հայրս բողոքականներին չէր սիրում:
- *Ամենացանկալի ստերը հորինողներին բանաստեղծ են կոչում:*  
Նրանց, ովքեր ամենացանկալի ստերն են հորինում, բանաստեղծ են կոչում:

**65. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Ազատվելով մորս գրկից՝ ես կառք նստեցի:*  
Երբ ազատվեցի մորս գրկից, ես կառք նստեցի:
- *Նրանցից մեկն անմիջապես վազեց փողոց՝ քաղաքի միակ վիրաբույժին կանչելու:*  
Նրանցից մեկն անմիջապես վազեց փողոց, որ կանչի քաղաքի միակ վիրաբույժին:
- *Իմ հանցանքը արստրված ուսանողների հետ ծանոթանալս էր:*  
Այն, որ ծանոթացել էի արստրված ուսանողների հետ, իմ հանցանքն էր:
- *Բանվորը հարստահարվում էր այսօր գործատեր դարձած երեկվա բանվորից:*  
Բանվորը հարստահարվում էր երեկվա բանվորից, որն այսօր գործատեր է դարձել:

**66. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Այդ միջավայրում նախանձի առարկա էր դառնում մերձավորին կոխկռտելով առաջ գնացողը:*  
Այդ միջավայրում նախանձի առարկա էր դառնում նա, ով մերձավորին կոխկռտելով առաջ էր գնում:
- *Նախքան հրատարակության հանձնելս հողվածներս կարդում էի Աբգար Հովհաննիսյանին:*  
Նախքան հողվածներս հրատարակության կհանձնելի, դրանք կարդում էի Աբգար Հովհաննիսյանին:
- *Չարմանալի Րաֆֆու անտարբեր լինելն էր արևելյան երաժշտության հանդեպ:*  
Չարմանալի էր, որ Րաֆֆին անտարբեր էր արևելյան երաժշտության հանդեպ:
- *Թուրքիայից փախած հայերը գալիս էին «Մշակի» խմբագրատուն:*  
Երբ Թուրքիայից հայերը փախչում էին, գալիս էին «Մշակի» խմբագրատուն:

**67. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Մի քանի բաժակ Շամախու գինի խմելուց հետո նա երեսուն տարով ջահելանում էր:*  
Երբ մի քանի բաժակ Շամախու գինի էր խմում, նա երեսուն տարով ջահելանում էր:
- *Նահանգապետին ներկայանալու հեռանկարը կատարյալ պատիժ էր Համբարձումի համար:*  
Այն հեռանկարը, որ պիտի ներկայանար նահանգապետին, կատարյալ պատիժ էր Համբարձումի համար:
- *Արժրունու՝ Շվեյցարիա ուղևորվելուց հետո երեք մարդ կամեցան խմբովին շարունակել «Մշակի» հրատարակությունը:*  
Երբ Արժրունին ուղևորվեց Շվեյցարիա, երեք մարդ կամեցան խմբովին շարունակել «Մշակի» հրատարակությունը:
- *Այդ մառախլապատ երկնքի տակ է անցկացնում իր տարիները երկրից արտագաղթածների բազմությունը:*  
Այդ մառախլապատ երկնքի տակ է անցկացնում իր տարիները այն բազմությունը, որն արտագաղթել է երկրից:

**68. Ուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են ճիշտ:**

- – *Պատրաստվե՛ք գնալու, - դիմելով մեզ՝ ասաց տանտերը, - ձեր կառքն արդեն պատրաստ սպասում է մեր իջևանատան բակում:*  
Տանտերը, դիմելով մեզ, ասաց, որ պատրաստվենք գնալու, մեր կառքն արդեն պատրաստ սպասում է նրանց իջևանատան բակում:
- – *Թշնամին ձեզ հետ հաշտության կզնա միայն այն ժամանակ, երբ դուք նրան մի լավ ջարդ տաք, - դիմելով դահլիճում նստածներին՝ ասաց բանախոսը:*  
Բանախոսը, դիմելով դահլիճում նստածներին, ասաց, որ թշնամին նրանց հետ հաշտության կզնա միայն այն ժամանակ, երբ նրանք նրան մի լավ ջարդ տան:
- – *Դուք պետք է համոզեք նրանց, - ասաց ինձ Լևոնը.- նրանք ինձ չեն հավատում, բայց Ձեզ կհավատան:*  
Լևոնն ինձ ասաց, որ ես պետք է համոզեմ նրանց. նրանք իրեն չեն հավատում, բայց ինձ կհավատան:
- *Դասամիջոցին պրոֆեսորը մոտեցավ ինձ և ասաց.*  
*-Լավ կլինի, որ կարդաս իմ հոդվածը. այնտեղ օգտակար նյութ կգտնես ավարտաճառիդ համար:*  
Դասամիջոցին պրոֆեսորը մոտեցավ ինձ և ասաց, որ լավ կլինի, որ կարդամ իր հոդվածը, այնտեղ օգտակար նյութ կգտնեմ ավարտաճառիս համար:

**69. Ուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են սխալ:**

- - *Դու այնպես ես խոսում, կարծես մենք երեկ ենք ծանոթացել, - հանդիմանում էր Հրանտը Աշոտին՝ իր մտերիմ ընկերոջը:*  
Հրանտը Աշոտին՝ իր մտերիմ ընկերոջը, հանդիմանում էր, որ դու այնպես ես խոսում, կարծես մենք երեկ ենք ծանոթացել:
- – *Իմ անունը, հարգելի՛ս, գուցե քեզ ոչինչ չի ասում, բայց նկատի ունեցիր, որ ակադեմիական թատրոնն արդեն բեմադրել է իմ պիեսը, - ակնոցն ուղղելով՝ ասաց երիտասարդը:*  
Երիտասարդը, ակնոցն ուղղելով, ասաց, որ իր անունը նրան գուցե ոչինչ չի ասում, բայց թող նա նկատի ունենա, որ ակադեմիական թատրոնն արդեն բեմադրել է նրա պիեսը:
- – *Ես տեսնում եմ, - ասաց Աստղիկը երիտասարդին, - դու նույնիսկ մեր թաղը կարգին չես ճանաչում:*  
Աստղիկը երիտասարդին ասաց, որ ինքը տեսնում է՝ նա նույնիսկ իրենց թաղը կարգին չի ճանաչում:
- – *Կարդալ չգիտեմ, գորավա՛ր,- մեղավոր ձայնով ասաց շինականը, - բայց գիտեմ, որ այդ գրքի մեջ մեր պատմությունն է, մեր աղոթքը:*  
Շինականը մեղավոր ձայնով ասաց գորավարին, որ ինքը կարդալ չգիտի, բայց գիտի, որ այդ գրքի մեջ նրանց պատմությունն է, նրանց աղոթքը:

**70. Անողորակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են ճիշտ:**

- *Ձրուցակիցս դառը հեզնանքով ասաց ինձ, որ եթե իրենցից որևէ մեկը ցանկանար պատասխանել իմ հարցին, ապա ես կիմանայի անողոր ճշմարտությունը:*  
-Եթե մեզնից որևէ մեկը ցանկանար պատասխանել քո հարցին, ապա դուք կիմանայիք անողոր ճշմարտությունը, - դառը հեզնանքով ասաց ինձ զրուցակիցս:
- *Սևամորթը, ի զարմանս նրանց, մաքուր հայերենով ասաց, որ իր մայրը հայուհի է, Կիլիկիայից. նա է իրեն հայերեն սովորեցրել:*  
Սևամորթը, ի զարմանս ձեզ, մաքուր հայերենով ասաց.  
-Իմ մայրը հայուհի է, Կիլիկիայից. նա է ինձ հայերեն սովորեցրել:
- *Հայրը որդուն հարցրեց, թե երբ իրենք Բեյրութում էին, նա հասցրեց արդյոք ծանոթանալ Վահանի հետ:*  
-Երբ դուք Բեյրութում էիք, հասցրի՞ր ծանոթանալ Վահանի հետ, - հարցրեց հայրը որդուն:
- *Չորավարը մտասույզ ասաց, որ ինքը չի սիրում, որ մարդ կռվի է գնում մեռնելու համար, և ավելացրեց, որ երևի ճիշտ չեն վարվել պատմիչները, երբ հայ զինվորին միայն նահատակի լուսապսակ են հագցրել:*  
-Չեմ սիրում, որ մարդ կռվի է գնում մեռնելու համար, - մտասույզ ասաց զորավարը և ավելացրեց. - երևի ճիշտ չեն վարվել պատմիչները, երբ հայ զինվորին միայն նահատակի լուսապսակ են հագցրել:

**71. Քանի՞ ստորակետ պետք է դրվի տրված հատվածում (հատվածը կետադրված չէ):**

Գեռ մանկուց շատ էի սիրում գնալ մի զամբյուղագործի մոտ որ ապրում էր մեր քաղաքում և դիտել ինչպես է հյուսում ու ես շատ ժամանակ չանցած կարծես գլխի ընկա ոնց են հյուսում և իմ ուժերի չափով օգնում էի նրան:

Հիմա մենությանս մեջ որոշեցի զամբյուղ գործել: Գալով ամառանոցս կտրեցի ամենաբարակ ճյուղերը համոզվելով որ պիտանի են գործիս և ասեմ որ երկար որոնելու հարկ չեղավ նուրբ ընձյուղներ շրջակայքում հեշտ էր գտնել: Ամփջապես գործի անցա:

**72. Քանի՞ ստորակետ պետք է դրվի տրված հատվածում (հատվածը կետադրված չէ):**

Ապա Մուշեղը Վասակի որդին Մեծ Հայքի քաջակորով սպարապետը հայ բարձրաշխարհիկ ազնվականներից ընտրեց քառասուն հազար թրծված մարդիկ միաբան և միական ընտիր և հավատարիմ պատրաստեց նրանց համար երիվարներ գեներ և ուտեստ ու բանակեց Ատրպատականի կողմերում հայոց աշխարհը անագորույն թշնամու ոտնձգություններից պաշտպանելու:

**73. Քանի՞ ստորակետ պետք է դրվի տրված հատվածում (հատվածը կետադրված չէ):**

Մահամերձ էր մայրիկս հոգեվարքի մեջ: Անխռով հոժարական սպասում էր վախճանին որին սպասել էր ինչպես նավագնացության մեկնելուն են նախապատրաստվում: Մինչ համարյա իննսուն տարեկանում կփակեր կյանքի մեծ փակագիծը իմ դիմաց ծեր մայրիկս էր անփոփոխ անխաթար: Նա շուտով հեռանալու էր ինձնից և հարագատներին պարզևած տաքուկ ու հավատարիմ սիրո ութսունվեց տարիները պետք է վերջանային մի քանի վայրկյանում:

**74. Նախադասություններից քանիստ՞ն է-ից առաջ ստորակետ չպետք է դրվի:**

Հակասական կցկտուր էին նախարարների մասին լուրերը և կասկածն ու վարանքը խեղդում էին Հովսեփի կաթողիկոսին: Հոգեհույզ սրտմաշուք էր ապրում Վեհափառը և նա փութագնաց սուրհանդակներ առաքեց երկրում մնացած նախարարներին խստագույնս պատվիրելով անմիջապես գալ Արտաշատ: Մայրաքաղաքը լռել էր քաշվելով իր մեջ և իր տխուր օրվա վերջին ժամերն էր ապրում: Ատոմ նախարարը թիկնապահների հետ քաղաքադռնից ներս մտավ և նժույզին խթանելով մոտեցավ կաթողիկոսի նստավայրին: Թիկնօթոցից վեր կենալով կաթողիկոսը բարեհամբույր դիմավորեց իշխանին որը փոքր-ինչ շառագունեց և նրա աջն առնելով մնաց կանգնած:

**75. Նախադասություններից քանիստ՞ում ստորակետի գործածության սխալ կա:**

- Մեկնված խոնավ այծենակաճի վրա, թիկն տված մի քարաբեկորի, նա կիսաբաց աչքերով նայում էր վաղորդայնի սառը շողերին:
- Վանականների խցերը թաղված էին խոր լռության մեջ, և միայն ինչ-որ տեղից որպես սրտի հառաչանք լսվում էր գիշերահսկիչ վանականի թախծալի սաղմոսերգությունը:
- Համարյա ամեն գիշեր արթնանում էր հանկարծ, տենդափայլ աչքերով նայում իր շուրջը, սակայն, գետնափորի թանձր խավարը հիշեցնում էր, որ այդ բոլորն անդարձ երազ է:
- Քիչ հետո նա զգուշորեն անցավ կամարակապ ու կիսախավար միջանցքը և, շունչը պահելով, ականջը մոտեցրեց սևացած դռներից մեկին:

**76. Քանի՞ բութ պետք է դրվի տրված նախադասության մեջ:**

Գետը թվում է կապույտ գոտի է անաղարտ ձյան վրա մոռացված որ ջրվեժ առ ջրվեժ խորանալով գնում-կորչում է երկարաձիգ կիրճի մեջ:

**77. Քանի՞ բութ պետք է դնել հետևյալ նախադասության մեջ:**

Հանդիսատեսները կամաց-կամաց հոգնեցին ու ձանձրացան բայց աճաբարսն այլևս ոչ ոքի չէր տեսնում և ոչինչ չէր լսում նրա հիացմունքից հրդեհված հայացքը տեսնում էր միայն պտտվող ձիերին իսկ մարդիկ սառն ու անտարբեր առօրյա հոգսերով տարված ու անկարող ըմբռնելու այդ վեհ պատկերը հերթով լքում էին կրկեսը:

**78. Քանի՞ բութ պետք է դնել հետևյալ հատվածում:**

Խորդուբորդ ճանապարհի հոգնությունից ընդարմացած գնում էին ձիավորները ծանր մտքերի մեջ խորասուզված: Նրանք լռելյայն ձիերն էին համեմատում իրար ուշիուշով դիտում որոշելու որի ձին կտանեն որինը կթողնեն որի սանձն ու թամբը տերը շալակած տուն կբերի:

**79. Քանի՞ բութ պետք է դնել հետևյալ հատվածում:**

Մենյակի դուռը բացվեց հայրս էր մեջքը ուղիղ աչքերում քնքշության ցուլքեր և հոգնությունը քողարկող ժպիտ: Կռացավ համբուրեց ինձ մի քանի օր չսափրված մարդու սիրո այդ սրտառուչ արտահայտությունը այտերս ծակող համբույրը հանկարծ ինձ համար բացահայտեց հորս որոշումը որ նա կայացրել էր մի երկու օր առաջ այն երեկո երբ միջնորմի հետևից թաքուն փորձում էի լսել նրա և մորս խոսակցությունը բայց չկարողացա թեև ականջներս սրել էի:

**80. Քանի՞ բութ պետք է դնել հետևյալ հատվածում:**

Դ-ա Պոնտացի Պիդատոսին ուղղված նամակն էր կնոջ կողմից շարադրված: Նա գրում էր Ամուսինս ես շատ եմ խնդրում անուղղելի վնաս չպատճառես այն թափառականին որ ինչպես խոսում են Քրիստոս է կոչում իրեն: Համաձայն շատերի կարծիքի այդ մարդն անվնաս է արդարակյաց վարքով տկարին ապաքինող ընկածին հասնող: Իսկ որ նա իրեն իբրև թե Աստծու որդի կամ փրկիչ անգամ հրեաների թագավոր է հռչակում ամենայն հավանականությամբ չարախոսություն է: Դ-ու գիտես ինչ խառնակիչ մոլազար մարդիկ կան մեր շուրջը: Իսկ ինչ երազ էի տեսել երեկ հետո կպատմեմ հինա միայն ուզում եմ ասել անեծք չբերես ոչ քո ոչ էլ ժառանգներիդ գլխին վնասաբեր վճիռ կայացնելով:

**81. Նախադասություններից քանիստ՞ում մեկից ավելի բուռ պետք է դրվի:**

- Իբրև հպատակ երկրի հեծելագունդ այրուձին Գարեգին Սրվանձտյա իշխանի գլխավորությամբ մասնակցում էր արևելյան թշնամիների դեմ մղվող պարսից անվերջանալի պատերազմներին:
- Բայց և գիտեր ուրիշ ճամփա չկար միմիայն այս անբարբառելի տաժանների միջով անցնելով էր այրուձին փրկվելու և Հայոց աշխարհի հասնելու:
- Նրա միտքը թռավ-հասավ հայրենի եզերք Տարոն Մշո խաղաղ անդաստանները ոսկեծուփ արտերի պաղպաջուն ջրերի հոգին ջերմացնող հեքիաթային շշուկներով օծված:
- Այնտեղ արևագալին շեների երդիկներից երկինք էին ձգվում ծխի կապույտ քուլաները հետո սայլվորներն են դուրս ելնում շարժվում դեպի հանդերը դաշտային աշխատանքի:

**82. Քանի՞ միջակետ պետք է դնել հետևյալ հատվածում:**

Օլիմպոսից բարձր լայնորեն տարածվում է կապտավուն անհուն երկինքը նրանից ոսկեղեն լույս է հորդում: Չնսի թագավորության մեջ ոչ անձրև է գալիս ոչ ձյուն այնտեղ հավերժ պայծառ ու բերկրալի ամառ է: Իսկ ցածում քուլա-քուլա սահում են ամպերը նրանք երբեմն-երբեմն ծածկում են հեռավոր երկիրը: Այնտեղ երկրի վրա գարնանն ու ամռանը հաջորդում են աշունն ու ձմեռը: Հրճվանքին և ուրախությանը փոխարինելու են գալիս դժբախտությունն ու վիշտը: Ծիշտ է աստվածներն էլ գիտեն ինչ բան է վիշտը բայց դա վաղանցուկ է Օլիմպոսում կրկին տիրում է հրճվանքը:

**83. Նախադասություններից քանիստ՞ում փակագծեր պիտի դրվեն:**

- Ես հաճույքով ունկնդրում էի Անրիի հայերենը պետք է խոստովանեմ նա լավ էր տիրապետում հայերենին նրա հանդարտ ու առնական ձայներանգը և մենք վայրկյան առ վայրկյան հարազատանում էինք:
- Նա խոսում է իր կարոտի և Հայաստան գալու ցանկության մասին հպարտանում է մեր վերածննդով գայրույթով հիշելով 1915 թվականը այդ պահին նրա աչքերը լցվում են ցասումով:
- Լուս Անջելեսի կինոսրահներից մեկում կայանալու էր «Մուսա լեռան քառասուն օրը» ֆիլմի առաջին դիտումը Մամուլյանը ափսոսանքով հայտնում է որ տարիներ առաջ չի կարողացել նկարահանել Ֆրանց Վերֆելի այդ երկը:
- Վարագույրը բարձրացավ տեսա բոլորը ոտքի են ելել ակնթարթ իսկ չանցած դահլիճը թնդաց որոտընդոստ ծափերից:
- Այս աշխարհից հեռանալու գաղափարը ի դեպ այն միշտ ուղեկցում է մարդուն որքան էլ չուզենաս դառնում է գիշերներիդ անմեկին ուղեկիցը և հավատացյալ ես թե ոչ ընկնում ես կյանքի ու մահվան անլույծ հարցումների մեջ:

**84. Նախադասություններից քանիստ՞ում փակագծեր պիտի դրվեն:**

Նրբահյուս շղարշից կարված լաջվարդ ծիրանին ուսերին չքնադագեղ Աստղիկը նա հայոց դիցարանի սիրո և գեղեցկության աստվածուհին է դուրս եկավ Աստղկաբերդից: Նա համրաքայլ ուղևորվեց իր սիրելի Վիշապաքաղի այդպես էին անվանում Վահագնին աստվածային կացարանը: Հաղթահարելով երկնակարկատ լեռների բարձունքները դրանք պատված էին հավերժական ձյունով հասավ ծաղկառատ հովտին ու հանգրվանեց խոխոջուն գետակի ափին փոքր-ինչ դադար առնելու: Մակայն դիցուհու անդորրը խաթարվեց կատաղի մեռյալների գետինը դրդացնող դոփյունից փոշու ամպ բարձրացնելով դեպի աստվածուհին էր վարգում մի ասպախումբ: Վայրագ հրոսակախմբից պետք էր թաքնվել ինչպես լինում է նման դեպքերում և Աստղիկը հապշտապ մոտեցավ ճամփեզրին օրորվող մի փշատենու: Ծառն ակնթարթորեն հյուրընկալեց կույսին հասկացել էր որ աստվածուհին է գորովանքով իր գիրկն առնելով խոնարհեց թավշապատ ճյուղերը ծածկեց նրան և անուշաբույր սաղարթներից արծաթ փոշի արձակեց այդպես ստեղծելով մառախուղի խորհրդավոր պատրանք: Փրկվեց աստվածուհին բայց արծաթափայլ փշատենու ընձյուղները մնացին կռացած:

**85. Նախադասություններից քանիստ՞ն կետադրական սխալ կա:**

- Միակ ուղևորը, որը լռելյայն նստած լաստանավի աջ եզրին, մի ձեռքով խաղում էր կապույտ կոհակների հետ, նկարիչ Փանոս Թերլեմեզյանն էր:
- Տասներեքերորդ դարում՝ օրըստօրե փթթող Անի քաղաքում, ապրում էր մի իշխան՝ Անանիա անունով:
- Փոքրիկներից ութ-ինը քայլ հեռու՝ հինավուրց տան շեմին, նստած էր մի երիտասարդ կին՝ գույնզգույն զգեստով. նա այդ երեխաների մայրն էր:
- Բոլորն արդեն գիտեին՝ պատվավոր հյուրը ժամանում է, և պատրաստվում էին ըստ պատշաճի դիմավորելու նրան:

**86. Նախադասություններից քանիստ՞ն կետադրական սխալ կա:**

- – Կրեմ լցնեմ ամբարն ու գնամ գործի, - խորհում էր նա, բայց չէր շտապում. ծխում էր ու պտտվում ցորենի շեղջի շուրջը:
- Հագիվ աչքը փակել էր, երբ քաղցից արյան ծարավի լվերը վխտալով՝ հարձակվեցին փափկակենցաղ հյուրի վրա:
- Դեռ լույսը չբացված էր հագնվել Հազրոն և թախտին մեկնված ծխում էր՝ սպասելով օրվա բացվելուն:
- Դեմուդեմ հուռթի արտերն են՝ կանաչ գոտիով, իսկ բարձունքի վրա ծերուկ հովիվը, կռթնած իր անբաժան ձեռնափայտին, հետևում է ոչխարների հոտին:

**87. Քանի՞ կետադրական սխալ կա հետևյալ նախադասության մեջ:**

Կարծում եմ, եթե ես այստեղ գալի հազար տարի առաջ, այս քարանձավները կլինեին կենդանի տներ, բակերը՝ աշխույժ երեխաների գոռում-գոչյունից զվարթ կզրնգային, թոնիրներից հացի ախորժակ գրգռող բույր կելներ և գետը մման չէր լինի երգեհոնի, որի՝ վաղուց սիրելի դարձած հնչյուններն այժմ հնչում են ոչ ոքի համար:

**88. Քանի՞ կետադրական սխալ կա հետևյալ նախադասության մեջ:**

Հինավուրց եկեղեցու կորնթադ գմբեթը խարխուլվել էր հիսուն-վաթսուն տարի առաջ, բայց ամբողջովին չէր ավերվել. մինչև օրս կանգուն է գմբեթի կեսը և հիմա էլ վերև բարձրացող անմիտ հետաքրքրասերներից շատերը, չըմբռնելով այդ պատմական հուշարձանի կարևորությունը, իրենց անուններն են փորագրում գավթի՝ դեռևս կանգուն մնացած պատերին:

**II ՏԵՄԱԿ**

**89. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում շարադասության սխալ կա:**

1. Ընթրիքից հետո, որտեղ առատ իսպանական ու հռենոսյան գինիներ, խեցգետիններ մատուցվեցին, կառքերն աստիճանաբար լքեցին դղյակի բակը:
2. Արևմտյան Եվրոպան բոլոր տրանսպորտի տեսակներով ամենահագեցած շրջանն է:
3. Մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում կատարում է մոտ 700 միլիոն շնչառական գործողություն, և շնչառական ուղիներ թափանցող օդն ամենուրեք հանդիպում է լորձապատ մակերևույթի:
4. Եզակի հայկական ճարտարապետության անգնահատելի կոթողներից է Գ-անձասարի վանքի համալիրը, որ գտնվում է Արցախի Մարտակերտի շրջանում:
5. Եվրոպան շատ խիտ բնակեցված տարածաշրջան է. այստեղ կան բազմաթիվ բարձր արդյունաբերությամբ զարգացած պետություններ:



**90. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում շարադասության սխալ կա:**

1. Աֆրիկյան արշավանքի ժամանակ Կեսարը նավից իջնելուց հետո սայթաքեց ու չկորցնելով իրեն՝ ամուր գրկեց հողը և հանդիսավոր հայտարարեց. «Դու իմ ձեռքերում ես, Աֆրիկա»:
2. «Գլաքսո» հանրահայտ անգլիական դեղագործական ընկերությունը հսկայական տուգանք է վճարել, երբ բացահայտվել է որոշ դեղամիջոցների՝ հիվանդների առողջության վրա մահացու ազդեցություն թողնելու փաստը:
3. Նավաբեկությունից առաջացած իրավունքը միջազգային իրավունքի հին կետ է, ըստ որի՝ նավաբեկության հետևանքով ափ նետված կամ մերձափնյա մասում հայտնաբերված ողջ գույքը համարվում էր առափնյա տարածքի գերիշխանի սեփականությունը:
4. Առանց հայրենիքի մարդը թափառական թռչուն է, անարմատ ծառ:
5. Եռադեմք Երվանդ Քոչարի տարածանկարները Մոնակոյում ճանաչվեցին լավագույնը Պիկասոյի և այլ մեծերի նկարների շարքում:

**91. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում համաձայնության սխալ կա:**

1. Մրտի բարդագույն վիրահատություններ տարած հայ ծանրամարտիկն իրեն արդեն լավ է զգում:
2. Արական սեռի՝ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված դիմորդները առաջին կուրսի վարձավճարը կարող են վճարել զինծառայությունից վերադառնալուց հետո:
3. Նման մարդիկ ծանոթների շրջանում պահապան շների դեր են կատարում, որ հաշում է բոլորի վրա, թույլ չի տալիս ոչ ոքի շարժվել:
4. Ռուսաստանի Դաշնության ցանկացած քաղաքացի երրորդ երեխայի ծննդի դեպքում պետությունից հող ստանալու իրավունք ունեն:
5. Ժպիտ, խոժոռ հոնքեր, հպարտ կեցվածք, խեղճացած ուսեր. ահա որոնք են մեր հոգեվիճակի և զգացմունքների ակամա հաղորդիչները:

**92. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում խնդրառություն կամ շարադասության սխալ կա:**

1. Դավիթը, նկատելով թշնամուն, սուրը հանեց և դեպի նրան առաջանալով թիկունքից՝ փորձեց անակնկալի բերել:
2. Ամենախոշոր Եվրոպայի ընկերություններից մեկը բարձրակարգ յուղերի և քսանյութերի մատակարարներից է մեր երկրում:
3. -Ես տեղում եմ, բերեք փաստաթղթերը,- հրահանգեց տնօրենը հեռախոսով:
4. Ի. Մաունդերը գրում է. «Եզիպտացիները, որոնց հուշարձաններում հայտնաբերվել են կենդանակերպի տասներկու նշանները, նշում են, որ աստղերի մասին գիտելիքները փոխառել են խաղերից»:
5. Նրանց գրասենյակն աշխատում է բոլոր օրերին՝ բացառությամբ կիրակի օրերից:

**93. Նշել պարզ նախադասությունների համարները:**

1. Հայոց հողում ճարտասանները երբեք հաջողության չեն հասել՝ թատերաբեմներից դուրս ծափերի չարժանանալով:
2. Հինգ տարում կրկին մոմի պես բարակել ու թափանցիկ էր դարձել:
3. Մմբատին ասես անսպասելիորեն արթնացրել էին խոր քնից՝ ցույց տալով իր նախնիների փառապանծ անցյալը:
4. Ծնկի իջած պատասխանի էր սպասում. երբեք ինքն իրենից այդքան գոհ չէր եղել:
5. Արքայի շուրջ խմբված պալատականներն սկսել էին իրար մեջ խոսել, շշուկով մտքեր փոխանակել և տարօրինակ կերպով ամեն ինչից զգուշանալ:
6. Միայն ինքն էր ամբողջը բաշխել իր ազգի նժարին և հենց դրանով էլ անգոր էր:

**94. Նշել բաղադրիչ ընդարձակ նախադասությունների համարները:**

1. Շտապում էի, 2. որպեսզի ուրախալի լուրը հաղորդեմ, 3. բայց ում հանդիպում էի, 4. ինձ հիասթափեցնում էին, 5. ասում, 6. թե ծովը մարտ ամսին վտանգավոր է, 7. և ես պետք է զգույշ լինեմ:

**95. Նշել բարդ նախադասությունների համարները:**

1. Ուշքի գալով հիվանդը չգիտես ինչ մեղքի համար մի քանի անգամ հայիոյեց հորս: 2. Նա, ինչպես երևում է, մոտ երկու ամիս պետք է տառապեր անկողնում: 3. Այժմ ավելի հանգիստ էր, քան աղետը պատահելուց առաջ, ինչպես հիվանդը՝ անխուսափելի անդամահատությունից հետո: 4. Իր մարմնավոր ուժով մի բացառիկ կին էր տատս՝ բարձրահասակ, հաղթանդամ, ինչպես մի ըմբիշ: 5. Մի քանի ամիս անցնելուց հետո հորեղբայրս վեր կացավ անկողնուց՝ երկրորդ անգամ վիրավորվելով իր նման մեկի հետ կռվելիս:

**96. Նշել բարդ համադասական նախադասությունների համարները:**

1. Տարիքով մեծ չլինելը՝ մի լավ դաս կտայի:
2. Տառերը սովորելուց և հեզելով կարդալուց հետո մենք, հեռանալով վարժապետի մոտից, գնացինք դպրոց:
3. Մենք միասին էինք դպրոց գնում. ես առաջնորդում էի նրան:
4. Մի օր, երբ դաս էի պատմում, ներս մտավ տնօրենը:
5. Ե՛վ արևն էր այրում նրանց մարմինը, և՛ ցուրտն էր խոշտանգում նրանց:
6. Հորիզոնը կարծես պատել է բաց կարմիր մի հրդեհ, մինչև անգամ փողոցի փոշին վարդագույնին է տալիս:

**97. Նշել բարդ համադասական նախադասությունների համարները:**

1. Ես տակավին ծանոթ չէի այդ բանաստեղծի երկերին, բայց անունը լսել էի ու կարդացել նրա ստեղծագործությունները: 2. Ինչ ուզում եք ասեք, մարդու արտաքինն ազդում է դիտողի վրա: 3. Իմ առջև կանգնած էր ոչ ախորժելի դեմքով ու կեցվածքով մի մարդ, որ շրջիկ լաթավաճառի էր նման: 4. Նա չընդունեց իմ հայրենակիցների սիրալիր հրավերը, անգամ բարևի չարժանացրեց նրանց: 5. Անցան տարիներ, և ես այդ բանաստեղծին մի անգամ ևս տեսա. այս անգամ դարձյալ տեսա Փարիզում: 6. Սորբոնի համալսարանում մի խումբ հայ մտավորականներ Հովհաննես Թումանյանի մահվան առթիվ սգահանդես էին կազմակերպել, որին պետք է հրավիրվեին նաև օտարերկրացի մտավորականներ:

**98. Նշել բարդ համադասական նախադասությունների համարները:**

1. Մենք հեռացել էինք բավական, բայց ծնողներս դեռ կանգնած էին միևնույն տեղում: 2. Մայրս շարունակ հեկեկում էր, որը երևում էր նրա ուսերի վար ու վեր շարժումներից: 3. Հայրս չուխայի երկայն թևերի տակից բարձրացրեց իր ձեռքերը դեպի երկինք և իսկույն վար իջեցրեց: 4. Արդյոք նա իմ ճանապարհին էր օրհնում, թե՞ իր բախտն անիծում: 5. Բայց զգում էի, որ իմ ներկայությամբ զսպված արցունքն այժմ առատորեն հեղեղում է նրա հուժկու դեմքը: 6. Ես շարունակ նայում էի հետ, սակայն նրանք այլևս չէին երևում:

**99. Նշել այն նախադասությունների համարները, որոնց տեսակը սխալ է նշված:**

- |   |   |
|---|---|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Ինձ թվում է, թե մի քանի անգամ Տեսել եմ արդեն հավիտենության Ամենավերջին ակնթարթը ես: (<i>բարդ ստորադասական</i>)</li> <li>2. Հողի տակ են մեր հոգսերը անհոգ, Բարդու շրշյունը, շունը, գիշերը, Իսկ հողի վրա խշխշում են լոկ Հողոտ, մղեղոտ իմ վերհուշերը: (<i>բարդ համադասական</i>)</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>3. Քարե մրրիկ է, ու քարե բուք է, Քարե բողոք է, ու քարե բերդ: (<i>բարդ համադասական</i>)</li> <li>4. Քեզ բախտն ուր էլ տարավ, Մտքով քո տանն էիր: (<i>բարդ համադասական</i>)</li> <li>5. Եթե ես մի օր աշխարհից գնամ, Ո՞ւմ հառաչից ես դու վեր թռչելու: (<i>բարդ ստորադասական</i>)</li> </ol> |
|---|---|

**100. Նշել թերի նախադասությունների համարները:**

1. Առավոտ է: 2. Աղայանը դուրս է գալիս տնից՝ մի որևէ բարեկամ գտնելու և պարտք վերցնելու նպատակով: 3. Փողոցում նրան լուր են տալիս, 4. թե Քուռ գետը գիշերվա անձրևներից խիստ բարձրացել է և 5. ողողել քաղաքի արվարձաններից մեկը: 6. Նա շտապում է գետափ 6. և տեսնում, 7. որ արվարձանի կես մասը ջրի տակ է:

**101. Նշել անենթակա նախադասությունների համարները:**

1. Կյանքի հորձանուտում աննկատելիորեն գալիս է այն տարիքը, 2. երբ քնքշալից հայացքով ես նայում ծառերի՝ կանաչից օրեցօր կարմրատակող, հետո դեղնող, թափվող, օրորվող, քամուց քշվող տերևների: 3. Այդ դեպքերում սկսում են հաշվել այն հետզհետե պակասող տարիները, 4. որ իմ մոտավոր հաշվումներով մնում են ապրելու: 5. Եվ ես կարծում եմ՝ ժամանակն ու տարիներն ավելի արագ են անցնում: 6. Իմ՝ շատ ու շատ բան տեսած տարիների բարձունքում հիմա անցյալը մտովին ավելի հաճախ է այցելում ինձ:

**102. Ո՞ր համարների՝ փակագծերում տրված բացատրությունները չեն համապատասխանում ընդգծվածներին:**

1. Այդ միջոցին մեր դիմաց երևաց հարբած նավաստիների մի խումբ, որ **երգելով, պարելով** առաջ էր գալիս: (*բազմակի անդամներ*)
2. Նավաստիներն անմիջապես շրջապատեցին նրան և սկսեցին հետը **կատակներ անել**, սկզբում՝ անմեղ, հետո՝ ավելի ու ավելի անվայել: (*բառակապակցություն*)
3. Ես մտքումս պարծենում էի բարեկամովս, երբ տեսնում էի, թե ինչպես նա, **ձեռքերը մուշտակի քևերի մեջ խրած**, մտնում էր եկեղեցու գավիթը: (*բառակապակցություն*)
4. **Ինձ համար պարզ էր**, որ նա հիվանդի խոսքերին նշանակություն չէր տալիս, կարծես նույնիսկ չէր հավատում նրա հիվանդությանը: (*նախադասություն*)
5. Չկար այլևս նրա ձայնի մեջ խոբխոսություն, և **խոսքերի մեջ՝ արագություն**. կարկուտը հալվել էր տարիների սառնության մեջ: (*բառակապակցություն*)

**103. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածը ենթակա է:**

- |   |   |
|---|---|
| 1. Օրը մաշվեց, քաշվեց-զնաց, <b>Ո՞վ է արթուն, ո՞վ է քնած:</b>              | 4. <b>Քանաստեղծություն</b> , դու պիտի փրկվես Անճարակության համաճարակից: |
| 2. Եկել են, մեր <b>ինչքը</b> փախցրել, Սեզ վրա ծախել են մեր իրը:           | 5. Եվ ես չասացի ոչ որի <b>ոչինչ</b> Եվ ընտելացա մերժումի ցավին:         |
| 3. Իմ բաժին <b>աշխարհն</b> այս մեծ աշխարհում Կերգի շուտով երգն իր կարապի: | 6. Նրանք, որ իմ հացով մեծացան, Չեն ներում դեռ <b>մեղքերս</b> :          |

**104. Ընդգծվածներից նշել ենթակաների համարները:**

Մյուս անկյունում դեղնագույն պղնձե շրջանակի մեջ Մարիամ Աստվածածնի 1. **պատկերն** էր դրված: Նրա առջև վառվում էր ձիթայուղի ապակյա կարմիր 2. **կանթեղը**: Ինքը՝ 3. **աղջիկը**, որ սկզբում թվաց գեղեցիկ, մոտիկից այլ 4. **տպավորություն** գործեց ինձ վրա: Նա շատ երիտասարդ էր, բայց աչքերի տակի 5. **կապուտակները** նրան տալիս էին մի տեսակ մաշված ու քրքրված պաճույճի 6. **տեսք**: Այդ կինը 7. **Էմիլյան** էր: Այդ վայրկյանին իմ մեջ ծագեց մի բուռն 8. **կարեկցություն**:

**105. Նշել այն նախադասությունների համարները, որոնց դիմաց սխալ է գրված շարահյուսական պաշտոնը:**

Անպարփակ 1. **վիշտը(ենթակա)** հոգու մեջ՝ նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում, ցավակից եղավ անօգ աղամորդուն: Առավ նրան իր սրտի մեջ, մտավ նրա 2. **սիրտը(ենթակա)**, խոսք ասաց, 3. **խոսք(ուղիղ խնդիր)** լսեց և իմացավ՝ ամենուր՝ աշխարհի բոլոր ծայրերում էլ 4. **վիշտը (ենթակա)** մեկ է, 5. **սերը(ենթակա)** մեկ: Եվ նա հյուսեց բոլորի համար իր 6. **երգը (ուղիղ խնդիր)**: Վսեմափայլ 7. **երգիչը(ենթակա)**, անբաժան 8. **ցուպը(ենթակա)** ձեռքին, թափառեց աշխարհեաշխարհ և մի օր վերադարձավ 9. **տուն(տեղի պարագա)**:

**106. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերանունով արտահայտված ենթակալա:**

- |  |   |
|--|---|
| <p>1. Կիրճերը խժռում են դարերին, Դարեր են կուլ տալիս կիրճերը, Ի՞նչ անեն ինձ նման խեղճերը:</p> <p>2. Աշխարհից ես չեմ տրտնջում, Չեմ գանգատվում, Չէ՞ որ բոլորն են տանջվում, Բոլորն են տրտում:</p> | <p>3. Նույն երգն եք երգում դուք, նույն հինը, Եվ քանի՞ դարեր, քանի՞, Որքա՞ն, որքա՞ն մտերիմ է Ձեր դաշնը, սիրտ ու քամի՞:</p> <p>4. Եկողները թող չիմանան Սոված օրեր ու սև տարի, Թող բոլորը գան ու գնան, Աշխարհին բան չպատահի:</p> <p>5. Թշնամին եկավ մութի պես կամաց, Ամենքն ահաբեկ փախան դեպի սար:</p> |
|--|---|

**107. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ենթակայի արտահայտությունը սխալ է նշված:**

1. Գիշեր ու ցերեկ համաչափ զարկով Աղմկում եք դուք, պողպատե՛ դևեր: *(գոյական)*
2. Արդյոք ո՞վ հյուսեց ձեր դժկամ լեզուն, Ո՞վ շղթայեց մեզ ձեր մեռած կամքին: *(դերանուն)*
3. Ի՞նչ անեն ես՝ Մոլորյալս՝ խեղճ ու կրակ, Իրար բերեմ բևեռները իմ հակառակ, Մեկմեկու հետ հաշտեցնեմ: *(ածական)*
4. Օրերն ամեն ինչ առնում են տանում, Ամեն-ամեն ինչ խառնում են իրար: *(գոյական)*
5. Պատիվդ պահող չկա, Մասրենի՛, սարի՛ մասրենի: *(դերբայ)*

**108. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պարզ ստորոգյալ կա:**

1. Աշնան մի պայծառ առավոտ էր: 2. Փռշոտ ցանկերի միջից փայլվիլում էին խաղողի ոսկեղեն ողկույզները, նուռն ու խնձորները. 3. ասես հրեղեն գնդակներ լինեին: 4. Հուռթի այգիներից լիության անուշ բուրմունքն էր խնկում: 5. Երկու ընկերով գնում էինք հինավուրց Արմավիրի բլրի տակով: 6. Մենք քայլում էինք Երասխի հին հունով դեպի մի գյուղ՝ Երասխի ձախ ափին: 7. Սքանչելի էր Արարատյան դաշտը: 8. Մասիսը ուղղակի դիմացներս էր. 9. այնպե՛ս պարզ ու վճիտ էր:

**109. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ստորոգյալի տեսակը սխալ է նշված:**

1. Խավարն է գերել մեր հոգին այսօր Եվ լռությունը՝ հավետ մահապարտ: *(բաղադրյալ ստորոգյալ)*
2. Դուրս են գալիս ես, լուռ թափառում, Մեզն է գրկում ինձ, հողմը՝ օրորում: *(պարզ ստորոգյալ)*
3. Պայծառ են աստղերը, Աստղերը շողուն են: *(բաղադրյալ ստորոգյալ)*
4. Լռում է կոչը մարտական փողի, Մեռնում է տխուր ամեն մի փափագ: *(պարզ ստորոգյալ)*
5. Երբ կհոգնես, կգազազես աշխարհից, Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից: *(պարզ ստորոգյալ)*
6. Պայծառ աշխարհում կլինենք մենակ, Յավ կյանքի մեռնող լույսերից խաբված: *(պարզ ստորոգյալ)*

**110. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բաղադրյալ ստորոգյալ կա:**

1. Ես հապշտապ դուրս թռա դասարանից և որոշեցի՝ եղելության մասին տեղյակ պահեմ տնօրենին:
2. Ես մտածեցի, որ հարցերը չպետք է անընդհատ ուսուցիչները տան, իսկ աշակերտները պատասխանեն:
3. Գնալով վիճակը տագնապալի դարձավ, և սկսվեց անզիջում ձեռնամարտ:
4. Գուցե դա էր պատճառը, որ թշվառ բնակիչների մեծ մասը տառապում էր սուր աչքացավից ու կոկորդացավից:
5. Նա պիտի փնտրի մեկ ուրիշին. այս են պահանջում անողորմ բնության օրենքները:

**111. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի բաղադրյալ ստորոգյալ կա:**

- |  |   |
|--|---|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Ինձ մի տագնապ է համակում, Մոտալուտ աղետի մի սարսափ, Սարվարդի լճերն են ցամաքում, Ընկնում են հույսերս թևաթափ:</li> <li>2. Եվ ավելորդ ես դու նորերի մեջ, Խոզանում ընկած հասկ ես ցորենի:</li> <li>3. Մեր բաժին աստված, քո սիրտն էլ քար էր, Որ մեզ քարերը տվիր նվեր, Բայց քո կյանքը կարճ, մերը երկար էր, Ու երկարում է քարերն ի վեր:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>4. Մենք հոգի ենք, մի մարդ, Մի ընտանիք, մի տուն, Բազմալեզու, ազնիվ Մի ազգություն:</li> <li>5. Դու ոչ Սայաթ-Նովա, Ոչ էլ Քուչակ էիր, Ոչ էլ հռչակ փնտրող Հեռին գրչակ էիր:</li> </ol> |
|--|---|

**112. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում գոյականով արտահայտված ստորոգելի կա:**

- |  |  |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Ես մի ճամփորդ եմ մթնում մոլորված, Չեմ ուզում կանչել ցնորքս մեռած:</li> <li>2. Ա՛խ, ես սիրո ճամփի ափին Մենակ բուսած վայրի վարդ եմ:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>3. Է՛յ, գուլուն բախտ, դու առյուծ ես, Խեղճ եղնիկ եմ ճանկիդ մեջ:</li> <li>4. Իմ սիրտն այնտեղ է, ուր աստղամերձ Լեռներն են կանգնել՝ հազած կուռ գրահ:</li> </ol> |
|--|--|

**113. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ածականով արտահայտված ստորոգելի կա:**

- |  |   |
|--|---|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Այսօր գթանք իրարու, Այսօր իրար չտանջենք, Լինենք անչար ու հլու, Հեկեկանք ու չամաչենք:</li> <li>2. Նրա խոսքերի մեղմ օրորում Աշխարհը թվաց ինձ անեզերք:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>3. Բայց դյուքիչ է մղձավանջն այս դժնափայլ, Որ գրկում է քեզ ահերով իր մթին:</li> <li>4. Դու հպարտ չես, իմ հայրենիք, Տրտում ես դու և իմաստուն:</li> </ol> |
|--|---|

**114. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածները ստորոգելի են:**

- |  |  |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Լինես <b>քարի</b> ու <b>անբասիր</b>, Ընկերներիդ սրտով սիրես:</li> <li>2. Աստղերն են ժպտում լուսեղեն նագով, Խաղաղ դաշտերը <b>մութ</b> է համբուրում:</li> <li>3. Սիրտ իմ, այդ <b>ք</b>՞ում ես դու իզուր կանչում, Տե՛ս՝ գիշերն անցավ, աստղերը մեռան:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>4. Յուրտ ցերեկներից հավիտյան դժգոհ Սիրտս <b>կարոտ</b> է քո զգվանքներին:</li> <li>5. Այնպես <b>զգվող</b> է երեկոն անափ, Ծաղիկներն այնպես նագով են փակվում:</li> <li>6. Ես մի ճամփորդ եմ՝ մթնում մոլորված, Ու հոգնած սիրտս դարձել է <b>խոնարհ</b>:</li> </ol> |
|--|--|

115. Նշել այն հատվածների համարները, որոնցում բոլոր ընդգծվածները ածականով արտահայտված որոշիչներ են:

- |   |  |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> <li>1. Հեքիաթդ <b>անվերջ</b> օրորում,</li> <li>Իլիկդ խոսում է <b>անուշ</b>:</li> <li>2. Ու զանգերն այն լալագին <b>Մեռնող</b> իմ երկրում</li> <li>Չեն հուզելու քո հոգին</li> <li>Տխրությանք <b>անհուն</b>:</li> <li>3. Եվ <b>հյուսիսային</b> հեռուներում ու ցրտում</li> <li>Կարծես ցուլաց իմ <b>նաիրյան</b> արևն ալ:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>4. Թշնամին եկավ մութի պես <b>կամաց</b>,</li> <li>Ամենքն <b>ահաբեկ</b> փախսան դեպի սար:</li> <li>5. Ո՞վ է կանգնել պաշտպան երկրին մեր <b>ավեր</b>,</li> <li>Ո՞վ է թարգման մեր <b>դարավոր</b> տանջանքին:</li> <li>6. Ծեղքելով կապույտ անապատն <b>անհուն՝</b></li> <li><b>Ոսկե</b> քարավաններն անցնում են կրկին:</li> </ul> |
|---|--|

116. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում գոյականով արտահայտված որոշիչ կա:

- 1. «Երազ օրեր»-ը Մեծարենցի լավագույն բանաստեղծություններից է:
- 2. Նա մտովի իրեն զգում էր երազն հովիտներում:
- 3. Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց:
- 4. Ծով են աչքերը Ջավախքի դստեր:
- 5. Նրա ծով աչքերի խորքում անսահման թախիծ կա:

117. Նշել այն հատվածների համարները, որոնցում դերանունով արտահայտված որոշիչ կա:

- |  |   |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> <li>1. Կար հեռու մի երկիր թովչական,</li> <li>Արև էր ոսկեղեն աշխարհում:</li> <li>2. Եվ դու կերգես, զարթնա՛ծ աշխարհ, իմ առաջ,</li> <li>Կարճագանքես իմ ողջույնին սիրառատ:</li> <li>3. Մտքերից այս տարամերժ</li> <li>Ազատեցե՛ք ինձ,</li> <li>Մորմոքումից այս անվերջ,</li> <li>Անանց այս ցավից:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>4. Դեռ ինչքան ջանք է հարկավոր,</li> <li>Որ պահենք հացը հոգևոր:</li> <li>5. Խելագարվել է տիեզերքն ամբողջ,</li> <li>Աչքերը չռել իմ հոգու վրա:</li> </ul> |
|--|---|

118. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածներից ոչ մեկը հատկացուցիչ չէ:

- |   |   |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> <li>1. <b>Ժայռի</b> գլխից վառ կակաչի</li> <li>Խարույկներ են բխում,</li> <li><b>Կողքի</b> ժայռը, հանգիստ նստած,</li> <li>Ամպ ու մեզ է ծխում:</li> <li>2. Երբ ձյուն է նստած <b>սարերի</b> վրա,</li> <li>Եվ դեռ չեն պայթել հունդերը հողում,</li> <li><b>Որոտնաբերդի</b> քարերի վրա</li> <li>Օձերն այդ պահին շապիկ են փոխում:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>3. <b>Իրար</b> ձուլվեցին իմ մեջ մահ ու կյանք,</li> <li><b>Հոգիս</b> մատնեցիր քո մառախուղին:</li> <li>4. Ապառաժներ են հոշոտում</li> <li><b>Ժամանակի</b> ժանիքները,</li> <li>Իրար գլխի փուլ են գալիս,</li> <li><b>Իրար</b> հերքում հոխորտալով</li> <li>Ժամանակի ալիքները:</li> </ul> |
|---|---|

119. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածներից ոչ մեկը հատկացուցիչ չէ:

- |  |  |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> <li>1. Նա փերին է գմրուխտ <b>գետի</b>,</li> <li>Յնորքերիս սիրելին,</li> <li>Դիցուհին է իմ վառ <b>սրտի</b>,</li> <li>Վառ երգերիս նագելին:</li> <li>2. Կենսական ծովի <b>հույզերի</b> միջին</li> <li>Ես ժայռի նման կանգնած եմ ամուր,</li> <li>Կայծակն է զարկում իմ վես ճակատին,</li> <li>Ես <b>ժայռի</b> նման կանգնած եմ ամուր:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>3. Դու գնացիր, ես մնացի</li> <li>Բյուր <b>մարդկանց</b> մեջ մեն-մենակ,</li> <li>Սրտիս խորքում դառը լացի,</li> <li>Խավարն իջավ <b>կրծքիս</b> տակ:</li> <li>4. Ու հիմա աշնան <b>մեզի</b> մեջ խավար,</li> <li>Ականջդ հառած <b>քո</b> սրտի ցավին,</li> <li>Օտար ափերում կանգնել ես շվար,</li> <li>Ինչ որ ունեիր, անդարձ գնացին:</li> </ul> |
|--|--|

**120. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածը դերանունով արտահայտված հատկացուցիչ է:**

1. Նրանք չքնաղ երազներով զարդարում էին երիտասարդ գահակալի կյանքը և **ամենքին** իմաստություն էին սովորեցնում:
2. Եվ հայրենի անծայր երկրի փոշոտ ուղիները **իրենց** հետ տանում էին նրա հոգին դեպի արծվաբնակ լեռները:
3. Շինականների խրճիթներում հնչեցնում էր բամբիռը, **որի** խինդն ու հառաչները արձագանքում էին այդ աշխարհի բոլոր ափերում:
4. Հազար-հազար տարիների բռնության խավարը ցրվեց ժողովրդի հոգուց, և բացվեցին **ամենքի** աչքերը:
5. Եվ տեսավ, որ նախկին ծովի կանաչ ալիքների փոխարեն, **որոնց** վրա նավերն էին օրորվում, հիմա ավազի դեղին հատիկներն են գալարվում:

**121. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Ես ունեի մի խումբ ընկերներ հիշում եմ նրանցից ոմանց անունը Ալեքսանդր Նաջարյան Աբել Ապրեսյան Արշակ Քալանթար:
2. Թեև քաղաքը հրապույր չունեի այլևս սակայն ամեն ինչ մի ամբողջ աշխարհ էր դիտողի համար և նավթային արդյունաբերությունը և հանքերը և նավագնացությունը:
3. Ամեն գարուն ձնծաղիկների երևալուն պես գալիս էին արագիլները:
4. Անցավ մի աղջիկ իր ընկերուհիների հետ մի աղջիկ ուրախ ու վճիտ ինչպես այն թարմագեղ գարունը:
5. Հիշում եմ ինչ կտրիճ էիր դու արևակեզ գինավառ առյուծի բաշով կտրիճ:
6. Քաղաքապետ իշխանը հպարտ ու վես ճոխ ու զարդարուն հագուստով այդ մարդը գալիս էր դանդաղ քայլերով շրջապատված շքախմբով:

**122. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածը ուղիղ խնդիր չէ:**

- |  |   |
|--|---|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Սև երկինքը իջավ-փարվեց Սևեր հագած մեր <b>լեռներին</b>:</li> <li>2. Խրտնած գետերի որոտի ահից <b>Քունը</b> փախցրած լեռներն են քրտնում Գիշերվա մեջ խոր ու տազնապալից:</li> <li>3. <b>Ինձ</b> կհիշեն ամեն անգամ Օրը բացվելիս, Զնաթաթախ հավքն ու հովերն Իրար բախվելիս:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>4. Թող ընկերներդ քեզ մտքով թաղեն, <b>Վախճանն</b> ավետեն քո մեծ հոգնության:</li> <li>5. Զո վերջին <b>շնչին</b>, ավա՞ղ, չհասա, Եվ չլսեցի բառերդ վերջին:</li> <li>6. Չէ՛, ամայությունը, ասենք ուղղակի, Կապերն է կտրել, երես է առնում, Վերջին տնակը լքված գյուղակի Վերջին պառավի <b>դագաղն</b> է դառնում:</li> </ol> |
|--|---|

**123. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բոլոր ընդգծվածները ուղիղ խնդիր են:**

- |   |  |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Իմ լացով իմ <b>այգին</b> ջրեցի, Իմ ջանքով իմ <b>սարը</b> բարձրացա:</li> <li>2. <b>Պատասխանն</b> այս հարցի Ո՞ւմից ես իմանամ, Ի՞նչ հրաշքով բանամ <b>Դռները</b> անդարձի:</li> <li>3. <b>Ծաղիկն</b> ու միրգն ո՞վ վայելեց, Որ ինձ փուշը մնաց բաժին, Ես իմ բաժին ամեն <b>փշին</b> Դրախտի ծառ ասեմ, գնամ:</li> </ol> | <ol style="list-style-type: none"> <li>4. Սի <b>հայրեն</b> ասեմ ես էլ, Իմ ապրած օրերին ասեմ, <b>Օրհնանքս</b>՝ անցավորաց, Մաղթանքս նորերին ասեմ:</li> <li>5. <b>Ի՞նչ</b> է ասում ճամփորդներին Հավված-մաշված այս կածանը, Ժամանակին հազար ու մի <b>Քայլեր</b> հաշված այս կածանը:</li> </ol> |
|---|--|

**124. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերանունով արտահայտված հանգման անուղղակի խնդիր կա:**

- |   |  |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> <li>1. Ժայռը մտախոհ, իր մռայլ մտքի Հեռակից ընկած, նայում է նրան:</li> <li>2. Ու անդադար գնում էին Քշված հողմի կատաղությամբ, Իրար կպած ու միասին Երկու սև ամպ, երկու սև ամպ:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>3. Երեխի մման խաբեցին ինձ շատ, Երագուն ու խենթ երեխի մման, Ամեն հաճույքիս նայեցին միշտ խեթ, Վրդովմունք տվին ամեն մի վայրկյան:</li> <li>4. Ի՞նչ իմանաս ստեղծողի գաղտնիքները անմեկին, Ընկեր տվավ, իրար կապեց էս աշխարհքում ամենքին:</li> <li>5. Ո՛վ անճառ Մին, որ ամենին միացնում էս մի կյանքում, Ամեն կյանքում ու երագում անտես, անկեզ բորբոքում:</li> </ul> |
|---|--|

**125. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայով արտահայտված խնդիր կա:**

- |  |  |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> <li>1. Քնածին ո՞ր էս ասում, Մի արթունի՛ ասա, Սահյանն է այս հողի տակ, Վնաս չունի, ասա՛:</li> <li>2. Քանի՛, քանի՛, քանի՛ միլիոն տարվա Արած-դրածը մի տանջված հոգու Մի բուռ մոխիր ու մուր կդարձնի:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>3. Եվ հիմա գնում ենք մեզ գտած՝ Երգելով մեր հայրենն ու տաղը:</li> <li>4. Ջուրն ընկանք, կրակն ընկանք, Չմեռանք, բայց և չամբացանք, Խլացանք շատ լսելուց Եվ շատ լռելուց համբացանք:</li> </ul> |
|--|--|

**126. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում վերաբերության և ներգործող անուղղակի խնդիրներ կան:**

1. Խոսում էինք մեր անցյալ օրերից, լավ հիշողություններից: 2. Մեկը իր տեսած երագն էր պատմում, մյուսը՝ տնից ստացած տեղեկությունները: 3. Ապա զրուցում էինք մեր ճանապարհորդություններից, մանկությունից, սիրուց, արկածներից: 4. Ամեն ոք աշխատում էր սփոփել մյուսին: 5. Երբ դրսից մեկը մի բան էր ստանում՝ ծխախոտ, շաքար, միրգ, իսկույն սիրով բաժին էր հանում ուրիշներին: 6. Մեկը մյուսի կողմից սիրվում ու հարգվում էր:

**127. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում գոյականով արտահայտված պարագա կա:**

- |   |  |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> <li>1. Անհաս երկնքից ասեղ առ ասեղ Յուրտ ջրերի մեջ սուզվեցին նոքա:</li> <li>2. Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում, Իրիկնաժամին նստում են մենակ:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>3. Գիշերվա փողոցներում թափուր Շրջեցի տրտում ու միայնակ:</li> <li>4. Կարծես թե էս են լալիս այդ երգում, Կարծես թե քեզ են կարոտով երգում:</li> </ul> |
|---|--|

**128. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ձևի պարագա կա:**

1. Նրա նժույգը դանդաղորեն գնում էր դեպի ճամբար, որտեղ տեղավորված էր Հռոմի մոտակայքում գտնվող հավաքակալանը: 2. Նժույգն իր տիրոջ հետ այնքան էր անցել այդ ուղին, որ անսխալ գիտեր ճանապարհը: 3. Մի վարձկան, գետնին նստած, զարեհաց էր ուտում: 4. Ցենտուրիոնները անցուդարձ անելով զրուցում էին: 5. Բուռուրը խանդաղատանք էր ապրում այդ տեսարաններից և շնչում ռազմական ճամբարի առնական սուր հոտը: 6. Նա ուղևորվեց այնտեղ, ուր ծածանվում էր կապույտ դրոշը. դա հեծյալների ճամբարն էր: 7. Բուռուրը նստեց իր վրանի մոտ դրված փոքրիկ աթոռակի վրա:



**129. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի ժամանակի պարագա կա:**

- |   |  |
|---|--|
| <p>1. Եղել է հնում պերճ Արևելքում<br/>Մի քաջ զորավար հայրենապաշտպան,<br/>Առանց ընկճելու երկրի թշնամուն՝<br/>Նրա սուրը երբեք չի մտել պատյան:</p> | <p>3. Ինձ թվում է, թե մի քանի անգամ<br/>Հերքել եմ արդեն<br/>Ես անդարձության օրենքն անողոք,<br/>Մի քանի անգամ գնացել - եկել,<br/>Ապրել եմ այսպես ու ապրում եմ դեռ:</p>                  |
| <p>2. Անհուն նախանձի կրքով տոչորուն՝<br/>Մի օր խնջույքում արքայական տան<br/>Մի զորականի՝ անհայտ, անանուն,<br/>Ժպտաց սիրալիր, դրվատեց նրան:</p>  | <p>4. Եվ ի՞նչ իմանա՝ չենք հանդիպելու<br/>Ամենավերջին սահմանի վրա,<br/>Գուցե հենց այստեղ և այս նույն պահին,<br/>- Խփի՛ր, այս պահի կենացը խմենք,<br/>Մի վայրկյան հետո գուցե չլինենք:</p> |

**130. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձված կա:**

1. Գուք ուզում եք փրկել ձեր հոգիները և ցույց տալ, որ թագավորի պաշտպաններն եք:
2. Նրանք իրենց զավակներին բերում էին դղումե ամանով օղի կամ նրանց վաղուց մոռացած ատրճանակները:
3. -Ինչո՞ւ ես այսպես ուշացումով երևում,- ասաց պահակապետը:
4. Ըստ իս, այնուամենայնիվ, նա կարող էր տիկնոջ արտաքինի մասին ավելի սիրալիր արտահայտվել:
5. Աղջիկը խենթորեն սիրահարվել էր այդ մարդուն և ոչինչ չէր ուզում հասկանալ:
6. Նա գազազած շուռ եկավ և անմիջապես անհետացավ:

**131. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Նրա գորշագույն կմախքը սքողվելով խավարի շղարշով արյուն ու մարմին է ստանում ու ճիգ թափելով կենդանանում է:
2. Նա անընդհատ պտտվում է ինքն իր շուրջը դեպի ծովը արձակելով շլացուցիչ նետեր դա փարոսն է հաստատված քաղաքի բարձրագույն շինության վրա:
3. Մեկը բարձրահասակ էր խոժոռված բարկացած դեմքով և թանձր ու երկայն մորուքով իսկ մեջքին ուներ արևի նման փայլփլող մի լայնաբերան դաշույն:
4. Կեսօրին բարձրացավ ներհակ քամի նավն սկսեց երերալ կարծես մեզ նախազգուշացնելու համար բայց այդ մեզ չխանգարեց ժամանակին ճաշի նստելու և ախորժակով ուտելու:
5. Երերալով ու սայթաքելով քաշվեցի դեպի նավի ծայրը երկու ձեռքերով ամուր բռնելով մի երկաթե հաստ գլանից երկյուղած նայեցի դեպի վար և սարսուռը պաշարեց ինձ:

**132. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձվածի պաշտոնը սխալ է նշված:**

1. Անպարփակ վիշտը հոգու մեջ ամփոփած՝ նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում, ցավակից եղավ անօգ աղամորդուն: (*ձևի պարագա*)
2. Ամբողջի՝ վիհի վրա կիսով չափ ձգված հարկաբաժնի մի սենյակում բազմել էր մի մարդ: (*որոշիչ*)
3. Պարսպապատի վրայից զինվորները տեսան մի խումբ հեծյալների՝ ամբողջին արագ մոտենալը: (*ենթակա*)
4. Արտակը մոտ գնաց պատուհանին, փոքր-ինչ ձգվեց առաջ՝ ճանաչելու մոտեցողներին: (*նպատակի պարագա*)

**133. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:**

*Իշխանը անմիջապես ճանաչեց նրան, որովհետև ճրագը նա էր բռնել. այդ անակնկալ հանդիպումը տխրեցրեց իշխանին:*

1. **իշխանը** - ենթակա, **որովհետև** – պատճառի պարագա
2. **ճանաչեց** – պարզ ստորոգյալ, **նրան** – հանգման անուղղակի խնդիր
3. **ճրագը** – ուղիղ խնդիր, **բռնել էր** - բաղադրյալ ստորոգյալ
4. **այդ** - որոշիչ, **հանդիպումը** - ենթակա
5. **տխրեցրեց** – պարզ ստորոգյալ, **իշխանին** – հանգման անուղղակի խնդիր

**134. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:**

*Գարդմանա իշխանը՝ Սևադան, խորագնին հայացքը ուղղեց իր հոգու ներսը, որպեսզի այնտեղ փնտրի Մարգալետունու խորհրդավոր ակնարկի պատասխանը, սակայն ավելի վայելուչ համարեց լռելը:*

1. **Սևադան** - բացահայտիչ, **խորագնին** – ձևի պարագա
2. **որպեսզի** – նպատակի պարագա, **փնտրի** – պարզ ստորոգյալ
3. **իր** – հատկացուցիչ, **հոգու ներսը** – տեղի պարագա
4. **խորհրդավոր** – որոշիչ, **պատասխանը** - ենթակա
5. **ակնարկի** – հատկացուցիչ, **լռելը** – ուղիղ խնդիր

**135. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:**

*Քաղաքը, ուր անցավ իմ ոսկեծամ մանկությունը, հիմա ապրում է իմ հոգում, շատ հաճախ հուշերիս մեջ մշուշային գծերով ժպտում է ու ինձ տանում դեպի իմ հայրենի բնօրրանը:*

1. **ուր** – տեղի պարագա, **անցավ** – պարզ ստորոգյալ
2. **իմ** – հատկացուցիչ, **ոսկեծամ** – որոշիչ
3. **մանկությունը** – ուղիղ խնդիր, **մշուշային**– որոշիչ
4. **ժպտում է** - պարզ ստորոգյալ, **ինձ** – հանգման անուղղակի խնդիր
5. **հայրենի** – որոշիչ, **դեպի բնօրրանը** – տեղի պարագա

**136. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:**

*Միջօրեին տաքանում է հողը, այգեստանները տիվանդորրի մեջ անշարժանում են. գոյանում է կարծես հանճարեղ նկարչի կախարդական վրձնահարվածի մի չնաշխարհիկ բնանկար, և օդը հագնում է հողի ու արևի արբեցնող բուրմունքով:*

1. **միջօրեին** – ժամանակի պարագա, **հողը** - ենթակա
2. **տաքանում է** – պարզ ստորոգյալ, **հանճարեղ** – որոշիչ
3. **նկարչի** – հատկացուցիչ, **բնանկար** – ուղիղ խնդիր
4. **կախարդական** – ձևի պարագա, **վրձնահարվածի** – հատկացուցիչ
5. **արբեցնող** – որոշիչ, **բուրմունքով** – միջոցի անուղղակի խնդիր

**137. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:**

*Այսօր՝ առավոտյան, գնալու եմ դարձյալ, որպեսզի հիանամ Էրեբունու գունավոր որմնանկարներով. իրենց երանգների բազմազանությամբ ու թարմությամբ այդ արտասովոր պատկերները ինձ հմայել էին առաջին անգամ Հայաստան այցելածս ժամանակ:*

1. **առավոտյան** – ժամանակի պարագա, **գնալու եմ** – պարզ ստորոգյալ
2. **Էրեբունու** – հատկացուցիչ, **գունավոր** – որոշիչ
3. **որմնանկարներով** – միջոցի անուղղակի խնդիր, **իրենց** – հատկացուցիչ
4. **պատկերները** - ենթակա, **ինձ** – հանգման անուղղակի խնդիր
5. **հմայել էին** - բաղադրյալ ստորոգյալ, **առաջին անգամ** – ժամանակի պարագա

**138. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

*Մոկաց իշխանը՝ Արտակը, իջավ նծույզից, սանձը տվեց թիկնապահին և զգուշորեն մոտ գնաց այն խրճիթին, որտեղ ապաքինման էր թողել Անահիտին:*

1. **իշխանը** - ենթակա, **իջավ** – պարզ ստորոգյալ
2. **Արտակը** - ենթակա, **նծույզից** – տեղի պարագա
3. **սանձը** – ուղիղ խնդիր, **թիկնապահին** – հանգման անուղղակի խնդիր
4. **զգուշորեն** – ձևի պարագա, **խրճիթին** – հանգման անուղղակի խնդիր
5. **որտեղ** – տեղի պարագա, **թողել էր** - բաղադրյալ ստորոգյալ

**139. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

*Ամառային գիշեր էր. Ոսկանը անցավ հյուսիսային պարսպի մոտով և կանգ առավ այն խրճիթի լուսամուտի տակ, որտեղից առկայծում էր բեկբեկուն լույսը:*

1. **ամառային** – որոշիչ, **գիշեր էր** – պարզ ստորոգյալ
2. **Ոսկանը** - ենթակա, **կանգ առավ** - բաղադրյալ ստորոգյալ
3. **այն** – որոշիչ, **խրճիթի** – հատկացուցիչ
4. **լուսամուտի տակ** – տեղի պարագա, **որտեղից** – տեղի պարագա
5. **առկայծում էր** – պարզ ստորոգյալ, **բեկբեկուն** – որոշիչ

**140. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

*Սրտմաշուկ կասկածը և հուսալքությունը, բեմ մտնելու երկյուղը շատ անգամ իմ անքուն գիշերների ուղեկիցն են եղել, սակայն ցավագնորեն զսպել եմ արցունքներս ու կուչ եկել:*

1. **սրտմաշուկ** – որոշիչ, **կասկածը** - ենթակա
2. **գիշերների** – հատկացուցիչ, **կուչ եկել** - բաղադրյալ ստորոգյալ
3. **իմ** – հատկացուցիչ, **անքուն** – ձևի պարագա
4. **ուղեկիցն են եղել** - բաղադրյալ ստորոգյալ, **ցավագնորեն** – ձևի պարագա
5. **զսպել եմ** – պարզ ստորոգյալ, **արցունքներս** – ուղիղ խնդիր

**141. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

*Լեռների ու անտառների հարուցած դժվարությունների պակասը լրացնում էին զետերը, որոնք անցնում էին քարեղեն խորին հատակի վրայով և երկու կողմերից պարիսպների նման ժայռերի միջով:*

1. **հարուցած** – որոշիչ, **դժվարությունների** – հատկացուցիչ
2. **պակասը** – ուղիղ խնդիր, **լրացնում էին** – պարզ ստորոգյալ
3. **զետերը** - ենթակա, **քարեղեն** – որոշիչ
4. **որոնք** - ենթակա, **հատակի վրայով** – տեղի պարագա
5. **պարիսպների նման** – որոշիչ, **ժայռերի միջով** – տեղի պարագա

**142. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

*Գարնան արևային օրերը հիշեցնում էին ինձ, որ շուտով մայիս է գալու, և դասերն ավարտելուց հետո նույն ճանապարհով պիտի վերադառնամ քաղաք և երբեք չպիտի տեսնեմ Չորագյուղը:*

1. **արևային** – որոշիչ, **օրերը** - ենթակա
2. **հիշեցնում էին** – պարզ ստորոգյալ, **ինձ** – հանգման անուղղակի խնդիր
3. **շուտով** – ժամանակի պարագա, **մայիս** - ենթակա
4. **գալու է** - պարզ ստորոգյալ, **նույն** – որոշիչ
5. **պիտի վերադառնամ** – պարզ ստորոգյալ, **երբեք** – ժամանակի պարագա

**143. Նշել ենթակա երկրորդականով նախադասությունների համարները:**

1. Ուրիշ հարց է, եթե դու չես կարողանում կառավարել զգացմունքներդ:
2. Հասկացի՛ր վերջապես, որ այլևս վերադարձի ճանապարհ չկա:
3. Մարտ ամսին էր, երբ տղաները մեկնեցին ճակատ:
4. Խոստացի՛ր, որ ինձ երբեք չես լքի:
5. Հիվանդանոցից դուրս գրվելու օրն էր հենց, որ Անահիտը ստացավ մի գեղեցիկ ծաղկեփունջ:
6. Նա դուրս շտապեց՝ տեսնելու, թե ովքեր են աղմկում:

**144. Նշել ենթակա երկրորդականով նախադասությունների համարները:**

1. Ինչ որ վատ է համարվում, դրանից երե՛ս դարձրու:
2. Ներկաների համար պարզ էր, որ կինը հիվանդի խոսքերին նշանակություն չէր տալիս:
3. Ինձ շատ զարմացրեց, որ դրսում բերանից կրակ թափող այդ մարդն այդպես ընկճված էր իր տանը:
4. Գլխեմ, որ դու անկեղծորեն ուզում էիր ինձ բարություն անել:
5. Որքա՛ն ողորմելի էր այդ պահին նրա փառահեղ մուշտակը, որ այդքան պատկառանք էր ներշնչել ինձ:
6. Երևում է, որ կնոջ սրտում տարիներով կուտակված թույն կար:

**145. Նշել որոշիչ երկրորդականով նախադասությունների համարները:**

1. Նրա արնաշաղախ դեմքն ազդել էր ինձ վրա այնչափ, որ գիշերները երազում անգամ հալածում էր ինձ:
2. Երկրաշարժից հետո մենք ստիպված էինք ամբողջ ընտանիքով տեղավորվել խոհանոցում և ախոռատանը, որը հրաշքով փրկվել էր ավերումից:
3. Իմ երազներն ինձ սլացնում էին հեռու, անծանոթ աշխարհներ, ուր իմ պատանեկան երևակայությունն ստեղծել էր այնքան եղեմներ:
4. Իսկ անթիվ ու անհամար ճայերի տարմերը, որ թառել էին նավերի խաչածև կայմերի վրա, ինձնից ավելի բախտավոր էին:

**146. Նշել որոշիչ երկրորդականով նախադասությունների համարները:**

1. Աղոթքից հետո սկսվեց դասը, որ հայոց լեզվից էր:
2. Սկսած այն օրից, երբ նա հայտնվեց մեր գյուղում, խռովություն չի պատահել:
3. Վաղ առավոտյան, երբ բոլորս հավաքվել էինք, բացվեց կտակը:
4. Ատում եմ նաև այն նեղ կոշիկը,  
Որ արցանի պես ոտքերդ է բռնում:
5. Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում:
6. Այդ օրը ես ընդունեցի նրա հրավերը, ով միշտ իմ կողքին է եղել:

**147. Նշել խնդիր երկրորդականով նախադասությունների համարները:**

1. Ես տեսնում էի, որ գնացողները խղճում էին մնացողներին՝ որպես բախտից զրկվածների:
2. Նրա սև գլխարկն այնքան յուղոտ էր, որ փայլում էր սափրիչի կաշվե սրոցի պես:
3. Բոլորովին չէր հետաքրքրվում, թե ինչ էր անում այդ մեքենան:
4. Նա երևի չէր հավատում, որ մի որևէ մահկանացու կարող էր ինքն իրեն զրկել այդ հաճույքից:
5. Աբգար Հովհաննիսյանը չար չէր, թեև իր լրագրում հաճախ էր ծաղրում պատվավոր մարդկանց:

**148. Նշել ուղիղ խնդիր երկրորդականով նախադասությունների համարները:**

1. Իմացի՛ր, որ մեր օրերի խորքում  
Ես էլ եմ եղել կրքերին գերի:
2. Տարօրինակ է, որ սիրվելու բոլոր բարեմասնություններով օժտված մի կին փախչում է այդ սիրազվարճ աշխարհից:
3. Այդ բոլորից արդեն երևում էր, որ մենք հեռու չենք գյուղից:
4. Ամենքին հաճելի է, որ նա ոչ միայն գեղեցիկ է, այլև գրագետ:
5. Մեզ բոլորիս մեծ վիշտ պատճառեց այն, որ նա հեռացավ:
6. Ես ուզում եմ, որ տարափը տեղա արտի, ոչ թե իզուր՝ ծովի վրա:

**149. Նշել հանգման խնդիր երկրորդականով նախադասությունների համարները:**

1. Ես կարող եմ ենթադրել,  
Թե այս ջուրը ոչ թե պղտոր, այլ վճիտ է:
2. Երանի տանը նրան, ով իր կյանքից կհեռանա առանց ավստասանքի:
3. Ես հավատում եմ, որ դու մի օր կգաս:
4. Եկե՛ք միասին չհարգենք նրանց,  
Ովքեր սերտում են և ոչ թե դատում:
5. Անհանգիստ սպասում էի, թե երբ է հասնելու իմ հերթը:
6. Նա միշտ ձգտում է՝ բոլորից առաջ անցնի:

**150. Նշել այն նախադասությունների համարները, որոնց ստորադասի բնույթը սխալ է նշված:**

1. Չկա որևէ մեկը, որ աստվածների կողմից առատորեն օժտված լինի ամեն ինչով: *(ուղիղ խնդիր)*
2. Եվ գիշերը, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ավերի վրա, գաղտնի հեռացավ քաղաքից: *(ժամանակի պարագա)*
3. Թե ուզում ես երգո լսեն, ժամանակիդ շունչը դարձի՛ր: *(պայմանի պարագա)*
4. Սարսափելի էր այս ամենն այնքան,  
Որ մեր շուրթերից ոչ մի բառ չընկավ: *(չափի պարագա)*
5. Ես չեմ ուզում փշրել երազները նրա, ով դեռ հավատում է հեքիաթներին: *(որոշիչ)*
6. Թե ուզում ես քեզ հարգեն, հարգի՛ր նախ դիմացինիդ: *(պայմանի պարագա)*

**151. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված պարզի:**

1. Դուք նկատե՞լ եք, որ մենք միշտ հարգանքով ու սիրով ենք խոսում մեր մեռած բարեկամների մասին:  
Դուք նկատե՞լ եք մեր՝ մեր մեռած բարեկամների մասին միշտ հարգանքով ու սիրով խոսելը:
2. Մայրս մինչև անգամ պարծեցավ, որ զավակն իր կամքով ուսումնարան է մտել:  
Մայրս մինչև անգամ պարծեցավ իր կամքով ուսումնարան մտած զավակով:
3. Ամենավտանգավորն այն սուտն է, որ քիչ է տարբերվում ճշմարտությունից:  
Ամենավտանգավորը ստի՝ ճշմարտությունից քիչ տարբերվելն է:
4. Երբ հորս փափախի սուր ծայրը չքացավ ճանապարհի փոշու մեջ, ինձ պաշարեց արտասովոր տրտմություն:  
Հորս փափախի սուր ծայրը ճանապարհի փոշու մեջ չքանալուց հետո ինձ պաշարեց արտասովոր տրտմություն:

**152. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված պարզի:**

1. *Ամենասուրբ հարաբերություններն անգամ կխարխլվեին, եթե դրանցում իսպառ բացակայեր սուտը:*  
 Ամենասուրբ հարաբերություններն անգամ կխարխլվեին դրանցում սուտը իսպառ բացակայելու դեպքում:
2. *Պատգամավորներից նրանք, ովքեր վերադարձել էին գործուղումից, հանդես եկան հաշվետվությամբ:*  
 Գործուղումից վերադարձած պատգամավորները հանդես եկան հաշվետվությամբ:
3. *Ստեփանը, որ իմ կրտսեր եղբայրն է, այժմամի արագությամբ թռչկոտում էր չոր տատասկների վրայով:*  
 Ստեփանը՝ իմ կրտսեր եղբայրը, այժմամի արագությամբ թռչկոտում էր չոր տատասկների վրայով:
4. *Ստով ներծծված են մարդկային կյանքի բոլոր ոլորտները, քանի որ մարդը կենսական պահանջ ունի ստելու:*  
 Մարդկային կյանքի բոլոր ոլորտների՝ ստով ներծծված լինելու պատճառով մարդը կենսական պահանջ ունի ստելու:

**153. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված պարզի:**

1. *Ստերը գորանում են, երբ հենվում են ճշմարտության վրա:*  
 Ճշմարտության վրա հենվող ստերը գորանում են:
2. *Եվ այդ վայրկյաններին նա իմ աչքում մեկն էր այն հերոսներից, որ տատս նկարագրել էր իր հեքիաթներում:*  
 Եվ այդ վայրկյաններին նա իմ աչքում մեկն էր տատիս՝ իր հեքիաթներում նկարագրած հերոսներից:
3. *Մնացած հավասար պայմաններում ամենից համոզիչ ստում են նրանք, ովքեր իշխանություն ունեն:*  
 Մնացած հավասար պայմաններում ամենից համոզիչ ստում են իշխանություն ունեցողները:
4. *Ինձ զարմացրեց, որ նա չզանգատվեց ճանապարհի դժվարություններից:*  
 Ինձ զարմացրեց նրա՝ ճանապարհի դժվարություններից չզանգատվելը:

**154. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Ես այդպես էլ չէի կարողանում կռահել, թե նա ինչպես հայտնվեց:*  
 Ես այդպես էլ չէի կարողանում կռահել նրա ինչպես հայտնվելը:
2. *Բոլոր հարցերը քննարկվեցին նրանց կողմից, ովքեր ներկա էին ժողովին:*  
 Բոլոր հարցերը քննարկվեցին նրանց՝ ժողովին ներկա եղողների կողմից:
3. *Բոլորն էլ գիտեն, որ մենք այլևս իրար հետ չենք:*  
 Բոլորն էլ գիտեն մեր՝ այլևս իրար հետ չլինելու մասին:
4. *Արամն այդպես էլ չիմացավ, թե երբ է գալու իր հերթը:*  
 Արամն այդպես էլ չիմացավ իր հերթի երբ գալը:

**155. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Դու, որ չես տառապել, կարեկցելու ընդունակ չես:*  
 Դու՝ չտառապածդ, կարեկցելու ընդունակ չես:
2. *Այն պահին, երբ վերջին երգն էին երգում, երգչախմբի անդամներից մեկը ուշաթափվեց:*  
 Վերջին երգը երգվելու ժամանակ երգչախմբի անդամներից մեկը ուշաթափվեց:
3. *Երջանիկը նա է, ով սիրվում է:*  
 Սիրվողը երջանիկ է:
4. *Նրանց մեջ էր նաև ընկերուհիս՝ Արփիներն, որը նոր էր վերադարձել հյուրախաղերից:*  
 Նրանց մեջ էր նաև հյուրախաղերից նոր վերադարձած ընկերուհիս՝ Արփիներն:

**156. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Մի օր արքայական սոխակը երգեց այնքան սքանչելի, որ կայսրի աչքերն արցունքով լցվեցին:*  
Մի օր արքայական սոխակը երգեց կայսրի աչքերն արցունքով լցվելու չափ սքանչելի:
2. *Նրանց, ովքեր գայթակություն ունեն հավատալու հեռավոր գալակտիկաներում բանական արարածներ լինելու գաղափարին, խորհուրդ ենք տալիս հավատալ փաստերին:*  
Հեռավոր գալակտիկաներում բանական արարածներ լինելու գաղափարին հավատալու գայթակություն ունեցողներին խորհուրդ ենք տալիս հավատալ փաստերին:
3. *Սա պատմագրի կամ բանաստեղծի առաջին օրինակը չէ, որ մնայլ գույներով է պատկերում մարդկանց դիմանկարները:*  
Սա մարդկանց դիմանկարները մնայլ գույներով պատկերած պատմագրի կամ բանաստեղծի առաջին օրինակը չէ:
4. *Նրա կյանքի մանրամասները, քանի որ շարադրված էին պատմական տարբեր աղբյուրներում, հեռու էին գայթակղիչ լինելուց:*  
Նրա կյանքի մանրամասները, ըստ պատմական տարբեր աղբյուրներում շարադրվածի, հեռու էին գայթակղիչ լինելուց:

**157. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Անհագուրդ բնագրով նա գլխով կառչել էր պատուհանին հենված ամուսնուց այնպես, ինչպես նավն է իր նավահանգստին կառչում:*  
Անհագուրդ բնագրով նա գլխով կառչել էր պատուհանին հենված ամուսնուց նավի՝ իր նավահանգստին կառչելու պես:
2. *Նա հավատում էր, որ իրենցից որևէ մեկը ելքի ճիշտ ուղղությունը կհիշի:*  
Նա հավատում էր իրենցից որևէ մեկի՝ ելքի ճիշտ ուղղությունը հիշելուն:
3. *Նա մեռնում էր լուռ, որ իր տանջանքով որդիներին ցավ չպատճառի:*  
Նա մեռնում էր լուռ՝ իր տանջանքով որդիներին ցավ չպատճառելով:
4. *Արագորեն տարածվեցին այն լուրերը, թե ընտրատարածքներում լուրջ խախտումներ են եղել:*  
Արագորեն տարածվեցին ընտրատարածքներում լուրջ խախտումների մասին լուրերը:

**158. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Բոլոր դժբախտությունների բուն արմատն այն է, որ մարդ չի բավարարվում իր ունեցածով:*  
Բոլոր դժբախտությունների բուն արմատը մարդու՝ իր ունեցածով չբավարարվելն է:
2. *Վերջապես նա անում է, ինչ խելքին փչում է այդ պահին:*  
Վերջապես նա այդ պահին անում է խելքին փչածը:
3. *Ինչ ասվել էր հրահանգիչների ներկայությամբ, նույնությամբ կրկնեցին ժողովի ժամանակ:*  
Հրահանգիչների ներկայությամբ ասվածը նույնությամբ կրկնվեց ժողովի ժամանակ:
4. *Նրանք են գոռում իրավունքի ոտնահարման մասին, ովքեր տարիներ շարունակ կոպտորեն ոտնահարել են հազարավորների գոյության իրավունքը:*  
Իրավունքի ոտնահարման մասին գոռում են տարիներ շարունակ հազարավորների գոյության իրավունքը ոտնահարող մարդիկ:

**159. Նշել այն պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Թշնամուց ճշմարտություն ակնկալողը կանխավ հավատում է ստին:*  
Ով թշնամուց ճշմարտություն է ակնկալում, կանխավ հավատում է ստին:
2. *Ես հետ էի նայում մերձավորներից բաժանվող արքայականի նման:*  
Ես հետ էի նայում արքայականի նման, որ բաժանվում է մերձավորներից:
3. *Վերջացնելով իր սովորական աղոթքը՝ տատս ներքնակի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց:*  
Երբ վերջացրեց իր սովորական աղոթքը, տատս ներքնակի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց:
4. *Նրա կարծիքով անընդհատ տեղափոխություններիս պատճառը գեղեցիկ տանտիրուհի կամ հարևանուհիներ փնտրելս էր:*  
Նրա կարծիքով ես անընդհատ տեղափոխվում էի, որովհետև գեղեցիկ տանտիրուհի կամ հարևանուհիներ էի փնտրում:

**160. Նշել այն պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Իր անձի մասին գովասանքներ լսելիս այդ պատկառելի մարդը շփոթվում էր շոյված մանկան պես:*  
Իր անձի մասին գովասանքներ լսելիս այդ պատկառելի մարդը շփոթվում էր մի մանկան պես, որը շոյված է:
2. *Հանդիսությունների ժամանակ ասված ստերին ոչ ոք ուշադրություն չի դարձնում:*  
Ոչ ոք ուշադրություն չի դարձնում ստերին, եթե դրանք ասվում են հանդիսությունների ժամանակ:
3. *Նախքան պատանու հարցին պատասխանելը նա ուղեպայուսակից հանեց զանազան ուտեստներ:*  
Նախքան կպատասխաներ պատանու հարցին, նա ուղեպայուսակից հանեց զանազան ուտեստներ:
4. *Մորեղբայրս պատվիրեց ինձ խնամքով մի որևէ բան գրել տետրի էջի վրա:*  
Մորեղբայրս պատվիրեց ինձ, որ խնամքով մի որևէ բան գրեմ տետրի էջի վրա:

**161. Նշել այն պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Գրագիրները թույլ էին տալիս Համբարձումին իրենց հետ կատակներ անել:*  
Գրագիրները թույլ էին տալիս, որ Համբարձումը իրենց հետ կատակներ աներ:
2. *Ցանկանալով ամեն գնով վեր բարձրանալ՝ նա անընդհատ խոնարհվում էր իր մեծավորի առջև:*  
Քանի որ ցանկանում էր ամեն գնով վեր բարձրանալ, նա անընդհատ խոնարհվում էր իր մեծավորի առջև:
3. *Այդ դառնությունները խոր ակոսներ են գցում մարդու սրտի վրա՝ հավիտյան չջնջվելու համար:*  
Այդ դառնությունները խոր ակոսներ են գցում մարդու սրտի վրա, քանի որ հավիտյան չեն ջնջվելու:
4. *Նախքան Ռուսաստան գնալս «Մշակ» լրագրին ուղարկել էի մի փոքրիկ անստորագիր թղթակցություն:*  
Նախքան կգնայի Ռուսաստան, «Մշակ» լրագրին ուղարկել էի մի փոքրիկ անստորագիր թղթակցություն:



**162. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:**

1. – *Թութակը դրե՛ք վանդակը, - խիստ ասաց անծանոթը վաճառողին. – թառի վրա կտեղափոխեմ միայն այն ժամանակ, երբ ինձ ընտելանա:*  
Անծանոթը վաճառողին խիստ ասաց, որ նա թութակը դնի վանդակը. թառի վրա կտեղափոխի միայն այն ժամանակ, երբ ինքը նրան ընտելանա:
2. – *Եվս մեկ քայլ, և Դուք մեռած եք, – ատրճանակն ուղղելով շվարած նավաստու վրա՝ ասաց տղան. – պատասխան պիտի տաք հորս հետ կատարվածի համար:*  
Ատրճանակն ուղղելով շվարած նավաստու վրա՝ տղան ասաց, որ ևս մեկ քայլ, և նա մեռած է. պատասխան կտան նրա հոր հետ կատարվածի համար:
3. *«Եթե այս անգամ էլ հերթական ամբոցը զիջենք թշնամուն, երկրի սիրտը կբացվի թշնամու առաջ», - խորհում էր գորավարը:*  
Ջորավարը խորհում էր, որ եթե այս անգամ էլ հերթական ամբոցը իրենք զիջեն թշնամուն, երկրի սիրտը կբացվի թշնամու առաջ:
4. – *Չե՞ք ուզում ստրուկի կապերն արձակել և մի քիչ ջուր տալ, - հարցրեց խորհրդականը զինվորներին. - կարող է շունչը փչել:*  
Խորհրդականը զինվորներին հարցրեց, թե նրանք չեն ուզում արդյոք ստրուկի կապերն արձակել և մի քիչ ջուր տալ. նա կարող է շունչը փչել:

**163. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը սխալ է փոխակերպված:**

1. – *Ես խոնարհվում եմ ձեր վշտի առաջ, - ասաց գերմանացի գրողը և մի փոքր լռելով՝ ավելացրեց. - ամեն գրող իր երկրի պատմության ժառանգորդն է:*  
Գերմանացի գրողն ասաց, որ նա խոնարհվում է մեր վշտի առաջ, և մի փոքր լռելով՝ ավելացրեց, որ ամեն գրող իր երկրի պատմության ժառանգորդն է:
2. *Ես շոյեցի Առաքելոց եկեղեցու պատը և մտովի ասացի նրան. «Մի՛ շրջիր դեմքդ, սիրելի՛ս, մի՛ խռովիր, դու բոլորովին էլ պարտված չես, դու պահպանում ես մեր հողը»:*  
Ես շոյեցի Առաքելոց եկեղեցու պատը և մտովի ասացի նրան, որ շրջի դեմքը, չխռովի, նա բոլորովին էլ պարտված չէ, նա պահպանում է իրենց հողը:
3. *Միլվա Կապուտիկյանը «Բարավանները դեռ քայլում են» գրքում գրում է. «Հանգամանքների բերումով բոլոր դեպքերն ու հանդիպումները զարգացել են իմ շուրջը»:*  
Միլվա Կապուտիկյանը «Բարավանները դեռ քայլում են» գրքում գրում է, որ հանգամանքների բերումով բոլոր դեպքերն ու հանդիպումները զարգացել են նրա շուրջը:
4. – *Բարձրանալու համար պետք է նախ սողալ սովորել. սա ես կյանքիս դառը փորձից եմ ասում, - խրատում էր ծերուկը:*  
Ծերուկը խրատում էր, որ բարձրանալու համար պետք է նախ սողալ սովորել. սա ինքը իր կյանքի դառը փորձից է ասում:

**164. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը սխալ է փոխակերպված:**

1. – *Միայն հայը կարող էր նման հարց տալ. իմ՝ Կալիֆոռնիայի դպրոցներում աշխատելու տարիներին ոչ ոք երբեք նման հարց չի տվել, - գայրացած ասաց ուսուցչուհին:*  
Ուսուցչուհին գայրացած ասաց, որ միայն հայը կարող էր նման հարց տալ. իր՝ Կալիֆոռնիայի դպրոցներում աշխատելու տարիներին ոչ ոք երբեք նման հարց չի տվել:
2. – *Լիլիթ, – կցկտուր հարցրեց Ադամը, - այդ ի՞նչ ծաղիկներ էիր դու քաղել:*  
Ադամը կցկտուր հարցրեց Լիլիթին, թե այդ ինչ ծաղիկներ էր նա քաղել:
3. *Ադամը փաղաքուշ ձայնով ասաց. - Լիլիթ, նագելի՛ս, շուտով գիշեր է գալու. գնանք իմ տաղավարը. քնի՛ր այնտեղ, իսկ ես կհսկեմ քո անուշ քունը:*  
Ադամը փաղաքուշ ձայնով ասաց Լիլիթին, որ շուտով գիշեր է գալու. գնան իր տաղավարը. թող ինքը քնի այնտեղ, իսկ նա կհսկի նրա անուշ քունը:
4. *Նա մտածեց. «Ի՛նչ գեղեցիկ կլինեք, եթե այս հակինթե թիթեռները միշտ մագերիս վրա մնային»:*  
Նա մտածեց, թե ինչ գեղեցիկ կլինի, եթե այդ հակինթե թիթեռները միշտ իր մագերի վրա մնան:

**165. Նշել այն տարբերակների համարները, որոնցում անուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:**

1. *Եվան Աշխենին հարցրեց, թե ինչ կզգար նա, եթե հանկարծ իմանար, որ նրա պաշտած երիտասարդը խաբերա է:*  
– Ի՞նչ կզգայիր, եթե հանկարծ իմանայիր, որ քո պաշտած երիտասարդը խաբերա է - հարցրեց Եվան Աշխենին:
2. *Թագուհին Աշոտին ասաց, որ վերջապես եկել է նրա մոտ՝ խոսելու իրենց տանջող ցավի մասին, և հուզված ավելացրեց, որ նա չխանգարի իրեն:*  
– Վերջապես եկել եմ քեզ մոտ՝ խոսելու մեզ տանջող ցավի մասին, - ասաց թագուհին Աշոտին և հուզված ավելացրեց. – մի՛ խանգարիր ինձ:
3. *Յու. Վեսելովսկուն ուղղված նամակում Նար-Դոսը գրել է, որ ռուս նորագույն գրողներից ինքը շատ է սիրում Չեխովին. նրա ամենափոքր գործն անգամ, իր կարծիքով, բազմահատոր վեպ արժե:*  
«Ռուս նորագույն գրողներից ես շատ եմ սիրում Չեխովին. նրա ամենափոքր գործն անգամ, իմ կարծիքով, բազմահատոր վեպ արժե», - գրել է Նար-Դոսը Յու. Վեսելովսկուն ուղղված նամակում:
4. *Սահականույշը արքային ասում էր, որ ինքը նպատակ ուներ գալ և միանալ նրան, սփոփել նրա վշտացած սիրտը:*  
– Նպատակ ունեմ գալ և միանալ քեզ, սփոփել քո վշտացած սիրտը, - ասում էր Սահականույշը արքային:

**166. Նշել այն տարբերակների համարները, որոնցում անուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:**

1. *Ռոստոմն իր մտքում սկսեց հաշվարկներ անել՝ մտածելով, որ ինքն էլ օր օրի խելոքանում է, այսինքն՝ փորձում է հասկանալ ոչ թե կյանքը, այլ մարդկային էությունը:*  
Ռոստոմն իր մտքում սկսեց հաշվարկներ անել՝ մտածելով. «Ես էլ օր օրի խելոքանում եմ, այսինքն՝ փորձում եմ հասկանալ ոչ թե կյանքը, այլ մարդկային էությունը»:
2. *Նա ասաց ընկերոջը, որ այդ գիտնականի նկարն ամսագրում տեսավ և մտածեց, որ նա չափազանց տաղանդավոր է:*  
Նա ասաց ընկերոջը.  
-Այդ գիտնականի նկարը երբ ամսագրում տեսա, մտածեցի, որ նա չափազանց տաղանդավոր է:
3. *Ծերուկն ասաց, որ ինքը դա գիտի, բայց վստահ է, որ ուրիշների մասին չմտածող տղան կարող էր նաև չափազանցնել այդ դեպքը:*  
Ծերուկն ասաց.  
- Ես դա գիտեմ, բայց վստահ եմ, որ ուրիշների մասին չմտածող տղան կարող էր նաև չափազանցնել այդ դեպքը:
4. *Ռոստոմը մտածում էր, որ մարդը միշտ էլ ավելի հակված է քաղցր ստին, քան դառը ճշմարտությանը:*  
Ռոստոմը մտածում էր. «Մարդը միշտ էլ ավելի հակված է քաղցր ստին, քան դառը ճշմարտությանը»:

**167. Նշել այն տարբերակների համարները, որոնցում անուղղակի խոսքը սխալ է փոխակերպված:**

1. *Գրողը պատասխանեց տիկնոջը, որ ինքը ճիշտ է ասում, և շարունակեց համոզել նրան, որ նա զգուշանա այդ մարդուց:*  
Գրողը պատասխանեց տիկնոջը և շարունակեց համոզել նրան.  
- Ես ճիշտ եմ ասում. Դուք զգուշացե՛ք այս մարդուց:
2. *Մայրը սրբեց արցունքները և խոստացավ իր զավակներին, որ կկարդա այդ պատմությունը, միայն թե նրանք թող հանգստանան:*  
Մայրը սրբեց արցունքները և խոստացավ.  
- Չավակներս, ես կկարդամ այդ պատմությունը, միայն թե դուք հանգստացե՛ք:
3. *Բժիշկը անթաքույց արհամարհանքով փնթփնթաց, թե նա չի տեսնում արդյոք, որ խեղճ ծերուկը մեռած է:*  
Բժիշկը անթաքույց արհամարհանքով փնթփնթաց.  
- Դու չե՞ս տեսնում, որ խեղճ ծերուկը մեռած է:
4. *Պարետը առարկեց՝ ասելով հյուրին, որ նման դեպքերում իրենք միայն զննումով չեն բավարարվում, ուստի թող նա բարեհաճի կատարել օրենքով սահմանված ձևականությունները:*  
Պարետը առարկեց՝ ասելով հյուրին.  
- Նման դեպքերում մենք միայն զննումով չենք բավարարվում, ուստի բարեհաճե՛ք և կատարե՛ք օրենքով սահմանված ձևականությունները:

**168. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ստորակետ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Նաիրյան այդ քաղաքի փողոցներով մարդիկ անցնում են դանդաղ անշտապ:
2. Իրոք թող բարությունը լինի անկաշկանդ և չամաչի ինքն իրենից:
3. Հանկարծ սրահ մտավ զվարթերես Ռոզալյան մի գեղեցիկ գլխարկով եզերված նուրբ ժանյակներով:
4. Երկար փնտրությից հետո ավագակները տարակուսած ու հուսախաբ հեռացան:
5. Կռացած մարդուց փոքր-ինչ հեռու գտնվող վիթխարի ծառը խուլ տնքաց ու տապալեցին նրան:

**169. Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

Լոգարաններում ծուլորեն չփչփացնում էին թալկացած այցելուներ (1) և քարե նստարաններին մերսողները կոշտ ձեռնոցներով յուղ էին շփում նրանց խոնավ մաշկին: Ինչպես երևում է (2) Լուկանոսը արդեն այստեղ էլ էր եղել: Մի ժամանակ Սենեկան նրա առաջին հովանավորն էր: Նա բացահայտեց տղայի մեջ բացառիկ ընդունակություններ երբ սա դեռ սովորում էր Աթենքում (3) և նրան կանչեց Հռոմ որտեղ ժամանակի ընթացքում Լուկանոսը նվաճեց կայսեր վստահությունն ու բարեհաճությունը: Իր բանաստեղծություններով և թատրոնում ունեցած սրամիտ ելույթներով (4) հաջողության հասավ թե բանաստեղծների (5) և թե կանանց շրջանում: Նրան համարում էին ամենաականավորը լատին բանաստեղծների մեջ (6) «Օրփեոս» պոեմի համար նա գրական մրցանակ էր ստացել: Նա վայելչատես էր (7) պարթևահասակ: Նա ծնվել էր Անդալուզիայում և նրա երակներում (8) ինչպես և Սենեկայի (9) իսպանական տաք արյուն էր հոսում:

**170. Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

Պատմության ամենից լուսաճաճանչ մտքի հնոցում ծնված (1) հոմերոսյան պոեմները վերացած աշխարհի արձագանքն են (2) հունական շողշողուն առասպելների տեսքով: Այդ առասպելներում պատկերների են վերածվում վաղնջական հասկացությունները որ ունեին մարդիկ բնական երևույթների մասին (3) կամ ներկայացվում է աշխարհի թշնամական ուժերի նախնյաց պայքարը: Նրանցում մարդկային հոգու խանդավառ բնապաշտությունը (4) իր թարմությամբ զուգվում-զարդարվում է լույսի սաղարթների ու ջրերի հանդերձով: Հունական հրաշքն անհրաժեշտ էր (5) ողջ հին աշխարհը նախապատրաստել էր նրա գալուստը: Բեղուն լռության մեջ (6) երբ հելլենները իրենց մեջ կուտակում էին հողի ուժը (7) Եգիպտոսն ու Ատրեստանը պահպանում էին իրենց առաջնությունը: Դարաշրջանի վաղնջության շունչը սակայն (8) նրանց տիրել էր (9) թևաթափ արել:

**171. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բուժ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Բանաստեղծի բնակարանի ընդարձակ պատշգամբը կախված Թիֆլիսի բուսաբանական այգու գեղատեսիլ համայնապատկերի վրա հյուրերի զվարթ հավաքույթների մշտական վայրն էր:
2. Այդ տան դռնով ներս մտնողը վայելում էր Թումանյանի միշտ համերաշխ ու ասպնջական ընտանիքի սրտաբացությունն ու ջերմությունը ըմբռնելու տանտիրուհի Օլգայի պատրաստած համեղ կերակուրները:
3. Մի օր երբ վաղորդայինն տնից դուրս էր գալիս Թումանյանը տեսնում է որ տանն ինչ-որ պատրաստություն կա հանել են մեծ ու փայլուն կաթսան դրել կրակին:
4. Ելնում է տնից ու որտեղ պատահում է որևէ ծանոթի հրավիրում է իրենց տուն խաչ ուտելու:

**172. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բուժ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Հայաստան մտած Լենկեթմուրի վրանն է մտնում մի իշխան նրան ծառայելու նրա կամակատարը դառնալու:
2. Վերջապես ես հասկացա գլխավորը նրան չեմ ուզում հանդիպել այն պատճառով որ պարզապես չեմ կարող նրա հարցերին ազնիվ պատասխաններ տալ խիստ ցավոտ է իրականությունը:
3. Մի կին ինձ քավելով անցավ և հետևից քարշ տվեց դեղնամազ անոթոշ ցեղի մի շնիկ:
4. Հենց այդ պահին պարզորոշ տեսա պարոն Սեփին որը մի անձանոթուհու թևանցուկ արած ճեմում էր ծառուղու երկայնքով:
5. Իմացա որ ընկերս ողջ է ու չգիտես ինչու տարակուսում եմ սրտանց չեմ ուրախանում:
6. Մենք ամբողջ գիշեր վիճում էինք նա ինձ չէր համոզում իր փաստարկներով ես նրան երկուսս էլ գուցե սխալ էինք:

**173. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բուժ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Վախեցել էր շոգից ճանճերի պարսերից կեղտոտ անիտոնի հոտով հագեցած հյուրանոցներից:
2. Նա պատմում էր որ իր վրա հարձակվողներից մեկը նիհար ու բարձրահասակ էր եղել մյուսը ավելի կարճ ու գիրուկ:
3. Օրնիբուն մեջք էր ծռում ակնկալելով տերերի գոհունակությունը նրանց բարյացակամությունը:
4. Ծով առափնյա խութեր ու կանաչի մեջ թաղված սարալանջեր ահա այն ամենը որ նրան մոռանալ կտային վերջին շաբաթվա անախորժությունները:
5. Թե ինչ ճանապարհով էր ետ բերելու տանով տված առեղի գումարները նա չէր պատկերացնում և մտածելիս գլուխը պտտվում էր:

**174. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բուժ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Ասում են Գրիգոր Նարեկացին յոթ տարի հոտաղ է եղել Ջևիկ գյուղում: 2. Ի տարբերություն մյուսների նա անասուններին երբեք չէր ծեծում: 3. Տեսնելով նրա բարությունը տերը բարկանում է և փորձում խլել ճիպոտը: 4. Մեծատունը բիրտ ու ամբարիշտ մի մարդ ընկնում է Նարեկացու հետևից: 5. Բայց այդ պահին կատարվում է հրաշք Նարեկացին ճիպոտը տնկում է հողի մեջ և անհետանում: 6. Հարուստը փորձում է ճիպոտը հանել հողից բայց չի կարողանում որովհետև այն արմատակալում է դառնում մշտականաչ գիհի: 7. Գիհին որի փայտը չի փտում ապրում է չորս հարյուր տարի: 8. Բայց որքան էլ զարմանալի է Ջևիկի գիհին ոչ փտում է ոչ չորանում նա անընդհատ կանաչ է: 9. Այն այժմ հազար տարեկան է:

**175. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում միջակետ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Ճակատում առաջին իսկ մարտերում նա վիրավորվեց գնդակը թեթև ծակել էր ոտքի ոլոքը ու մի ամիս անց նա կաղին տալով եկավ զորամաս իր մեջ թաքցրած փրկության հույսը: 2. Կողքին այնքան մահ էր տեսել որ սեփականն էլ անխուսափելի էր թվում չէ որ բոլորի կյանքն էլ գրավի տակ էր: 3. Հասցրեց կռվել և դահուկային գումարտակում և հետախուզականում ու վիճակվեց տեսնել ամեն բան թե տանկային գրոհ թե անակնկալ հարձակում թե գիշերային նահանջ: 4. Ամենքի առջևից գնացողներից չէր և ոչ էլ մյուսների թիկունքում թաքնվողներից դա իր համար չէր: 5. Իսկ մեռնել չէր ուզում ուրիշի կյանքի հաշվին ապրել նույնպես: 6. Կռիվների ընթացքում մտածելու ժամանակ չէր եղել բայց իր վարքագիծը նման չէր թուլամորթի պահվածքի ահա և պատասխանը:

**176. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ստորակետ չպետք է դնել:**

1. Ինքն իր մեջ ամփոփված ու մռայլ այդ մարդը հազվադեպ էր խոսում որևէ մեկի հետ և շրջապատի մարդկանց իր անձին վերաբերող հարցերին անորոշ և կցկտուր պատասխաններ էր տալիս:
2. Բանտի իրեն թշնամանքով վերաբերվող միջավայրում նա նախկինում շատ բան չէր նկատում և չէր էլ ուզում նկատել զգվում էր ամեն ինչից և ամենքից:
3. Այս դիպվածից շատ տարիներ անց Սիբիրում մի գյուղացի ներկայանում է դատարան զոջալով իր սահմեկեցուցիչ արարքի համար և խնդրելով դատել իրեն մարդասպանին:
4. Նրանք հաղթել էին պարսիկների մի զորամասի մարտից հետո սակայն ազատ արձակելով իրենց կողմից գերեվարվածներին:

**177. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում Լ-ից առաջ ստորակետ պետք է դրվի:**

1. Նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում անպարփակ վիշտը հոգու մեջ և ցավակից եղավ անօգ մարդուն: 2. Առավ նրան իր սրտի մեջ իմացավ աշխարհի բոլոր ծայրերում էլ վիշտը մեկ է և սերը մեկ: 3. Նա հյուսեց բոլորի համար իր երգը եղավ այլևայլ երկրներում և մի օր վեճմափայլ երգիչը հոգնաբեկ վերադարձավ հայրենի տուն: 4. Երգի մրմունջով ելավ Արագածի գագաթը լուսահորդ ու ճերմակափառ և ընկողմանեց թուրքիթուրք ծաղիկների մեջ: 5. Ճախրում էին ծիածանաթև հավքերի երամները վերը երկնի լագուրում և միմյանց ձայն էին տալիս հոգեթրթիռ դայլայլով: 6. Ներքում նա տեսավ քաղաքներ շեներ և լսեց հայաբառ չնաշխարհիկ երգը հերկվորի:

**178. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում Լ-ից առաջ ստորակետ պետք է դրվի:**

1. Շիկնեցին Մեծ ու Փոքր Մասիսների գագաթները և երկնքի կանաչ-կապույտը ժպտաց վաղորդայնի շողերով: 2. Արաքսը սրընթաց դեպի Շարուրի դաշտն էր տանում իր ջրերը լափիլիզելով աջ ու ձախ կողմերի քարակարկառները և տեղ-տեղ ողողում ավիամերձ տարածքները: 3. Գաշտավայրը գրկաբաց ողջունում էր հանապազօրյա կյանքին և այստեղ-այնտեղ սլացիկ բարդիների արանքներից դեպի երկինք էին ոլորվում ծխի կապույտ ժապավենները: 4. Արաքսի ավին այգեստանների ծոցում առավոտն էր դիմավորում Արտաշատը և այն մատնում էր մայրաքաղաքի եռուզեռը: 5. Հարավարևմտյան մուտքի դուռը բացվել էր արդեն և երկու հասակավոր պահակներ աչքները գցել էին Արաքսի պղտոր ջրերին: 6. Գեմը ձգվում էր նեղ կամուրջը որ դիմավորում էր գետի մոլեգին հարվածներին և երևում էր գարնանային վարարումը սպառնում էր նրա քարակերտ սյուների:

**179. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բացահայտչից հետո ստորակետ չպիտի դրվի:**

1. Ի վերջո հեռագիր ստացվեց որ այսինչ օրը Սարոյանի աճյունասափորը ժամանում է երկու հոգու նրա մեծահարուստ ընկերների ուղեկցությամբ:
2. Մի խոսքով ինչպես ինքը բանաստեղծն է ասում իրեն ճանաչելը մի քիչ դժվար է ինքը մի քիչ բարդ է:
3. Նրա խոսքերը ինձ հայիս կարեվեր ցավ պատճառեցին առաջին անգամ էի նման բան լսում:
4. Գլխավոր հրապարակում Թերթրում ջահել տղաներ ու պարուհիներ էին կանգնած իրենց ներկայակցներով կտավակալներով պատրաստ նկարելու զբոսաշրջիկներին:
5. Շուտ եկավ իր մեծ երկրպագուն Մարտեն Հակոբյանն էր ձայն տալիս իրեն ձեռնափայտով օդում ինչ-որ շարժումներ անելով:

**180. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Գեմքի ջղային կծկումով վեր կացավ տեղից, առանց հրաժեշտ տալու մոտեցավ սրճարանի դռանը, մի վայրկյան կանգ առավ ու դիմեց մեծ բանաստեղծին:
2. Ինչ-որ մեկի հուզաթաթավ ձայնից գամվեց տեղում. թվաց՝ ոչ թե մի մարդ, այլ ամբողջ սրճարանը ձայնեց իրեն:
3. Պտղոմեոսը, հասկանալով գիտության կարևորությունը, սկսեց նրանից, որ հիմնադրեց գրադարան՝ դարձնելով այն գիտական հաստատություն՝ ակադեմիայի պես մի բան:
4. Ի վերջո կարգ է սահմանվում Ալեքսանդրիայի նավամատույցին մոտեցող ամեն մի նավի համար վճարել մի արժեքավոր մագաղաթ, պապիրոս կամ նման մի բան:
5. Տարիներ հետո, երբ ես սրտաթրթիռ հոգով ու անձկությամբ կռացա Մեծարենցի ցուրտ շիրիմը համբուրելու, ինձ թվաց՝ նա՝ անգուգական պոետը, խոսեց ինձ հետ արևի հանդեպ տածած բուռն կարոտով:

**181. Նշել այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Շատ ու շատ դարեր առաջ՝ Հունաստանում, մի գեղեցիկ աղջիկ էր ապրում՝ եղնիկի պես գեղակազմ, նոճու պես սլացիկ:
2. Նրա աչքերին նայելիս թվում էր՝ կապտաթույր երկնքում աստղեր են առկայծում:
3. Ուր ոտք էր դնում՝ թուխպերը ցրվում էին, արևը՝ փայլում, և մարդիկ, մոռացած վիշտ ու տխրություն, ժպտում էին միմյանց:
4. Անսահման բարի էր դիցուհին՝ նա անչափ սիրում էր մարդկանց, նրանց տրտմությունները փարատում, վերքերը ամոքում:
5. Մի օր կաթնահունց լուսնի շողերի տակ՝ ականակիտ առվակի ափին, միայնակ նստած մի պատանու տեսավ՝ թախծոտ ու տամուկ աչքերով:
6. Դիցուհին պատանուն ասաց.  
- Այս ծաղիկը թո՛ղ դնեն աղջկա բարձի տակ. նա ինքը կայրվի քո սիրուց:

**182. Նշել այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Վեստֆալիայում՝ բարոն Թունդերի դրյակում, ապրում էր մի պատանի, որին բնությունն օժտել էր ամենամեղմ բնավորությամբ:
2. Հարկ եղած դեպքում՝ նրա բակի բոլոր շները հավաքվում և կազմում էին մի ոհմակ, իսկ նրա ձիապանները դառնում էին առաջատար որսկաններ:
3. Առանձնատան ստորոտում ծովը լիզում էր մարմարե աստիճանները, նույնիսկ բարձրանում ամենավերջին աստիճանին՝ պաշարելով առանձնատան պատերը:
4. Դրանցից մեկը բախվելով՝ փշուր-փշուր եղավ ու հարվածեց փղոսկրյա արձանին:
5. Տարիներ առաջ արիատուրատներն ու հարուստները միայն ծանոթներին փնտրելիս էին մտնում այստեղ:

**183. Նշել այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Դ-ա հանգուցյալի փեսան էր՝ Մարթայի ամուսինը՝ քաղաքում բավական ականավոր գործարանատեր և առևտրական Իսահակ Մարութխանյանը:
2. Արարատյան դաշտում արդեն խաղաղություն էր, և նրա բնակիչների՝ աշխատասեր գեղջուկի ու երկրագործի համար, սկսվել էր հողային աշխատանքների եռուն շրջանը:
3. Գարդմանա իշխանը՝ Մահակ Սևադան, և Ուտիքի տերը՝ Յիկ Ամրամը, ապստամբության դրոշ էին բարձրացրել հայոց արքա Աշոտ Երկաթի դեմ:
4. Հեծած սևաթույր նժույգը, սարեր ու ձորեր անվերջ կտրելով՝ սուրում էր սիգապանձ ասպետը:
5. Հայերի քրիստոնեության ընդունումից հետո այն եղել է հայոց թագավոր Տրդատ Երրորդի քրոջ՝ Խոսրովդուխտի հովանոցը:
6. Մի սիգապանձ ասպետ սիրեց չքնադագեղ մի աղջկա՝ ոսկեվառ հյուսերով, շուշանաթույր դեմքով, աստղաշող աչքերով:

**184. Նշել այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Թվում է՝ կարևոր չէ, օրինակ, թե ով հորինեց արևի ժամացույցը, որովհետև վաղ թե ուշ մեկը հորինելու էր:
2. Եվ նա՝ ոճրագործը, անշարժ կանգնել էր ծերունու վեհ կերպարի առջև՝ ապշած ու շշմած:
3. Իսկ գյուղի՝ չգիտես որ մեղքի համար ապաշխարող բնակիչները կծկվել էին բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում, որոնք ներքևից չէին երևում, ու իրենց անկոտորում կամքով անբարբառ տանում էին դաժան փորձությունը:
4. Իրենք նստում էին քչքչացող առվի կանաչագարդ եզրին, լռելյայն լսում էին ջրի կարկաչը ու թվում էր՝ առուն հասկանում է իրենց:
5. Այդ ամռանից մնացել էին ջինջ հիշողությունը և մի կսկիծ, որը մրմնում էր՝ ինչպես լիովին չապաքինված վերքը:
6. Ըստ բոլոր նշանների՝ նա բոլորովին չէր գիտակցում, որ գտնվում է փողոցում և իրեն են սևեղում շրջապատի մարդկանց՝ հետաքրքրությամբ լի հայացքները:

**185. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի բուժ պետք է դրվի:**

1. Ուխտյալ ժողովրդի զինվորագրվելը ճիշտ է հուսադրող էր բայց ինքը որպես հազար ու մի կրակի միջով անցած զորական մտահոգ էր ծայրաստիճան:
2. Նրա բազում մարտերում թրծված զորաբանակը հեծյալների սև թանձրությամբ ասես շարժվող մի անտառ լինել կարծես մի աշխարհի տեղափոխվում էր մի ուրիշ աշխարհի սարսափ ու մահվան տենդ սփռելով չորսբոլորը:
3. Երբ սպարապետը մոտեցավ նրան մարդը արդեն երևաց տարեց մի գեղջուկ էր անվրդով նայեց եկվորին և այդ շինականը չփոխելով դեմքի լուրջ արտահայտությունը վեր կացավ արժանապատվորեն բարև բռնած:
4. Հուլիսյան մի գաղջ խեղդուկ օր այդ ճանապարհով անփութորեն բարձրանում էր մի երիտասարդ գլխարկի հովարը աչքերին քաշած ականջը մեղունների ու ծղրիղների միալար ձայնին:

**186. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բուժ պետք է դրվի:**

1. Գարդմանն այն ժամանակ հույս էր ներշնչում նրա տերը Մահակ Սևադան հսկում էր այնտեղ մի հզոր առյուծի նման:
2. Նա լսեց եղջերափողի երեկոն ավետող ձայնը որ նշան էր ամբոցը փակելու:
3. Մոտակա գյուղերից հավաքված լծկան եզներով շարունակ դեպի Քուռի ափն էին տարվում հսկայական գերաններ որոնք եզերացիները միացնում էին իրար և լաստեր կազմում իջեցնելով գետը:
4. Մի քանի հազարից կազմված հեծելախմբերը բռնեցին գետափի ուղղությամբ ձգվող դաշտավայրը:

**187. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բուքը դրված է ստորագյալի գեղջման տեղում:**

1. Չոհրապը մի քանի ճնագնդի սարքեց մայրերի փեշերի մոտ կանգնած երեխաների համար, հետո՝ իր ու կնոջ համար, և սկսեցին դրանք ուրախ նետել միմյանց վրա:
2. «Կովկասի» տապալման երկրորդ պատճառը հաճախադեպ ապառիկ վճարումներն էին, որովհետև այցելուները՝ մեծ մասամբ ուսանողներ, ուսում-խմում էին, պարտքատետրում ստորագրում էին ու անհետանում:
3. Չոհրապը ապշած էր նրա երկհարկանի տների ծաղկազարդ պատշգամբներով, խաղողի՝ պատերն ի վեր ձգվող որթերով, աշխույժ փողոցներով:
4. Նրանք՝ այդ վառվռուն երիտասարդները, հաճախ իրենց հետ բերում էին գերմանացի երաժշտասեր ուսանող-ուսանողուհիների, որոնք գալիս էին ոչ միայն երգելու, այլև հայերեն հոգևոր երգեր լսելու:
5. Նրանց մի մասը կռվում էր աշտեններով, երկար նիզակներով, մյուս մասը՝ նետաձիգ գնդերը՝ լայնալիճ աղեղներով ու թունավոր նետերով:

**188. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բուքով տրոհված է բացահայտիչը:**

1. Արքայի նավակը՝ դրոշներով զարդարուն, գնում էր առջևից, իսկ լաստերը գույգ-գույգ հետևում էին նրանց:
2. Դրանք ամենօրյա գրառումներն էին՝ երբեմն երեք-չորս տողից ոչ ավելի, որ երևի ապագայում պիտի դառնային նոր ծրագրած հուշամատյանի հենքը:
3. Ամենափրկիչ վանքի բակում՝ հարավային պարսպի տակ գտնվող գետնախորշում, քրքրված այծենակաճի վրա թեք էր ընկել Ռսկանը:
4. Հայոց գետերի հինգ մեծամեծ նահատակները՝ Տիգրիս, Եփրատ, Քուռ, Երասխ, Փասիս, իրենց վրա կամուրջներ չէին հանդուրժում:
5. Իմ դժվարին ճանապարհին ամեն տեսակ դառնություններ են ճաշակել՝ երեսիս փակված դռներ, հեզանանքով ու արհամարհանքով լի ժպիտներ, կատակի տակ սքողված չարախոսություններ:

**189. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում միջակետի սխալ գործածություն կա:**

1. Այս անգամ, սակայն, արյունը հակառակ ազդեցություն ունեցավ. ամբոխը մի պահ սոսկահար կարկամեց, վիրավոր գազանի նման գալարվեց ու առաջ շարժվեց:
2. Եվ կատարվեց անկարելի. դիպուկ գնդակներից ընկնող անհամար զոհե՞րը, թե՞ քայլերգը ազդեցին գրոհող խաժամուժի վրա. դժվար է ասել:
3. Ու մի օր էլ. 1908 թվականն էր արդեն, թուրքական սահմանադրության թիթեղյա զանգերի դողանջները ականջին հասան:
4. Ես չհավատացի աչքերիս. Ակսելը լալիս էր, և հորդ արցունքները ողողել էին տխրամած դեմքը:
5. Բարձրանում ենք Մեծ լոռեցու առաջին ապրումների կախարդական օրրանը՝ Դսեղ. սա այն ճանապարհն է, որով մարդ չի կարող անցնել առանց սրտաթրթիռ զգացումների:

**190. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում փակագծեր պետք է դրվեն:**

1. Երագում էի անդորրավետ մի անկյուն աշխարհից ու աղմուկից հեռու ուր կտեղափոխեի իմ դաշնամուրն ու գրասեղանը կկարողանայի ներանձնանալ խորհել ու թղթին հանձնել երգերս միայն այս ձևով կգտնեի հանգիստս:
2. Ի վերջո դժվար կյանքս ու խաբված սերերս էին որ ինձ դարձրին այն ինչ կամ և համարձակվում եմ ասել ի դեպ սա ինքնագովություն չէ ես ինձ դուր եմ գալիս:
3. Քաղաքի այս թաղամասն ուղղակի անօրինակ ու անկրկնելի էր գեղեցկության ու արվեստի սիրահար Չոհրապը ապշած էր նրա աշխույժ փողոցներով բազմամարդ հրապարակներով:
4. Շուրջբոլորը գույների ժպիտների տոն էր ամեն ոք անում էր այն ինչ անցնում էր իր մտքով բայց բոլորը միասին ստեղծում էին մի հեքիաթային վառ ու գունեղ փարիզյան մթնոլորտ:



**191. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. – Նայի՛ր, որդի՛ս, Ֆրանսիան է, - ասաց հայրս՝ հայացքն ուղղած երկնքի համապատկերի վրա՝ շամանդադի մեջ նշմարվող ծովափին:
2. - Այո՛, տխուր է և վտանգավոր. վատ ժամանակներ են, սրբազա՛ն, վատ. թող Ձեր աղոթքները փրկեն հայոց ազգին, - ասաց գորականը խոր հառաչելով:
3. «Եվ ինչո՞ւ է այդպես, ո՞վ է մեղավորը», - դառնացած մտորում էր նա: - «Մի՞թե քիչ է փայլատակել հայոց թուրը իրավունքի և ազատության ճակատամարտերում»:
4. – Հա՛յր սուրբ, - անհամարձակ ձայնով նրան դիմեց ագուլեցին, - ես այդպես էլ չիմացա՝ ինչ կռիվ էր երեկ գիշեր:
5. Վանականը հոգնած հայացքով նայեց նրան՝ ասելով.  
- Նրանք՝ այդ խեղճ քրիստոնյաները, կերան ու վայելեցին քո հացը, ասպա վիրավորանքի խոսքեր ասացին քո ազգի հասցեին:

**192. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. – Լո՛ւյս տվեք, առանց այն էլ սիրտս մթապատ է, - բացականչեց թագուհին և դիմեց դեպի նեղ պատուհանը:
2. – Օհան ապերը գրքեր շատ ուներ, - շարունակեց ընկերս ընդհատված գրույցը: - Պատշգամբում նստած՝ նա կարդում էր հին գրքերից մեկը:
3. – Իմ հայրը, իշխա՛ն,- ասաց, - անիրավ է եղել քո տոհմի առջև: Ես մեծապես ցավում եմ դրա համար:
4. -Ես կալվածքներ չեմ փնտրում այս պատերազմում,- մտածում էր իշխանը,- այլ հայրենիքի ապահովություն:
5. Մուշեղ սպարապետն ասաց հուզված ձայնով.  
- Իմ տե՛ր, դու այստեղ կատարեցիր քո առաջին սխրագործությունը՝ մոռանալով տոհմիդ հասած աղետը և քո անձնական վիշտը:

**193. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. «Որքա՛ն ծանոթ է այդ հայացքն ինձ, - մտածում էի ես: Որտե՞ղ էի պատահել, ե՞րբ եմ տեսել նրան»:
2. Իշխանը պատասխանեց.  
- Ո՛չ, իմ հայրենիքից դուրս չեմ եղել երբեք: Ի՛նչ տարօրինակ հանդիպում է սա, ի՞նչ խորհուրդ ունի այս:
3. - Խեղճ ծերուկ. խելքդ թոցրել ես, - բարձրաձայն ծիծաղեց առաջնորդը:
4. - Եթե չգիտեք, ասպա ինչո՞ւ եք գրում ու կանառներում իրար կոկորդ պատռում, - ասաց շահր. – շուտ պատասխանիր:
5. «Ես խղճում էի իմ ավիում բույն դրած, այստեղ ծնված ու սնված արարածներին. մի՞թե մեր երկիրն էլ այսպիսի թռչունի բույն չէ, - խորհում էր վարդապետը»:

**194. Նշել՝ տրված համարների դիմաց գրվածներից որոնք կան տվյալ հատվածում (նախադասությունները կետադրված չեն):**

*Վագրը հանդարտ հեռացավ դեպի շամբուտը նրա հետևից հլու-հնազանդ կորյունը: Բարեն ապշած հիացքով նայում էր հեռացող գազանին գեղեցիկ փայլուն մորթով թավշյա խոհուն աչքերով: Վագրը այդ իմաստուն կենդանին գիրթ կանգ առավ և աղամորդու իմաստուն հանդիսավորությամբ հետ դարձրեց գլուխը:*

1. տրոհվող հատկացուցիչ
2. բացահայտիչ
3. ստորոգյալի գեղչում
4. տրոհվող որոշիչ
5. տրոհվող դերբայական դարձված

**195. Նշել՝ տրված համարների դիմաց գրվածներից որոնք կան տվյալ հատվածում  
(նախադասությունները կետադրված չեն):**

*Այդ վայրկյաններին նրա աչքերը ցուցրում էին քամին մեղմորեն ծածանում էր թավշյա մազերը ուրցի ծաղիկներով զարդարուն փռփռացնում դարձածալքերով շորը ընդգծելով վտիտ մարմինը: Մարանը ուրցի բույրով այդ աղջիկը սլացիկ հասակով մեկ կանգնում էր և անէացած նայում լուրթ երկնքին: Ներամփոփ հագիվ նկատելի նյարդային շարժումով նա անընդհատ հյուսում-քանդում էր ծամերը:*

1. բացահայտիչ
2. տրոհվող որոշիչ
3. տրոհվող դերբայական դարձված
4. տրոհվող հատկացուցիչ
5. բազմակի անդամներ

www.atc.am

**ԲԱԺԻՆ 5 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ**

**1. Ո՞ր մտքերն են հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

*Հազար ինը հարյուր քսաներկու թվականին անգլիացի նշանավոր հնագետ Հովարդ Քարտ,րի գլխավորությամբ Եգիպտոսում՝ Նեղոսի ձախ ափին, երկարատև որոնումներից հետո գետնի տակից յույս աշխարհի հանվեց ստորերկրյա մի քարակոփ դամբարան: Այն պատկանում էր եգիպտական փարավոններից մեկին՝ Թութանհամոնին, որն իշխել է մեզանից երեք հազար հինգ հարյուր տարի առաջ: Դամբարանի քողարկված մուտքը հայտնի դարձավ այն պահին, երբ ամեն ինչ ստուգելուց հետո պեղումներ կատարող Քարտերը որոշեց դադարեցնել աշխատանքները: Հանկարծ բանվորներից մեկը հանդիպեց մի քարի, և պարզվեց, որ մարդիկ գտնվում են ստորերկրյա դամբարանի մուտքի մոտ: Մուտքը կնքված էր ամենանշանավոր փարավոնների կնիքներով և Եգիպտոսը թշնամիներից պաշտպանող Անյուրիս կոչվող շան դիմանկարով:*

1. Թութանհամոնը Եգիպտոսի փարավոններից է, որն իշխել է մեզանից երեք հազար հինգ հարյուր տարի առաջ:
2. Եգիպտական դամբարանների մուտքերը քողարկվում էին Անյուրիս կոչվող շան դիմանկարով և հայտնի փարավոնների կնիքներով:
3. Հազար ինը հարյուր քսաներկու թվականին Հովարդ Քարտերը Եգիպտոսում հայտնաբերեց Թութանհամոն փարավոնի դամբարանը:
4. Թութանհամոնի դամբարանը փնտրելիս Քարտերը որոշել էր դադարեցնել աշխատանքները, երբ հանկարծ բանվորներից մեկը հանդիպեց մի քարի, և հայտնաբերվեց դամբարանը:

**2. Ո՞ր մտքերը չեն հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

*Ալեքսանդրիայի փարոսի վրա պետք է գրվեր թագավորի՝ Պտղոմեոս Ֆլորենցիացու անունը, սակայն նախագծող և ճարտարապետ Սոստրատեսը այս անօրինության հետ չի հաշտվում՝ համարելով այն ապօրինություն, և լռելյայն դիմում է խորամանկության: Մարմարիոնի վրա քանդակում է հետևյալը. «Կինգացի Սոստրատեսն այս նվիրում է փրկարար աստվածներին՝ ի սեր ծովագնացների»: Հետո այս գրվածքը ծեփում է քարակ շերտով, որ մանրագնին դիտելիս էլ չնկատվի, սպա վրայից գրում է արքայի անունը՝ աներկբապորեն համոզված լինելով, որ ամենակարող ժամանակը ծեփը կպոկի, և աշխարհին հայտնի կդառնա իսկական ստեղծողի անունը: Այդպես էլ լինում է: Կոթողը կանգուն մնաց մոտ յոթ հարյուր տարի, բայց տասնչորսերորդ դարում հուժկու երկրաշարժը կործանեց այն:*

1. Փարոսի նախագծող և ճարտարապետ Սոստրատեսը թագավորի՝ Պտղոմեոս Ֆլորենցիացու պահանջով այն նվիրում է փրկարար աստվածներին՝ ի սեր ծովագնացների:
2. Սոստրատեսը իր խորամանկությունը թաքցնելու նպատակով մարմարիոնի վրայի գրվածքը ծածկած նոր շերտի վրա գրում է թագավորի՝ Պտղոմեոս Ֆլորենցիացու անունը:
3. Փարոսի նախագծող և ճարտարապետ Սոստրատեսը հույս ուներ, որ իրենցից հետո խելացի մարդիկ կկարողանան բացահայտել և իմանալ փարոսի իսկական ստեղծողի անունը:
4. Փարոսը իր գոյության մոտ յոթ հարյուր տարիների ընթացքում դիմանում է բնության բազում արհավիրքների, բայց, ի վերջո, երկրաշարժից կործանվում է:

**3. Ո՞ր մտքերն են հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

*Աշխարհի երկրորդ հրաշալիքը Ալեքսանդրիայի հիասքանչ փարոսն է, որի կառուցումը մեր թվականությունից առաջ է սկսվել՝ երրորդ դարի սկզբներին՝ Պտղոմնոս թագավորի օրոք, որն այդ ժամանակ իշխում էր Եգիպտոսում: Նա որոշեց ականակիր զիշերներին քաղաքին մոտեցող նավերի համար Ալեքսանդրիայի նավահանգիստն ավելի ապահով դարձնել և կառուցել մի ուղեցույց աշտարակ: Հետաքրքիր է հենց փարոս անվանման ծագումը: Այն հիմնվեց փամերձ մի կանաչազարդ կղզյակի վրա, որը առագաստի տեսք ունենալու պատճառով կոչվում էր Ֆարոս, այսինքն՝ առագաստ: Երբ կղզու վրա կառուցեցին լուսատու բարձրաբերձ աշտարակը, այն նույնպես սկսեցին այդպես անվանել: Հետագայում «ֆարոս» բառն արդեն ձեռք բերեց այժմյան իմաստը, իսկ հայերենում «ֆ» հնչյունը փոխարինվեց «փ» հնչյունով:*

*Չնաշխարհիկ փարոսը մի երկնակարկառ շինություն էր, որն ամբողջովին կառուցված էր սպիտակ մարմարից:*

1. Ալեքսանդրիայի փարոսի կառուցումը սկսվել է Պտղոմնոս թագավորի օրոք և ավարտվել մեր թվականությունից առաջ երրորդ դարի սկզբներին:
2. Փարոսի կառուցումով Պտղոմնոսը նպատակ ուներ Ալեքսանդրիայի նավահանգիստն ավելի գրավիչ դարձնել՝ ապահովագրված լինելով թշնամիների հարձակումներից:
3. Առագաստի տեսք ունենալու պատճառով աշտարակը կոչվել է Ֆարոս, որն էլ հետագայում ձեռք է բերել այժմյան իմաստը, իսկ հայերենում «ֆ» հնչյունը փոխարինվել է «փ» հնչյունով:
4. Կանաչազարդ կղզյակի վրա ամբողջովին սպիտակ մարմարից կառուցված ուղեցույց աշտարակը մութ զիշերներին պետք է ապահով դարձներ նավահանգիստ մտնող նավերի ճանապարհը:

**4. Ո՞ր մտքերը չեն հակասում տեքստի բովանդակությանը:**

*Պիզայի նշանավոր աշտարակը տարիների ընթացքում սկսել է թեքվել, և առ այսօր թեքման գործընթացն ավարտված չէ: Նրա թեքությունը անհանգստություն է պատճառում պատմամշակութային հնությունների պահպանման խնդիրներով զբաղվողներին: Ամբողջ աշխարհի գիտական միտքն այսօր միջոցներ է որոնում թեք աշտարակի շտկման, այսինքն՝ նախկին դիրքին վերադարձնելու համար: Համանման աշտարակ կար Լոնդոնից 100 կմ հեռավորության վրա գտնվող գավառական մի քաղաքում, և շինության հիմքում հողը մոտ երկու մետր փոս էր ընկել՝ մոտ հինգ աստիճանով թեքելով աշտարակի դիրքը: Կառույցը փրկելու նպատակով բնակիչները դիմել էին մի զինվորականի, որը, ուսումնասիրելով հիմքի հատվածը, եզրակացրել էր, որ աշտարակը կառուցված է հեղուկ պարունակող կավահողի վրա, և ժամանակի ընթացքում հեղուկը հոսել է, իսկ կավահողը՝ ծանրության պատճառով նստել: Նա հրահանգել է թեքված մասի հակառակ կողմում փորել հողը, խողովակներով հեղուկը հանել և աշտարակի պատերից կախել մետաղյա ծանրոցներ: Չարմանալի է, բայց աշտարակը մի քանի ամսում շտկել է իր թեքությունը և մինչ օրս կանգնած է իր տեղում:*

1. Հռոմից 100 կմ հեռավորության վրա գտնվող գավառական մի քաղաքում կանգնած է Պիզայի նշանավոր աշտարակը, որի թեքությունը անհանգստություն է պատճառում պատմամշակութային հնությունների պահպանման խնդիրներով զբաղվողներին:
2. Անգլիական աշտարակն ամեն վայրկյան կարող է ընկնել, այդ պատճառով ամբողջ աշխարհի գիտական միտքն այսօր միջոցներ է որոնում թեք աշտարակի շտկման համար:
3. Համանման մի շինություն բավական հաջող փորձել են ուղղել Անգլիայում, և դա զարմանալիորեն հաջողվել է, թեև առաջարկը կատարել ու այն իրագործել է ոչ թե ճարտարապետ, այլ մի զինվորական:
4. Ծատերին ոգևորում է անգլիական մմանատիպ աշտարակի վերականգնման փորձը, սակայն Պիզայի աշտարակը, ցավոք, կավային հիմք ունի, և գրունտային ջրերը լրջորեն խաբխլում են շինության հիմքերը:

**5. Նշել թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Հանելուկը վերջնականապես լուծվեց, երբ սենյակում տեղադրեցին ուլտրաձայնային որսիչ սարք և պարզեցին, որ չղջիկներն անընդհատ արձակում են բարձր հաճախականության ձայներ, որոնք կարող են անդրադարձվել նույնիսկ ամենամանր առարկաներից: Այդ ձայների հաճախականությունը կազմում է 30-70 կիլոհերց (30.000-ից մինչև 70.000 հերց):
2. Ջարմանալ կարելի էր միայն, որ կենդանիները այդ արգելքը հաղթահարեցին և՛ բաց, և՛ փակ աչքերով, այսինքն՝ նրանք մթության մեջ կողմնորոշվեցին ոչ տեսողությամբ: Հաջորդ փորձն արվեց այլ կերպ. փակեցին նրանց ականջները, և վերջապես լսվեց զանգի դողանջ. այսինքն՝ մթության մեջ նրանք «տեսնում էին ականջներով»:
3. Մարդկանց երկար ժամանակ զարմացնում էր մթության մեջ չղջիկների կողմնորոշվելու ունակությունը: Որոշեցին նրանց գիտափորձի ենթարկել. մի մութ սենյակում զանգակներով մետաղալարեր տեղադրեցին, որոնք բավական մեծ խտությամբ զբաղեցնում էին սենյակի օդային ամբողջ տարածքը, և թեթև հալումը մետաղալարին առաջացնում էր ուժեղ դողանջ:
4. Համեմատության համար ասենք, որ մարդը չի կարող արտաբերել 20 կիլոհերցից բարձր ձայն և ոչ էլ լսել այդ ձայնը: Այդ պատճառով էլ մենք չենք լսում չղջիկների արձակած ձայները և նրանց անվանում ենք լռակյաց կենդանիներ:

**6. Նշել թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Կրիաները բազմանում են ձվադրմամբ: Էգը հետին ոտքերով փորում է ավազը, ձվերը տղավորում փոսի մեջ, ապա ծածկում և հարթեցնում մակերեսը: Որոշ ժամանակ անց դուրս եկած ձագերը անմիջապես ձգտում են հասնել ջրին: Երբ ձագը նոր է ծնվում, զրահը հարթ է, բայց մեկ ժամ անց ձևավորվում է և ձեռք բերում ուռուցիկություն:
2. Կրիաներն աշխարհի ամենահին այն կենդանիներից են, որոնք երկրագնդի երեսին բնակվում են շուրջ 200 մլն տարի և բնավ փոփոխության չեն ենթարկվել: Այդ ընթացքում որոշ տեսակներ յուրացրել են ցամաքը, մյուսները՝ ջրային տարածությունները:
3. Չագն այնքան խոշոր է թվում, որ նույնիսկ կասկածելի է սեփական ձվի մեջ նորից տեղավորվելու միտքը: Ամենախոշոր կրիան ծովային մաշկավորն է, որի երկարությունը կարող է հասնել ավելի քան 2 մետրի, կշիռը՝ 916 կգ-ի, սուզվելու խորությունը՝ 640 մ-ի. նման խորություններ իջնելու պատճառը սնունդ որոնելու անհրաժեշտությունն է:
4. Թե՛ ջրային, թե՛ ցամաքային կրիաները երկարակյաց են, և ենթադրվում է, որ նրանց կյանքի տևողությունը 200-300 տարի է: Ի դեպ, նրանց տարիքը կարելի է որոշել զրահի զարդանախշերով, ինչպես ծառերինը՝ բնի օղակներով. կրիաների մոտ ամեն տարի զրահի զարդանախշերից յուրաքանչյուրը հարստանում է մեկական «տարեկան» շրջանագծով:

**7. Նշել թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Հետևաբար շան հաշվողական ընդունակությունները վերլուծելով՝ կարելի է ասել, որ նա ծանոթ է Պյութագորասի թեորեմին, գիտե հաշվել ֆունկցիայի ածանցյալը և լուծել քառակուսի հավասարում: Ըստ երևույթին, մնացած բոլոր կենդանիներն էլ զարգացման միլիոնավոր տարիների ընթացքում բնականորեն սովորել են գտնել գործողություններ կատարելու ամենաարդյունավետ ճանապարհը:
2. Շան տերը մի օր՝ ծովափին զբոսնելիս, երբ գնդակ էր նետում ջուրը, նկատում է, որ Էլվիսը նախ որոշ տարածություն վազում է ծովի երկայնքով, ապա նետվում է ջուրը և բութ անկյան տակ լողում գնդակի ուղղությամբ: Շան տերը, որը նաև մաթեմատիկոս էր, մտածում է, թե որտեղից է կենդանին բնագոյաբար գտնում դեպի գնդակ տանող ամ,նակարձ ուղին, և երեք ժամում 35 փորձ է կատարում՝ նախ չափելով շան վազքի և լողալու արագությունը, ապա մեկնարկի ու ջրի մեջ ցատկելու կետի հեռավորությունը:
3. Հետազոտությունները հաստատում են, որ բնությունը մարդկանցից շատ ավելի շուտ է հայտնաբերել մաթեմատիկան: «Մաթեմատիկոս» շան տիպիկ օրինակ է Էլվիս շունը, որին կարելի է համարել հաշվելու մեթոդների մասնագետ:
4. Վերջապես տանը, համապատասխան հաշվարկներ կատարելով, պարզեց, որ շունը ցատկի տեղը որոշում է կատարյալ ճշտությամբ, և ավելի զարմացավ այն ժամանակ, երբ նույն խնդիրը առաջարկեց մաթեմատիկական գիտելիքներ ունեցող մի մարդու, որը մեկ ժամից միայն կարողացավ լուծել այն, ինչը երեք տարեկան Էլվիսը գտավ վայրկյանի տասնորդական մասերի ընթացքում:

**8. Նշել թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Իշխանադուստր Շահանդուխտը ձորում մի մատուռ է կառուցել տալիս, որտեղ ապաշխարելով ապրում է մինչև կյանքի վերջը, իսկ ժայռը կոչվում է Շահանդուխտի ժայռ:
2. Շահանդուխտը՝ իշխանի դուստրը, հրաշագեղ էր, չքնաղ. նրա գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին: Նայողին թվում էր՝ նյութեղեն չէ, այլ կարծես կերտված է լիալուսնի նրբանուրբ շողերից, արևի թրթռուն ճառագայթներից ու ծաղիկների անուշաբույր նեկտարից:
3. Քամու ուժգին հոսանքով ու աներևույթ զորությամբ նա, իր ձիու վրա նստած, անվնաս իջնում է ձորի խորխորատը:
4. Մի օր, երբ օրիորդը ուղեկցող խմբով անցնում էր մի ապառաժոտ վայրով, հանկարծ երկնակարկառ քարաժայռի գլխից նրա վրա հարձակվեցին զինյալներ: Եվ որպեսզի չընկնի գայլաբարո ալյազգիների ձեռքը, որոնք Շահանդուխտի հռչակված գեղեցկության պատճառով կամենում էին նրան հափշտակել, օրիորդը խաչակնքում է ու ձիու հետ թռչում քարաժայռից:

www.atc.am

**ԲԱԺԻՆ 6**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՍԻՆ**

**1. Բառարանագրության վերաբերյալ պնդումներից որոնցով սխալ կա:**

1. Բառարանները բաժանվում են երկու մեծ խմբի՝ հանրագիտական և բանասիրական:
2. Հանրագիտական բառարաններ են «Հայկական սովետական հանրագիտարանը», Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը», Էդ. Ջրբաշյանի և Հ. Մախչանյանի «Գրականագիտական բառարանը»:
3. Բացատրական բառարաններ են Մ. Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի», Ռ. Դազարյանի «Գրաբարի բառարան», Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան», Հր. Աճառյանի «Արմատական բառարան» աշխատությունները:
4. Բարբառային բառարաններ չեն լինում:
5. Բացատրական բառարաններում տրվում են բառի ստուգաբանությունը, ծագումը, առնչությունը այլ լեզուների հետ, բառի բացատրությունը:

**2. Պնդումներից որովք են սխալ:**

1. 19-րդ դարի սկզբին ձևավորվեց պատմահամեմատական լեզվաբանությունը, որի շնորհիվ պարզվեցին լեզուների ծագումնաբանական կապերը:
2. Հնդեվրոպական լեզվաընտանիքը ամենալայն տարածում ունեցողն է: Նրա մեջ են մտնում սլավոնական, ռոմանական, գերմանական, հնդկական, իրանական և այլ լեզվախմբեր:
3. Յուրաքանչյուր լեզվախմբի մեջ իրենց հերթին մտնում են առավել մերձավոր ցեղակից լեզուներ: Օրինակ, սլավոնական լեզվախմբի մեջ մտնում են ռուսերենը, ուկրաիներենը, բելառուսերենը, սերբերենը, չեխերենը, այբաներենը և այլն:
4. Պատմահամեմատական մեթոդի առաջին նշանավոր ներկայացուցիչ Հ. Պետերմանը ապացուցեց, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի մի ինքնուրույն լեզվաճյուղ է, իսկ պարսկերենի հետ բառային ընդհանրությունները կապեց հետագա շրջանների փոխառությունների հետ:

**3. Արևմտահայերենի քերականական համակարգի վերաբերյալ ո՞ր պնդումներն են ճիշտ:**

1. Բայի սահմանական ներկա ժամանակաձևը կազմվում է **կը** մասնիկի միջոցով:
2. Գոյականի հոգնակի սեռականի ձևերը, ինչպես արևելահայերենում, հիմնականում կազմվում են **ի** վերջավորությամբ:
3. Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենը չունի անձի առման քերականական կարգ:
4. Անորոշ դերբայը, ի տարբերություն արևելահայերենի, ունի երեք վերջավորություն՝ **ել, ալ, իլ**:

**4. Ո՞ր շարքերում արևմտահայերեն բառերի իմաստի բացատրության սխալ կա:**

1. աքասիա – դափնեվարդ
2. հով – քամի
3. խոկալ – մտածել
4. նվագավար – նվագող
5. լաճ – մաճկալ
6. կոփամարտ - ըմբշամարտ
7. գոց – անգիր
8. կրթարան – դպրոց

**5. Տրված հատվածներից որո՞նք են գրաբար:**

1. Բարեկամութիւնն ալ ատանկ է. հարկ է, որ ան խորտակուի, որպէսզի կորուստին մեծութիւնը կարենանք զգալ և չափել:
2. Չիմ եարն ամանաթ կուտամ, ի վարդին մէջըն պահեցեք, թե երթամ խարիպուկ մեռնիմ, վարդըն ձեզ, գտերն յիշեցեք:
3. Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթինկանն:
4. Քանի գուզե քամին տանե՝ ծովեմեն ավազ չի՛ պակսի. թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ՝ մեջլիսներուն սագ չի՛ պակսի...

www.atc.am



**ԲԱԺԻՆ 7 ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**1. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
 Հանգավորում, շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, մակդիր:

Կախվել է ժայռը անդունդի վրա  
 Եվ դարեր այդպես կախված է մնում,  
 Ջրերի մեջ են ոտքերը նրա,  
 Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:

**2. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
 Անձնավորում, մակդիր, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն:

Պատուհանըս մատնահարեց ու անցավ  
 հովն հերարձակ աշունին.  
 Չարաճրճի ինչպես աղջիկ մը, ինչպես  
 Խաղընկեր մը՝ դրբան ետին մոռցրված՝  
 Պատուհանըս մատնահարեց ու անցավ,  
 հովն հերարձակ աշունին:

**3. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
 Անձնավորում, մակդիր, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն, հանգավորում:

Ամպերով գոռաց երկինքը զարհուր,  
 Ցավից անձրևը կարկուտի փոխվեց,  
 Անեծք կայծակեց ու լացեց անհույս,  
 Ու մնաց լուսինն աչքում երկնքի՝  
 Որպես մի շիթը սառած արցունքի:

**4. Ընդգծվածներից քանի՞սն են մակդիր.**  
*հոգնած* ամպեր, *կապույտ* մրրիկ, *սև* կրակ, *կարմիր* ծաղիկ, *խարտյաշ* քամի, *թռչող* կյանք, *գժված* քամի:

**5. Ընդգծվածներից քանի՞սն են մակդիր.**  
*վհաս* խոսքեր, *ոսկի* արտեր, *երերուն* քայլվածք, *բարձր* ծիծաղ, *ցնորք* աղջիկ, *մեռնող* արեգակ, *նիրհող* դաշտեր:

**6. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
 Մակդիր, շրջադասություն, փոխաբերություն, չափազանցություն, համեմատություն, անձնավորում:

«Նրանց մագերի ողկույզներից ադամանդե և մարգարիտի հատիկների պես ջրերի կաթիլները  
 ցայտում են վեր ու վար վազող շատրվանների հետ, և վարդաջրի գոհարները քրքջալով, ծիծաղելով  
 ցատկում են հեռու, ընկնում Չինգիզ խանի ճակատի վրա և սառչում»:

**ԲԱԺԻՆ 8**

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**I ՏԵՍԱԿ**

**1. Պնդումներից քանի՞սն են ճիշտ Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակի վերաբերյալ:**

- «Ծաղկած փշալարեր» վիպակում հերոսներից մեկի՝ հեղինակի հուշերը, նրան մերթ տանում են Վան, մերթ Երևան, մերթ էլ Աքսորավան:
- Վիպակում աքսորականները երբեք փախուստի փորձեր չէին անում:
- Աքսորականների գերակշիռ մասը 10, 20, 25 տարով անազատության է դատապարտվել հնարովի հանցանքների համար:
- Փախուստի դեպքերն այստեղ դատապարտված էին անհաջողության:
- Քրեական հանցագործները ճամբարում տերուտիրական էին, և հսկիչներն անգամ վախենում էին նրանցից:

**2. Մեջբերված հատվածներից քանի՞սն են Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հերոս Աղասուն վերաբերում:**

- «Տանուտերի տղեն էր, աղքատի ու նաչարի ընկեր»:
- «Նրա սուրահի բոյը, նրա թուխ-թուխ աչքերը, նրա դալամով քաշած ունքերը, նրա անմման, գեղեցիկ պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր ձենը, նրա լեն թիկունքը, բարձր ճակատը ու ոսկեթել ճալվերը մարդի խելք էին տանում»:
- «Էս հասակը հասել էր, քսան տարին անց կացել, նա դեռ հորնըմոր առաջին էնպես էր, ինչպես մեկ անմեղ գառը»:
- «Շատ մոր աչք մնացել էր կարոտ, որ նրան իր փեսա շինի, նրա գլխովը պտիտ գա: Ջահել աղջկերքը, նրա ձենը կամ անունը լսելիս, ուզում էին, որ հոգիները տան»:
- «Թուրքերը նրա անունը լսելիս լեղապատառ էին ըլում: Շատ անգամ, կռիվ քցած վախտը, հենց նրա ձենն իմանում էին թե չէ, ճանճի պես ցրվում, դես ու դեն էին կորչում, գյում ըլում»:

**3. Պնդումներից քանի՞սն են սխալ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի վերաբերյալ:**

- Ունի առաջաբան:
- Պատկերում է 5-րդ դարի դեպքեր:
- Վեպում կան չափածո հատվածներ:
- Վեպի սկզբնաղբյուրներն են Եղիշեի և Փավստոս Բուզանդի երկերը:

**4. Պնդումներից քանի՞սն են ճիշտ Շահան Շահնուրի «Նահանջը առանցերգի» վեպի վերաբերյալ:**

- Վեպը տարագիր հայության առաջին սերնդի կյանքի, նրա ապրած հիասթափությունների ու դառնության պատմությունն է:
- Վեպում հեղինակը հնչեցնում է ազգային արմատներից նահանջի ահազանգը:
- Վեպում մեծ տեղ են գրավում հերոսների անձնական կյանքի դրվագները:
- Վեպը գրված է գրական արևելահայերենով:

**5. Հովհաննես Թումանյանի նշված ստեղծագործություններից քանի՞սն են բանաստեղծություն:**  
 «Հայոց վիշտը», «Հոգեհանգիստ», «Հառաչանք», «Հայոց լեռներում», «Հայրենիքիս հետ», «Թմկաբերդի առումը», «Փարվանա», «Անուշ»:

**6. Տրվածներից քանի՞սն են սխալ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների վերաբերյալ:**

- «Գիքորը» պատմվածքում հեղինակը խոր ցավով է հայ գյուղի թշվառ կյանքը համեմատում քաղաքի բարեկեցիկ կենցաղի հետ՝ Գիքորի ողբերգության համար մեղադրելով նաև իշխանություններին:
- «Գելը» ստեղծագործության մեջ հեղինակը ներկայացնում է գայլերի մասին պատմություններ, որոնց անմիջական մասնակիցն ու պատմողը հենց ինքն է:
